

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԻԱՄ ԷԼՄԱՍՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
(19-20-րդ դարի առաջին կես)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022



Մրագիրն իրականացվել է Արդուպահիգ Սաուդ ալ-Բարտեյն մշակութային հիմնադրամի աջակցությամբ
 تم تحقيق البرنامج تحت رعاية مؤسسة عبدالعزيز سعود البابطين الثقافية
 The program was implemented with the support of the Abdulaziz Saud Al-Babtain Cultural Foundation



ՀՏԴ 82(091)(075.8)

ԳՄԴ 83.3g73

Է 290

*Հրատարակության է երաշխավորվել ԵՊՀ արևելագիտության
 ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից:*

Գիտական խմբագիրներ՝

բ.գ.թ., պրոֆեսոր Դ. Հովհաննիսյան

բ.գ.թ., դոցենտ Կ. Խուդավերդյան

Գրախոս՝

բ.գ.թ., դոցենտ Ա. Էլոյան

Էլմասյան Մարիամ

Է 290 «Արաբական գրականության պատմություն (19-20-րդ դարի առաջին կես)»/Մ. Էլմասյան – Եր., ԵՊՀ հրատ., 2022, 232 էջ:

«Արաբական գրականության պատմություն (19-20-րդ դարի առաջին կես)» դասագիրքը բաղկացած է երեք հիմնական բաժնից, որոնցում ներկայացված են 19-20-րդ դարի առաջին կեսի արաբական գրականության ձևավորման պատմական, քաղաքական ու մշակութային նախադրյալները և զարգացման օրինաչափությունները, ինչպես նաև գրական նոր միտումներն ու ժանրերը: Դասագիրքը նախատեսված է արևելագիտության ֆակուլտետի ուսանողների և նոր շրջանի արաբական գրականության խնդիրներով հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 82(091)(075.8)

ԳՄԴ 83.3g73

ISBN 978-5-8084-2560-6

© ԵՊՀ հրատ., 2022

© Էլմասյան Մ., 2022

Ծրագրի իրականացման գործում ցուցաբերած աջակցության համար շնորհակալություն ենք հայտնում «Աբդուլազիզ Սաուդ ալ-Բաբտեյն» մշակութային հիմնադրամին, որը հովանավորում է 2018 թվականից ԵՊՀ-ում գործող «Աբդուլազիզ Սաուդ ալ-Բաբտեյնի» անվան արաբական մշակույթի կենտրոնի գործունեությունը՝ նպաստելով հայ-արաբական հարաբերությունների զարգացմանն ու Հայաստանում արաբական մշակույթի տարածմանը: Ծրագրի շրջանակում իրականացված արդյունավետ համագործակցության համար շնորհակալություն ենք հայտնում նաև Քուվեյթի Պետությունում ՀՀ դեսպան Սարմեն Բադդասարյանին և դեսպանության նախկին ու ներկա աշխատակիցներին:

We express our appreciation to the Abdulaziz Saud Al-Babtain Cultural Foundation for its support in the implementation of the Project. The Foundation has been funding the projects of the Abdulaziz Saud Al-Babtain Centre for Arabic Culture at YSU and contributing to the development of Armenian-Arab relations and the spread of Arabic culture in Armenia since 2018. We also thank the Ambassador of the Republic of Armenia to the State of Kuwait Sarmen Baghdasaryan and the former and current employees of the Embassy for their productive cooperation within the framework of the program.

نعرب عن فائق تقديرنا لمؤسسة عبد العزيز سعود البابطين الثقافية على دعمها في تنفيذ هذا المشروع. المؤسسة تقوم بتمويل مشروعات مركز عبد العزيز سعود البابطين للثقافة العربية بجامعة يريفان الحكومية منذ عام ٢٠١٨ وتساهم في تطوير العلاقات الأرمينية العربية ونشر الثقافة العربية في أرمينيا. ونعرب أيضًا عن شكرنا الجزيل لسفير جمهورية أرمينيا لدى دولة الكويت سارمن بغداداسريان ولكل طاقم السفارة على تعاونهم المثمر في إطار هذا البرنامج.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	5
ՆԱՀԴԱ՝ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔ.....	9
Պատմական, հասարակական-քաղաքական նախադրյալները.....	9
Նապոլեոն Բոնապարտի արշավանքը դեպի Եգիպտոս.....	12
Մուհամմադ Ալիի բարեփոխումները.....	15
Նահդան Սիրիայում.....	24
ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԱՅԻԱ (ՄՈՂԵՌՆԻԶՄ).....	45
Հրապարակախոսության առաջացումն ու զարգացումը.....	61
ԱՐԱԲԱԿԱՆ ՆՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ.....	84
Նեոդասական բանաստեղծությունը.....	84
Ռոմանտիկ բանաստեղծությունը.....	99
Մահջարի գրականությունը.....	102
«Դիվան» գրական խմբակը.....	114
«Ապոլլոն» գրական միությունը.....	127
Արձակ նոր ժանրերի առաջացումը և ժանրային նոր համակարգի ձևավորումն արաբական գեղարվեստական գրականության մեջ.....	145
Պատմավեպի առաջացումը և առաջին հեղինակները.....	146
Մականա-վեպ. մականայի փոխակերպումը.....	158
Վեպի հետագա զարգացումը.....	162
Մուհամմադ Հուսեյն Հայքալի գրական գործունեությունը. «Զեյնար» վեպը.....	164
Թաուֆիկ ալ-Հաքիմի գրական գործունեությունը.....	169
Տահա Հուսեյն՝ արաբական նոր գրականության հիմնասյուն.....	177
Կարճ պատմվածքի ձևավորումն ու զարգացումը.....	182
«Նոր դպրոցի» դերը կարճ պատմվածքի զարգացման գործում.....	190
Արաբական դրամատուրգիայի առաջացումն ու զարգացումը.....	199
Գրականության ցանկ.....	228

ՆԱԽԱԲԱՆ

18-րդ դարավերջն ու 19-րդ դարի սկիզբը նշանավորվում են համաշխարհային պատմության մեջ տեղի ունեցած շրջադարձային փոփոխություններով: Աշխարհաքաղաքական նոր վերադասավորումները հող նախապատրաստեցին գաղափարական, կրոնական, մշակութային, նաև հասարակական հարաբերությունների նախկին համակարգերի վերաձևակերպման համար: Այս գործընթացներն անմիջական ազդեցություն ունեցան Արաբական աշխարհի քաղաքական գործընթացների վրա և մշակութային նոր մարտահրավերների առիթ հանդիսացան:

Դասագրքի նպատակն է ներկայացնել 19-20-րդ դարերի արաբական գրականության պատմությունը աշխարաքաղաքական ու մշակութային փոփոխությունների համատեքստում: Մինչև 19-րդ դարի առաջին կեսը արաբական դասական գրականությունը շարունակում էր զարգանալ միջնադարյան կանոնների համաձայն: Ըստ արաբական գրականության շատ հետազոտողների՝ Օսմանյան Թուրքիայի կողմից արաբական երկրները գրավելուց հետո գրականությունը սկսում է հետզհետե կորցնել իր երբեմնի մշակութային նշակությունը և ազդեցությունը: 16-18-րդ դարերի ընթացքում գրականությունը սահմանափակվում էր միայն նախախլամական ու վաղ իսլամական բանաստեղծական ձևերի ու թեմաների վերարտադրմամբ ու կրկնօրինակմամբ: Ինչպես իրավացիորեն պնդում է ակադեմիկոս Ս. Ե. Կրիմսկին, խոսքը մասնավորապես արաբական դասական գրականության անկման մասին է,

ընդ որում՝ միևնույն ժամանակ ժողովրդական գրականության ժանրերը շարունակում են զարգանալ¹:

18-րդ դարում Արևմուտքի գաղութային քաղաքականության հետևանքով արաբական երկրներում տեղի ունեցող հասարակական, քաղաքական փոփոխությունների արդյունքում արաբական գրականությունը անցավ զարգացման նոր փուլ՝ վերանայելով արաբական միջնադարյան գրականության կանոնիկության սահմանները: Եվրոպական երկրների՝ Արևելքի նկատմամբ էքսպանսիվ քաղաքականությունը դրսևորվեց նաև Արևմտյան մասնագետների ուսումնասիրություններում, որտեղ Արևելքը ներկայացվում էր գաղութարարի տեսանկյունից: Հետագայում Արևելքի նկատմամբ կարծրատիպային մոտեցումը սուր քննադատության է ենթարկվել Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Էդվարդ Մաիդի կողմից²: Վերջինիս առաջադրած թեզերը նոր մոտեցումներ ձևավորեցին Արևելքը հետազոտողների շրջանում:

Արևմուտքի հետ փոխազդեցության և միևնույն ժամանակ ազգային ինքնագիտակցության ձևավորման պայմաններում արմատապես վերափոխվեցին արաբական գրականության գեղագիտական պատկերացումները, և արդեն 20-րդ դարի սկզբին ստեղծվեց սկզբունքորեն նոր ժանրային համակարգ,

¹ А. Крымский, *История Новой Арабской Литературы*, М., 1971 с. 47-48.

² Պաղեստինցի ամերիկացի մտավորական, հասարակական գործիչ, մշակութաբան, Կոլումբիա համալսարանի գրականության պրոֆեսոր: 1978 թ. գրել է «Օրիենտալիզմ» գիրքը, որտեղ քննադատել է Արևելքի արևմտյան ընկալումները, որոնք, ըստ հեղինակի, «*օրիենտալիզմ*» հասկացության հիմքն են հանդիսանում: Նա առաջարկում է մշակույթի և գրականության ուսումնասիրությունների պոստկոլոնիալ տեսությունը: Սայիդի վերլուծության մոդելը փոխեց գրականության տեսության, գրական քննադատության և մերձավորարևելյան ուսումնասիրությունների հետազոտողների ակադեմիական դիսկուրսը:

որը սկսեց զարգանալ արևմտյան ժամանակակից գրականության միտումներին համընթաց:

Արևմտյան պետությունների՝ արաբական երկրներում ռազմական, տնտեսական, մշակութային ազդեցության հաստատմամբ և արաբական երկրների վերջնական գաղութացման արդյունքում հիմք դրվեց ազգային գաղափարախոսության, ինքնության ու հասարակաքաղաքական մտքի ձևավորմանը, ինչը նպաստեց արաբական գրականության նոր ժանրային համակարգի ու նոր թեմաների առաջացմանը: Որպես Արևմուտքի ռազմական ու մշակութային էքսպանսիայի հակազդեցություն արաբական երկրներում՝ սկզբում Եգիպտոսում ու Սիրիայում, հետագայում՝ արդեն մյուս արաբական երկրներում, առաջացավ *Ալ-նահդա* (ազգային զարթոնք) շարժումը: Վերջինս միտված էր վերականգնելու արաբական երբեմնի հարուստ մշակույթը, դիմակայելու գլոբալացման մարտահրավերներին, զարգանալու եվրոպական քաղաքակրթությանը համընթաց՝ միաժամանակ պահպանելով ինքնությունը:

Սիրիայի ու Եգիպտոսի ժամանակի առաջադեմ մտավորականների, հրապարակախոսների գործունեության շնորհիվ հիմքեր ստեղծվեցին մուսուլմանական ռեֆորմացիայի (մուսուլմանական մոդեռնիզմի) գաղափարախոսության համար, որն իր կրոնական, քաղաքական, մշակութային դրսևորումներով էական նշանակություն ունեցավ հասարակական և քաղաքական մտքի ձևավորման, ինչպես նաև գրական նոր գործընթացների համար: Առաջացան գրական նոր ուղղություններ, ժանրեր ու թեմատիկ ընդգրկումներ՝ հրապարակախոսություն, պատմավեպ, վեպ, կարճ պատմվածք, բանաստեղծական նոր պոետիկա, դրամատուրգիա:

Դասագրքում ուսանողներին և արաբական գրականությանը հետաքրքրվողներին ներկայացվում են 19-րդ դարի և 20-րդ դարի առաջին կեսի արաբական գրականության պատմությունն ու զարգացման օրինաչափությունները միջնադարյան արաբական գրական ավանդույթի, համաշխարհային գրական ուղղությունների ու միտումների, հասարակական, քաղաքական, մշակութային փոփոխությունների համատեքստում:

ՆԱՀԴԱ՝ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔ

Պատմական, հասարակական-քաղաքական նախադրյալները

19-րդ դարն արդիականացման արագացված գործընթացների դարաշրջան էր քաղաքական ու տնտեսական շրջադարձային փոփոխություններով՝ աճող ինդուստրիալացում, գանգվածային արտադրություն և ապրանքների ակտիվ շրջանառություն, դրամական արժեքների միասնական համակարգի ստեղծում, առևտրի աճ, ինչպես նաև ազգային քաղաքական համակարգերի ձևավորման սկիզբ:

Սկսվել էր որոշ կայսրությունների փլուզման (Բսպանական, Ֆրանսիական, Հռոմեական Սրբազան, Չինական և Օսմանյան), մյուսների հզորացման գործընթացը (Բրիտանական, Ռուսական, Գերմանական): Լուսավորության դարաշրջանը, դրան հաջորդած Ֆրանսիական հեղափոխությունը, Մեծ Բրիտանիայում 18-րդ դարավերջին արդյունաբերական հեղափոխությունը, տնտեսական, մշակութային և սոցիալական արմատական բարեփոխումները և Նապոլեոնյան պատերազմները ձևավորեցին «Եվրոպա» մոդելը՝ որպես արդիականության և ժամանակակից իշխանության ուղենիշ: 19-րդ դարը նշանավորվեց Եվրոպայի համաշխարհային տնտեսական ու քաղաքական գերիշխանությամբ:

Ստեղծված այս նոր աշխարհաքաղաքական իրավիճակից ելնելով՝ Օսմանյան կայսրության իշխանությունները ձեռնամուխ եղան բարեփոխումների և վերակազմակերպման գործընթացի, որը հայտնի է որպես *թանզիմատի* ժամանակաշրջան: Այն սկսվեց 1839 թ և ավարտվեց 1876 թ.՝ առաջին սահմանադրության ընդունմամբ: *Թանզիմատի* շրջանակում իշխանությունները ռազմական, վարչական ոլորտներում ներմուծեցին

կառավարման եվրոպական մոդելներ, զգալի ռեֆորմներ իրականացրին իրավական ու բանկային համակարգերում¹:

Եվրոպայի աճող գաղութատիրական ներկայությունը Հարավային Ասիայում ու Մերձավոր Արևելքում, ինչպես նաև Օսմանյան կայսրության դանդաղ քայքայումը ստիպեցին արաբական երկրների մտածողներին փնտրել առաջընթացի իրենց սեփական բանաձևերը: Արևմտյան քաղաքակրթության առաջընթացն ու ձեռքբերումները նրանց կողմից միաժամանակ դիտվում էին և՛ որպես սպառնալիք, և՛ ցանկալի մոդել: Ժամանակի մտածողները ձգտում էին բացահայտել եվրոպական արևմտյան քաղաքակրթության «գաղտնիքները» և պաշտպանել այն, ինչ նրանք աստիճանաբար սկսեցին սահմանել որպես «արաբական» ու «իսլամական» մշակույթ, ավանդույթ:

Այս ամենը սկիզբն էր *նահդայի*՝ «Արաբական զարթոնքի»:

Նահդան սկզբնավորվել է 19-րդ դարասկզբին Մեծ Սիրիայում² ու Եգիպտոսում, այնուհետև՝ տարածվել Մերձավոր Արևելքի ու Աֆրիկայի այլ մասերում: Արաբական աշխարհի պատմության այս շրջանը դիտարկվում է որպես բարեփոխումների ու արդիականացման շրջան: Որպես արձագանք ու հակազդեցություն եվրոպական գաղութային ոտնձգությունների, ինչպես նաև Օսմանյան կայսրության քաղաքական և մշակութային ճահճացման տանող գործընթացների, *նահդան* ապահովեց ազգային ու մշակութային վերելք: Այն նշանավոր-

¹ A. Hourani, A History of The Arab Peoples, New York 1992, p. 263.

² Պատմական այս ժամանակաշրջանում Մեծ Սիրիա աշխարհագրական տարածքի մեջ մտնում էին Սիրիան, Պաղեստինը, Լիբանանը: Միջերկրածովյան տարածաշրջանի արևելյան սույն հատվածի անվանումը կոչվում է նաև Լևանտ:

վեց լեզվական բարեփոխումների ու թարգմանությունների ծավալուն գործընթացով, գրական նոր ժանրերի ի հայտ գալով, թերթերի ու ամսագրերի, հանրագիտարանների, բառարանների տպագրությամբ, կրթության նոր ձևերի ու համակարգերի ներմուծմամբ:

Նահդայի շրջանակում առաջացան ազգայնական պատկերացումների նոր մոդելներ, սկիզբ դրվեց իսլամի մեդեոնիզացմանը՝ ժամանակի պահանջներին համապատասխանեցմանը: Հիմնական նպատակներից էր նաև այն ժամանակվա արաբական հասարակությանը մղել դեպի աշխարհիկություն, ռացիոնալիզմ, գիտականություն ու անհատականություն: «*Կրոն*», «*մշակույթ*», «*հասարակություն*», «*պատմություն*», «*առաջընթաց*», «*քաղաքակրթություն*» և «*հայրենիք*» հասկացությունների վերաիմաստավորումը ժամանակի առաջադեմ մտավորականների հիմնական առաջնահերթություններից էր:

Նահդայի ծագման ժամանակաշրջանի և աշխարհագրական վայրի հստակեցման խնդրի շուրջ կան տարբեր մոտեցումներ ինչպես արաբ, այնպես էլ արևմտյան գիտնականների շրջանում, ինչը դժվարեցնում է այդ հարցի շուրջ վերջնական եզրահանգումներ անելը: Այս համատեքստում չկան նաև որոշակի վերջնական դատողություններ այն հարցի շուրջ, թե որտեղ է *նահդան* առավել նպաստավոր եղել արաբական գրականության զարթոնքի տեսանկյունից: Այնուամենայնիվ, առայժմ առավելությունը տրվում է Սիրիայի քրիստոնյա գործիչներին, որոնք իրենց կրթվածությամբ ու աշխարհընկալմամբ ավելի բաց էին և պատրաստ գրական, մշակութային զարթոնքին: Արաբական ազգայնականության պատմության

առաջին հեղինակներից մեկի՝ Ջ. Անտոնիոսի պնդմամբ արաբական ազգային զարթոնքի հայրենիքը Միրիան է¹:

Արաբական զարթոնքի խոշորագույն ներկայացուցիչ, հրապարակախոս ու արաբական պատմավեպի անվանի հեղինակ Ջիրջի Ջեյդանի կարծիքով *նահդան* սկսվել է Եգիպտոսի ֆրանսիական էքսպանսիայով և շարունակվել մինչև 20-րդ դարի առաջին երկու տասնամյակները²: Ջարգացնելով Ջեյդանի մոտեցումը՝ որոշ մասնագետներ դիտարկում են *նահդան* որպես արաբամուսուլման ժողովուրդների ինքնության և ինքնապաշտպանական դրսևորում՝ ի պատասխան այն մշակութային ցնցման, որն ի հայտ եկավ հատկապես Նապոլեոնի՝ Եգիպտոս ներխուժման արդյունքում: Ֆրանսիացիների կողմից Եգիպտոսի գրավումը նշանավորվում է որպես արաբական աշխարհի պատմական ու մշակութային կյանքի նոր դարաշրջան:

Նապոլեոն Բոնապարտի արշավանքը դեպի Եգիպտոս

1798 թ. Բոնապարտն արշավում է Եգիպտոս՝ նպատակ ունենալով գրավել այն ու դարձնել հենարան դեպի Արևելք հետագա ընդլայնման համար: Մամլուքներին չի հաջողվում դիմակայել ֆրանսիական ժամանակակից սպառազինությամբ համալրված կանոնավոր բանակին, և Եգիպտոսում հաստատվում է ֆրանսիական իշխանություն:

Նապոլեոնն իր հետ բերել էր ֆրանսիացի մասնագետների, գիտնականների, հետազոտողների, որոնք իրենց ու-

¹ G. Antonius, *The Arab Awakening*, United States, 1939, pp. 36-39.

² Ğirġi Zaidān, *Tārīḥ Adāb Al-luġa Āl-'Arabīa*, foulabook.com/ar/book.pdf, p. 1168.

սումնասիրություններն իրականացնելու նպատակով այստեղ հիմնեցին ժամանակակից գրադարաններ ու լաբորատորիաներ, դրանց թվում՝ Եգիպտոսի հետազոտությունների ինստիտուտը (Institute d’Egypte): Բացի այդ՝ նա Վատիկանից բերել էր արաբատառ տպագրական մեքենա՝ ոչ միայն արաբերեն հռչակագրեր ու հրամաններ տպագրելու, այլ նաև պարբերականներ հրատարակելու համար: Հրատարակվեցին “Le Courier de l’Egypte” («Եգիպտական սուրհանդակ») թերթը և “La Decade Egyptienne” («Եգիպտական տասնամյակ») գիտակրթական ամսագիրը, որոնք ներառում էին նաև զանազան գրական նյութեր: Ֆրանսիական արշավանքն իր արձագանքն ունեցավ ժամանակի արաբ պատմիչների գործերում, որոնցից էր լիբանանցի պատմաբան ու բանաստեղծ Նիկուլա ալ-Տուրկի աշխատությունը: Եգիպտացիների հակասական վերաբերմունքի մասին է վկայում ֆրանսիական էքսպանսիայի ականատես, եգիպտացի պատմաբան շեյխ Աբդ ալ-Ռահման Ջաբարտիի քառահատոր “Al- a’ğā’ib al-ātār fi al-tarāğim wāl’ahbār” («Անցյալի պատմության զարմանահրաշ դեպքերի նկարագրություն») աշխատությունը: Բնութագրելով ֆրանսիական էքսպանսիայի հետևանքները որպես բնականոն կյանքի ոչնչացում և բոլոր բնագավառներում ապօրինության հաստատում՝ նա միաժամանակ իր հիացմունքն է հայտնում ֆրանսիական օրենսդրության, գիտական ներուժի, ռազմական տեխնիկայի, մշակութային ձեռքբերումների նկատմամբ: Ալ-Ջաբարտին վերջիններիս համեմատում է թուրքական կառավարչական բռնատիրության ու դաժանության հետ: Ավելին, նա մեծապես կարևորում էր ֆրանսիական հեղափոխական գաղափարա-

կան հենքը՝ ազատությունը, հավասարությունը, եղբայրությունը¹:

Երեք տարի անց՝ 1801 թ., Բրիտանացիների հաղթանակով ավարտվեց ֆրանսիական ներկայությունը Եգիպտոսում: Ֆրանսիական էքսպանսիան ստիպեց արաբական աշխարհի՝ հատկապես Եգիպտոսի ճակատագրով մտահոգվող մտածողներին, ինչպես նաև Եգիպտոսի ապագա ղեկավարին՝ Մուհամմադ Ալիին, գիտակցել Արևմուտքի կողմից Արաբական արևելքին սպառնացող մարտահրավերները, որոնց դիմակայելը հնարավոր կլիներ միայն հանրային գիտակցության, պետական կառավարման համակարգում նոր մոտեցումների, սկզբունքների որդեգրման, ինչպես նաև միայն արաբական աշխարհի ժամանակակից խնդիրները բացահայտող ու դրանց լուծմանն ուղղված նոր գաղափարների ձևավորման միջոցով: Կարելի է ասել, որ Եգիպտոսի ֆրանսիական էքսպանսիան ազդակ է արաբական աշխարհում գաղափարական, քաղաքական, մշակութային նոր գործընթացների մեկնարկի համար, վերջ է դնում Եգիպտոսի մեկուսացմանը Արևմուտքից և արագացնում նրա անկախացումը Օսմանյան Բարձր դռան իշխանությունից: Գործնականում ողջ արաբական աշխարհն ընկավ արևմտյան տերությունների, հատկապես Ֆրանսիայի ու Բրիտանիայի տիրապետության տակ:

¹ M. Matti, *The Origins of Modern Arabic Fiction*, Washington: Three Continents Press, 1983, pp. 3-4.

Մուհամմադ Ալիի բարեփոխումները

1805 թ.՝ ֆրանսիացիների հեռանալուց հետո, Եգիպտոսում իշխանությունն իր ձեռքն է վերցնում ծագումով ալբանացի, թուրքական բանակի զինվոր Մուհամմադ Ալին: Հասնելով Եգիպտոսի փաստացի կառավարչի կարգավիճակին, որի իշխանությունը ճանաչում էր նաև Բարձր դուռը, Մուհամմադ Ալին սկսում է բարեփոխումների և պետականաշինության մի գործընթաց, որը համեմատում են Պետրոս Մեծի՝ երկրի եվրոպականացման նախաձեռնության հետ: Մուհամմադ Ալին, ի տարբերություն մամլուքների, որոնց իշխանության հիմնական գործելակերպը ժողովրդի հարստահարումն էր, սկսում է Եգիպտոսը անկախ ու ուժեղ պետության վերածելու գործընթաց: Նա գիտակցում էր, որ անհրաժեշտ է ուսումնասիրել եվրոպական պետությունների ռազմական, գիտատեխնիկական ու կառավարման փորձը: Լինելով ուժեղ ղեկավարին հատուկ բնատուր խելքով օժտված ու տաղանդավոր անձնավորություն՝ Մուհամմադ Ալին շատ լավ պատկերացնում էր, որ պետականություն ստեղծելու համար պետք է ունենալ հզոր բանակ, անթերի գործող պետական համակարգ, կրթված հասարակություն, ինչպես նաև զարգացած արդյունաբերություն և տնտեսություն, կրթական ժամանակակից համակարգ՝ պետության համար կարևոր ինստիտուտների կայացման գործում որակյալ կադրերի ներգրավման համար:

Մուհամմադ Ալիի բարենորոգումների ծրագիրը՝ եվրոպացի մասնագետների ներգրավումը բանակի կրթության կազմակերպման գործում, ուսումնառության նպատակով Եվրոպա ուսանողական խմբեր ուղարկելը, 1821 թ. տպագրության հիմնումը, 1828 թ. առաջին “Al-waqā’i‘ al-miṣriā” («Եգիպտ-

տական իրողություններ») պաշտոնական թերթի հրատարակումը, գիտատեխնիկական գրականության տպագրումը, լեզուների դպրոցի բացումը, թարգմանչական գրասենյակի հիմնադրումը, մեծ ազդեցություն ունեցան նոր մտավորականության ձևավորման համար, որոնց գերակշիռ մասն իր կրթությունը ստացել էր Արևմուտքում: Եվրոպայում ուսանած երիտասարդների միջոցով սկսեցին Եգիպտոս ներթափանցել արևմտյան ապրելակերպի, մշակույթի մասին տեղեկություններ, գիտական ու հասարակաքաղաքական միտքը, որոնք նպաստեցին եգիպտացիների շրջանում աշխարհի ճանաչողության սահմանների ընդլայնմանը, արաբական հասարակաքաղաքական մտքի նորովի դրսևորմանը: Այս ամենն ապահովեց ֆրանսիական լուսավորչական գաղափարների ներթափանցումը Եգիպտոս, ձևավորվեց դրանք ըմբռնող մտավորականների մի շերտ, որը հավատում էր այդ գաղափարների ճշմարտացիությանն ու անհրաժեշտությանը:

Եգիպտական զարթոնքի ակնառու առաջամարտիկներից էր **Ռիֆա ալ-Ռաֆիա ալ-Տահտավին**, որը Մուհամմադ Ալիի կողմից Ֆրանսիա ուղարկված երիտասարդների առաջին խմբի ղեկավարն էր, կրոնական առաջնորդը՝ իմամը: Ծանոթանալով ֆրանսիական մշակույթին, ապրելակերպին, սոցիալ-քաղաքական համակարգերին՝ Ռիֆան, խանդավառված վերադառնալով հայրենիք, գրեց իր “Takhlis al-ibriz ila talkhis Bāris” («Մաքուր ոսկու արտահանումը Փարիզ կատարած ուղևորությունից») ստեղծագործությունը: Գիրքը լույս է տեսել 1834 թ. Կահիրեում: Լավատեղյակ լինելով արաբական ավանդական գիտությանն ու գրականությանը՝ նա ձգտում էր վերականգնել և զարգացնել Աբբասյանների օրոք ծաղկում ապրած մշակույթը: Եգիպտոսում Ալ-Տահտավիի գործունեության

ուրրտը բավականին ընդգրկուն էր՝ թարգմանչական, գիտակրթական, լուսավորչական, վարչական: 1836 թ. նա դառնում է լեզուների նորաբաց դպրոցի տնօրեն, զբաղվում թարգմանիչների պատրաստմամբ, մաս կազմում կրթական զանազան հանձնաժողովների, ընդգրկվում “Al-waqā’i‘ al-miṣrīa” պաշտոնաթերթի խմբագրակազմում¹: Ալ-Տահտավիի գլխավորությամբ «Թարգմանչական դպրոցի» բացմամբ թարգմանչական ակտիվ գործընթացի հիմք դրվեց: Ի սկզբանե դպրոցի գործունեության ոլորտը սահմանափակվում էր տեխնիկական ու ռազմական գրականության թարգմանությամբ, սակայն ժամանակի ընթացքում այդ գործընթացն ընդգրկեց նաև գրական-գեղարվեստական, պատմական ստեղծագործություններ²:

Թարգմանությունների շարքում հատկապես կարևորվեց Ֆրանսուա Ֆենելոնի «Տելեմախի արկածները» դիդակտիկ վեպը՝ տալով դրա արաբերեն նկարագրական թարգմանությունը՝ “Mawāqī‘ Al-’aflāk fi Waqāi’i‘ Tliimāk” («Երկնային մարմինների դիրքը Տելեմաքի արկածներում»), որն առաջին փորձն էր արաբ ընթերցողին ծանոթացնելու հունական դիցաբանությանը, արևմտյան իրողություններին³: Ալ-Տահտավին թարգմանեց նաև Վոլտերի՝ Լյուդովիկոս 14-ին նվիրված էլեգիատրակտատը, նաև Ֆրանսիայի ազգային հիմնը՝ «Մարսելիեզը»: Դրանից ոգեշնչված՝ Ալ-Տահտավին հեղինակեց հայրենա-

¹ A. Hourani, *Arabic Thought in the Liberal Age 1798-1939*, Cambridge University Press, 1983, p. 71.

² M. Badawi, *Modern Arabic Literature*, Cambridge University Press, 1992, p. 9.

³ I. Mahdi, *Modern Arabic Literature*. Hyderabad: Rabi Publishers, 1983, p. 12.

սիրական երգերի ու բանաստեղծությունների շարք, որոնք մեծ տարածում գտան զինվորականների շրջանում¹:

Ի հավելումն թարգմանչական և գիտակրթական գործունեությանը՝ Ալ-Տահտավին մեծ ներդրում ունեցավ արաբական գրականության զարգացման գործում: Նրա տեղծագործությունների շարքում առանձնանում է “*Tahlīs Al-Ibriz fi Talhīs Bārīz*”, որը այդ ժամանակներում հազվադեպ հանդիպող պարզ ոճով և առաջին արձակ ստեղծագործությունն է, որը գրված չէ *սաջու*/ հանգավորված արձակով: Այստեղ հեղինակը ներկայացնում է Փարիզում անցկացրած տարիների իր փորձառությունը:

Գրքում նկարագրվում են ֆրանսիական հասարակության ապրելակերպի տարբեր կողմերը, բարքերը, զբաղմունքները, մշակույթը, գիտական ձեռքբերումները, նրանց վերաբերմունքը կրոնին, գիտնականների ու փիլիսոփաների մոտեցումները՝ զուգահեռաբար համեմատվելով եգիպտական իրականության հետ: Ալ-Տահտավին կարևորում է ֆրանսիական քաղաքակրթական փորձի առավելությունը և առաջարկում կիրառել դրանք Եգիպտոսում: Նա տպավորված էր ֆրանսիացիների գիտատեխնիկական ձեռքբերումներով, նրանց աշխատասիրությամբ, ֆրանսիացի կանանց կրթվածությամբ²: Հեղինակը առանձնահատուկ կարևորություն էր տալիս տալիս հավասարության ու անհատի ազատության ֆրանսիական օրենքներին, ինչպես նաև անկախ դատական համակարգի առկայությանը: Իր ստեղծագործության մեջ համեմատական լույսի ներքո քննում է նաև արևմտյան ու արևելյան կրթական իրո-

¹ A. Hourani, նշվ. աշխ., էջ 80-83:
Rifa'a Rāfi' Al-Ṭahṭawī, *Tahlīs Al-Ibriz fi Talhīs Bārīz*, noor-book.com/en/ebookpdf, pp. 33-38.

դությունները, չափանիշները՝ արտահայտելով իր համակրանքն արևմտյան մշակույթի նկատմամբ: Հեղինակը խոսում է նաև ֆրանսերենի կենսունակության մասին՝ համարելով այն ոչ պաճուճապատ լեզու գեղարվեստական գրականության հասկանալի արտահայտչամիջոցների, մտքի ձևակերպման կարևորության համատեքստում: Այս ամենով հանդերձ նա չի նսեմացնում արաբերենը՝ բարձր դասելով այն բոլոր լեզուներից. Ալ-Տահատավիի նպատակն էր նորարարությունների դաշտում տեսնել արաբական մշակութային դրսևորումները լուսավորչական ու զարգացման միտումների ձևաչափում, ոչ թե քարացած ձևերում: Միաժամանակ ընկալելով քրիստոնյա գավթիչների՝ գրքում շարադրած նորարարական գիտելիքների նկատմամբ արաբ ընթերցողների հակազդեցության վտանգը՝ Ալ-Տահատավին հղում է կատարում արաբ ավանդական միջնադարյան հեղինակություններին, մեջբերումներ անում հայտնի բանաստեղծների տողերից՝ այսպիսով քարոզելով այն համոզմունքները, որոնք կարող են օգուտ բերել իր երկրին ու հայրենակիցներին¹: Մրա մասին է վկայում նաև նրա ստեղծագործության հանգավորված վերնագիրը՝ տուրք տալով միջնադարյան ավանդական գրական մոտեցումներին: Մույն գրական ստեղծագործության մեջ² արծարծված գաղափարները դարձան 19-րդ դարում *նահդայի* համար կարևոր հիմնադրույթներ լուսավորչական գաղափարների քաղաքական, կրոնական, բարոյական ասպետների դրսևորման համար:

¹ Rifa' a Rafi' Al-Tahṭawī, նշվ. աշխ., էջ 97-99:

² Գրականագիտության մեջ ստեղծագործությունը հայտնի է նաև «Փարիզի նկարագրություն» անվամբ:

Հիմնվելով ֆրանսիացի լուսավորիչների գաղափարների վրա՝ Ալ-Տահտավիին վերականգնեց Իբն Խալդունի¹ հասարակական առաջընթացի մասին դրույթը, որը դարձավ արաբական լուսավորչական շարժման լոկոմոտիվը²: Ալ-Տահտավիի ստեղծագործություններն ու առաջադեմ գաղափարները ձևավորեցին 19-րդ դարի եգիպտական հասարակության սոցիալական ու մշակութային նոր հիմքը:

Եգիպտական նահոյաի մյուս առաջատար հեղինակներից է **Ալի Մուբարաքը (1824-1893 թթ.)**: Վերջինիս գործունեությունը համընկնում է Մուհամմադ Ալիի թոռան՝ Խեդիվ Իսմայիլի (1863-1879 թթ.) կառավարման ժամանակաշրջանին: Այս փուլում Եգիպտոսում նոր թափ ստացան արևմտականացման գաղափարները: Կրթված լինելով Ֆրանսիայում ու հարելով արևմտյան արժեհամակարգային մոտեցումներին՝ Իսմայիլը մեծ կարևորություն էր տալիս համընդհանուր կրթությանը, ընդ որում՝ խրախուսելով նաև կանանց ուսումնառությունը³: Այս գործում նրան օժանդակում էր կրթության նախարար Ալի Մուբարաքը, որը աշխարհիկ կրթական նոր համակարգի ներկայացուցիչներից էր: Եգիպտոսը, փաստորեն, թևակոխում էր կառավարման զարգացման նոր փուլ, որը կրում էր արևմտյան սոցիալ-քաղաքական, գիտակրթական համակարգերի մեծ ազդեցությունը: Այս ամենն արդյունք էր նաև տարածաշրջանային ճգնաժամերի. կրոնական հակամարտությունը ստացել էր առավել արտահայտված բնույթ՝ պայմանավորված

¹ Իբն Խալդունը 14-15-րդ դարի արաբ փիլիսոփա, պատմիչ, մտածող էր, որի կարևոր գաղափարները տեղ են գտել «Muqadima» (Ներածություն) պատմական, սոցիոլոգիական, աշխարհագրական, տնտեսագիտական աշխատության մեջ:

² В. Кирпиченко, նշվ. աշխ., էջ 12:

³ М. Badawi, նշվ. աշխ., էջ 10:

Միրիայում օսմանական ներկայությամբ: Դրա հետևանքով սիրիացիների մի ստվար զանգված լքեց երկիրը, նրանցից որոշները գաղթեցին Ամերիկա, իսկ մյուս մասը՝ Եգիպտոս:

Քաղաքական այս իրավիճակը ևս տրամադրում էր արաբ լուսավորյալ կառավարիչներին և մտավորականությանը գաղափարական ու կիրառական հստակ փոփոխություններ իրականացնել երկրում: 1860 թ. Եգիպտոսում արաբերենը, փոխարինելով օսմաներենին, դարձավ երկրի պաշտոնական լեզուն: Դրան զուգահեռ իրականացվեցին կրթական բարեփոխումների մի շարք ծրագրեր: Խեղիվ Իսմայիլը հնարավորություն տվեց քրիստոնյա առաքելություններին բացելու դպրոցներ, որտեղ սովորում էին տղաներ ու աղջիկներ՝ կրթվելով եվրոպական լեզուներով, հիմնականում՝ ֆրանսերեն: 1870 թ. Իսմայիլը բացեց “Dār al-‘ulūm” (Գիտությունների տուն) ուսումնական հաստատությունը, որի ուղղություններից էր իսլամական արաբական ավանդական մշակույթի ու արևմտյան ուսումնառության համադրումը: Նա ստեղծեց բազմառոտ կրթության կազմակերպման միջավայրեր. հիմնեց թանգարան, աստղադիտարան, հովանավորեց գիտությունն ու արվեստը: Նույն թվականին հիմնվեց “Dār al-kutub” (Գրատուն) ազգային գրադարանը: Նշանակալի իրադարձություն էր 1896 թ. Կահիրեում օպերայի՝ “Dār al-ūberā”-ի հիմնումը, որտեղ էլ Սուեզի ջրանցքի բացման կապակցությամբ բեմադրվեցին Ջ. Վերդիի «Ռիգոլետտո» և «Աիդա» օպերաները:

Իսմայիլը նպատակադրված էր Եգիպտոսը քաղաքակրթական առումով դարձնել Եվրոպայի մաս. նա ադապտացրեց եվրոպական վարչական ու ֆինանսական կառավարման համակարգերը, ձեռնարկեց եվրոպական օրենսգրքերի թարգմանությունը: Նրա կառավարման օրոք տեղի ունեցան Կահի-

րեի տեղագրական փոփոխությունները: Այդ գործընթացն ընթանում էր գրող, գիտնական, եվրոպական լուսավորչական գաղափարների կրող Ալի Մուբարաքի անմիջական մասնակցությամբ: Վերջինս ձեռնամուխ եղավ կրթական վերանորոգչական գործունեությանը: Հրամայական էր դարձել եվրոպական տիպի համալսարանների ստեղծումը, քանի որ դեռ Մուհամմադ Ալիի կողմից հիմնված բարձրագույն ուսումնական հաստատությունները նեղ մասնագիտական էին: Համալսարանական գործառույթ իրականացնող Ալ-Ազհարին կից գործող ավանդական կրթական դպրոցները՝ *մադրասաները*, խիստ կրոնական բնույթի էին և արդեն չէին ծառայում ժամանակի պահանջներին:

Եգիպտական առաջադեմ հասարակությունը միտված էր ստեղծելու մի հաստատություն, որտեղ, մի կողմից, ինչպես եվրոպական կրթահամալիրներում, կդասավանդվեր աստվածաբանություն, մյուս կողմից՝ զարկ կտրվեր աշխարհիկ գիտելիքների ուսումնասիրությանը: Նմանատիպ կրթական միջավայրի ապահովման կենտրոն դարձավ “Dār al-‘ulum”-ը, որի հիմնադրման ակունքներում էր Ալի Մուբարաքը: Վերջինիս գործունեությունը հիմնականում առնչվում էր հասարակական, գիտական, հանրագիտարանային ոլորտներին, որոնց մասին ուսումնասիրություններն իրենց դրսևորումներն էին գտնում տարբեր պարբերականներում, ինչպես նաև՝ առանձին գրքերում: Նրա ստեղծագործությունների շարքում առանձնանում է քսանհատորյա պատմաաշխարհագրական աշխատությունը՝ “Al- Hīṭat Al-Taūfiqīa Al-Ġadīda” («Նոր հողատարածքներ»): Այստեղ հեղինակը ներկայացնում է ակնարկներ Եգիպտոսի պատմության ու տեղանվանագիտության վերաբերյալ, մեկնաբանում պատմության ու աշխարհագրության

փոխկապակցվածությունը: Քանի որ այս ստեղծագործությունը լույս է տեսել Իսմայիլի կառավարումից տասը տարի անց՝ Խեղիվ Թաուֆիկի օրոք, հեղինակը նշում է այս կառավարչի անունը: Պատմաաշխարհագրական նմանատիպ ստեղծագործությունն դեռևս 15-րդ դարում գրել է Մակրիզին (1364-1442 թթ.) “Al- Hitat” անվամբ, և Ալի Մուբարաքի նշյալ գործը միջնադարյան այս տրակտատի շարունակությունն է՝ բացառիկ մանրամասն աշխարհագրական տեղեկություններով. ներառում է Կահիրեի ու Ալեքսանդրիայի փողոցների, թաղամասերի, մզկիթների, շուկաների, եկեղեցիների, ամրոցների նկարագրությունը¹:

Ալի Մուբարաքի ստեղծագործությունների շարքում նշանակալի տեղ է զբաղեցնում նաև “Alam Al-Din” գիտահանրամատչելի դիդակտիկ քառահատորյակը, որը պատկանում է ճամփորդագրությունների (al-rihla) ժանրին: Գեղարվեստական մոտեցումներով Ալի Մուբարաքը ներկայացնում է մուսուլման գիտնական հերոսի՝ Ալամ ալ-Դինի, նրա որդու և անզվիացի արևելագետի միջև երկխոսությունները Եվրոպա ճամփորդելու ընթացքում: Գրքում երկխոսությունների համատեքստում ընթերցողին է ներկայացվում մուսուլմանական և եվրոպական գիտելիքների բովանդակային էությունը: Գիտատեխնիկական, վիճակագրական տեղեկություններով հագեցած գրույցները միտված են բարձրացնելու եգիպտական հասարակության իմացական մակարդակը՝ հիմքում ունենալով գիտության ձեռքբերումների նկատմամբ արաբ ընթերցողին իրազեկելու ու կրթելու խնդիրը: Ալամ ալ-Դինը փորձում է եվրոպական կրթական համակարգի մասին պատկերացումները

¹ А. Крымский, История Новой Арабской Литературы, М., 1971 с. 201.

հաղորդել արաբ երիտասարդությանը՝ իր որդու օրինակով հակադրելով իր ստացած ավանդական, կրոնական կրթությունը որդու նոր, աշխարհիկ կրթությանը, որտեղ և բացահայտվում են արևելյան ու արևմտյան գիտելիքների տարբերությունները¹:

Նահդան Սիրիայում

19-րդ դարի կեսերին Սիրիան դառնում է արաբական նահդայի՝ գրական ու մշակութային զարթոնքի, ինչպես նաև քաղաքական առաջադեմ մտքի կենտրոն: Սիրիայի բնակչության դավանաբանական բազմազանությունը, բազմադարյա առևտրական ու մշակութային կապերը եվրոպական երկրների հետ, դիվանագիտական առաքելությունների ներկայությունը նպաստավոր պայմաններ ստեղծեցին եվրոպական քաղաքակրթության հետ երկխոսության համար: Վերջինս հնարավորություն ստեղծեց ծանոթացնելու արաբ հասարակությանը եվրոպական քաղաքակրթական ձեռքբերումներին, մշակույթին, ինչպես նաև հասարակական-քաղաքական մտքին:

1831-1832 թթ. Մուհամմադ Ալիի որդին՝ Իբրահիմ փաշան, գրավելով Սիրիան ու Պաղեստինը, հաստատում է այստեղ եգիպտական կարգեր՝ միաժամանակ խրախուսելով կրոնների դավանական ազատությունը, բոլորի համար օրենքի գերակայությունը: Բեյրութը դառնում է ադմինիստրատիվ ու մշակութային կենտրոն և շարունակում է այդպիսին մնալ եգիպ-

¹ Wen-Chin Ouyang, *Fictive Mode, 'Journey to the West', and Transformation of Space: 'Ali Mubarak's Discourses of Modernization*, in: *Comparative Critical Studies*, Vol. 3, issue 4, British Comparative Literature Association, 2007, p. 335.

տացիների հեռանալուց հետո նույնպես: Քաղաքական այս պահից օգտվում են արևմտյան կաթոլիկ ու ամերիկացի բողոքական միսիոներները և հաստատվում են Սիրիայում: Նրանք հիմնում են իրենց դպրոցները, որտեղ դասավանդում են ժամանակակից աշխարհիկ գիտելիքներ: Այդ ժամանակ Բեյրութի բնակչության կեսից ավելին գրագետ չէր: Կարճ ժամանակում միսիոներներին հաջողվում է ձևավորել լուսավորչական գաղափարներով ներշնչված մտավորականություն: Ամերիկացի բողոքականների ֆինանսական հնարավորությունները գերազանցում էին կաթոլիկների հնարավորություններին, և այդ պատճառով ամերիկացի բողոքականներն ավելի մեծ դեր ունեցան Բեյրութի մշակութային ու մտավոր կյանքում, որին նպաստում էին նաև ամերիկյան բողոքական դպրոցների կրթական համակարգն ու բովանդակությունը: Ամերիկացի բողոքականներն առավել կարևորում էին բնագիտական առարկաների դասավանդումն ու ինքնուրույն մտածողության սերմանումն աշակերտների շրջանում: Կաթոլիկ միսիոներներն իրենց հերթին շեշտը դնում էին կրոնական կրթության վրա:

1847 թ. ամերիկացի միսիոներները հիմնեցին «Սիրիական գիտական ընկերությունը» («Al-Ġam‘īa Al-‘Ilmīa Al-Sūrīa»), որի գործունեության մեջ ներգրավված էին Բեյրութի գիտական, գրական առաջադեմ ուժերը: «Սիրիական գիտական ընկերության» գործունեությունն ուղղված էր ժամանակակից լուսավորչական գիտելիքի տարածմանը: Ընկերության կողմից կազմակերպվում էին հասարակական քննարկումներ, ելույթներ՝ մշակութային ու գիտական թեմաներով: «Սիրիական գիտական ընկերությունը» զբաղվում էր նաև գրականության ու լեզվի խնդիրներով: Ընկերությունն ուներ հիսուն անդամ, որոնք

հիմնականում քրիստոնյա արաբներ էին: 1850 թ. ընկերության գործունեությունը դադարեցվեց օսմանյան իշխանությունների կողմից, սակայն այն շարունակում էր գործել գաղտնի մինչև 1868 թվականը, որից հետո դրա գործունեությունը կրկին վերականգնվեց: Ընկերության շարքերը, բացի նախկին անդամներից, համալրվեցին նոր, ավելի երիտասարդ ուժերով: Այստեղ արդեն ընդգրկվեցին ոչ միայն քրիստոնյաներ, այլ նաև մուսուլմաններ ու դրուզներ¹: Ընկերությունը հրատարակում էր իր անդամների զեկույցներն ու հողվածները: 1873 թ. ընկերության գործունեության արդյունքում հիմնադրվեց «Ġam'iat Zahra'at Al-'Ādāb» («Գրականության ծաղկունք») գրական միությունը, որին անդամակցում էին Ժամանակի գրողներ, բանաստեղծներ, հրապարակախոսներ:

«Միրիական գիտական ընկերությունը» մեծապես նպաստեց արաբական նոր գրականության երկու հիմնական ուղղությունների՝ հրապարակախոսության ու դրամատուրգիայի զարգացմանը: Արաբական գրականության և լեզվի խնդիրներով մտահոգված մտավորականների շարքում առանձնահատուկ տեղ ունի արաբերենի գիտակ, շեյխ **Նասիֆ ալ-Յազիջին (1800-1871 թթ.)**: Նրա բանաստեղծությունները և *մականային* ստեղծագործությունները վկայում են հեղինակի՝ արաբերենի փայլուն իմացության մասին: Ժամանակի գրեթե բոլոր գրողները եղել են Ալ-Յազիջիի աշակերտները: Ալ-Յազիջիի նախնիները հայտնի էին իրենց կրթվածությամբ և բազմիցս զբաղեցրել են քարտուղարի պաշտոն Միրիայում՝ թուրքական իշխանությունների գրասենյակներում: Ալ-Յազիջիի հայրը՝ Աբ-

¹ Իսլամի շիայական ուսմունքի իսմայիլականության ուղղության հետևորդներ: Բնակվում են հիմնականում Լիբանանում ու Միրիայում:

դալլահ Յագիջին, բժիշկ էր և փորձում էր որդուն ծանոթացնել ավանդական բժշկության գաղտնիքներին: Նասիֆ Ալ-Յագիջին արաբերեն սովորել է իրենց հարևանությամբ գտնվող վանքի վանականի մոտ: Փայլուն տիրապետելով արաբերենին՝ Ալ-Յագիջին անգիր սովորում է Ղուրանը և Մութանաբբիի դիվանի զգալի մասը: Տասնվեց տարեկանում նա անցնում է քարտուղարի աշխատանքի հունակաթուղիկ պատրիարքի գրասենյակում: 1824 թ. նրա գրած ձևերգությունները գրավում են Լիբանանի էմիրի՝ Բաշիր Երկրորդի ուշադրությունը, և վերջինս չորս տարի անց հրավիրում է տաղանդավոր բանաստեղծին՝ աշխատելու իր գրասենյակում: Յագիջին դառնում է Բաշիրի մտերիմ շրջանակի անդամներից: Ալ-Յագիջին 1840 թ.՝ Բաշիրի իշխանության ավարտից հետո, տեղափոխվում է Բեյրութ: Այստեղ նա ծանոթանում է ամերիկացի բողոքական միսիոներների հետ, և նրանց միջև սկսվում է սերտ ու երկարատև համագործակցություն: Ամերիկացի բողոքականները շատ բարձր էին գնահատում Ալ-Յագիջիի բանասիրական գիտելիքները: Նրան էին վստահում իրենց բազմաթիվ թարգմանությունների, աշխատությունների խմբագրումը: Դրանց թվում էր նաև Աստվածաշնչի արաբերեն թարգմանությունը: Իր խմբագիր-ոճաբանի գործունեությանը զուգահեռ Յագիջին զբաղվում էր նաև դասավանդմամբ: Նա դասավանդում էր արաբերեն ազգային դպրոցում, սիրիական բողոքական քոլեջում: Միրիայի մշակութային շարժման մեջ ընդգրկված էին հիմնականում քրիստոնյա արաբներ: Եվ նրանք շատ լավ գիտակցում էին, որ երկրի մշակութային ու հասարակական-քաղաքական կյանքի արդյունավետ առաջընթացը հնարավոր կլինի միայն այն դեպքում, եթե այդ շարժմանն իրենց մասնակցությունն ունենան նաև մուսուլման արաբներ:

րը, որոնք Միբիայի բնակչության մեծամասնությունն էին կազմում: Այս պարագայում կարևոր էր նաև, որ քրիստոնյա արաբների կողմից ձևավորվող արաբական նոր գրականությունն իր գաղափարական նոր բովանդակությամբ ներկայացվեր գրական արաբերենով, ինչը կկոտրեր մուսուլմանների շրջանում ձևավորված կարծրատիպը քրիստոնյա արաբների՝ գրական արաբերենի իմացության հետ կապված: Մուսուլմանների կարծիքով քրիստոնյաները չէին կարող հավասարապես տիրապետել գրական արաբերենի նրբություններին. նրանց խոսքը ժարգոնային է¹: Ալ-Յազիջիի ներդրումն արաբական նոր գրականության և, ընդհանրապես, բանասիրության բնագավառում չափազանց մեծ է: 1840-1860 թթ. ընթացքում նա հարստացրեց արաբական բանասիրությունը դասական արաբերենի քերականական դասագրքերով, մականային ստեղծագործություններով, բանաստեղծություններով և ապացուցեց մուսուլմաններին, որ քրիստոնյաներն իրենց բանասիրական գիտելիքներով չեն զիջում մուսուլմաններին և շատ դեպքերում նույնիսկ առավել են: Յազիջիի ստեղծագործական տաղանդը շատ բարձր է գնահատվել եվրոպացի արևելագետների կողմից, որոնց հետ նա եղել է մշտական նամակագրության մեջ: Նասիֆ ալ-Յազիջին ակտիվ մասնակցություն է ունեցել «Միբիական գիտական ընկերության» աշխատանքներին: Ըստ նրա՝ արաբական մշակույթի ու գրականության զարթոնքը պայմանավորված էր արաբական դասական գրականության ավանդույթների վերականգման գործընթացով:

Ալ-Յազիջիի հիմնական ստեղծագործությունները նվիրված են արաբական բանասիրությանն ու գրականությանը:

¹ А. И. Крымский, նշվ. աշխ., էջ 384:

1836 թ. Մալթայում լույս տեսավ Նասիֆ ալ-Յազիջիի “Faṣl al-ḥiṭāb” («Խոսքի մուտք») արաբերեն քերականությանը նվիրված աշխատությունը: Այն գրված էր միջնադարյան բանասիրական գործերի նմանությամբ և մեծ ընդունելություն ունեցավ ընթերցողների լայն շրջանակում: Արաբական միջնադարյան աշխատությունները սկսվում էին Ալլահին ու մարգարեին փառաբանող խոսքերով, որից հետո հեղինակն անցնում էր գրքի բուն շարադրանքին: Անվանելով իր աշխատությունը “Faṣl al-ḥiṭāb”՝ Յազիջին հղում է կատարում այդ ավանդույթին՝ միևնույն ժամանակ փորձելով հասկացնել, որ իր քերականական աշխատությունը գրելիս նա չի պահպանել միջնադարյան այդ պարտադիր կանոնը: 1848 թ. Յազիջին հրատարակեց արաբական տաղաչափությանը նվիրված ուսումնասիրությունը:

Հետագայում՝ 1950-ական թթ. ընթացքում, Ալ-Յազիջին հրատարակում է գրական արաբերենին նվիրված քերականական գործերի շարք: Նրա բանասիրական աշխատությունների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում “Ġaʿīf al-Fara’a” («Վայրի ավանակի որովայնը») քերականական աշխատությունը: Այն գրված է բանաստեղծական ձևով: Նման վերնագրով հեղինակը հղում է կատարում նախախալամական բեդվինական ավանդույթին. նախախալամական Արաբիայում վայրի ավանակի որովայնն արաբների ամենասիրելի կերակուրներից էր: Աշխատությունն անվանելով նման վերնագրով՝ հեղինակը նպատակ ուներ ցույց տալու արաբների հնագույն ավանդույթների ու լեզվական առանձնահատկությունների մասին իր գիտելիքները: Նասիֆ ալ-Յազիջին գրել է նաև բանաստեղծություններ, որոնցից առավել հայտնի են Բաշիր Երկրորդի պալատում անցկացրած տարիների ընթացքում գրված գովերգություններն ու էլեգիաները:

Նասիֆ ալ-Յազիջին ստեղծագործել է նաև մականայի ժանրում: Յազիջիի միջնադարյան գրական այդ ժանրի հանդեպ հետաքրքրությունը դրսևորվում է 1833 թ. միջնադարյան մականային ժանրի հեղինակ Ալ-Հարիրիի ստեղծագործության բանասիրական վերլուծությունը կատարելիս: Նա քննադատության է ենթարկում ֆրանսիացի արևելագետ Միլվեստեր դե Մասիի փարիզյան հրատարակությունը, որտեղ արաբական մեկնաբանություններում Ալ-Յազիջին նկատում է գրական լեզվից շեղումներ: Հարիրիի մականամաների նմանությամբ Յազիջին գրում է “Magma Al-Bahrain” («Երկու ծովերի միացում») մականային ստեղծագործությունը: Գլխավոր հերոսները, ինչպես դասական մականայում, խաբեբան ու պատմողն են՝ Մայմունը և Սուհեյբը: Համաձայն գործողությունների ծավալման վայրի՝ մականամաները կրում են աշխարհագրական անուններ՝ Բաղդադյան, յեմենյան, հալեպյան մականամաներ: Գործողության վայրը սյուժեի վրա առանձնահատուկ ազդեցություն չի թողնում: Սյուժեի առանցքը գլխավոր հերոսի՝ Մայմունի մի վայրից մեկ այլ նոր վայր տեղափոխվելն է: Այս ստեղծագործությունն ունի բանասիրական ուղղվածություն: Այն Ալ-Հարիրի մականամաների վերարտադրությունն էր, որը գրված էր միջնադարյան վերոնշյալ ժանրին հատուկ գեղարվեստական բարդ ոճով և հազեցած էր արխաիզմներով, քանի որ ստեղծագործությունը գրելիս Յազիջիի առաջնային նպատակն էր ընթերցողին ծանոթացնել գրական արաբերենի քերականությանը, ոճական, բառային առանձնահատկություններին¹: Մականաման ընդգրկում է բժշկական տերմիններ, տար-

¹ К. А. Худавердян, *Макама: Этапы развития жанра*, Вопросы Востоковедения, вып. 1-2, Ереван, 1983, с. 240.

բեր ճաշատեսակների անուններ, մոլորակների անվանումներ: Արաբական քերականության կարևոր կանոնները ներկայացված են բանաստեղծական տողերով: Մականաներն ունեն մեկնաբանություններ, բացատրություններ: Բանասիրական ուղղվածությանը զուգահեռ Նասիֆ ալ-Յազիջիի մականաները հետապնդում էին նաև կրթական նպատակներ և արաբերենի ուսուցողական կարևոր աղբյուր էին: Բացի բանասիրական գիտելիքներից՝ ընթերցողը կարող էր ծանոթանալ անցյալի մշակույթին, արաբական հնագույն ավանդույթներին: Մականայում դեպքերը տեղի են ունենում անցյալում: Ալ-Յազիջիի այս ստեղծագործությունը քննադատաբար է ընդունվել արաբական նոր գրականության որոշ ներկայացուցիչների կողմից: Արաբական զարթոնքի ակնառու ներկայացուցիչ Բուտրոս ալ-Բուսթանին 1859 թ. արաբական գրականության զարգացման խնդիրների շուրջ հրապարակային իր ելույթում հատուկ անդրադառնում է մականային՝ ասելով, որ այն չի համապատասխանում արաբական նոր գրականության պահանջներին, և դա այն ժանրը չէ, որով պետք է համալրվի արաբական նոր գրականության ժանրային համակարգը¹:

Նասիֆ ալ-Յազիջին իր ստեղծագործական գործունեությամբ մեծագույն ներդրում ունեցավ արաբական դասական ժառանգության վերականգման ու բանասիրական գիտելիքի և գրականության հետագա զարգացման գործում: Չտիրապետելով որևէ եվրոպական լեզվի՝ Նասիֆ ալ-Յազիջին, այնուամենայնիվ, կարևորում էր եվրոպական մշակույթի և գիտության դերը մշակութային զարթոնքի գործընթացում:

¹ К. А. Худавердян, նույն տեղում:

Միրիայում մշակութային զարթոնքի ակնառու գործիչներին էր **Բուտրոս ալ-Բուսթանին (1819-1883 թթ.)**: Նա ծնվել է Ալ-Դիբիյա գյուղում՝ մարոնիների ընտանիքում: Ալ-Բուսթանին արևմտականացման կողմնակից էր, «Միրիական գիտական ընկերության» ամենաակտիվ ներկայացուցիչներից: Նա սովորել է մարոնիական «Ain Al-Warqa» դպրոցում: Այստեղ նա սովորել է արաբերեն ու եվրոպական լեզուներ: Բուտրոս ալ-Բուսթանին տևական ժամանակ աշխատում է ամերիկյան ու անգլիական հյուպատոսություններում, սերտ կապեր հաստատում ամերիկացի բողոքականների հետ: Ալ-Բուսթանին, զբաղվելով նաև թարգմանչական գործունեությամբ, բողոքականներին օգնում է թարգմանել Աստվածաշունչը: Կիսելով լուսավորչական գաղափարները և նորարարական մտտեցումները՝ Ալ-Բուսթանին դասավանդում էր քրիստոնյա միսիոներների ուսումնական հաստատություններում: 1863 թ. հիմնում է իր Ազգային դպրոցը՝ “Al-madrassa al- watainā”: Դպրոցի գաղափարական առանցքը ձևավորված էր ոչ կրոնական սկզբունքների վրա, այն կոչված էր տարածելու աշխարհիկ դպրություն: Այստեղ դասավանդվում էին արաբերեն ու ժամանակակից գիտություններ:

Բուտրոս ալ-Բուսթանին հիմնականում պաշտպանում էր այն գաղափարը, որ Արևելքի վերածնունդը հնարավոր է միայն ժամանակակից եվրոպական գիտական մտքի ու մշակութային համադրման արդյունքում: Նրա համոզմամբ զարգանալու գլխավոր մոդելը մշակույթների համակեցության, միասնական տարածքում լայնորեն համագործակցելու սկզբունքն էր, գրականության փոխհամագործակցված կիրառումը՝ որպես փոխձանաչման ու ընկալման կարևոր ելակետ: Նրա համոզմամբ արաբները պետք է գիտակցեն, որ բոլոր

կրոններն ի վերջո հավասար են, մարդկային բնույթը նույնն է՝ անկախ նրանից՝ Արևելքից է, թե Արևմուտքից: Նա քարոզում էր հայրենասիրություն. «հայրենիքի հանդեպ սերը հավաստի մի մասնիկ է» (“Hubb al-waṭan min al-īmān”): Այս արտահայտությունը, որը վերագրվում է մարգարեին և հետագայում գործածվում է երիտթուրքերի կողմից, դարձել էր նրա կողմից հրատարակվող պարբերականների նշանաբանը: Նրա կարծիքով պետք էր հստակ տարբերակել ֆանատիզմը (ta‘ṣub) և կրոնական հանդուրժողականությունը: Խոսելով կրոնական անհանդուրժողական մասին՝ նա նաև ակնարկում էր օսմանյան իշխանություններին: Բուսրոս ալ-Բուսթանիի կարծիքով Միրիայի զարգացման համար իշխանությունից պահանջվում է երկու հիմնական սկզբունք՝ ժամանակին համընթաց օրենքների հավասարություն և աշխարհիկ ու կրոնական իշխանությունների տարանջատում¹: 1869 թ.՝ մարոնիական սպանդի ժամանակ, Ալ-Բուսթանին հրատարակում է “Nāfir Sūrīā” («Միրիայի շեփորը») պարբերականը, որի էջերին նա կոչ էր անում կրոնական հանդուրժողականության: Ալ-Բուսթանիի լուսավորչական գործունեությունը հիմնականում պայմանավորված էր նրա լրագրողական ու հրատարակչական ոլորտներում ակտիվ ներգրավվածությամբ:

1870 թ. Ալ-Բուսթանին սկսում է հրատարակել ամիսը երկու անգամ լույս տեսնող “Al-Ġīnān” («Պարտեզներ») ամսագիրը, որտեղ տպագրվում էին քաղաքականությանը, պատմությանը, մշակույթին և գիտությանն առնչվող հոդվածներ: Նույն թվականին հրատարակվում է “Al-Ġānnā” («Պարտեզ, Դրախտ»), իսկ հաջորդ տարի՝ “Al-Ġinnāīnā” («Փոքր պարտեզ»)

¹ A. Hourani, նշվ. աշխ., էջ 100-102:

ամսագրերը: 1870 թ. լույս է տեսնում Բուսթանիի “Muhīt al-Muhīt” («Օվկիանոսի օվկիանոս») երկհատորանի բացատրական բառարանը: Այն ժամանակակից բառարանների սկզբունքով գրաված առաջին բառարանն էր արաբական իրականության մեջ: Նույն թվականին Ալ-Բուսթանին նախաձեռնում է իր հայտնի հանրագիտարանի՝ “Dā’irā’ī Al-Ma’ārif”-ի հրատարակումը՝ բրիտանական հանրագիտարանի օրինակով: Այստեղ կարելի է գտնել տեղեկություններ արևմտյան ու արևելյան քաղաքակրթությունների վերաբերյալ, ինչպես նաև բնագիտությանն առնչվող հոդվածներ: Հանրագիտարանի առաջին վեց հատորները լույս են տեսել նրա կենդանության օրոք, հաջորդ երկու հատորները հրատարակել է նրա որդին՝ Մելիմ ալ-Բուսթանին, մնացած հատորները հրատարակվել են Բուսթանիների տոհմի մյուս ներկայացուցիչների կողմից: Ալ-Բուսթանին գրել է դասագրքեր ու քրեստոմատիաներ:

Բուտրոս ալ-Բուսթանին այն լուսավորիչներից էր, որն առաջինը սահմանեց 19-րդ դարում արաբների առջև ծառայած խնդիրները և փորձեց լուծում տալ դրանց: 1848 թ. «Սիրիական գիտական ընկերության» հերթական նիստում Ալ-Բուսթանին հանդես եկավ կանանց կրթության վերաբերյալ զեկույցով: Այն հետագայում լույս տեսավ ընկերության կողմից հրատարակվող աշխատանքների շարքում: Ալ-Բուսթանիի կարծիքով հասարակության զարգացման համար կարևոր նշանակություն ունի նրա անդամների կրթության մակարդակը: Լուսավորության տարածման համար կնոջ դերը կարևոր նշանակություն ունի, քանի որ նա է հիմնականում զբաղվում երիտասարդ սերնդի կրթությամբ: Սակայն կինն Արևելքում ինքը կրթված չէ, ունի նախապաշարումներ, որոնք խոչընդոտում են Արևելքի կնոջ ինքնադրսևորմանն ու գործունեությանը: Այդ իսկ

պատճառով կնոջ՝ տղամարդուն հավասար կրթություն ստանալու իրավունքը հասարակության առաջնահերթություններից է: Այս հարցում Բուտրոս ալ-Բուսթանիի մոտեցումը բխում էր պրակտիկ խնդիրներ լուծելու սկզբունքից: Նա իր զեկույցում ֆեմինիստական խնդիրներ չէր բարձրացնում, այլ անդրադառնում էր կնոջ՝ կրթություն ստանալու պարզ իրավունքին: 1859 թ. Ալ-Բուսթանին հանդես է գալիս արաբական գրականության խնդիրներին վերաբերող մեկ այլ զեկույցով: Ջեկույցի հիմնական գաղափարն արաբերենի հարմարեցումն էր նոր արաբական գրականության պահանջներին: Դրա համար անհրաժեշտ էր համալրել արաբերենի բառապաշարը ժամանակակից իրականությունը նկարագրող բառերով, խոսափել արխայիկ բառապաշարից: Ալ-Բուսթանիի կարծիքով գրականությունը պետք է կարողանա արձագանքել ժամանակակից խնդիրներին: Ալ-Բուսթանիի լուսավորչական գործունեությունը պայմանավորեց արաբական նահայի հիմնական վեկտորների ձևակերպումը:

Միրիայում մշակութային վերելքի գործընթացում արաբ քրիստոնյաների սերնդից իր նշանակալի դերն է ունեցել **Ահմադ Ֆարիս ալ-Շիդյակը (1804-1887 թթ.)**: Ալ-Շիդյակի գրական գործունեությունը նվիրված էր արաբերենի արդիականացմանը և արաբական մշակույթի պահպանմանը: Նա առանցքային տեղ ունի արաբական դասական գրականությունից դեպի ժամանակակից գրականություն անցումային ժամանակաշրջանում:

Ալ-Շիդյակը ծնվել է մարոնիների ընտանիքում: Կրթությունը ստացել է մարոնական հոգևոր «Aīn Al-Warqa» դպրոցում: Արաբերեն սովորել է իր եղբոր՝ Ասադի օգնությամբ: Նրա եղբայր Ասադը ամերիկացի բողոքականներին դասավանդում

եր արաբերեն: Արդյունքում նա դառնում է բողոքական, որի պատճառով բանտարկվում է և հետագայում սպանվում մարոնիների կողմից: Եղբոր մահը մեծ ազդեցություն է ունենում Ալ-Շիդյակի կրոնական պատկերացումների վրա՝ փոխելով նրա վերաբերմունքը հատկապես մարոնի հոգևորականության նկատմամբ, որի արդյունքում նա դավանափոխ է լինում. սկզբում դառնում է բողոքական, այնուհետև ընդունում է իսլամ: Բողոքականները նրան գործուղում են Եգիպտոս, որտեղ նա զբաղվում է լրագրությամբ “Al-waqā’i‘ al-miṣrīa” պաշտոնաթերթում: 1834 թ. նա մեկնում է Մալթա, այստեղ մնում է տասնչորս տարի, աշխատում է որպես խմբագիր և թարգմանիչ ամերիկացի միսիոներների հրատարակչությունում: Ալ-Շիդյակը նաև օգնում է տեղի միսիոներներին արաբերեն թարգմանել Աստվածաշունչը: Մալթայի և եվրոպական գիտական առաջընթացի մասին իր տպավորությունները Շիդյակը կիսում է իր «Մալթայի նկարագրությունը» ստեղծագործության մեջ¹:

1848 թ. նա մեկնում է Անգլիա՝ Նոր կտակարանն արաբերեն թարգմանելու նպատակով: Ալ-Շիդյակը լինում է Քեմբրիջում, Օքսֆորդում, այնուհետև մեկնում է Փարիզ, որտեղ մնում է մի քանի տարի:

Փարիզում նա գրում է “Al-sāq ‘Ala al-Sāq Fī mā Huwa al-fārīāq” («Քայլ առ քայլ Ֆարյակի հետքերով»), որը շատ զբաղանազետների կարծիքով առաջին նոր արաբական վեպն է: Ստեղծագործությունը մասամբ ինքնակենսագրական է, մասամբ էլ ներառում է քննադատական ռեալիզմի տարրեր՝ սուր քննադատության ենթարկելով մարոնի հոգևորականությանը

¹ А. И. Крымский, նշվ. աշխ., էջ 236:

և Եվրոպայի ռազմաքաղաքական ներկայությանը Արևելքում: Միաժամանակ նա անդրադառնում է եվրոպացի արևելագետների (mustašriqūn) «գաղութային լեզվին», որով նրանք իրենց աշխատություններում ներկայացնում էին Մերձավոր Արևելքի ժողովուրդներին ու նրանց մշակույթը: Դա հատկապես դրսևորվում է գլխավոր հերոսի՝ Ֆարյակի (Ալ-Շիդյակի անվան հապավումն է՝ Ֆարիս Ալ-Շիդյակ)՝ Անգլիա, Ֆրանսիա, Մալթա ճամփորդությունների ընթացքում արևելագետների հետ զրույցների ու քննարկումների ժամանակ: Նրանք անտեսում են Ալ-Ֆարյակի լեզվաբանական գիտելիքներն ու հմտությունները: Արաբները նրանց մոտեցումներում անկիրթ են, և Արևմուտքն իրենց կարիքը չունի: Այդ արևելագետ գիտնականները հաճախ գործածում էին բառեր, արտահայտչամիջոցներ, որոնցով դրսևորում են իրենց վերապահ վերաբերմունքը «այլի», տվյալ դեպքում՝ Արևելքի գիտության, կրթության և մշակույթի նկատմամբ: Ստեղծագործությունն ունի պատմողական սյուժե, որով այն առանձնանում է հիմնականում նկարագրողական բնույթ ունեցող այդ ժամանակաշրջանի ստեղծագործություններից: Այն գրված է միջնադարյան պոետիկայի կանոններով: Տեքստում գերակշռում է հանգավորված արձակը, և կիրառված է արխայիկ բառապաշար: Առանձին գլխով ներկայացվում են ժամանակակից ընթերցողի համար անձանոթ բառերի բացատրությունները: Դեպքերը տեղի են ունենում 19-րդ դարի կեսերին: Ալ-Ֆարյակի միջոցով հեղինակը ներկայացնում է եվրոպական կյանքի մանրամասն նկարագրություններ, որոնք, ի տարբերություն Ալ-Տահտավիի «Փարիզի նկարագրությունը» ստեղծագործության, հեղինակի մոտ այլևս հիացմունք չեն առաջացնում:

Փարիզում Ալ-Շիդյակը հանդիպում է Թունիսի Ահմադ Բեյին, որի հետ շփվելու արդյունքում նվիրում է նրան կասիդա՝ գրված դասական ձևերգության օրինակով: Բեյը, ի պատասխան դրա, հրավիրում է Ալ-Շիդյակին Թունիս, բարձր վարձատրում նրան և նշանակում Թունիսում հրատարակվող “Al-rā’id Al-Tunisi” («Թունիսի ռահվիրա») թերթի գլխավոր խմբագիր: Թունիսում Ալ-Շիդյակը դավանափոխ է լինում և ընդունում իսլամ՝ անվանն ավելացնելով Ահմադ անունը՝ Ահմադ Ֆարիս ալ-Շիդյակ:

1857 թ. Օսմանյան սուլթանի հրավերով Ալ-Շիդյակը մեկնում է Ստամբուլ և 1860 թ. հրատարակում “Al-ğawā’ib” («Պատասխաններ») թերթը, որը լույս է տեսնում մինչև 1883 թվականը: Այն այդ ժամանակ լույս տեսնող արաբերենով առաջին լուրջ պարբերականներից էր: Այն մեծ ճանաչում ուներ ոչ միայն Օսմանյան կայսրությունում, այլ նաև դրա սահմաններից դուրս: Սույն թերթում Ալ-Շիդյակը լուսաբանում էր համաշխարհային քաղաքական խնդիրները, մանրամասն վերլուծում ֆրանկ-պրուսական պատերազմը, 1870 թ. Արևելյան ճգնաժամը: Թերթում տպագրվում էին նաև դիվանագիտական կարևոր փաստաթղթերի թարգմանություններ¹: Նա մեկնաբանում էր հասարակական խնդիրները՝ հիմք ընդունելով այն հեղինակությունների վերլուծությունները, որոնք որոշ ժամանակ ապրել էին Եվրոպայում՝ համեմատության եզրեր ներկայացնելով եվրոպական ու արևմտյան իրականությունների հետ:

Եվրոպայի հանդեպ ունեցած իր հակադրություններում, այնուամենայնիվ, Ալ-Շիդյակը առանձնացնում էր մի շարք ա-

¹ A. Hourani, նշվ. աշխ., էջ 98:

ռանձնահատկություններ, որոնց առկայությունը առավել կնպաստեր առաջընթացին: Նա կարևորում էր եվրոպացիների աշխատասիրությունը, հասարակական միասնությունը, որտեղ կրոնական պատկանելությունն առաջնային կարևորություն չուներ: Այս առումով Ալ-Շիդյակը հատկապես հղում էր կատարում բողոքականությանը, որի հոգևոր առաջնորդները շատ քիչ էին միջամտում երկրի քաղաքական կյանքին՝ լոյալ դիրքորոշում դրսևորելով քաղաքական անցուղարձի վերաբերյալ: Անդրադառնալով հասարակական խնդիրներին և համեմատություն անցկացնելով երկու տարբեր աշխարհների միջև՝ Ալ-Շիդյակը նշում է, որ կանայք ապրում են լիարժեք հասարակական կյանքով, իսկ երեխաները ստանում են լավ դաստիարակություն, կրթված են այն դեպքում, երբ Արևելքում նրանք մատնված են անուշադրության ու անտարբերության: Քաղաքական տեսանկյունից, բնականաբար, Օսմանյան սուլթանն օգտագործում էր Ալ-Շիդյակին՝ կայսրությունում ու դրանից դուրս իր դիրքերն ամրապնդելու, ինչպես նաև խալիֆ դառնալու իր նպատակն իրականացնելու համար:

Ալ-Շիդյակի գործունեությունը հովանավորվում էր նաև Խեդիվ Իսմայիլի կողմից: 1879 թ. թերթը վեց ամսով փակվում է Խեդիվ Իսմայիլի դեմ հողվածներ տպագրելու առաջարկը մերժելու պատճառով: Իհարկե, հետագայում Ալ-Շիդյակը, սատարելով սուլթանին, սկսում է հրատարակել հողվածներ, որոնք ուղղված էին Օրաբի փաշայի ապստամբության դեմ: Թերթը լոյս է տեսնում մինչև 1883 թվականը: Նրա որդին՝ Սելիմը, շարունակում է թերթի հրատարակումը Եգիպտոսում: Ալ-Շիդյակն այլևս Եգիպտոս չի վերադառնում, նա մահանում է Ստամբուլում, սակայն իր իսկ խնդրանքով հուղարկավորվում է Լիբանանում: Կյանքի վերջին տարիներին Ալ-Շիդյակը նո-

րից ընդունում է քրիստոնեություն: “Al-ğawā’ib” թերթը հրատարակելուն զուգահեռ Ալ-Շիդյակը գրում է մի շարք բանասիրական աշխատություններ: Նրա այդ շարքի գործերից է “Sir Al-Laīālī” («Գիշերների գաղտնիքը») բառարանը, որտեղ նա ներկայացնում է արաբերեն բառարմատների ստուգաբանությունը: Նրա առավել հայտնի գիտական գործերից է “Ġasūs Al-Qāmūs” («Բառարանի լրտես») աշխատությունը: Այն միջնադարյան բառարանների քննադատական վերլուծություն է, ինչպես նաև արաբերեն բառերի ստուգաբանական բացատրություն: Բացի բառարանագրական աշխատություններից՝ Ալ-Շիդյակը գրել է նաև արաբերենի քերականության դասագիրք, որով դասավանդվում էր արաբերեն ինչպես Եգիպտոսում, այնպես էլ Օսմանյան կայսրության սահմաններում:

Այսպիսով՝ վերլուծելով Ալ-Շիդյակի գիտական, կրթական, լուսավորչական, կրոնական, ինչպես նաև քաղաքական հայացքները՝ կարելի է նկատել նրա գործունեության բավական լայն ու բազմաշերտ շրջանակը, որը, ինչպես նշված է վերևում, մեծ արձագանք է ունեցել ժամանակի թե՛ լուսավորչական բարենորոգումների, թե՛ քաղաքական ազդեցությունների ոլորտներում: Նրա՝ քաղաքական ուժերի հետ համագործակցելը, ըստ էության, առավել խթանել է Ալ-Շիդյակի գրական-գաղափարական գործունեության՝ իրականացման դաշտ մղելու հնարավորությունները:

Միրիայում մշակութային վերելքի քրիստոնյա ականավոր գործիչների շարքին է դասվում նաև ազգությամբ հայ **Ռիզկալլահ Հասունը (1825-1880 թթ.)**: Նա ծնվել է Հալեպում, որն այդ ժամանակ Միրիայի մշակութային կենտրոններից էր. այստեղ էին կենտրոնացած օտարերկրյա հյուպատոսությունները, որոնք մեծ նշանակություն ունեին հասարակական կյանքի

աշխուժացման համար: Հասունի հայրը հարուստ վաճառական էր, ինչպես նաև աշխատում էր որպես թարգմանիչ Ավստրիայի հյուպատոսությունում: Նա կրթված մարդ էր, տիրապետում էր ֆրանսերենին ու իտալերենին: Ռիզկալլահ Հասունը կրթությունը ստացել է լիբանանյան լեռներում գտնվող Բզումար գյուղում տեղակայված հայ-կաթոլիկ վանքին կից ճեմարանում: Այստեղ դասավանդում էին կրոն, կրոնի փիլիսոփայություն, ինչպես նաև հայերեն, լատիներեն և ֆրանսերեն, պարտադիր առարկաների ցանկում էր նաև գրական արաբերենը: Այստեղ սովորելու տարիներին դրսևորվում է Հասունի հետաքրքրությունը գրականության նկատմամբ¹: Վերադառնալով Հալեպ՝ Հասունը ծանոթանում է տեղի գրական շրջանակների հետ՝ զուգահեռաբար զբաղվելով գրական ու առևտրական գործունեությամբ: Հոր առևտրական գործերը կազմակերպելու նպատակով նա մեկնում էր եվրոպական մի շարք երկրներ, եղել է Փարիզում, Լոնդոնում, ինչպես նաև այցելել է Եգիպտոս:

19-րդ դարի 40-ական թթ. Հասունը որոշ ժամանակ ապրում է Ստամբուլում: Այստեղ նա ծանոթանում է Ստամբուլի գրական շրջանակների հետ և վերջնականապես հաստատում իր հետաքրքրությունները գրականության ոլորտում: Նրա գրական գործունեության վրա մեծ ազդեցություն են ունեցել Բեյրութի գրական գործիչների հետ կապը, ինչպես նաև ամերիկացի բողոքականների հետ ունեցած շփումները: 1856 թ. Ռիզկալլահ Հասունը Ստամբուլում հրատարակում է արաբերենով լույս տեսնող “Mir’at Al-Āhwāl” («Իրողությունների

¹ Նա Բզումար այցելած հայ եպիսկոպոսի պատվին գրում է արաբերեն բանաստեղծություն, մանրամասն տե՛ս Ա. И. Крымский, նշվ. աշխ., էջ 220:

հայելի») քաղաքական ուղղվածություն ունեցող թերթը: Այն արաբական Արևելքում առաջին արաբերենով լույս տեսնող ոչ պաշտոնական պարբերականն էր: Լրագրողական գործունեությամբ Հասունն իր շուրջն է համախմբում թուրք ազատական քաղաքական հայացքներ ունեցող գործիչների: Նրանց շարքում էր Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար Ֆուադ Փաշան: Վերջինս մտերմանում է Հասունի հետ և նրան իր հետ որպես քարտուղար-թարգմանիչ տանում Սիրիա, ուր գործուղված էր 1860 թ. Սիրիայում եվրոպական երկրների կողմից հրահրված մուսուլմանների ու քրիստոնյաների միջև տեղի ունեցած հայտնի արյունալի միջադեպը հետաքննելու նպատակով¹:

Ծանոթանալով տեղի ունեցածի մանրամասներին՝ Հասունը վերջնականապես կորցնում է իր վստահությունը թյուրքական իշխանությունների նկատմամբ, որոնք օգտագործում էին իսլամն ու ֆանատիզմը՝ հազարավոր արաբ քրիստոնյաների ոչնչացնելու համար: Իսլամի և դրա որոշ առաջնորդների հանդեպ ունեցած քննադատական վերաբերմունքը Հասունը շարադրում է “*Hasr Al-Litām*” («Քողի ետևում») աշխատության մեջ, որի ձեռագիր տարբերակը գաղտնի շրջանառվում էր արաբ քրիստոնյաների շրջանում: Այդ մասին տեղեկանում է Ահմադ Ֆարիս ալ-Շիդյակը՝ Հասունի քաղաքական հակառակորդը, և մատնում նրան իշխանություններին: Հասունին սպառնում էր մահվան դատավճիռ, սակայն նա կարողանում է փրկվել՝ փախչելով Ռուսաստան:

1867 թ. Հասունը հեռանում է Ռուսաստանից. սկզբում մեկնում է Ֆրանսիա, այնուհետև՝ վերջնական հաստատվում Լոն-

¹ А. И. Крымский, նշվ. աշխ., էջ 225:

դոնում: Այստեղ նա հրատարակում է “Nafasāt” («Թունավոր ցայթեր») գրական-քաղաքական ժողովածուն, որը հիմնականում նվիրված էր Ալժիրի էմիր շեյխ Աբդակադիրին, որը փրկել էր մեծ թվով քրիստոնյաների կյանք Սիրիայում մուսուլմանների կողմից քրիստոնյաների հանդեպ կատարած ոճրագործության ժամանակ: Այստեղ Հասունը նաև վիրավորական ուղերձներ է հղում իր անձնական թշնամի Ալ-Շիդյակին: Ժողովածուի մյուս մասում տեղ են գտել Հասունի կողմից թարգմանված Կոիլովի առակները: 1868 թ. Հասունը վերահրատարակում է իր “Mir’āt Al-Āhwāl” արաբալեզու թերթը, որտեղ նա քննադատում էր Օսմանյան քաղաքականությունը և կոչ անում արաբներին, ինչպես քրիստոնյաներին, այնպես էլ մուսուլմաններին, ազատվել Օսմանյան տիրապետությունից՝ շարունակելով մերկացնող հողվածներ գրել Ալ-Շիդյակի քաղաքական դիրքորոշման դեմ: Լինելով անգլիամետ և ազատական քաղաքականության կողմնակից՝ նա իր ստեղծագործական գործունեությամբ հետևողականորեն հանդես էր գալիս Օսմանյան արատավոր քաղաքականության դեմ և ռեֆորմների անցկացման կոչերով:

Ամփոփելով վերոնշյալը և ի մի բերելով Սիրիայում արաբական նահապետի և լուսավորչական շարժումների բովանդակային ընդգրկումները՝ պետք է նշել, որ Սիրիան արաբական աշխարհում ուներ ազգային ու մշակութային վերելքի գործընթացները պայմանավորող կարևոր ներդրում: Մի կողմից գրական գործիչ-լուսավորիչները զարկ տվեցին գրական տարբեր նոր ժանրերի զարգացմանը, մյուս կողմից՝ իրենց քաղաքական դիրքորոշումներով ու շփումներով կարողացան ազդեցության դաշտ ապահովել քաղաքական, հասարակական տարբեր խնդիրներ առաջադրելու և լուծելու գործում: Մի-

րիան, լինելով կրոնական տարբեր համայնքների, մասնավորապես մուսուլմանների ու քրիստոնյաների բնակության կարևոր կենտրոն արաբական աշխարհում, հանդիսացավ ժամանակի մշակութային կապող օղակ՝ իր լուսավորյալ գործիչներով ապահովելով, մի կողմից, Արևմուտք-Արևելք գրական-մշակութային կապը, մյուս կողմից մեծապես նպաստեց կրոնական հանդուրժողականությանն ու կենսամիասնությանը:

ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԱՑԻԱ (ՄՈՂԵՌՆԻԶՄ)

Արաբ լուսավորիչների առաջին սերնդի գործունեությամբ սկսված մշակութային զարթոնքի գործընթացը հնարավորություն տվեց եգիպտացիներին մասամբ հաղթահարելու դարավոր ճահճացումը և դուրս գալու մշակութային, քաղաքակրթական ու տնտեսական անդունդից: Եգիպտացիներին հաջողվեց վերականգնել մշակութային հարուստ ժառանգությունը և Եվրոպայից ներմուծած լուսավորչական գաղափարների ադապտացման միջոցով որոշակի փոփոխություններ իրականացնել հանրային գիտակցության տիրույթում: Մշակութային զարթոնքի սկզբնական փուլը նշանավորվեց թարգմանչական հզոր գործընթացով և դրա արդյունքում եվրոպական քաղաքական մտքի և գրականության՝ Եգիպտոս ներթափանցմամբ:

19-րդ. դարի 70-ականներին մշակութային վերելքն անցնում է զարգացման նոր փուլ, որը հայտնի է որպես մուսուլմանական ռեֆորմացիա կամ մոդեռնիզմ անվամբ: Այն մեծ ազդեցություն է ունենում հասարակական, քաղաքական մտքի, գրական նոր գործընթացների կայացման վրա: Ձևավորվելով Եգիպտոսում և սկզբնական շրջանում առավել կրոնական ուղղվածություն ունենալով՝ մուսուլմանական ռեֆորմացիան հետագայում զարգանում է որպես սոցիալ-քաղաքական ուղղություն՝ իր շուրջ համախմբելով լուսավորչական գաղափարներ կրող ոչ միայն մուսուլման, այլ նաև քրիստոնյա մտավորականների տարբեր արաբական երկրներից, հատկապես Սիրիայից: Նրանց թվում էին Աբդ ալ-Ռահման ալ-Քավաքիբին, ծագումով հայ Աղիբ Իսհակը, հրեա Յակուբ Սանուան:

Եգիպտոսում տեղի ունեցող հասարակական, քաղաքական փոփոխությունների համատեքստում անգլիացիների

կողմից գաղութացման պայմաններում առավել հրատապ է դառնում հասարակության ավելի լայն շերտերում լուսավորչական գաղափարների ադապտացման գործընթացը: Մտավորականների նոր սերնդի համար կարևոր են դառնում Ումմայի ներսում *al-waṭan* (հայրենիք), *al-qaūm* (ազգ), *al-ša'ab* (ժողովուրդ) հասկացությունների ներմուծումն ու ադապտացումը: Եվ քանի որ եգիպտական հասարակության համար աշխարհընկալման և ճանաչողության հեղինակավոր համակարգն իսլամի դրույթների ամբողջությունն էր՝ հիմնված Ղուրանի, հադիսների ու սուննայի վրա, որով էլ կարգավորվում էին մուսուլմանի կյանքի բոլոր ոլորտները, նոր սերնդի եգիպտացի լուսավորիչները հասկանում էին, որ ժողովրդի շրջանում առաջադեմ, լուսավորչական գաղափարների առավել լայն տարածումը և ադապտացումը հնարավոր են միայն իսլամում ռեֆորմներ իրականացնելու արդյունքում: Ստեղծված իրավիճակում իսլամն իր կարծրացած համակարգով խոչընդոտ էր ժամանակակից առաջադեմ գաղափարների ձևավորման համար: Առաջանում է իսլամի դրույթներն ու նորմերը վերաիմաստավորելու, դրանք առավել ժամանակակից և ազատական դարձնելու անհրաժեշտությունը:

Մուսուլմանական ռեֆորմացիայի գաղափարախոսության հիմնադիրն է մուսուլմանական միջնադարյան փիլիսոփայության գիտակ, հասարակական, քաղաքական, գործիչ **Ջամալ ալ-Դին ալ-Աֆղանին** (1839-1897 թթ.): Ջամալ ալ-Դին ալ-Աֆղանիի անհատականության շուրջ շրջանառվում են տարբեր հակասական կարծիքներ: Վերջինս, թերևս, պայմանավորված է նրա գործունեության ոլորտների բազմազանությամբ: Նա և՛ փիլիսոփա էր, և՛ հռետոր, հրապարակախոս, և՛ գրող: Ալ-Աֆղանիի կենսագրության ուսումնասիրությամբ

գբադվել են տասնյակ արաբ, իրանցի, աֆղան, թուրք, ինչպես նաև եվրոպացի և ռուս զինականներ, սակայն մինչև այսօր էլ Ալ-Աֆղանի տարբեր կենսագիրների միջև հասկապես ազգային պատկանելության, կրոնական և քաղաքական համոզմունքների հետ կապված տարակարծություններ կան: Իրանցիները նրան կոչում էին Սեյյեդ Ջամալ ադ-Դին Ասադաբադի և պնդում էին, որ նա ազգությամբ իրանցի է, դավանանքով շիա և ծնվել է Ասադաբադ քաղաքում՝ Իրանի Համադան նահանգում: Իսկ աֆղանները նրան կոչում էին Սեյյեդ Ջամալ ադ-Դին ալ-Աֆղանի և հաստատում, որ նա փուշթուն է, սուննի, ընդ որում՝ հանաֆիական կրոնաիրավական դպրոցի հետևորդ և ծնվել է աֆղանական Կունար նահանգի Ասադաբադ բնակավայրում: Ալ-Աֆղանի գլխավոր մրցակիցներից մեկը՝ շեյխ Աբու Ալ-Հուդան, անվանում էր նրան mutāfġan (աֆղան ձևացող) և փորձում էր բացահայտել նրա շիայական ծագումն ու արմատները¹:

Ալ-Աֆղանին իսլամական աշխարհում առկա հասարակական, քաղաքական խնդիրների լուծումը տեսնում էր իսլամում բարենորոգումներ կատարելու համատեքստում: Նա փորձում էր բացատրել, որ սոցիալական ծանր իրավիճակը, գիտական ու մշակութային հետընթացը, քաղաքական ու տնտեսական թուլությունը բացառապես պայմանավորված էին իսլամի դրույթների խեղաթյուրմամբ և դրանց սխալ մեկնաբանությամբ: Ալ-Աֆղանի գաղափարախոսության հիմնական առանցքներից էին իսլամադավան ժողովուրդների միասնական խալիֆայության ներսում համախմբվելն ու եվրոպական գաղութարարների դեմ պայքարելը:

¹ A. Hourani, նշվ. աշխ., էջ 110:

Նրա աշխարհայացքային և գաղափարական մոտեցումներն ու պատկերացումներն իրենց մարմնավորումը գտան պանիսլամական գաղափարախոսության մեջ, որի հիմնադիրը եղավ հենց Ալ-Աֆղանին: Իսլամադավան պետությունների ապագայով մտահոգված՝ նա ճամփորդում է իսլամական և եվրոպական երկրներ՝ ուսումնասիրելով աշխարհաքաղաքական գործընթացները և համադրելով արևելյան ու արևմտյան քաղաքական, սոցիալ-տնտեսական մոդելները: Այս ամենի արդյունքում Ալ-Աֆղանին քարոզներով ու դասախոսություններով հանդես է գալիս իսլամական և եվրոպական պետություններում՝ փորձելով իր մոտեցումները ներկայացնել, մեկնել իր պանիսլամական հայացքները՝ հույս ունենալով նաև համախոհներ գտնել ժամանակի մտածողների շրջանում: Փարիզում գտնվելու ժամանակ Ալ-Աֆղանիի անհատականությունն ու գաղափարները մեծ ազդեցություն ու հետաքրքրություն գտան մուսուլմանական աշխարհով հետաքրքրված եվրոպացի մտավորականների շրջանում, որոնցից էր ֆրանսիացի բանասեր, փիլիսոփա Է. Ռենանը. վերջինիս հետ Ալ-Աֆղանին գաղափարական և հայեցակարգային բանավեճ է ծավալում՝ կապված գիտության նկատմամբ իսլամի դիրքորոշման հետ¹: 1884-1885 թթ. Ալ-Աֆղանին բրիտանական պետական այրերի հետ բանակցություններ է վարում Եզիպտոսի ու Սուդանի ապագայի վերաբերյալ: Այս գործում նրան օգնում է անգլիացի գրող Վ. Բլանթը: Քննադատելով գաղութատիրական քաղաքականությունը և մեծ ցանկություն ունենալով ի մոտո ծանոթանալու արևելյան կենսակերպին, կրոնական դրսևորումներին և ժողովուրդների կենցաղին ու ավանդույթներին՝

¹ A. Hourani, նշվ. աշխ., էջ 110:

Բլանթն իր կնոջ հետ 1877-1879 թթ. ճամփորդում է Արևելք: 1880 թ. որոշ ժամանակով Բլանթը գտնվում է նաև Եգիպտոսում, որտեղ նա տեղեկանում է ընթացող հասարակական, քաղաքական շարժումներին, ինչպես նաև իսլամին առնչվող խնդիրների մասին: Այստեղ նա հանդիպում է Մուհամմադ Աբդոյի հետ, որի միջոցով ծանոթանում է Ալ-Աֆղանիի գործունեությանը, ինչպես նաև իսլամական ռեֆորմիստական գաղափարախոսությանը: Բլանթի ուսումնասիրությունները մարմնավորվեցին մի շարք հոդվածներում, որոնք 1882 թ. ամբողջացան «Իսլամի ապագան» գրքում:

Բլանթն ուներ բավական ազդեցիկ կապեր բրիտանական հայտնի քաղաքական շրջանականների ներկայացուցիչների հետ, որոնք դեմ էին անգլիական գաղութատիրական քաղաքականությանը: 1885 թ. Ալ-Աֆղանին լինում է Անգլիայում, հյուրընկալվում Բլանթին՝ քննարկելու Եգիպտոսի ապագային և անգլոեգիպտական փոխհարաբերություններին առնչվող հարցեր: Բլանթն ալ-Աֆղանին ծանոթացնում է մի շարք քաղաքական գործիչների հետ՝ ստեղծելով պլատֆորմ (հարթակ) բանակցությունների համար: Բավական երկար տևած հանդիպումները և քննարկումները, այնուամենայնիվ, չեն պսակվում հաջողությամբ, և Ալ-Աֆղանին ի վերջո հրաժարվում է անգլոեգիպտական համաձայնության պատրանքից:

Ալ-Աֆղանին շարունակում է իր՝ հնարավորություններ և դաշինքներ ստեղծելու փնտրտուքը. գնում է Ռուսաստան, այնուհետև՝ Պարսկաստան, լինում նաև պարսից շահի՝ Նասր Ալ-Դինի խորհրդական, որից հետո կապեր հաստատում նաև սուլթանի հետ՝ փորձելով գտնել իսլամական աշխարհի միասնականության ու համերաշխության իր գաղափարական հենակետերը: Երկարատև հասարակական, քաղաքական գոր-

ծունեության ընթացքում Ալ-Աֆղանին, անդավաճան հետևելով իր քաղաքական պատկերացումները պայմանավորող իդեալներին, համաձայնության վճռորոշ եզրեր չի կարողանում գտնել իսլամական աշխարհի հայտնի կառավարիչների հետ: Այդուհանդերձ, լինելով իսլամական երկրների միասնության ջատագով՝ Ալ-Աֆղանիի առաքելությունը զուտ քաղաքական միտվածություն չուներ. կենտրոնական խնդիրը ոչ թե իսլամական պետությունների քաղաքական ուժեղ ազդեցությունն էր, այլ տեսնելը իսլամադավան ազգերին կրոնի ճիշտ ընկալման և դրա ուսմունքի վերաբերյալ համերաշխ գոյակցելու ընդհանրության մեջ: Եվ այս ճանապարհով էր ընկալում Ալ-Աֆղանին ապագադութացման իրական տեսլականը:

Գալով Եգիպտոս՝ Ալ-Աֆղանին իր շուրջն է համախմբում ժամանակի առաջադեմ մտածողներին, հասարակական, քաղաքական գործիչներին, Ալ-Ազհարի առաջադեմ գիտնական աստվածաբաններին, որոնց թվում էր նաև Մուհամմադ Աբդուն: Վերջինս, տարվելով Ալ-Աֆղանիի գաղափարախոսությամբ, նրա հետ միասին ձևավորում է մուսուլմանական ռեֆորմացիայի հայեցակարգը՝ հիմքում դնելով մտքի ու բանականության գերակայությունը: Նրանք զարգացնում էին այն թեզը, որ Ղուրանը և Սուննան պարունակում են հավերժական ու բոլոր ժամանակներին համապատասխան ճշմարտություններ, որոնք ճիշտ, բանականությամբ ուղղորդված մեկնաբանման կարիք ունեն, և բացատրում էին, որ Ալլահի կողմից աշխարհի արարման հիմքում ընկած են հստակ համակարգ, որոշակի օրինաչափություններ, և այդ ամենը հասկանալու համար Ալլահը մարդուն օժտել է բանականությամբ: Սրանով նրանք նախապատվությունը տալիս էին օրենքների մշակման *իջթիհադ* (iğtihād) մեթոդին, որի հիմքում ընկած էր տրամա-

բանության ու նպատակահարմարության սկզբունքի կիրառումը՝ հրաժարվելով *թակլիդից (taqlīd)*, որը մարմնավորում էր աստվածաբանության հեղինակությունների դատողություններին կույր վստահությունը¹: Մոդեռնիստները փորձում էին հաշտեցնել գիտությունը իսլամի հետ՝ գիտական հայտնագործությունների ակունքները փնտրելով Ղուրանում:

Ալ-Աֆղանիի գաղափարական ընկալումների և պանիսլամական ուղեգծի դրսևորումները մեծ ընդունելություն են գտնում Եգիպտոսի առաջադեմ մեկ այլ գործչի՝ **Մուհամմադ Աբդոյի** գործունեության մեջ: Վերջինս, ծնվելով ու կրթվելով Եգիպտոսում, մեծապես հետաքրքրված էր մոդեռնիստական գաղափարներով: Երիտասարդ տարիքում ստանալով կրոնական լայն գիտելիքներ՝ Աբդոն տարվում է իսլամական միստիցիզմով՝ սուֆիզմով՝ դրանով ընդդիմանալով իսլամական ուղղափառ աստվածաբանությանը և այն դիտարկելով որպես մուսուլմանական սխոլաստիկ համակարգի այլընտրանք:

Ազդված լինելով Ալ-Աֆղանիի գաղափարախոսությունից՝ Աբդոն 1876 թ. “Al-ahrām” օրաթերթում հրատարակում է հոդվածաշար՝ նվիրված Արևելքի ու Եվրոպայի մշակութային փոխհարաբերություններին: 1877 թ. ավարտելով համալսարանը՝ Մուհամմադ Աբդոն սկսում է դասավանդել Ալ-Ազհարում՝ կարդալով դասախոսություններ տրամաբանության, արաբերենի, աստվածաբանության, արաբական գրականության պատմության մասին: Աբդոն փորձում էր Իբն Խալլունի փիլիսոփայական, հասարակագիտական գաղափարները համադրել ժամանակակից գործընթացների հետ: 1880 թ. Ռիազ Փաշան Աբդոյին նշանակում է “Al-waqā’ī‘ Al-Miṣrīa” պաշտոնա-

¹ З. И. Левин, *Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте*, М., 1972, с. 198.

թերթի գլխավոր խմբագիր, որն Աբդոն դարձնում է ազատական ու ռեֆորմիստական գաղափարների բարձրախոս: Աբդոն նաև համագործակցում էր ազգային ազատագրական շարժմանը սատարող պարբերականների (“Misr”, “Al-Tāğira”) հետ: Քաղաքական նպատակներին հասնելու հեղափոխական մեթոդները հասկանալով՝ Աբդոն, այնուամենայնիվ, սատարում էր աստիճանական ու կառուցողական բարեփոխումները՝ գնահատելով դրանց արդյունավետությունը: Սակայն տուրք տալով հայրենասիրական նկրտումներին՝ 1981-1982 թթ. աջակցում է Օրաբի փաշայի ապստամբությանը, որի պարտության արդյունքում Եգիպտոսը վերջնականապես զավթվում է Անգլիայի կողմից: Ապստամբության պարտությունից հետո Աբդոն արտաքսվում է Եգիպտոսից. սկզբում նա գնում է Բեյրութ, զբաղվում դասավանդմամբ, ապա՝ Ալ-Աֆղանիի հրավերով տեղափոխվում է Փարիզ: Փարիզում նրանք հիմնում են “Al-‘urwa Al-Wutqia” («Ամուր կապ») գաղտնի կազմակերպությունը և 1884 թ. հրատարակում համանուն թերթը, որը կոչված էր հրապարակելու նյութեր բրիտանական գաղութացման դեմ: Որոշ ժամանակ անց, սակայն, թերթի գործունեությունն արգելվում է, և Աբդոն մեկնում է սկզբում Թունիս, ապա՝ վերադառնում Բեյրութ՝ շարունակելով աստվածաբանության իր դասախոսությունները: Բեյրութում նրա տունը ծառայում է որպես երիտասարդ գիտնականների ու գրողների հավաքատեղի, որտեղ արաբերենի և իսլամի շուրջ քննարկումներին մասնակցում էին կրոնական և էթնիկ տարբեր խմբերի ներկայացուցիչներ (մուսուլման, դրուզ քրիստոնյա):

1888 թ. Աբդոյին Եգիպտոսի Խեդիվը թույլատրում է վերադառնալ հայրենիք: Աբդոն լիահույս էր շարունակել իր կրթական պրակտիկան, սակայն Խեդիվը չէր ցանկանում տեսնել

Աբդոյին գիտակրթական ոլորտում, որտեղ նա կարող էր ազդեցություն գործել երիտասարդ սերնդի վրա: Նա նշանակվում է 1883 թ. ձևավորված ազգային տրիբունայի դատավոր, իսկ 1899 թ. զբաղեցնում Եգիպտոսի մուֆթիի՝ կրոնական օրենսդիր համակարգի գլխավորի պաշտոնը: Այստեղ նա հնարավորություն է ստանում բարեփոխելու կրոնական դատարանները. հասարակական խնդիրներին վերաբերող նրա *ֆեթվաներն* (*fatāwā*) ուղղված էին ադապտացնելու կրոնական օրենքները՝ ժամանակին համաքայլ: Նման կարևոր ֆեթվաներից էր բանկային համակարգում տոկոսի (*raba*) թույլատրումը: Այս ողջ ընթացքում Աբդոն շարունակում է հավատարիմ մնալ իր գիտնականի, ուսուցչի, գիտության կազմակերպչի կոչմանը, ինչպես նաև ծավալում է իր հրապարակախոսական գործունեությունը: Աբդոյի նախաձեռնությամբ 1898 թ. հիմնվում է մոդեռնիստական “Al-Manār” («Փարոս») ամսագիրը, որի գլխավոր խմբագիրն է դառնում Աբդոյի աշակերտներից լիբանանցի Էմիգրանտ Ռաշիդ Ռիդան: Ամսագրի հիմնական նպատակն էր փաստարկել իսլամի՝ ժամանակակից գիտությունը և հասարակական մտքին համահունչ լինելու ապացույցները, ինչպես նաև դաստիարակել մուսուլմանին կրոնական հանդուրժողականության, լուսավորչականության տարածման ոգով:

Աբդոյի ռեֆորմիստական գործունեության արտացոլման հիմնարար արդյունք են “Risālat Al-Tawhīd” («Միաստվածության ուղերձ») և “Tafsīr Al-Qurān” («Ղուրանի մեկնություն») աշխատությունները: Վերջինս սկզբնական շրջանում առանձին հատվածներով լույս է տեսնում “Al-manār” ամսագրում, իսկ 1905 թ.՝ հրատարակվում ամբողջական գրքով: Այն դարձավ իսլամի նոր մեկնության ու կրոնական նոր գիտելիքի փոխանցման հիմնասյուն: Աշխատությունը ներառում է Ղուրանի

մինչև 9-րդ սուրայի մեկնությունը, ընդ որում՝ Աբդուն տվել է առաջին չորս սուրաների մեկնությունը, իսկ նրա աշակերտը՝ Ռաշիդ Ռիդան, ամբողջացրել է այն: Աբդուն, հիմնվելով Ղուրանի դրույթների վրա, փորձում է ներկայացնել հասարակական կյանքին առնչվող խնդիրները և դրանց լուծումը նոր լուսի ներքո՝ ընդգծելով ժամանակի պայմաններին զուգընթաց լինելու դրանց կարևորությունը: «Մեկնություններում» արձարծվում են խնդիրներ՝ կապված պատմության, կենսաբանության, մարդու ծագման հետ: Մասնավորապես, առանձնահատուկ ուշադրության են արժանի բազմակնությանը և կնոջ հավասարությանը վերաբերող մեկնությունները: Կրոնագիտական այս հիմնարար աշխատությունը մեծապես կարևորվեց իսլամական աստվածաբանության հետագա զարգացման համար:

Մուսուլմանական ռեֆորմացիայի մյուս ակնառու ներկայացուցիչը հասարակական գործիչ, հրապարակախոս **Աբդ ալ-Ռահման ալ-Քավաքիբին** է: Նրա աշխատություններն ու քաղաքական հայեցակարգը լավագույնս են արտացոլում տվյալ ժամանակաշրջանի քաղաքական մտքի առանձնահատկությունները, ներառում գաղափարական հիմնական հոսքերը, և նրա «ստեղծագործությունները կարող են տալ 19-րդ դարավերջի մուսուլմանական աշխարհի լավագույն մտածողների հույսերն ու ձգտումները հասկանալու բանալին»¹: Ծնվելով ունևոր և հեղինակավոր ընտանիքում, որի ներկայացուցիչները տարբեր ժամանակներում բարձր պաշտոններ էին զբաղեցրել պետական համակարգում, Ալ-Քավաքիբին ստանում է ժամանակի համար փայլուն կրթություն՝ դեռևս մանկուց աչ-

¹ Левин З. И., *Абд ар-Рахман аль-Кавакибби. Природа деспотизма и гибельность порабощения*, М. 1964, с. 8.

քի ընկնելով բացառիկ ունակություններով: 1876 թ.՝ 28 տարեկանում, նա դառնում է Հալեպում լույս տեսնող «Al-Furāt» («Եփրատ») պաշտոնաթերթի գլխավոր խմբագիրը: Սակայն շուտով ստիպված է լինում թողնել այն, քանի որ թերթը վերահսկվում էր օսմանյան իշխանությունների կողմից, և Ալ-Քավաքիբին այլևս չէր կարողանում ազատորեն արտահայտել իր լուսավորչական ու ռեֆորմիստական գաղափարները: Դա հակասում էր Ալ-Քաուաքիբի՝ մամուլի դերի մասին պատկերացումներին. «Թերթի բովանդակությունը պետք է ամբողջությամբ դրվի մարդկությանը ծառայելուն, դաստիարակի բարքեր, ձևավորի մտածողություն, քննադատի թերությունները, ընդգծի արժանիքները, հանդես գա ի պաշտպանություն արդարության ու իրավունքի»: Հետագայում Ալ-Քավաքիբին շարունակում է իր հրապարակախոսական գործունեությունը՝ նախաձեռնելով սեփական թերթերի հրատարակումը՝ «Al-šahba» (Հալեպի էպիտետներից մեկը) և «Al-I‘tidāl» («Արդարություն»): Այս երկու թերթերն էլ մի քանի համարի լույս տեսնելուց հետո արգելվում են նրանցում հակաիշխանական և լուսավորչական մոտեցումների դրսևորման պատճառով: Տեղական իշխանությունների հասցեին հնչեցվող սուր քննադատություններն ու նրանց հետ ունեցած հակասություններն ի վերջո հանգեցնում են նրան, որ 1900 թ. Ալ-Քավաքիբին վերահաս ձերբակալությունից խուսափելու համար ստիպված է լինում փախչել Հալեպից Կահիրե, որն այդ ժամանակ դարձել էր արաբական քաղաքական մտքի, մուսուլմանական ռեֆորմացիայի կենտրոնը և ապահովում էր հասարակական, քաղաքական, ինչպես նաև մշակութային գործունեության լայն հնարավորություններ: Այնտեղ Ալ-Քավաքիբին սերտ կապեր է հաստատում Մուհամմադ Աբդուլի և եգիպտական մտավորակա-

նության մյուս ներկայացուցիչների հետ: Կարճ ժամանակ անց Ռաշիդ Ռիդայի միջնորդությամբ “Al-Mū`īad” թերթում լույս են տեսնում Ալ-Քավաքիբի հոդվածները, որոնցում նա դրսևորում է իր բացասական վերաբերմունքը բռնապետության, իշխանական կամայականությունների նկատմամբ և լուսավորչական սկզբունքների հիման վրա արաբական իրականությունը վերակառուցելու իր ձգտումը: Այդ հոդվածներից էլ հետագայում առանձին գրքով լույս է տեսնում նրա “Ṭabā`ī` Isitbdād wa Maṣāri` Isti`bād” («Բռնապետության բնույթն ու ստրկացման կործանարարությունը») ստեղծագործությունը, որտեղ հեղինակը ձեռնամուխ է լինում ժամանակի հասարակական, քաղաքական և բարոյական խնդիրների բազմակողմ մշակմանն ու վերլուծությանը: Իր այս աշխատության մեջ Ալ-Քավաքիբին փորձում է ներկայացնել Արևելքն ախտահարած «հիվանդությունների» էությունը և բացահայտել դրանց պատճառներն ու ապաքինման ուղիները: Որպես Արևելքն ախտահարած հիվանդություն՝ Ալ-Քավաքիբին դիտարկում է բռնապետությունը կյանքի բոլոր ոլորտների վրա իր կործանարար ազդեցությամբ: Երկի «Բռնապետությունն ու կրոնը» վերտառությամբ առաջին գլխում նա ներկայացնում է իսլամի վրա բռնապետության քայքայիչ ազդեցությունը: Ըստ Քավաքիբի՝ իսլամի հիմնարար արժեքների խեղաթյուրումը խոչնդոտում է իրերի դասավորվածության մասին պատկերացումների ռացիոնալ ընկալմանը: Անդրադառնալով իսլամի վաղ շրջանի՝ բարեպաշտ խալիֆների կառավարման տարիների ժամանակաշրջանին՝ Ալ-Քավաքիբին այն ներկայացնում է որպես արդարության ու հավասարության մի ժամանակաշրջան, որը պայմանավորված էր իսլամի ձևավորած արժեքներով: «Ղուրանը նրանք (առաջին խալիֆները) ընդունեցին որպես հիմք և

ստեղծեցին կառավարում, որը հաստատեց հավասարություն՝ հավասարություն բարիքներում և դժվարություններում»¹: Սրանով Ալ-Քավաքիբին փորձում է հավասարության և արդարության գաղափարը կապել իսլամում ներկայացված դրոյթներին: Այնուհետև նա, զարգացնելով միտքը, մուսուլմանական հասարակության բարոյական և մտավոր հետընթացը սերտորեն պայմանավորում է բռնապետերի կողմից կրոնի հիմքում ընկած արժեհամակարգի խեղաթյուրմամբ ու դրա բովանդակության սխալ մեկնաբանմամբ: «Իսլամի վրա հարձակվեցին բռնապետերը, օգտագործելով այն ժողովրդի շրջանում հակասություններ հրահրելու և աղանդների բաժանելու միջոց՝ վերածեցին այն սեփական քմահաճույքներն իրագործելու զենքի»²: Բռնապետության արմատացման գործում Ալ-Քավաքիբին մեղադրում էր աստվածաբաններին և հաղիսների մեկնությամբ զբաղվող գիտնականներին, որոնք սրբացնում էին բռնապետի իշխանությունը՝ ասելով, որ սուլթանն Ալլահի ստվերն է երկրի վրա: Դիտարկելով կրոնը որպես բռնապետության հենարան՝ Ալ-Քավաքիբին միաժամանակ հենց իսլամի իրական արժեքների վերականգման միջոցով է տեսնում արդար ու օրինական իշխանության վերահաստատման հնարավորությունը:

Բռնապետության վերացումը Ալ-Քավաքիբին տեսնում էր կրոնական իրական արժեքների, լուսավորական գաղափարների տարածման միջոցով միայն: «Դաստիարակությունն ու բռնապետությունը, ըստ էության, փոխբացասող երևույթներ են³: Արևելքի հիվանդությունը սոցիալությունն է: Նրա կարծի-

¹ Abd al-Rahman al-Kawākibī, *Tabā'ī' Isitbdād wa Maşāri' Isti'bad*, Baīrūt 2011, p. 47.

² Abd al-Rahman al-Kawākibī, նշվ. աշխ., էջ 48:

³ Abd al-Rahman al-Kawākibī, նշվ. աշխ., էջ 48:

քով բռնապետությունը պայմանավորված է ժողովրդի տգիտությամբ. «Եթե ժողովուրդը ցանկանա, կկարողանա ստիպել բռնապետին փոխարինել բռնապետության հիմքերը մարդկանց երջանկությունն ու հաջողությունն ապահովող սահմանումներով: Այս պարագայում բռնապետին կմնա միայն հնազանդվել»¹: Կրոնական գիտելիքի ձեռքբերման և դաստիարակության գործում Ալ-Քավաքիբին առանձնահատուկ կարևոր նշանակություն է տալիս բանականությանը, որի միջոցով միայն հնարավոր է հասնել իրական ճանաչողությանը և դրա սահմանների ընդլայնմանը, ինչպես նաև ժողովրդի կողմից իր իրավունքների գիտակցմանը:

Աշխատության մեջ հեղինակն անդրադառնում է իշխանության օրենսդիր ու գործադիր մարմինների բաժանման, ինչպես նաև դրանք ժողովրդի կամքի դրսևորմամբ ձևավորելու ու վերահսկելու կենսական անհրաժեշտությանը: «Բռնապետության բնույթն» աշխատությունում Ալ-Քավաքիբին վեր է հանում ժամանակի արաբ հասարակության համար հրատապ խնդիրների մի ընդգրկուն համակարգ՝ դիտարկելով այն մուսուլմանական ռեֆորմացիային բնորոշ հայեցակարգի սահմաններում, որի հիմքում ընկած էին հասարակական, քաղաքական խնդիրներին կրոնական ձևակերպումներ տալը և միաժամանակ լուսավորչական սկզբունքներով ամրագրված լուծումներ գտնելը: Ալ-Քավաքիբի հայեցակարգում տեղ գտած կարևոր դրույթներից էր նաև նախասահմանվածության մասին կրոնական ավանդական պատկերացումների հերքումը, ինչը մարդկանց շրջանում պետք է ձևավորեր պատասխանատվության զգացում սեփական գործողություններում, ինչպես նաև կամք՝ պայքարելու ընդդեմ բռնապետության ու

իրավունքների ոտնահարման: 1902 թ. “Al-Manār” («Փարոս») թերթում լույս է տեսնում Ալ-Քավաքիբի “Umm Al-Qurā” («Քաղաքների մայր») աշխատությունը: 1959 թ. գիրքը հրատարակվում է երկրորդ անգամ, որին կցվում է Աբդ ալ-Ռահման ալ-Քավաքիբի թոռան կողմից գրված համառոտ նախաբանը¹:

Այստեղ նա ներկայացնում է իր ռեֆորմիստական գաղափարների իրականացման հնարավոր ուղիներն ու մեխանիզմները Մեքքայում տեղի ունեցող գաղտնի համաժողովի ընթացքում: Համաժողովին մասնակցում էին մուսուլմանական աշխարհի ներկայացուցիչներ, որոնք համատեղ պետք է մշակեին և սահմանեին ապագա համամուսուլմանական պետության՝ իսլիֆայության կառուցվածքն ու կառավարման ձևերը: Նա առաջարկում էր հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների առանձնացում, ընդ որում՝ իսլիֆայության հոգևոր կենտրոնը պետք է լիներ Մեքքան, իսկ իսլիֆը պարտադիր պետք է ընտրվեր արաբական կուրաիշ ցեղից՝ երեք տարով: Խալիֆին ընտրելու էր šūra (խորհուրդը), որը կազմված էր լինելու բոլոր մուսուլմանական երկրների հարյուր ընտրված ներկայացուցիչներից: Այսպիսով՝ իսլիֆայության հոգևոր իշխանությունը կենտրոնանալու էր Հիջազի արաբների ձեռքերում: Խալիֆայության մաս կազմող մյուս երկրներն ունենալու էին կառավարման իրենց պատասխանատվության ոլորտները: Թուրքիան պետք է զբաղվեր արտաքին քաղաքականությամբ, քանի որ թուրքերը լավագույն դիվանագետներն էին համարվում: Եգիպտոսը զբաղվելու էր մշակութային կյանքի կազմակերպմամբ, Մարոկկոն, Աֆղանստանը՝ զինված ուժերով, Իրանը՝

¹ I. Weissman, Abd al-Rahman al-Kawakibi: Islamic reform and Arab revival (Makers of the Muslim world) Great Britain, One World Publication, 2016, p. 67.

տնտեսական ու գիտական հարցերով: Եվ քանի որ հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային ոլորտները կարգավորվելու էին մոդեռնիզացված իսլամի դրույթների համաձայն, իսկ իսլամի միակ իրական գիտակը արաբներն էին, իսլամաֆայության արտաքին ու ներքին խնդիրների վերջնական լուծումը նույնպես տալու էին արաբները¹: Համաձայն Ալ-Քավաքիբի՝ արաբները բոլոր ազգերի մեջ առաջինն էին, որ որդեգրել էին որոշումների ընդունման համընդհանուր հավասարության սկզբունքը: Ահա այստեղ են ուրվագծվում Ալ-Քավաքիբի՝ որպես արաբական ազգայնականության գաղափարախոսի հիմնական մոտեցումները: “Umm Al-Qurā” ստեղծագործությունը կարելի է համարել արաբական ազգային ինքնագիտակցության զարթոնքի վառ դրսևորում, քանի որ այստեղ է քննարկվում լուսավորչական գաղափարներին համահունչ Օսմանյան կայսրությունից անկախ արաբամուսուլմանական ինքնուրույն պետություն ստեղծման գաղափարը: 19-րդ դարավերջի և 20-րդի սկզբի արաբական քաղաքական միտքը զարգանում էր ազգային ինքնագիտակցության վերելքի ու ազգայնական գաղափարների քարոզի հովանու ներքո: Ժամանակի արաբ լուսավորիչները արաբական ժողովուրդների բարեկեցության և իրական իրավունքների արտահայտման հնարավոր մեխանիզմը տեսնում էին Ղուրանում ամրագրված հիմնադրույթների գրագետ մեկնաբանության սահմաններում, տարածում էին իրենց լուսավորչական գաղափարները՝ այդպիսով խթանելով արաբական մշակույթի ու քաղաքակրթության վերածնունդը:

¹ ‘Abd al-Rahman al-Kawākibi, “Umm Al-Qurā”<https://www.kutub-pdf-ar.com/pdf/>.

Հրապարակախոսության առաջացումն ու զարգացումը

19-րդ դարում արաբական աշխարհում տեղի ունեցող մշակութային, հասարակական, քաղաքական գործընթացները, ինչպես նաև դրանցով պայմանավորված ազգային և մշակութային զարթոնքը՝ նահդան, մեծապես նպաստեցին հրապարակախոսության առաջացմանն ու զարգացմանը: Քաղաքական և հասարակական գործիչներն իրենց մտտեցումներն ու դիրքորոշումներն արտահայտում էին այդ ժամանակ լույս տեսնող թերթերի և ամսագրերի էջերում կամ հիմնում իրենց պարբերականները: Հրապարակախոսության զարգացման վրա մեծ ազդեցություն ունեցավ մուսուլմանական ռեֆորմացիան, որի ներկայացուցիչները հողվածներով հանդես էին գալիս տարբեր պարբերականներում: Տպագրվող հողվածներն առանձնանում էին իրենց ոճով, կառուցվածքով, լեզվով՝ այսպիսով ձևավորելով առանձին ժանր՝ հրապարակախոսության ժանրը: Հանդես գալով որպես նոր արաբական գրականության առաջին ինքնուրույն ժանր՝ հրապարակախոսությունը նպաստեց արաբական գրականության արձակի նոր ժանրերի, ինչպես նաև թեմատիկայի ձևավորմանը: Պարբերական մամուլի էջերին է դրսևորվում նոր արաբական գրականության լեզուն: Հրապարակախոսության զարգացման գործում մեծ դեր են ունեցել Սիրիայի հրապարակախոսները, որոնց խոսքը հիմնականում ուղղված էր Օսմանյան կայսրության վարած քաղաքականության դեմ: Նրանք արաբական երկրների հիմնական վտանգը տեսնում էին Օսմանյան կայսրությունում տիրող բարքերում՝ ի տարբերություն եգիպտացի հրապարակախոսների, որոնց առաջնային նպատակն էր ազատագրել երկիրն անգլիացի գաղութարարներից: Հրապարակախոսների հիմ-

նական մասը մուսուլմանական ռեֆորմացիայի հետևորդներն էին, և նրանց հողվածների հիմնական թեմատիկան էր հակա-գաղութային, ազգային-ազատագրական պայքարը, Օսմանյան կայսրության վարած քաղաքականության քննադատությունը, ինչպես նաև հասարակ ժողովրդի շահերի պաշտպանությունը և կանանց իրավունքների խնդիրը: Հրապարակախոսության միջոցով քննարկման էին դրվում երկրի ու հասարակության համար կարևոր խնդիրներ, և տրվում դրանց հետագա լուծումները: Այստեղ հիմնականում կանդրադառնանք այն հրապարակախոսների գործունեությանը, որոնք իրենց ստեղծագործություններով մեծ ազդեցություն են ունեցել 19-20-րդ դարերի հասարակական-քաղաքական մտքի ձևավորման վրա:

19-րդ դարի հասարակական մտքի զարգացման գործում մեծ ներդրում ունի հրապարակախոսության ակնառու ներկայացուցիչ, ազգությամբ հայ **Աղիբ Իսհակը (1856-1885 թթ.)**: Մեծապես ազդված լինելով ֆրանսիական լուսավորչական մտքից՝ նա իր հրապարակախոսական գործունեությամբ անդրադառնում է մարդու ազատության, իրավունքների, կրթության, ինչպես նաև արաբ ժողովրդի գաղութացումից ազատվելու հարցերին: Աղիբ Իսհակը ծնվել է 1856 թ. Դամասկոսում՝ ոչ հարուստ քրիստոնյա ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է վանական դպրոցում: Գրականությամբ սկսել է զբաղվել դեռևս պատանեկության տարիներին: Տիրապետելով անգլերենին և ֆրանսերենին՝ Աղիբ Իսհակը ծանոթանում է արևմտյան գրականությանը, զբաղվում թարգմանությամբ: Նա ակտիվ մասնակցություն է ունենում Բեյրութում գործող “ğam ‘ia zahrat al-ādāb” («Գրականության զարգացման ընկերության») գործունեությանը՝ որոշ ժամանակ զբաղեցնելով նա-

խագահի պաշտոնը¹: Հրապարակախոսական գործունեությունը սկսում է “Al-Taqaddum” («Առաջընթաց») թերթի գլխավոր խմբագիր աշխատելու տարիներին: Հետագայում Ադիբ Իսհակն իր հրապարակախոսական գործունեությունը շարունակում է Կահիրեում: Այստեղ նա ծանոթանում և հրապուրվում է մուսուլմանական մոդեռնիզմի ներկայացուցիչների, հատկապես Ալ-Աֆղանիի քաղաքական հայացքներով: 1877 թ. ներգրավվում է Սելիմ ալ-Նակկաշի կողմից Կահիրեում հրատարակվող “Mişr” («Եգիպտոս») շաբաթաթերթի խմբագրակազմում: Այն հիմնականում քաղաքական ուղղվածություն ունեցող պարբերական էր, որտեղ հրապարակվում էին մոդեռնիստների գաղափարները լուսաբանող, արևմտյան գաղութացման քաղաքականությունը քննադատող հոդվածներ: 1878 թ. Սելիմ ալ-Նակկաշի և Ադիբ Իսհակի նախաձեռնությամբ Ալեքսանդրիայում լույս է տեսնում ժամանակի ազգային հարցերով մտահոգված մտավորականների հայացքները լուսաբանող “Al-Tiğāra” («Առևտուր») պարբերականը: 1879 թ. եգիպտական իշխանությունների հրամանով պարբերականների գործունեությունը դադարեցվում է: Ադիբ Իսհակն իշխանությունների հետապնդումից խուսափելու համար մեկնում է Փարիզ, որտեղ վերականգնում է “Mişr” թերթի հրապարակումը: Օրաբի փաշայի ապստամբությունից հետո՝ 1882 թ., Ադիբ Իսհակը վերադառնում է Կահիրե և ակտիվորեն ներգրավվում երկրի քաղաքական կյանքում, վերականգնում “Mişr” թերթի տպագրությունը:

¹ А. А. Долинина, *Очерки Истории Арабской Литературы Нового Времени*, М., 1968, с. 32.

1882 թ. Ադիբ Իսհակը մեկնում է Բեյրութ: Այնտեղ վերահրատարակելով «Al-Taqddum» («Առաջընթաց») թերթը՝ շարունակում է հրապարակախոսական գործունեությունը: Ադիբ Իսհակի հրապարակախոսության և քաղաքական պայքարի անբաժանելի մասն արաբական հասարակության մեջ լուսավորչական գաղափարների տարածումն ու կիրառումն էր: Նրա կարծիքով հասարակության մեջ արմատացած ավանդական արժեհամակարգը խոչընդոտում է հասարակական ու քաղաքական զարգացումներին արաբական աշխարհում: Դեմ լինելով զինված հեղափոխությանը՝ Ադիբ Իսհակն արաբական երկրների գաղութացումից ազատվելու ուղին տեսնում էր գաղափարական պայքարի մեջ: Նա իր հրապարակախոսական հոդվածներում փորձում էր բացատրել, որ արաբական երկրների գաղութացման հիմնական պատճառներից են բռնապետությունը, կրոնական առաջնորդների բարեպաշտության տակ թաքնված անբարոյական վարքն ու ֆանատիզմը, ժողովրդի շրջանում տիրող անգրագիտությունը, քաղաքական էլիտայի դավաճան կեցվածքը, կանանց ստորադաս կարգավիճակը: Վերացնելով վերը նշված արատները միայն՝ արաբական աշխարհը կարող է պատրաստ լինել ազատվելու օտար երկրների գերիշխանությունից ու կառուցելու օրենքի և առանց կրոնական ու ազգային խտրականությունների, իրավունքների հավասարության վրա հիմնված պետություն¹: Իր «Ma huwa šarq» («Ի՞նչ է արևելքը») հոդվածում նա, անդրադառնալով արաբների միջնադարում ունեցած գործուն մշակութային դերակատարությանը, համոզված է, որ արաբների մշակութային և քաղաքական ներուժը ներկայում էլ բավարար է ժամանա-

¹ Adib Ishaq, Al-Durar, Baïrüt 1909, pp. 116-122.

կակից քաղաքական և մշակութային մարտահրավերներին դիմակայելու համար¹:

Ադիբ Իսհակի ազատության մասին պատկերացումները հիմնականում կրում էին Ռուսոյի փիլիսոփայության ազդեցությունը: Հրապարակախոսի համար ազատությունը մարդու գոյության բնական և անբաժանելի մասն է կազմում, որը թույլ է տալիս նրան զարգացնել իր մարմնական ու հոգևոր ուժերը՝ աստիճանաբար հասնելով լիիրավ գոյության կատարյալ աստիճանի: Ջարգացնելով Ռուսոյի հայտնի թեզը՝ «Մարդը ծնվում է ազատ, մինչդեռ նա ամենուր կապանքների մեջ է»՝ Ադիբ Իսհակը փորձում է ապացուցել, որ մարդը զրկվում է ազատությունից իր ծննդյան օրվանից, երբ մայրը, բարուրելով երեխային, սահմանափակում է նրա շարժումները: Մարդու մտքի բնականոն զարգացման ազատության վրա իրենց բացասական ազդեցությունն են ունենում նաև դաստիարակությունն ու կրթությունը: Իրական ազատությունն Ադիբ Իսհակի համար մարդկանց հավասարությունն է, որը պետք է կարգավորվի և գոյություն ունենա «ճշմարիտ օրենքի» շրջանակում, որը «չի փոքրացնում ազատությունը և չի ոչնչացնում անկախությունը»²: Օրենքի ճշմարտացիությունը «հասարակության և անհատի իրավունքների պաշտպանությունն» է:

Ադիբ Իսհակի հրապարակախոսությանը հատուկ է հռետորականությունը, նրա տեքստը շատ անմիջական է և հարցադրումներով հագեցած:

Ադիբ Իսհակը մահացել է 1885 թ.: Նրա գրական ժառանգությունը՝ բանաստեղծությունները, հոդվածները, թարգմա-

¹ Adib Ishaq, *Mā huwa šarq*, նշվ. աշխ., էջ 198-201:

Adib Ishaq, *Al-huria*, նշվ. աշխ., էջ 42-49:

նությունները, մահվանից հետո որդու նախաձեռնությամբ հրատարակվել են “Al-durrar” («Մարգարիտներ») ժողովածուում:

Եվրոպական տերությունների գաղութատիրական քաղաքականության դեմ պայքարի հայտնի ներկայացուցիչն էր **Աբդալլահ Նադիմը (1845-1896 թթ.)**: Նա ծնվել է Ալեքսանդրիայում՝ մուսուլմանի ընտանիքում: Աբդալլահ Նադիմն իր հրապարակախոսական գործունեությունը սկսում է՝ համագործակցելով Ադիբ Իսհակի և Սելիմ Նակաշի հետ, տպագրելով իր հոդվածները “Misr”, “Al-Tājira”, «Al-mahrūsa» պարբերականներում: «Եգիպտոսը եգիպտացիների համար» կարգախոսով էր պայմանավորված Աբդալլահ Նադիմի հասարակական, քաղաքական գործունեությունը: 1897 թ. նա հիմնում է «Մուսուլմանական բարեգործական ընկերությունը», որին անդամակցում էին ժամանակի լուսավորչական գաղափարներին համակիր հասարակական ու քաղաքական գործիչներ: 1897 թ. այդ բարեգործական ընկերության նախագահ է նշանակվում Մուհամմադ Աբդոն: Բարեգործական ընկերությունը բացում է անվճար դպրոց որբերի ու աղքատ ընտանիքների երեխաների համար: Նադիմը նշանակվում է այդ դպրոցի տնօրեն: Այստեղ նա դասավանդում է գրականություն և հռետորական արվեստ: Դպրոցի աշակերտների համար նա գրում է “Al-‘arab” («Արաբները») և “Al-waṭan” («Հայրենիք») պիեսները, որոնք նպատակ ունեին աշակերտների շրջանում ձևավորելու հայրենասիրություն և ազգային ինքնագիտակցություն: 1881 թ. քաղաքական լարված իրավիճակը ստիպում է Աբդալլահ Նադիմին թողնել մանկավարժությունը և զբաղվել քաղաքական գործունեությամբ: Նա հրատարակում է “Al-Tankīd wa Tabkīd” («Երգիծանք և կատակ») քաղաքական շարաթաթերթը: Մեկ ամիս

անց նա լույս է ընծայում է իր մյուս՝ “Al-ṭa’if” («Համայնք») շաբաթաթերթը, որտեղ տպագրվում էին Օրաբի փաշայի ապստամբությանը սատարող հոդվածներ: Արդալլահ Նադիմը հանդես է գալիս որպես քաղաքական հռետոր և իր հակաանգլիական ելույթներով կոչ է անում արաբներին դուրս գալ պայքարի անգլիացիների դեմ¹: Օրաբի փաշայի պարտությունից հետո նրա շատ կողմնակիցներ ձերբակալվում են, իսկ Արդալլահ Նադիմին հաջողվում է խուսափել ձերբակալությունից՝ ինը տարի շարունակ թաքնվելով տարբեր վայրերում: Սակայն 1891 թ. Նադիմը ևս գերծ չի մնում հետապնդումից. նրան քստորում են Յաֆֆա: 1892 թ. Արդալլահ Նադիմը վերադառնում է Եգիպտոս և սկսում է հրատարակել “Al-‘Ustād” («Ուսուցիչ») շաբաթաթերթը, որը հիմնականում զբաղվելու էր գիտական հարցերով: Սակայն շուտով “Al-‘Ustād”-ի էջերում հայտնվում են անգլիական գաղութատիրությունը քննադատող հոդվածներ, և 1893 թ. լորդ Կրոմերի հրամանով թերթի գործունեությունը կասեցվում է, Նադիմը կրկին արքայազան է, սկզբում՝ Յաֆֆա, ապա՝ Ստամբուլ: Սուլթան Աբդուլ Համիդի միջնորդությամբ Նադիմը հրավիրվում է աշխատանքի կրթության նախարարությունում: Այստեղ նա ծանոթանում է Ջամալ ալ-Դինի հետ և դառնում վերջինիս ամենամտերիմ հետևորդներից:

Արդալլահ Նադիմը հայտնի է ոչ միայն որպես հրապարակախոս, այլ նաև որպես քաղաքական հռետոր ու բանաստեղծ: Նրա ստեղծագործությունները ներկայացված են բանաստեղծական երեք ժողովածուում: Ի լրումն գրական արաբերենով

¹ ‘Alī Al-Ḥadīdī, ‘Abd Alalh Al-Nadīm Ḥaṭīb Al-Waṭāniīā, Al-Qahira. pp. 132-135.

գրված բանաստեղծությունների՝ նա ունի նաև բարբառով գրված ստեղծագործություններ, ինչն արաբական ժամանակակից գրականության մեջ առաջին փորձն էր: Աբդալլահ Նադիմի քաղաքական և հասարակական հայացքները կրում են մուսուլմանական ռեֆորմացիայի ազդեցությունը: Նրա կարծիքով կրոնը պետք է կարողանա արձագանքել կյանքի բոլոր խնդիրներին և հնարավորություն տա մարդկանց կողմնորոշվելու հասարակական ու քաղաքական հարցերում: Նադիմի համար առանցքային էր Արևելքի ու Արևմուտքի փոխհարաբերությունների խնդիրը: Նա համոզված էր, որ արաբական լուսավորչական միտքը պետք է գերծ մնա արևմտյան ազդեցությունից: Նա սուր քննադատության է ենթարկում անգլիացի գաղութարարների «քաղաքակրթական առաքելությունը»՝ համարելով, որ Անգլիայի՝ Եգիպտոսին տրամադրած օգնությունը նպաստում է միայն անգլիական տնտեսական հաստատմանը Եգիպտոսում, ծառայեցնում է ժողովրդին հանուն իր շահերի, ամրապնդում իր գերիշխանությունը երկրում: Այս ամենը հանգեցնում է ժողովրդի կամքի թուլացմանը և անտարբերությանը երկրի քաղաքական կարևոր խնդիրների նկատմամբ¹: Անտարբերությունը, Նադիմի կարծիքով, եգիպտական հասարակության հիմնական արատներից էր: Նա իր հոդվածներում ու քաղաքական ելույթներում հանդես էր գալիս քաղաքացիական դիրքորոշում ձևավորելու կոչերով: Մշակութային առումով Անգլիան միայն բացասական ազդեցություն է ունենում եգիպտական մշակույթի վրա՝ սասանելով եգիպտացի ժողովրդի մշակութային ինքնության հիմքերը: Համաձայն Նադիմի հայացքների՝ մշակութային ու հասարակա-

¹ 'Alī Al-Ḥadīdī, նշվ. աշխ., էջ 169-171:

կան առաջընթացը հնարավոր է միայն մուսուլմանական ռե-
ֆորմացիայի գաղափարախոսության համատեքստում: Ազգի
համախմբման և ինքնության պահպանման համար, ըստ Նա-
դիմի, կարևորագույն դեր ունի լեզուն: Նա նաև դիմում է արա-
բական մյուս երկրներին՝ միանալ եգիպտացի ժողովրդին
անգլիացիների դեմ պայքարում: Նա դիտարկում է Օսմանյան
կայսրության ներքո արաբական երկրների համախմբումը՝ որ-
պես այդ պահին գոյություն ունեցող միակ լուծում՝ արևմտյան
տիրապետությունից ազատվելու համար: Լինելով Օրաբի
փաշայի ապստամբության խանդավառ աջակիցներից և զին-
ված պայքարի կողմնակից՝ այնուամենայնիվ, 90-ական թթ.
սկզբին Նադիմը փոխում է իր մոտեցումը և կոչ է անում ետ
կանգնել զինված պայքարի գաղափարից՝ ուժերը կենտրոնաց-
նելով միայն ազգային ինքնությունը, լեզուն, մշակույթը պահ-
պանելու և անկախության և ինքնուրույնության իրավունքնե-
րը պաշտպանելու վրա:

Աբդալլահ Նադիմի հրապարակախոսության լեզուն բա-
վական պարզ է: Իր խոսքում նա փորձում էր զերծ մնալ հան-
գավորված արձակից, համեմատություններից ու փոխաբերու-
թյուններից:

Հակաանգլիական տրամադրություններով է առանձնա-
նում նաև **Մուստաֆա Քամիլի (1874-1908 թթ.)** հրապարակա-
խոսական գործունեությունը: Նա ծնվել է Կահիրեում՝ զինվո-
րական ինժեների ընտանիքում: Սովորել է Կահիրեի իրավա-
բանական դպրոցում, այնուհետև՝ իրավաբանական կրթու-
թյունը շարունակել Ֆրանսիայում՝ Տուլուզի համալսարանում:
Վերադառնալով Կահիրե՝ Քամիլը զբաղվել է փաստաբանա-
կան աշխատանքով, սակայն շուտով, թողնելով փաստաբանի
իր գործը, սկսել է զբաղվել հրապարակախոսական ու քաղա-

քական գործունեությամբ՝ ամբողջովին ներգրավվելով անգլիացիների դեմ պայքարում: Իր առաջին հոդվածները նա տպագրում է “Al-ahrām” թերթում և նախքան Ֆրանսիա մեկնելը հրատարակում է “Al-madrasa” («Դպրոց») ամսագիրը: 1896 թ. մարտի 3-ին Մուստաֆա Քամիլը հանդես է գալիս իր առաջին հրապարակային ելույթով և դառնում Եգիպտոսի ամենահայտնի քաղաքական հռետորներից մեկը: 1900 թ. Մուստաֆա Քամիլը հրատարակում է “Al-Liwā” («Դրոշակ») օրաթերթը, իսկ 1907 թ. դրան կցվում են նաև «Եգիպտական դրոշ» ֆրանսերենով և անգլերենով տպվող առավոտյան և երեկոյան թերթերը: 1907 թ. Մուստաֆա Քամիլը հիմնում է “Hizb al-waṭan” («Հայրենիքի կուսակցություն») քաղաքական կուսակցությունը, որի նպատակն էր պայքարել անգլիական գաղութարարների դեմ, հաստատել սահմանադրական կարգ երկրում, ընդունել Օսմանյան սուլթանի սուվերենությունը՝ պահպանելով Եգիպտոսի անկախությունը: Բացի հոդվածներից՝ Մուստաֆա Քամիլը գրել է մի քանի առանձին հրապարակախոսական ստեղծագործություններ, որոնցից ամենահայտնին են “Al-mas’ala al šarqiya” («Արևելյան հարց»), “Al-šams al-mušriqa” («Ծագող արևը») գործերը: Անգլիացիների դեմ պայքարում Մուստաֆա Քամիլը կարևորում է ինչպես օսմանյան սուլթանի հետ համագործակցությունը, այնպես էլ եվրոպական պետությունների հետ որոշակի համաձայնության գալը՝ օգտվելով այդ երկրների միջև եղած տարաձայնություններից: Դրանով են բացատրվում նրա հաճախակի ճամփորդություններն արևմտյան մի շարք երկրներ և այնտեղ հասարակական և քաղաքական հայտնի գործիչների հետ հանդիպումները:

Մուստաֆա Քամիլի քաղաքական հայացքների ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունեցել Աբդալլահ Նադիմը: Քա-

միլի հրապարակախոսության առանցքը հայրենասիրության քարոզն է: Իր բոլոր հոդվածներում ու հրապարակային ելույթներում նա մեծ խանդավառությամբ խոսում է հայրենիքի նկատմամբ իր սիրո մասին: Նա համարում է հայրենասիրությունը մարդու ամենավեհ զգացումներից: Քամիլի գործունեության հիմնական նպատակը Եգիպտոսի ազատագրումն էր Անգլիայի գաղութացումից: Ընդ որում՝ իր թշնամական վերաբերմունքն արտահայտելով անգլիացի գաղութարարների նկատմամբ՝ նա իր ելույթներում փորձում էր բացատրել, որ իր թշնամությունն ուղղված չէ միայն անգլիացիներին, այլ այն ընդվզում է ցանկացած գաղութարար պետության դեմ: Քամիլը Եգիպտոսի ու Անգլիայի փոխհարաբերությունները «Արևելյան հարց» ստեղծագործության մեջ դիտարկում է ավելի լայն համատեքստում: Այդտեղ նա բարձրացնում է երկու հիմնական խնդիր՝ Անգլիայի ու Բարձր դոսան պայքարն իրենց տիրապետության տակ գտնվող երկրների համար, ինչպես նաև քրիստոնեության ու իսլամի միջև մշտական պայքարը, որոնք առանցքային են արևելյան հարցի համատեքստում: Նա համարում է, որ արևելյան հարցում կրոնական ու քաղաքական ասպետների միասնական դիտարկումը շատ արդիական է: Կարևորելով իսլամի դերը Արևելքի ժողովուրդների կյանքում՝ Քամիլը չի փորձում թշնամանք առաջացնել քրիստոնյաների նկատմամբ, այլ հանդուրժողականության կոչ է անում: Արևելյան հարցի լուծումը Քամիլը, հետևելով Ալ-Աֆղանիին, տեսնում էր միասնական խալիֆայություն ստեղծելու մեջ՝ թուրք սուլթանի գլխավորությամբ¹: Եգիպտոսի անկախացման ճանապարհը Քամիլը համարում էր հնարավոր ոչ միայն Օսմա-

¹ Muşafai Kamil, Al-Mas'ala Al-Şarqīa, <https://www.noor-pdf>, pp. 102-105.

նյան կայսրության, այլ նաև եվրոպական պետությունների հետ խաղաղ բանակցությունների միջոցով: Նա դեմ էր զինված պայքարին՝ համարելով անգլիացիների դեմ Օրաբի փառաշքի ապստամբության ձախողումը Եգիպտոսի վերջնական գաղութացման պատճառ: Քաղաքակիրթ հասարակության մասին խոսելիս նա նշում է, որ դրա հիմքում ընկած են բարոյականությունն ու մարդու ազատությունը, այլ ոչ թե եվրոպացիների բերած նյութական մշակույթը: Քամիլը եվրոպական քաղաքակրթությունն ու արժեքները ստորադասում էր հայրենիքի անկախությանը. «Գերադասելի է անապատում ազատ ուղտի վրա զբոսնել, քան ավտոմեքենայով երթնելը օկուպացված հայրենիքում»: Իր քաղաքական ու հասարակական մտտեցումները Քամիլը տարածում էր «Al-liwā» թերթի էջերում: Թերթի միջոցով Քամիլը փորձում էր ակտիվացնել ազգային շարժումը, քաղաքականապես կրթել եգիպտացի ժողովրդին, պաշտպանել իսլամը եվրոպացի գաղութարարների հարձակումներից: «Al-liwā» թերթն ուներ առանձին բաժին, որտեղ հնարավորություն էր տրվում յուրաքանչյուր քաղաքացու առաջարկություններով հանդես գալու հանուն երկրի բարօրության: Թերթն ուներ նաև «Եվրոպա և իսլամ» բաժինը, որտեղ ներկայացվում էին քաղվածքներ իսլամի մասին եվրոպական թերթերից: Քամիլն ավելի շատ հռետոր էր, քան գրող, ինչն էլ իր ազդեցությունն է ունեցել նրա հրապարակախոսության վրա: Հողվածներն առանձնանում էին խոսքի կառուցվածքային պարզությամբ և զերծ էին հանգավորումից:

Յակուբ Սանուն (1839-1912 թթ.) ծնվել է Կահիրեում՝ հրեայի ընտանիքում: Ստացել է ավանդական հրեական կրթություն: Նրա հայրը՝ Ռաֆայել Սանուն, Մուհամմադ Ալիի թոռան՝ Ահմադ Յաքունի վստահելի մարդկանցից էր: Փառաշքի

հովանավորությամբ Յակուբ Սանուն բանասիրական կրթություն է ստացել Իտալիայում: Տիրապետելով մի շարք եվրոպական լեզուների՝ Եգիպտոս վերադառնալուց հետո զբաղվել է լեզուներ դասավանդելով: Նրա անվան հետ է կապվում առաջին եգիպտական թատրոնի հիմնադրումը: Ուսումնասիրելով եվրոպական դրամատուրգիան՝ Յակուբ Սանուն գրել է պիեսներ նորաստեղծ թատրոնի համար: Նա հիմնականում գրում էր կատակերգություններ, որոնք շարադրում էր հինգ գործողությամբ դասական կատակերգությունների օրինակով, որոնց սյուժեն նա վերցնում էր հիմնականում եվրոպական պիեսներից՝ հարմարեցնելով դրանք եգիպտական իրականությանը: Իր կատակերգություններում նա ծաղրում էր ապիկարու անկիրթ ղեկավարներին, քննադատում եգիպտացիների հետամնացությունը: Նրա թատերական գործունեությունը հովանավորվում էր Խեդիվ Իսմայիլի կողմից, որը, լինելով արևմտականացման կողմնակից, շատ բարձր էր գնահատում եգիպտական թատրոնի կայացման գործում Սանուի ներդրումը՝ շնորհելով նրան «Եգիպտոսի Մուլիեր» տիտղոսը:

Ծանոթանալով Ալ-Աֆղանիի և Մուհամմադ Աբդոյի հետ՝ Սանուն տարվում է նրանց գաղափարախոսությամբ և հաճախելով Ալ-Աֆղանիի դասախոսություններին՝ դառնում է մուսուլմանական ռեֆորմացիայի հետևորդներից: Ալ-Աֆղանիի և Աբդոյի հետ կապը, ինչպես նաև ընդդիմադիր շրջանակների հետ շփումը հանգեցնում են Խեդիվ Իսմայիլի հետ տարաձայնությունների առաջացմանը: Արդյունքում Խեդիվի հրամանով թատրոնը փակվում է, և Յակուբ Սանուն սկսում է զբաղվել հրապարակախոսական գործունեությամբ: 1877 թ. նա հիմնում է “*Abu nazāra al-zarka*” («Կապույտ ակնոցներով մարդը») քաղաքական շարաթաթերթը, որում քննադատում էր եվրո-

պական քաղաքական և տնտեսական և ազդեցությունը, ինչպես նաև Խեղիվ Իամայիլի վարած արտաքին ֆինանսական քաղաքականությունը: Սանուն համարվում է երգիծական հրապարակախոսության հիմնադիրը: Սանուի երգիծական թերթում ծածկանուններով տպագրվում էին նաև Ալ-Աֆղանին և Մուհամմադ Աբդուն: “Abu nazāra al-zarka”-ն արաբական տպագրական մամուլի պատմության մեջ առաջին թերթն էր, որը հրատարակվում էր խոսակցական լեզվով: Հրատարակման առաջին օրերից թերթը մեծ ընդունելություն է ստանում ընթերցողների շրջանում: Այն սրամիտ քննադատական հոդվածներով անդրադառնում էր հասարակական սուր խնդիրների: Տասնհինգերորդ համարից հետո թերթը փակվում է, և նա մեկնում է Փարիզ: Այստեղ Յակուբ Սանուն վերահրատարակում է թերթը տարբեր անուններով՝ “Abū Šafāra” («Մուլիչով մարդը»), “Abū zamāra” («Շվիով մարդը»): 1887 թվականից թերթը սկսում է լույս տեսնել գունավոր նկարազարդումներով: Թերթի հրատարակումը տևեց 34 տարի. վերջին համարը լույս է տեսել 1910 թ. դեկտեմբերի 31-ին:

Վալի ալ-Դին Յաքունը (1873-1921 թթ.) ծնվել է Ստամբուլում՝ թուրքական ընտանիքում: Մանկությունն ու պատանեկությունը Վալի ալ-Դին Յաքունն անցկացրել է Եգիպտոսում, որտեղ նա սովորել է եգիպտական բարձրակարգ «Ալ-Անջալ» դպրոցում: Վալի ա-Դին Յաքունը տիրապետում էր արաբերենին, թուրքերենին, անգլերենին, հունարենին: Պատանեկության տարիներից արդեն Յաքունը տպագրվում է եգիպտական պարբերականներում: 1895 թ. նա հրատարակում է իր թերթը՝ “Al-miḳāṣ” («Չափ»), սակայն պետական ծառայության անցնելու պատճառով թողնում է հրատարակչական գործը: Մեկ տարի անցկացնում է Ստամբուլում, ինչն էլ իր ազդեցությունն է

ունենում Յաքունի քաղաքական հայացքների ձևավորման վրա: Նա դառնում է աբդուլհամիդյան ռեժիմի քննադատներից մեկը: Վալի ալ-Դին Յաքունն ավելի շատ զբաղված էր քաղաքական և սոցիալական խնդիրներով, քան՝ գրականության ու արվեստի: Կահիրեում նա հրատարակում է “Al-istiqāma” («Ազնվություն») թերթը, որտեղ քննադատում է Օսմանյան կայսրության ազգայնական, խտրական քաղաքականությունը: Թերթն առաջացնում է թուրքական իշխանությունների դժգոհությունը, որի պատճառով այն կասեցվում է, սակայն Ջուհեյր կեղծանվան տակ Յաքունը շարունակում է տպագրել իր հոդվածները “Al-Muqāṭam”, “Al-Mušīr” պարբերականներում: Թուրքական իշխանությունների հրավերով Յաքունը տեղափոխվում է Ստամբուլ և դառնում Օսմանյան կայսրության լուսավորության հարցերով Գերագույն խորհրդի անդամ: Գտնվելով մշտական հսկողության տակ թուրքական իշխանությունների կողմից՝ Յաքունն ի վերջո ձերբակալվում է և արքայազն էրկրի հյուսիս՝ Սիվաս: Աքսորի տարիներին Յաքունը գրում է բանաստեղծություններ, հոդվածներ, էսսեներ, որոնք հետագայում տպագրվում են “Al-Ma‘alūm wa Al-Mağhūl” («Հայտնին և անհայտը») ժողովածուում: 1908 թ. երիտթուրքական հեղափոխության արդյունքում Յաքունն ազատ է արձակվում: Նա մեկնում է Ստամբուլ, այնուհետև՝ Եգիպտոս: Յաքունի ստեղծագործությունները լույս են տեսնում առանձին ժողովածուներով: 1909 թ. լույս է տեսնում Յաքունի “Al-Ma‘alūm wa Al-Mağhūl” ժողովածուի առաջին հատորը: Այն ընդգրկում է Օսմանյան կայսրության բռնապետական կարգի, երիտուրքերի պայքարի, Եգիպտոսում անգլիական տիրապետության մասին հոդվածների շարք: Յաքունի “Al-Şahā’if Al-Sūd” («Մև եջեր») հոդվածների և էսսեների ժողովա-

ծուն լույս է տեսնում 1910 թ.: Այստեղ նա հավաքել է “Al-Muqatam” պարբերականում Ջուհեյր կեղծանվան տակ հրատարակված իր բոլոր հոդվածները¹: «Հայտնիի և անհայտի» երկրորդ հատորը լույս է տեսնում 1911 թ.: Այստեղ ներկայացված են Յաքունի հասարակական ու քաղաքական հայացքները, ինչպես նաև բանտի և աքսորի տարիները: Յաքունի “Al-Tağārīb” («Փորձեր») ժողովածուում տեղ են գտել ժամանակակից քաղաքականությանը, սոցիալական խնդիրներին, արաբական ու եվրոպական մշակութային սինթեզին վերաբերող հոդվածներ²: Նա բավական լոյալ դիրքորոշում ուներ անգլիական քաղաքականության նկատմամբ, նրա քննադատությունների կենտրոնում Օսմանյան կայսրությունն էր, որի վարած քաղաքականությունն արաբների կործանման հիմնական պատճառներից էր համարում: Յաքունի համար անընդունելի էր կայսրության վարած ազգայնական, խտրական քաղաքականությունը: Նա դեմ էր արտահայտվում ամեն տեսակի կրոնական ու ազգային ֆանատիկ դրսևորումների՝ համարելով, որ ֆանատիզմը հանգեցնում է բռնապետության և խոչընդոտ է ազատության հավասարության համար: Նա քննադատում է նաև 1908 թ. երիտթուրքական հեղափոխության արդյունքները, որի հետ մեծ հույսեր էր կապում: Յաքունը կողմ էր ցանկացած քաղաքական փոփոխության և առանձնահատուկ դեր էր տալիս երկրում պառլամենտի գոյությանը, որի նպատակը պիտի լիներ հասարակության բոլոր շերտերի շահերի ու իրավունքների պաշտպանությունը, ինչպես նաև քաղաքական խնդիրներին պատշաճ արձագանքելու կարողությունը: Յա-

¹ Wali Al-Din Īakun, Al-Şahā'if Al-Sūd <https://www.noor-book.com> –pdf.

² Wali Al-Din Īakun, Al-Tağārīb, <https://www.noor-book.com>, pdf.

քունի համար կարևորագույն խնդիր էր հասարակության սոցիալապես բևեռացված լինելը՝ վերնախավի չափազանց հարուստ լինելը և աշխատավոր ժողովրդի ծայրահեղ աղքատությունը: Յաքունի ուշադրության կենտրոնում էր նաև հասարակության մեջ կնոջ ու տղամարդու միջև հավասարության խնդիրը: Արժևորելով արաբական մշակույթն ու գրականությունը՝ նա միննույն ժամանակ կարևորում էր եվրոպական մշակույթի դերը արաբների մշակութային վերելքի ու լուսավորության հարցում: Նա շատ բարձր էր գնահատում արաբական մշակութային ժառանգությունը և մտահոգված էր ժամանակակից գրականության խնդիրներով՝ շեշտելով գրողի դերի առանձնահատկությունն ու ներդրումը հասարակական կյանքում: Նրա կարծիքով իրական գրողը պետք է արտահայտի հասարակ և աշխատավոր ժողովրդի շահերը: Յաքունի հրապարակախոսական ոճն առանձնանում է խանդավառ հռետորությամբ և անմիջականությամբ: Հրապարակախոսական լեզուն չափազանց հարուստ է: Նա հմտորեն կարողանում էր կիրառել դասական արաբերենի բառապաշարը ժամանակակից իրողություններ նկարագրելիս: Յաքունի ստեղծագործությանը հատուկ է հրապարակախոսության և գեղարվեստական արձակի համադրումը: Նա շատ հաճախ է դիմում ժողովրդական, ֆոլկլորային և դասական գրականության ժանրերին, ինչպես նաև կենցաղային հեքիաթի ձևերին: Իր խոսքն առավել տպավորիչ դարձնելու համար նա հաճախ մեջբերում է անեկդոտներ: Կյանքի վերջին տարիներին Յաքունը գրում է “Tigrān wa Ra’if” ստեղծագործությունը, որը ժանրային առումով կարելի է դիտարկել որպես վիպակ: Այստեղ նկարագրվում են Աբդուլ Համիդի ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող անօրինականություններն ու

բռնությունները: Վեպի հերոսները ռազմաբժշկական դպրոցի շրջանավարտներ են՝ ազգությամբ հայ Տիգրանը և թուրք Ռաիֆը, որոնք նվիրվում են արդուլիամիդյան ռեժիմի դեմ պայքարին:

Հրապարակախոսների շարքում հասարակական սուր խնդիրների բարձրացման և քննության տեսանկյունից առանձնակի ուշադրության է արժանի **Կասիմ Ամինի (1865-1908 թթ.)** հրապարակախոսական գործունեությունը: Նա առաջինն էր, որն իր ստեղծագործություններում մանրամասն անդրադարձավ մուսուլման կնոջ՝ ընտանիքում ու հասարակության մեջ ունեցած ճնշված իրավունքներին: Կասիմ Ամինը ծնվել է 1865 թ. Ալեքսանդրիայում՝ քրդական ծագում ունեցող հարուստի ընտանիքում: Ամինի հայրը՝ Մուհամմադ բեյ Ամին խանը, եղել է Քուրդիստանի նահանգապետը մինչև Ալեքսանդրիա տեղափոխվելը, որից հետո զինվորական բարձր պաշտոն է զբաղեցրել Խեղիվ Իսմայիլի բանակում: Նա ունեցել է ընդարձակ տարածքներ ինչպես նահանգում, այնպես էլ Եգիպտոսում: Մայրը ևս եգիպտական ազնվական ընտանիքից էր՝ Մուհամմադ Ալիի ընտանիքի շառավիղներից:

Ամինը սովորել է Ալեքսանդրիայի լավագույն դպրոցներից մեկում, որից հետո 1875 թ. շարունակել է ուսումը Կահիրեի նախապատրաստական դպրոցում: Խեղիվյան դպրոցում նախնական իրավաբանական կրթություն ստանալուց հետո Կասիմ Ամինը, շահելով կրթաթոշակ, շարունակել է իրավաբանական կրթությունը Ֆրանսիայում: Ստանալով դոկտորի կոչում՝ վերադառնում է Եգիպտոս, ապա՝ անցել աշխատանքի Արդարադատության նախարարությունում, հետո՝ նաև Ներքին գործերի նախարարությունում: Ավելի ուշ Ամինը դարձել է Կահիրեի վերաքննիչ դատարանի դատավորի խորհրդականը:

Կասիմ Ամինին՝ որպես գրող, հրապարակախոս, մեծ ճանաչում է բերում նրա առաջին՝ “Al-Maṣrūn” («Եգիպտացիները») գիրքը, որը լույս է տեսնում 1894 թ.: Գիրքը գրված է ֆրանսերենով և իր ձևով պատասխան է ֆրանսիացի ճանապարհորդ Դը Արկուրի ճամփորդական նոթերին, որտեղ հեղինակը քննադատում է եգիպտական հասարակության հետամնացությունը, հատկապես կնոջ դերը նսեմացնող մուսուլմանական ու արևելյան ավանդույթները: Դը Արկուրին տված պատասխանում Կասիմ Ամինը մեկնաբանում է այդ ավանդույթները՝ ներկայացնելով դրանց կարևորությունը համապատասխան պատմական փուլում: Համաձայն Ի. Յ. Կրաչկովսկու՝ հնարավոր է, որ հենց այս աշխատանքն է նրա համար առաջին գլխավոր խթանը հանդիսացել՝ մասնագիտանալու ժամանակակից մուսուլմանական հասարակության մեջ կնոջ դերի ուսումնասիրության մեջ¹: Լինելով մուսուլմանական ռեֆորմացիայի ակտիվ հետևորդներից՝ Կասիմ Ամինը մոդեռնիզմի հայեցակարգի հիման վրա բավական համակարգված և խորքային վերլուծության ենթարկեց մուսուլման կնոջ իրավունքների ու հասարակական դերի խնդիրը:

1899 թ. լույս է տեսել նրա “Taḥrīr Al-Mar’a” («Կնոջ ազատագրումը») գիրքը: Այստեղ նա ներկայացնում է իր թեզը, որով հիմնավորում է, որ կնոջ ազատագրումը կարևոր նախապայման է օտարերկրյա գերիշխանությունից ազատվելու համար: Ղուրանի ու հադիսների վրա հիմնված փաստարկների միջոցով նա անդրադառնում է հասարակության մեջ կնոջ դերի վերանայմանն ու բարձրացմանը: Գիրքը քննադատությունների ալիք է բարձրացնում պահպանողականների, կրոնական

¹ А. А. Долинина, նշվ. աշխ., էջ 69:

առաջնորդների շրջանում: Սակայն Կասիմ Ամինը ոչ միայն չի ընկրկում, այլ նաև, ի պատասխան քննադատությունների, հրատարակում է երկրորդ՝ “Al -Mar’a Al-Ġadīda” («Նոր կինը») գիրքը, որտեղ նա զարգացնում է նախորդ գրքում ներկայացրած իր հայացքները, ինչպես նաև տալիս հասարակության մեջ կնոջ կարգավիճակին առնչվող արևմտյան մոտեցումները:

Իր այս երկու գրքերում էլ Կասիմ Ամինը մուսուլման կնոջ կարգավիճակը քննարկում է հասարակության բոլոր անդամների միջև հավասար իրավունքի սկզբունքի համատեքստում: Նրա կարծիքով կնոջ ստորադաս կարգավիճակը պայմանավորված է պատմականորեն ձևավորված տարբեր գործոններով, որոնք, սակայն, կորցրել են իրենց արդիականությունը և չեն կարող նույն ազդեցությունն ունենալ, քանի որ մարդկային կյանքը գտնվում է մշտական զարգացման գործընթացում, և պատմական համատեքստը նույնպես իր հերթին ձևավորում է այդ զարգացմանը համարժեք նոր գործոններ:

Ըստ Կասիմ Ամինի՝ կնոջ ընտանիքում և հասարակության մեջ այդ ժամանակին բնորոշ կարգավիճակը հակասում է Ալլահի կողմից սահմանված բնական օրենքներին: Կնոջ իրավունքները ոտնահարվում են դեռ հայրական տանը, որտեղ նրա հասարակական դրսևորման միակ ձևը ամուսնությունն է, որը տեղի է ունենում առանց կնոջ կարծիքը հաշվի առնելու: Ամուսնությունից հետո կինը շարունակում է մնալ ստորադաս կարգավիճակում՝ ենթարկվելով իր համար սահմանված օրենքներին: Հետևաբար կնոջ հասարակական կարգավիճակի բարձրացման համար Կասիմ Ամինը չափազանց կարևոր է համարում ամուսնությունը և ամուսնական հարաբերությունները կարգավորող ժամանակակից ավանդույթներն ու օրենքները: Հղում անելով Սուրբ գրքին՝ նա մեջբերում

է, որ ամուսնական հարաբերությունները պետք է հիմնվեն տղամարդու ու կնոջ միջև փոխադարձ սիրո և հարգանքի վրա: Սակայն ժամանակակից կրոնագետների մեկնաբանությունների արդյունքում այն դարձել է տղամարդու իշխանությունը վերահաստատելու գործիք՝ անտեսելով սիրո ու հարգանքի գաղափարները: Կասիմ Ամինը քննադատում է բաժանման գործընթացը կարգավորող տղամարդակենտրոն օրենքները և կոչ է անում վերանայել դրանք՝ հիմնվելով Ղուրանի ու հադիսների վրա: Նա պնդում է, որ իսլամական իրավական համակարգը սահմանում է հավասար իրավունքներ կնոջ ու տղամարդու համար: Իսլամը տալիս էր կնոջն ազատություն՝ տրամադրելով իրավունքներ՝ բոլոր ոլորտներում դրսևորվելու համար: Կինը կարող էր զբաղվել առևտրով, հանգանակությամբ, տնօրինել ունեցվածքը՝ առանց հոր կամ ամուսնու կողմից թույլտվություն ստանալու: Իսլամում տղամարդկանց տրվող միակ առավելությունը բազմակնությունն էր: Այս ամենը վկայում են այն մասին, որ ի սկզբանե մուսուլմանական հասարակությունում կնոջը տրված են եղել տղամարդկանց հետ հավասար իրավունքներ: Շարունակելով իր միտքը՝ Կասիմ Ամինի կարծիքով իսլամի տարածման հետ այլ երկրների տեղական ավանդույթները ներթափանցել են կրոն՝ դառնալով հասարակությունը կարգավորող զենք բռնապետական իշխանությունների ձեռքում¹: Եվ հետևաբար կնոջ ստորադաս կարգավիճակը քաղաքական կամայականությունների ու բռնության արդյունք է: Կանանց կարգավիճակը, ըստ Կասիմ Ամինի, ազգի քաղաքակրթական մակարդակի ուղիղ համեմատա-

¹ Amīn Qāsim, Al -Mar` a Al-Ġadīda, <https://foulabook.com/ar/book -pdf>, pp. 13-23.

կանն է: Եթե ազգի քաղաքակրթական մակարդակը ցածր է, ապա կինը գտնվում է ստորադաս կարգավիճակում, երբ այն բարձրանում է, կնոջ կարգավիճակը համապատասխանաբար նույնպես բարձրանում է: Կասիմ Ամինը կնոջ ազատագրման ճանապարհին կարևոր տեղ էր հատկացնում կնոջ բազմակողմանի կրթությանը: Նրա կարծիքով կինը, բացի գրել, կարդալ և օտար լեզուներ սովորելուց, պետք է ուսումնասիրի պատմագրություն, փիլիսոփայություն, բնագիտություն, արվեստ, որը հնարավորություն կտա նրան ձեռք բերելու մասնագիտություն և մասնակցելու երկրի զարգացման գործընթացներին որպես հասարակության լիարժեք անդամ¹:

Կասիմ Ամինի քաղաքական, փիլիսոփայական, բարոյագիտական պատկերացումներն աֆորիզմների և նոթերի ձևով ներկայացված են նրա “Kalimāt li Qāsim Amīn” («Կասիմ Ամինի խոսքերը») ստեղծագործության մեջ:

Կասիմ Ամինն իր հրապարակախոսական գործունեությամբ նպաստեց մուսուլմանական մոդեռնիզմի հասարակական ուղղվածությանը՝ քննելով կնոջ կարգավիճակի հարցը պատմական, հասարակական և քաղաքական լայն համատեքստում:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է ասել, որ արաբական իրականության մեջ հրապարակախոսական ժանրի ձևավորման և զարգացման համար առկա էր քաղաքական երկու կարևոր իրողություն՝ Օսմանյան կայսրության ներկայությունն արաբական աշխարհում, մյուս կողմից՝ արևմտյան գաղութատիրական նկրտումները: Այս գործոնները, փաստացիորեն, պայմանավորեցին արաբական լուսավորչական գործիչների

¹ Amin Qasim, նշվ. աշխ., էջ 82-99:

հստակորեն արտահայտված գործունեությունը՝ ուղղված հասարակական շահերի և իրավունքների պաշտպանությանը, ինչպես նաև արաբական մշակույթի ու ավանդույթների պահպանմանը: Այսուհանդերձ, արաբ մոդեռնիստ հրապարակախոսները մի կողմից գաղութատիրությունից ազատվելու, մյուս կողմից՝ արաբ հասարակությանը կրթելու ու իրավունքները գիտակցելու համատեքստում կարևորում էին Ղուրանի և հադիսների իրական և ժամանակակից մեկնության խնդիրը: Ձևավորվելով ու զարգանալով հիմնականում ազգային և միաժամանակ մոդեռնիստական գաղափարների ազդեցությամբ՝ հրապարակախոսությունը ծառայեց որպես հասարակական սուր խնդիրների արծարծման բարձրախոս՝ դառնալով ժամանակի կարևոր խթանը հասարակական մտքի ձևավորման համար: Երբեմն ունենալով քաղաքական հակադիր դիրքորոշումներ՝ հրապարակախոսները, սակայն, միավորվում էին ազգային արժեքների ամրապնդման, գաղութատիրությունից ազատագրման և հասարակական առաջընթացի կարևորագույն ելակետների շուրջ:

ԱՐԱԲԱԿԱՆ ՆՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ Նեոդասական բանաստեղծությունը

19-րդ դարում արաբական աշխարհում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, հասարակական, քաղաքական փոփոխություններն իրենց ազդեցությունն ունեցան արաբական գրականության ժանրային փոխակերպումների և նոր համակարգի ձևավորման վրա: Արաբական պոեզիան, որը շարունակում էր գոյություն ունենալ միջնադարյան մշակույթի կանոնների սահմաններում, ո՛չ իր ձևով, ո՛չ էլ բովանդակությամբ այլևս չէր համապատասխանում ստեղծված նոր հասարակական-քաղաքական իրավիճակին: Արաբական պոեզիայի վերափոխման գործընթացը պայմանավորված էր մի շարք հայտնի արաբ, հատկապես եգիպտացի բանաստեղծների գրական գործունեությամբ, որոնք ձեռնամուխ եղան արաբական դասական պոեզիայի վերափոխմանը՝ այդպիսով հարմարեցնելով այն ժամանակակից իրականության պահանջներին: Արաբական միջնադարյան դասական պոեզիայի վերափոխումն ու ադապտացումը ժամանակակից իրականությանն ու ընդունված է անվանել նեոդասականության շրջան: Այս շրջանի բանաստեղծները փորձում էին վերականգնել դասական գրական ժառանգությունը՝ միաժամանակ համալրելով այն ժամանակակից թեմաներով: Նրանք ստեղծագործում էին դասական կասիդայի ժանրում՝ օգտագործելով ավանդական բանաստեղծական ձևերը՝ *agrād al-šīʿr*: Բանաստեղծներն իրենց պոեզիայով անդրադառնում էին այնպիսի թեմաների, ինչպիսիք էին արաբների պայքարը գաղութատիրության դեմ, սոցիալական անհավասարությունը: Այդ հեղինակների բանաստեղծություններին հատուկ էր նաև ազգայնական ու հայրենասիրա-

կան տրամադրությունների պատկերումը: Նեոդասական պոեզիայի ներկայացուցիչները նոր շունչ հաղորդեցին արաբական բանաստեղծությանը՝ իրենց ստեղծագործություններում նկարագրելով ժողովրդի կյանքը սոցիալ-տնտեսական փոփոխությունների ու քաղաքական իրադարձությունների համատեքստում: Նրանք հիմնականում արտահայտում էին ժողովրդի մտահոգություններն ու զգացմունքները. ստեղծագործություններում հազվադեպ կարելի է հանդիպել անհատական զգացմունքների դրսևորումների: Նեոդասականության շրջանի ներկայացուցիչներից է **Մահմուդ Սամի ալ-Բարուդին (1839-1904 թթ.)**: Նա ծնվել է չերքեզ զինվորականների ընտանիքում: Ստացել է մասնավոր կրթություն տանը, այնուհետև սովորել է ռազմական ակադեմիայում: Նրա բանաստեղծական տաղանդը դրսևորվել է երիտասարդ տարիքում: Տարված լինելով արաբական միջնադարյան բանաստեղծների ստեղծագործություններով՝ նա կազմել է այդ հեղինակների բանաստեղծությունների ծավալուն ժողովածուն՝ “*Muhtarāt al-Barūdī*”, որը չորս հատորով լույս է տեսել նրա մահից հետո՝ 1909 թ.: Ալ-Բարուդին զբաղվել է քաղաքական լայն գործունեությամբ: Նա մասնակցել է Ղրիմի պատերազմին, եղել է դեսպան, զբաղեցրել պետական պաշտոններ կրթության նախարարությունում, կարճ ժամանակով նշանակվել է երկրի վարչապետ¹: Ալ-Բարուդին մասնակցել է 1882 թ. Օրաբի փառաշայի ապստամբությանը, որի պարտությունից հետո տասնյոթ տարով աքսորվել է Ցեյլոն կղզի: Ալ-Բարուդին իր ստեղծագործություններում փորձում էր վերականգնել և ադապտացնել միջնադարյան ականավոր բանաստեղծների՝ Ալ-Մութա-

¹ M. M. Badawi, նշվ. աշխ., էջ 45:

նաբբիի, Աբու Ալա ալ-Մաարիի, Աբու Թամամի ստեղծագործական ոճն ու ոգին: Քաղաքական գործչի և հեղափոխականի կերպարը դրսևորվել է նրա պոեզիայում, որի պատճառով նա ստացել է «սրի և գրչի» բանաստեղծ անվանումը¹: Իր բանաստեղծություններում Ալ-Բարուդին փորձում է ներկայացնել ժամանակակից կյանքն արտացոլող նոր թեմաներ՝ դասական պոեզիային հատուկ ժանրերի, հանգի, լեզվի համադրությամբ: Ալ-Բարուդիի պոեզիան մինչև արքային հիմնականում սոցիալ-քաղաքական էր: Նա իր կասիդաներում սուր քննադատության էր ենթարկում Խեդիվ Իսմայիլի և Խեդիվ Թաուֆիկի վարած քաղաքականությունը, ինչպես նաև անդրադառնում 19-րդ դարի երկրորդ կեսին Եգիպտոսում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններին: Իր բանաստեղծական դիվանի մեծ մասը Ալ-Բարուդին գրել է արքայի ընթացքում: Այս շրջանի բանաստեղծություններին հատուկ են հուզականությունը և տխրությունը, կարոտը հայրենիքի՝ Եգիպտոսի հանդեպ: Բանաստեղծություններում մեծ տեղ են զբաղեցնում նաև Յելյունի նկարագրությունները: Ալ-Բարուդին իր ստեղծագործություններում վերականգնում է միջնադարյան դասական պոեզիայի ժանրային ու թեմատիկ առանձնահատկությունները: Նրա բանաստեղծական դիվանը ներառում է երեք հազար բեյթ, որի գերակշիռ մասը նկարագրություններ են (wasf), ինչպես նաև փիլիսոփայական (zuhdiat, hikma), սիրային (nasib, gazal) թեմաներ: Ալ-Բարուդին կարողացավ միջնադարյան պոեզիայի մեթոդներով արտահայտել իր անձնական փորձն ու ապրումները: Նրա բանաստեղծությունները նոր մեկնարկ

¹ P. Starkey, նշվ. աշխ., էջ 44:

հանդիսացան արաբական պոեզիայի հետագա զարգացման համար:

Արաբական բանաստեղծության նեոդասականության շրջանի հետագա զարգացումը պայմանավորված է Մահմուդ Սամի Ալ-Բարուդիի երիտասարդ ժամանակակիցների՝ Ահմադ Շաուկիի (1868-1932 թթ.) և Հաֆիզ Իբրահիմի (1871-1932 թթ.) ստեղծագործական գործունեությամբ: **Ահմադ Շաուկին (1868-1932 թթ.)** ծնվել է արաբական, թուրքական և չերքեզական ծագում ունեցող ազնվականների ընտանիքում: Նա ստացել է աշխարհիկ կրթություն և սովորել իրավաբանություն Կահիրեի իրավաբանական համալսարանում: 1887 թ. Խեղիվ Թաուֆիկն ուղարկում է նրան Մոնպելիեի համալսարան՝ այնտեղ ուսանելու: Եգիպտոս վերադառնալուց հետո՝ 1891 թ., Ահմադ Շաուկին որպես պալատական բանաստեղծ անցնում է աշխատանքի Խեղիվ Աբբասի արքունիքում: 1915 թ. Խեղիվ Աբբասը բրիտանացիների կողմից գահընկեց է արվում, և Շաուկին՝ որպես Խեղիվի մտերիմ, աքսորվում է Իսպանիա, որտեղ մնում է մինչև 1919 թվականը: Իսպանիայում անցկացրած տարիներին Շաուկին գրում է իր լավագույն ստեղծագործությունները, որոնցում հիմնականում արտահայտում է իր կարոտը հայրենիքի նկատմամբ: Վերադառնալով Եգիպտոս՝ Շաուկին սկսում է ստեղծագործել եգիպտացի ժողովրդին առնչվող խնդիրների թեմաներով: Նրա պոեզիան ավելի շատ անդրադառնում է հասարակական ու քաղաքական թեմաներին, որոնք արտացոլում են արաբական աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները: 1927 թ. նա ստանում է «բանաստեղծների արքա» («Amīr al-šū‘rā») տիտղոսը: 1898 թ. լույս է տեսնում Շաուկիի բանաստեղծությունների առաջին հատորը՝ “Al-Šāūqīāt”, 1926 թ.՝ երկրորդ հատորը, իսկ երրորդ և չորրորդ

հատորները՝ նրա մահից հետո՝ 1936 և 1943 թվականներին: Առանձին բանաստեղծություններ տպագրվել են “Al-ahrām” և “Al-Mağala Al-Miṣriya” պարբերականներում¹: Շաուկիի բանաստեղծությունների ժողովածուներն առանձնանում են թեմատիկ բազմազանությամբ: Առաջին հատորը ներառում է հասարակական, քաղաքական և պատմական թեմաներ, երկրորդը՝ նկարագրություններ (waṣf) և սիրային թեմաներ (nasīb), երրորդը՝ էլեգիաներ, չորրորդը՝ երեխաների համար գրված տարատեսակ բանաստեղծություններ: Ֆրանսիայում անցկացրած տարիներին Ահմադ Շաուկին ծանոթանում է ֆրանսիական գրականությանը՝ Հյուգոյի, Դե Մյուսեի, Լամարտինի, Լաֆոնտենի ստեղծագործություններին: Նա թարգմանում է Լամարտինի «Լճակ» բանաստեղծությունը: Լաֆոնտենի առակների ազդեցությամբ Շաուկին ինքն էլ գրում է առակներ: Չնայած իր բանաստեղծական բարձր արժանիքներին՝ երիտասարդ սերնդի գրողներն ու բանաստեղծները՝ Տահա Հուսեյնը, Մահմուդ ալ-Աքքադը, Իբրահիմ ալ-Մազհինին, քննադատում էին Շաուկիի պոեզիան՝ համարելով այն խիստ ավանդական և անհամապատասխան նոր արաբական գրականության պահանջներին: Տարված լինելով արաբական միջնադարյան բանաստեղծների ստեղծագործություններով՝ Ահմադ Շաուկին նեոդասականության դպրոցի բանաստեղծների նման իր բազմաթիվ բանաստեղծություններ գրել է՝ կրկնօրինակելով միջնադարյան դասական շրջանի բանաստեղծներ Ալ-Մութանաբիին, Ալ-Մաարիին և Աբու Թամամին: Իսպանիայում աքսորի ընթացքում նա մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրում է մուսուլմանական Իսպանիայի պոեզիան և հատկապես

¹ P. Starkey, նշվ. աշխ., էջ 46:

տարվում է Իբն Ջեյդունի պոեզիայով: Ահմադ Շաուկիին իր բանաստեղծություններում շատ է կիրառում դասական պոեզիային հաստուկ համեմատություններ ու փոխաբերություններ: Նրա պոեզիայի հիմնական թեմաներից է նաև հին Եգիպտոսի երբեմնի փառահեղ անցյալի գովերգումը՝ ի հակադրություն ներկայում առկա իրավիճակի: Այս թեմայով է գրված Շաուկիի “Abū Al-Haūl” Մֆինքսին նվիրված կասիդան: Ահմադ Շաուկիին, բանաստեղծություններից բացի, գրել է նաև բանաստեղծական դրամաներ, որոնցում անդրադառնում է Եգիպտոսի անցյալի պատմական էջերին: Բանաստեղծական պատմական դրամայի օրինակներից են “‘Alī Bak” («Ալի Բեկ»), “Maşra’ Klūbātrā” «Կլեոպատրայի վախճանը», “Amīra al-Andalus” («Անդալուսի արքայադուստրը»), “Mağnūn ū laīla” («Մաջնունը և Լեյլան») ստեղծագործությունները¹:

Մուհամմադ Հաֆիզ Իբրահիմի (1871-1932 թթ.) անունը շատ հաճախ է կապվում Ահմադ Շաուկիի անվան հետ: Այս երկու բանաստեղծներն իրենց տարբերություններով ու նմանություններով նեոդասականության ականավոր ներկայացուցիչներն են: Ի տարբերություն Ահմադ Շաուկիի՝ Հաֆիզ Իբրահիմն ապրել ու ստեղծագործել է բավական դժվար պայմաններում: Նա ծնվել է Նեղոսի վրա գտնվող տուն-նավակում՝ Դայրութ քաղաքի մոտակայքում: Կան կարծիքներ, որ այս հանգամանքով է պայմանավորված նրա “Šā‘ir Al-Nīl” («Նեղոսի բանաստեղծ») տիտղոսը²: Չորս տարեկանում նա կորցրել է հորը, և մայրը ստիպված է եղել նրան տանել Հաֆիզին Կահիրե՝ իր եղբոր մոտ: Չնայած սցիալական ծանր վիճակին՝ Հա-

¹ А. Крымский, նշվ. աշխ., с. 670:

² J. Brugman, An Introduction to the History of Modern Arabic Literature in Egypt, Leiden, Brill, 1984, p. 30.

Ֆիզ Իբրահիմը կարողացել է ավարտել տարրական դպրոցը, որից հետո ընդունվել և անվճար ավարտել է ռազմական ուսումնարանը: Ուսումնարանն ավարտելուց հետո Հաֆիզ Իբրահիմն անցել է ծառայության Սուդանում: Այստեղ նա գրել է էլեգիաներ, որտեղ արտացոլվել են հեղինակի սերն ու կարոտը Կահիրեի հանդեպ: Սուդանում նա մասնակցել է անգլիացիների դեմ ուղղված բողոքին, և դրանով ավարտվել է նրա զինվորական կարիերան, որից հետո նա վերադարձել է Եգիպտոս: Երկար սպասումից հետո վերադառնալով հայրենիք՝ նա հիասթափություն է ապրել՝ չկարողանալով գտնել համապատասխան աշխատանք ապրուստ վաստակելու համար: Մի քանի տարի նա գրեթե անգործ է մնացել: Որոշ ժամանակ աշխատել է մամուլում, իսկ 1911 թ. Սուհամմադ Աբդոյի միջնորդությամբ նշանակվել է Ազգային գրադարանի գրականության բաժնի տնօրեն: Հաֆիզ Իբրահիմը, ինչպես Ահմադ Շաուկին, նույնպես հետաքրքրված էր դասական շրջանի բանաստեղծների ստեղծագործություններով և մեծապես կրում էր դրանց ազդեցությունը: Նրա գեղագիտական պատկերացումների ձևավորման վրա հատկապես մեծ ազդեցություն է ունեցել Աբու ալ-Ֆարաջ ալ-Իսֆահանիի «Kitāb Al-Aghānī» («Երգ երգոց») ստեղծագործությունը: Հաֆիզ Իբրահիմի ստեղծագործությունների հիմնական մասն են կազմում սոցիալ-քաղաքական թեմաներով զրված բանաստեղծությունները: Նա իր ստեղծագործություններում առավել շատ անդրադառնում է հասարակ ժողովրդին առնչվող խնդիրներին, ինչպես նաև Եգիպտոսի հասարակական ու քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձություններին: Հաֆիզ Իբրահիմի պոեզիան առանձնանում է ազգայնական տրամադրություններով, որը պայմանավորված էր անգլիացիների գաղութային քաղաքա-

կանությամբ ու Եգիպտոսում արևմտյան ազդեցության ակտիվացմամբ: Հաֆիզ Իբրահիմի քաղաքական պոեզիային հատուկ է նաև ծաղրը, որը հիմնականում ուղղված է անգլիացիներին և նրանց վարած քաղաքականությանը: Հակաանգլիական տրամադրություններն առավել պատկերավոր դրսևորվել են նրա «Հրաժեշտ լորդ Կրոմերին» բանաստեղծությունում, որտեղ նա կոչ է անում եգիպտացիներին միավորվել ու պայքարի դուրս գալ անգլիացի գաղութարարների դեմ: 1906 թ. Դենշավայ գյուղում տեղի ունեցածի վերաբերյալ Հաֆիզ Իբրահիմը գրում է կասիդա, որում նույնպես քննադատում է անգլիացիների վարած քաղաքականությունը: 1901 թ. լույս է տեսնում Հաֆիզ Իբրահիմի դիվանը: Բացի բանաստեղծություններից՝ Հաֆիզ Իբրահիմը գրել է նաև «Մատիհի գիշերները» մականային ստեղծագործությունը: Հաֆիզ Իբրահիմը զբաղվել է նաև թարգմանչական գործունեությամբ: Նա թարգմանել է Հյուգոյի «Թշվառները» և հատվածներ Շեքսպիրի «Համլետ» ստեղծագործությունից: Նա իր բանաստեղծություններում քննության է առել հասարակական կյանքին առնչվող թեմաների այն շրջանակը, որին անդրադարձ էին կատարել նաև իր ժամանակի հրապարակախոսները: Քննադատում է եգիպտացիների անտարբերությունն ու պասիվությունը և օտարների նկատմամբ ստրկամտությունը: Կոչ է անում եգիպտացիների համախմբմանը, գովերգում է արաբների փառահեղ անցյալն ու փարավոնյան ժամանակաշրջանի Եգիպտոսը: Ինչպես Հաֆիզ Իբրահիմի, այնպես էլ Ահմադ Շաուկի ստեղծագործություններն առավել շատ հրապարակախոսական բնույթ ունենին, որն էլ հնարավորություն տվեց հեղինակներին հարմարեցնելու պոեզիան ժամանակակից կյանքին՝ արձա-

գանքելով հասարակության ներսում տեղի ունեցող փոփոխություններին և կապելով դրանք իրական կյանքի հետ:

Նեոդասական բանաստեղծության նշանավոր ներկայացուցիչներից է նաև իրաքցի բանաստեղծ **Մա'արուֆ ալ-Ռուսաֆին (1876-1945 թթ.)**: Նա ծնվել է Բաղդադում՝ արաբական ու քրդական արմատներ ունեցող կրթված ընտանիքում: Տարրական կրթությունը ստացել է մզկիթին կից դպրոցում, որտեղ ուսումնասիրել է Ղուրանը և անգիր սովորել այն: Ֆինանսական խնդիրներ ունենալու պատճառով նա չի կարողացել շարունակել իր կրթությունը: Հետագայում նա ծանոթացել է արաբ գիտնական Ալ-շեյխ ալ-Շուքրի ալ-Ալուսիի հետ, որի միջոցով էլ ձևավորվել են բանաստեղծի կրոնական ու միաստիկ պատկերացումները: Փոքր հասակից տարված լինելով պոեզիայով՝ նա իրեն նվիրել է գրականությանը: Ջբաղվել է մանկավարժական գործունեությամբ՝ դասավանդելով տարրական, հետագայում՝ նաև միջնակարգ դպրոցներում: 1908 թ. նա մեկնել է Ստամբուլ՝ հրատարակելու “Sabīl-al-rašād” («Խելամտության ճանապարհ») թերթը: Նա նաև դասավանդել է արաբական գրականություն: 1912 թվականից դարձել է Իրաքի հարավում գտնվող նահանգի ներկայացուցիչն Օսմանյան պառլամենտում և մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը մնացել Ստամբուլում¹: Ստամբուլից նա մեկնել է Երուսաղեմ, Դամասկոս և որոշ ժամանակ ապրելով այնտեղ՝ զբաղվել է լրագրությամբ, քաղաքականությամբ և դասավանդմամբ: 1921 թ. Ալ-Ռուսաֆին վերադարձել է Բաղդադ: 1923-1928 թթ. նա աշխատել է Կրթության նախարարությունում, իսկ 1930 թ. ընտրվել է իրաքյան պառլամենտի անդամ և

¹ P. Starkey, նշվ. աշխ., էջ 52:

դարձել արաբ ազգայնական, Իրաքի անկախության համար պայքարի առաջամարտիկ Ռաշիդ Ալի-ալ-Կիլանիի համախոհներից¹: Ալ-Ռուսաֆին երբեք չի դավաճանել իր սկզբունքներին. նա բացահայտ և համարձակորեն արտահայտել է իր քաղաքական հայացքները: Նա առաջինն էր, որն իր բանաստեղծություններում արտահայտեց Իրաքի ժողովրդի ազգային տրամադրություններն ու ձգտումները: Ալ-Ռուսաֆիի քաղաքական և հասարակական թեմաներով բանաստեղծություններն ու հոդվածներն առաջին անգամ լույս են տեսել “Al-Mu’*a*‘ad” և “Al-Muqtataf” պարբերականներում: Նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուն լույս է տեսել 1910 թ. Բեյրութում: Հետագայում՝ 1932 թ., այն վերատպվել է՝ ընդգրկելով ավելի ուշ շրջանի բանաստեղծությունները²: Ժողովածուում ընդգրկված են հասարակական, քաղաքական և սիրային թեմաներով գրված բանաստեղծություններ: Նա գրել է նաև գրաքննադատական հոդվածներ և արել է թարգմանություններ թուրքերենից: Ալ-Ռուսաֆին որևէ եվրոպական լեզվի չէր տիրապետում: Նրա ստեղծագործական ուղու վրա մեծ ազդեցություն են ունեցել Ալ-Մութանաբիի, հատկապես Ալ-Մաարիի բանաստեղծական մոտիվները: Ալ-Մա’արի կրոնական սկեպտիցիզմը կարելի է նկատել Ալ-Ռուսաֆիի “Haqīqati al-Silbā” («Իմ մասին բացասական ճշմարտությունը») բանաստեղծության մեջ: Ալ-Ռուսաֆին ստեղծագործում էր ավանդական կասիդայի ժանրում՝ պահպանելով միահանգությունը: Նա խուսափում էր արհեստական ու հռետորական ձևերից և գրում էր շատ պարզ լեզվով: Չնայած նրա ստեղծագործու-

¹ P. Starkey, նշվ. աշխ., էջ 52:

² Նույն տեղում:

թյունների հիմնական մասը կրում է իր ավանդական կրթության ազդեցությունը, այնուամենայնիվ նա փորձել է խուսափել ավանդական բանաստեղծության կանոններից՝ կիրառելով բանաստեղծական տարբեր հնարքներ՝ գրելով մատչելի ու ժամանակակից լեզվով: Նրա բանաստեղծությունների թեմատիկան նույնպես բազմազան է. դրանց մեծ մասն անդրադառնում է հասարակական ժամանակակից խնդիրներին՝ արտահայտելով իր պատկերացումներն ազգային-ազատագրական պայքարի, սոցիալական հավասարության, կանանց ազատության, ժողովրդավարության, կրթության ու առաջընթացի մասին¹: Ալ-Ռուսաֆին նկարագրությունների մեծ վարպետ էր, և նրա այդ տաղանդն առավելապես դրսևորվել է “Al-safar fi Tūmbil” («Զբոսանք ավտոբուսով») և “Al-sā‘a” («Ժամացույց») բանաստեղծություններում: Ալ-Ռուսաֆին տարված էր ժողովրդի և երկրի բարեկեցության խնդիրներով: Նա գրել է մի շարք բանաստեղծություններ, որտեղ ներկայացրել է ժողովրդի տառապանքները, այրիների ու որբերի ծանր ճակատագիրը: Այս գործերի շարքին են դասվում “Al-Siġn fi Al-Baġdād” («Բաղդադի բանտը»), “Um al-īatīm” «Որբի մայրը» բանաստեղծությունները: Դրանցից ամենահայտնին “Faqr wa saqām” («Աղքատություն և հիվանդություն») բանաստեղծությունն է, որտեղ նկարագրվում է անօգնական որբի ու նրա այրի մոր ծանր վիճակը: Ալ-Ռուսաֆիի ստեղծագործությունների մի հիմնական մաս նվիրված է կանանց խնդիրներին: Նա խոսում է կանանց կրթություն ստանալու իրավունքից՝ հղում անելով արաբական պատմության մեջ հայտնի արաբ կին բա-

¹ Mahdi, Ismat, Modern Arabic Literature 1900-1967, Hyderabad, 1983, p. 60.

նաստեղծներին: Իր քաղաքական բանաստեղծություններում Ալ-Ռուսաֆին քննադատում է բռնապետությունն ու միապետությունը և հարստահարող կառավարիչներին: Այս թեմաներով գրված նրա լավագույն բանաստեղծություններից է “Al-hurīya fi siāsat al-mustamirīn” («Ազատությունը գաղութային քաղաքականության ժամանակ»): Ալ-Ռուսաֆին, ի տարբերություն վերոնշյալ մյուս նեոդասական պոետների, ավելի բաց էր բանաստեղծական նոր ձևերի կիրառման հարցում: Նոր ձևերի ու մեթոդների կիրառման տեսանկյունից Ալ-Ռուսաֆին ճանապարհ հարթեց իր ժամանակի բանաստեղծների համար:

Ջամիլ Միդիկի ալ-Չահավին (1863-1936 թթ.) իրաքյան նեոդասական պոեզիայի վառ ներկայացուցիչներից է: Նա ծնվել է Բաղդադում՝ քրդական ընտանիքում: Հայրը գիտնական էր, որը որոշ ժամանակ զբաղեցրել էր մուֆթիի պաշտոնը: Ալ-Չահավին տիրապետում էր քրդերենին, պարսկերենին, թուրքերենին, ինչպես նաև արաբերենին: Չիմանալով եվրոպական որևէ լեզու՝ նա, այնուամենայնիվ, հետաքրքրվում էր եվրոպական գիտությամբ, գրականությամբ, թուրքերեն, արաբերեն և պարսկերեն թարգմանությունների միջոցով՝ փիլիսոփայությամբ: Ալ-Չահավիի աշխատանքային փորձը բազմազան է: Նա զբաղեցրել է մի շարք պետական պաշտոններ, զբաղվել է լրագրությամբ, հրատարակչական գործունեությամբ և իրավաբանությամբ¹: Լրագրողական գործունեության ընթացքում եղել է “Al-zaūrā” իրաքյան պաշտոնաթերթի գլխավոր խմբագիրը: Ալ-Չահավին ստեղծագործական կյանքի ընթացքում, պայմանավորված նրա հետաքրքրությունների լայն շրջանակով, շատ է ճամփորդել, որի ընթացքում ձեռք է բերել բազմա-

¹ P. Starkey, նշվ. աշխ., էջ 50:

շերտ փորձառություն ու գիտելիքներ. Եգիպտոս, Եմեն, Թուրքիա (Ստամբուլ) այցելությունների ընթացքում Ալ-Ջահավին դասավանդել է փիլիսոփայություն, իրավաբանություն: Որոշ ժամանակ անց նա վերադարձել է Բաղդադ, որտեղ 1908 թվականից ներկայացրել է Բաղդադը Ստամբուլում գտնվող Օսմանյան կառավարության խորհրդում¹: Բրիտանական օկուպացիայի ժամանակ նա գլխավորում էր Օսմանյան օրենքների՝ արաբերեն թարգմանության կոմիտեն²:

Ալ-Ջահավիի գրական ժառանգությունը՝ բաղկացած վեց հատորյակից, աչքի է ընկնում ոճի պարզությամբ, անմիջականությամբ, ընտրված թեմաների հակասականությամբ և բացառիկությամբ: Ի լրումն այս ամենի՝ Ալ-Ջահավին արաբերեն է թարգմանել իրանցի հայտնի քառյակագիր Օմար Խայամի ոտբայիները: Նրա ստեղծագործությունները լույս են տեսել 1908-1939 թթ. Բեյրութում, Կահիրեում և Բաղդադում, իսկ վերջին հատորները՝ նրա մահից հետո՝ “Al-kalim al-manzūm” («Բանաստեղծություններ»), “Ruba’iāt al-Zahāwī” («Ջահավիի քառյակներ»), “Dīwān al-Zahāwī” («Ջահավիի դիվանը»), “Al-Lubāb («Էութենականություն»), “Al-Aušāl («Շիթեր»):

Ալ-Ջահավիի բանաստեղծությունների ժողովածուներն ընդգրկում են նկարագրական, սիրային, քաղաքական, փիլիսոփայական թեմաներ: Ալ-Ջահավին բանաստեղծությունների մի հատված նվիրել է կանանց իրավունքների և ազատությունների խնդիրներին: Նա հիմնականում ստեղծագործում էր արաբական պոեզիայի դասական ժանրերով՝ օգտագործելով

¹ D. Tresilian, A Brief Introduction of Modern Arabic Literature, 2012, p. 76.

² Նույն տեղում:

ավանդական կասիդայի հագներն ու ռիթմերը: Ալ-Չահավին ավանդական ձևերին զուգահեռ նաև ստեղծագործում էր ազատ բանաստեղծության ժանրում: Հնդկական և իրանական ռոբայիները հանգավորվում են առաջին, երրորդ և չորրորդ տողերում, իսկ Չահավիի հանգավորումն դրսևորվում է երկրորդ ու չորրորդ տողերում:

Ալ-Չահավիի բանաստեղծությունները ներառում են նաև գիտական ու սոցիալական հիմնահարցեր, որոնք ներկայացված են նրա “Sīāhat Al-‘Aql” («Բանականության թռիչք») բանաստեղծության մեջ: Ալ-Չահավիի “Ṭaūrat fi al-Ġahīm” («Հեղափոխություն դժոխքում») ստեղծագործությունը ոգեշնչված է Ալ-Մա’արիի “Risālāt Al-Ġufrān” («Ներման ուղերձ») պոեմից: Այստեղ ներկայացվում է բավական լայն տարածում գտած թեմատիկա. մահից հետո բանաստեղծին երկու հրեշտակներ ուղեկցում են սկզբում դրախտ, ապա՝ դժոխք, որտեղ նա ոչ միայն միավորվում է իր սիրեցյալին, այլ նաև հանդիպում հայտնի փիլիսոփաների՝ Պլատոնի, Արիստոտելի, ապա՝ իր սիրելի բանաստեղծ Ալ-Մա’արիի հետ, որը դժոխքի բնակիչներին հրեշտակների դեմ ընդվզման կոչ է անում և դրդում հեղափոխության: Ստեղծագործության ծաղրական բնույթը հանգուցալուծվում է այն մտայնությամբ, որ բանաստեղծի ճամփորդությունը ոչ այլ ինչ է, քան վատ երազ՝ որպես բանաստեղծի շատակերության արդյունք:

Ալ-Ռուսաֆին ու Ալ-Չահավին իրենց ստեղծագործական գործունեությամբ ճանապարհ հարթեցին **Մուհամմադ Մահդի ալ-Չավահիրիի (1900-1997 թթ.)** քաղաքական պոեզիայի համար: Վերջինս դարձավ այդ ժանրի գագաթնակետը¹: Ալ-Չա-

¹ P. Starkey, նշվ. աշխ., էջ 53:

վահիրին ծնվել է շիայական Նաջաֆ քաղաքում: Նրա գործունեությունն ընդգրկում է ինչպես քաղաքական, դիվանագիտական, այնպես էլ կրթական և լրագրողական ոլորտները: Բաղդադում նա հրատարակում էր “Al-Furāt” («Եփրատ»), “Al-Intiqālāb” («Հեղափոխություն») պարբերականները: 1960 թթ. սկզբին նշանակվում է Պրահայում Իրաքի դեսպան: Սակայն նրա քաղաքական ուղին հարթ չէր. մտավորականի ըմբոստեությունը, ինչպես նաև նրա քաղաքական հողվածներն ու բանաստեղծությունները մշտապես հանգեցնում էին իշխանությունների հետ կոնֆլիկտի: Կյանքի մի մեծ հատված նա ապրել է մենության մեջ՝ Եգիպտոսում, Սիրիայում և Չեխոսլովակիայում: Ալ-Ջավահիրիի բանաստեղծությունների առաջին ժողովածուն կոչվում է “Baīna Al-šū’ūr wa Al-‘atīfa” («Ապրումների և զգացողությունների միջև»), որը հիմնականում ներառում է ներբողներ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ալ-Ջավահիրիի պոեզիան կտրուկ փոփոխություն է կրում՝ ձեռք բերելով հեղափոխական ուղղվածություն, որը դրսևորվում է նրա “Barīd al-ğurba” («Օտարության ուղերձ») (1965 թ.), “ Barīd al-‘aūda” («Վերադարձի ուղերձ») (1969 թ.): Նախորդների նման հետևելով նեոդասականության մեջ ավանդական բանաստեղծական ձևերի պահպանմանը՝ Ալ-Ջավահիրին արտահայտում էր իր բողոքն ու ըմբոստությունն օտար նվաճողականության ու ֆեոդալիզմի դեմ: Նրա քաղաքական պոեզիան 20-րդ դարում դարձավ ազատության սիմվոլ ոչ միայն Իրաքի, այլ նաև ողջ արաբական աշխարհի համար:

Այսպիսով՝ նեոդասական բանաստեղծներն իրենց հասարակական, քաղաքական հայացքները փորձեցին արտահայտել դասական պոեզիայի ժանրերի միջոցով: Դասական պոեզիային դիմելը պայմանավորված էր հասարակական ու քա-

ղաքական դրդապատճառներով: Ըստ հեղինակների՝ անգլիական գաղութացման պայմաններում եգիպտացիները վտանգված են կորցնելու իրենց ազգային դիմագիծն ու մշակույթը: Այդուհանդերձ, նեոդասականների կողմից միջնադարյան դասական պոեզիայի ձևերին դիմելը խոչընդոտում էր հեղինակային փորձի դրսևորմանը նրանց ստեղծագործություններում: Միջնադարյան պոեզիայի ձևերի միջոցով հեղինակային փորձի դրսևորումը խիստ քննադատության ենթարկվեց ռոմանտիկ ուղղության բանաստեղծների կողմից:

Ռոմանտիկ բանաստեղծությունը

Ռոմանտիզմի ձևավորումն արաբական գրականության մեջ համընկնում է արաբական աշխարհում տեղի ունեցող արմատական) փոփոխություններին, որոնք իրենց անմիջական արտացոլումը գտան արաբական եկրների ինչպես քաղաքական, այնպես էլ հասարակական և մշակութային կյանքում: Առաջին համաշխարհային պատերազմից հետո ձևավորվեցին արաբական ազգային պետություններ եվրոպական տերությունների տիրապետության ներքո, ինչը հանգեցրեց քաղաքական ու հասարակական նոր դիսկուրսների ձևավորմանը: Այս ամենն իր ազդեցությունն ունեցավ նաև գրողների գեղագիտական պատկերացումների վրա և ապահովեց նոր մեկնարկ գրական նոր ուղղությունների առաջացման համար: Ռոմանտիզը, լինելով եվրոպական երևույթ ինչպես եվրոպական, այնպես էլ արաբական գրականության մեջ, ձևավորվեց ի հակադրություն լուսավորչական ռացիոնալիզմին: Ռոմանտիզմն արաբական գրականության մեջ առաջինը դրսևորվեց պոեզիայում: Կրելով անգլիական և ֆրանսիական ռոմանտիզ-

մի ազդեցությունը՝ ռոմանտիզմի արաբ ներկայացուցիչներն իրենց առաջնային նպատակներից էին համարում պոեզիայում ավանդական նորմերի դեմ պայքարը, բնության հետ կապի հաստատումը, անձնական ցավի ու ապրումների դրսևորումը, սիմվոլիկ լեզվի նախապատվությունը: Նրանք կոչ էին անում փոփոխությունների, ռեֆորմների և նորարարության բանաստեղծական ձևերում, ինչպես նաև գրականության մասին գեղագիտական պատկերացումներում¹: Արաբական ռոմանտիկ բանաստեղծության ձևավորման գործում իրենց մեծ ազդեցությունն ունեցան *մահջարի գրականության* ներկայացուցիչները, «Դիվան» և «Ապոլլոն» գրական խմբակները:

Ռոմանտիկ բանաստեղծության մեջ առաջին քայլերն է անում **Խալիլ Մուտրանը (1872-1949 թթ.)**: Նա ծնվել է Բա'ալբեքում և սովորել է Բեյրութի կաթոլիկ սեմինարիայում: Իր շատ հայրենակիցների նման Խալիլ Մուտրանը մասնակցել է հակաօսմանյան քաղաքական գործողություններին, որի արդյունքում ստիպված է եղել հեռանալ հայրենիքից: Նա մեկնել է Փարիզ, որտեղ համալրել է ֆրանսիական գրականության մասին իր գիտելիքները: 1902 թ. Մուտրանը հաստատվել է Եգիպտոսում, որտեղ էլ մնացել է մինչև կյանքի վերջը: Խալիլ Մուտրանն արժանացել է «Ša‘ir al-Quṭraīn» (Երկու երկրների՝ Եգիպտոսի և Սիրիայի բանաստեղծ) պատվանվանը: Մուտրանը բանաստեղծություններ գրելուն զուգահեռ զբաղվում էր նաև լրագրությամբ ու թարգմանչությամբ: Նա աշխատել է “Al-ahrām” թերթի թղթակից Կահիրեում²: 1900 թ. հիմնել է իր սեփական ամսագիրը՝ “Al-mağala Al-Mšrīa” («Եգիպտական ամ-

¹ M. M. Badawi, նշվ. աշխ., էջ 83:

² J. Brugman, նշվ. աշխ., էջ 36:

սագիր») որը մեծ դեր ունեցավ Եգիպտոսի գրական կյանքում, և որտեղ Մուտրանը հրապարակում էր իր ստեղծագործությունների մեծ մասը: Ամսագիրը հրատարակվեց երեք տարի, որից հետո Խալիլ Մուտրանը հիմնեց “Al-ğawā’ib al-miṣrīa” («Եգիպտական պատասխաններ») օրաթերթը: 1908 թ. լույս տեսավ Մուտրանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ “Dīwān Al-Halīl” («Խալիլի դիվանը»): Այս ժողովածուի նախաբանում նա փորձում է ներկայացնել իր մտտեցումներն արաբական նոր բանաստեղծության մասին՝ կոչ անելով հրաժարվել միջնադարյան դասական բանաստեղծության ավանդական ձևերից, կարևորելով բանաստեղծության կառուցվածքային ամբողջականությունը և բանաստեղծի երևակայությունը: Նա գրում է. «Մա մի մարդու պոեզիա է, որը փորձում է հրաժարվել պարտադրված հանգից և առաջնահերթություն տալ անհատական երևակայությանը»¹: Ստեղծելով միասնական բովանդակությամբ բանաստեղծություններ՝ Մուտրանի պոեզիան, այնուամենայնիվ, շարունակում է նեոդասական պոեզիայի ավանդույթը՝ օգտագործելով պոեզիան որպես միջոց՝ արտահայտելու քաղաքական, հասարակական հայացքներն ու հակազդության քարոզչությունը: Մուտրանի՝ նրան ժամանակակից բանաստեղծների վրա ազդեցության մասին տարբեր կարծիքներ կան: Ահմադ Շաուկին Մուտրանին համարում է արաբական ու արևմտյան պոեզիայի համադրող:

Խալիլ Մուտրանը, իր ստեղծագործությունությամբ հիմնվելով ազատ բանաստեղծության ձևաչափում բովանդակության ու թեմատիկայի կարևորության վրա, նպաստեց հետագա ռոմանտիկ բանաստեղծության ձևավորմանը:

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 37:

Մահջարի գրականությունը

Մահջարի արաբական գրականությունը ձևավորվել է 19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին հիմնականում Սիրիայից, Լիբանանից Հյուսիսային և Հարավային Ամերիկա արտագաղթած գրողների ու բանաստեղծների կողմից, որոնց գերակշիռ մասը քրիստոնյա էր: Բավական կարճ ժամանակահատվածում նրանք կարողացան միավորվել և ստեղծել գրական խմբակներ, որոնք պետք է նպաստեին նրանց գրական գործունեությանը և ընթերցողների առավել լին շրջանակ ապահովելուն: Լիբանանցի Էմիգրանտների կողմից առավել հայտնի գրական միություններից էին Հյուսիսային Ամերիկայում “Al-rābiṭa al-qalamīa” («Գրչի միություն»), իսկ Հարավային Ամերիկայում՝ “Al-‘uṣba al-andalusīa” («Անդալուսյան միություն»): Այս երկու միությունները նշանակալի դեր ունեցան արաբական գրականության զարգացման, ինչպես նաև Արևմուտքում արաբերենի պահպանման գործում: Վերը նշված դպրոցներն ունեին էական տարբերություններ իրենց գրական գործունեության ուղղվածության տեսանկյունից: Հարավային Ամերիկայի գրողների գործունեությունն ավելի շատ ուղղված էր արաբական ավանդական ժառանգության պահպանմանն այն դեպքում, երբ Հյուսիսային Ամերիկայում հաստատված գրական գործիչները, կաշկանդված չլինելով արաբական դասական գրականության կանոններով, իրենց մոտեցումներում առավել բաց էին ստեղծագործական նորարարությունների հանդեպ: Էմիգրանտ գրողներն իրենց ստեղծագործություններն ու գաղափարները ներկայացնում էին հիմնականում պարբերականներում, որոնցից առավել հայտնի էր Նասիբ Արիդայի կողմից Նյու Յորքում հրատարակվող “Al-funūn”

(«Արվեստներ») ամսագիրը, որը ֆինանսական խնդիրների պատճառով լույս էր տեսնում ընդմիջումներով. 1913-1918 թթ. ընթացքում հրատարակվել է ընդամենը քսանինը համար: Արաբ էմիրանտ գրողների մյուս կարևոր պարբերականը՝ «Al-sā'ih» («Ճամփորդ»), շաբաթը երկու անգամ լույս տեսնող թերթն էր: «Al-funūn» ամսագրի փակվելուց հետո գրողները որոշեցին համախմբվել որպես գրական շարժում և 1920 թ. հիմնեցին «Al-rābiṭa al-qalamīa» («Գրչի միություն») ասոցիացիան: Ջուբբան Խալիլ Ջուբբանը դարձավ այդ միության առաջին նախագահը, իսկ Միխայիլ Նուայմեն՝ քարտուղարը: Միության անդամների ստեղծագործությունները և նրանց գրականության մասին արված վերլուծություններն ու գաղափարները հրատարակվում էին միության «Al-sā'ih» պաշտոնաթերթում¹: Միության ներկայացուցիչները, հեռու լինելով իրենց հայրենիքից, միաժամանակ ուղիներ էին փնտրում արաբական աշխարհի մտավորականների, գրողների հետ կապ հաստատելու համար: Նրանցից շատերի ստեղծագործությունները տպագրվում էին Եգիպտոսում, հատկապես Լիբանանից գաղթած գրողների պարբերականներում: Նրանց գործունեության շնորհիվ արաբական գրականության ժանրային համակարգը համալրվեց *šī'r maṣsur* («արձակ բանաստեղծություն») գրական նոր ժանրով: Միության առավել հայտնի ներկայացուցիչներից էին Ջուբբան Խալիլ Ջուբբանը, Միխայիլ Նուայմեն, Ամին ալ-Ռեյհանին, Իյյա Աբու Մադին: Սա առաջին արաբական գրական միությունն էր, որն իր նոր մոտեցումներով ու ստեղծագործություններով մեծապես

¹ M. M. Badawi, նշվ. աշխ., էջ 95-96:

նպաստեց արաբական ռոմանտիկ բանաստեղծության կայացմանը:

Մահջարի գրականության ականավոր ներկայացուցիչներից է **Ջուբրան Խալիլ Ջուբրանը (1883-1931 թթ.)**: Լիբանանցի բանաստեղծ, արձակագիր, էսսեագիր, նկարիչ Ջուբրան Խալիլ Ջուբրանը 20-րդ դարի Արևելքում ու Արևմուտքում ամենահայտնի և ամենաշատ ընթերցվող հեղինակներից է: Նրա ինքնատիպ գեղարվեստական ստեղծագործությունները բարձր գնահատանքի են արժանացել ժամանակակից գրաքննադատների կողմից՝ անվանելով նրան Վիլյամ Բլեյք: Ջուբրանը ոչ միայն տաղանդավոր գրող էր, նաև փիլիսոփա էր, որն իր գաղափարներով ոգեշնչել է գրողների մի ամբողջ սերունդ: Նա ծնվել է 1888 թ. Լիբանանի հյուսիսում գտնվող Բշարի գյուղում՝ անապահով քրիստոնյա ընտանիքում: Ֆինանսական սուղ վիճակը հնարավորություն չի տալիս Ջուբրանին կրթություն ստանալու դպրոցում: Արաբերեն և ասորերեն սովորել է քահանայի օգնությամբ, վերջինիս միջոցով էլ ծանոթացել է Աստվածաշնչին: 1895 թ. Ջուբրանի ընտանիքն արտագաղթել է Միացյալ Նահանգներ, որտեղ արդեն հաստատվել էին նրանց ընկերներից և հարազատներից շատերը: Նրանք բնակություն են հաստատել Բոստոն քաղաքի ծայրամասում գտնվող չինական թաղամասում: Այստեղ Ջուբրանը սկսել է հաճախել Էմիգրանտ երեխաների դպրոցը, որտեղ սովորել է անգլերեն և սկսել զբաղվել նկարչությամբ: Բոստոնում նրան հաջողվել է ծանոթանալ հայտնի նկարչական և մտավորական շրջանակների հետ: 1898 թ. Ջուբրանը մեկնել է Բեյրութ՝ հայրենիքում կրթությունը շարունակելու նպատակով: Նա սովորել է “Madrasat Al-Hikma” իրավաբանական համալսարանում, որն այն ժամանակ Լիբանանի ամենահեղինակավոր ուսում-

նական հաստատություններից էր: Այստեղ նա սովորել է արաբերեն ու ֆրանսերեն: Ուսումնառության տարիներին Ջուբբանը սկսել է ստեղծագործել: 1902 թ. նա վերադարձել է Բոստոն: 1904 թ. բացվել է Ջուբբանի առաջին ցուցահանդեսը: Այստեղ նա ծանոթացել է Մերի Էլիզաբեթ Հասկելի հետ, որն այդ ժամանակ ուսումնարանի տնօրեն էր: Հասկելի հետ հանդիպումը ճակատագրական նշանակություն ունեցավ Ջուբբանի ստեղծագործական կյանքում: 1909 թ. Հասկելի աջակցությամբ Ջուբբանը մեկնեց Փարիզ՝ նկարչության մեջ կատարելագործվելու: Փարիզում նա ծանոթացել է ժամանակակից հայտնի նկարիչների, գրողների, երաժիշտների, դերասանների հետ: 1912 թ. Ջուբբանը տեղափոխվեց Նյու Յորք՝ հիմնելով իր արվեստանոցը: Նյու Յորքում է սկսվել նրա բեղուն ստեղծագործական գործունեությունը: Այստեղ նա ծանոթացել Միխայիլ Նուայմեի, Նասիֆ Արիդայի, Աբդուլ Մասիհ Հադադի հետ, որոնց հետ էլ հետագայում հիմնել է «Գրչի միությունը»: Նրա արաբերենով և անգլերենով գրված ստեղծագործությունները սկսել են մեծ ճանաչում բերել հեղինակին¹: Ջուբբանը մահացել է 1931 թ. Նյու Յորքում:

Ջուբբանի ստեղծագործական ներդրումը բավական ընդգրկուն է և բազմազան: Իր արձակ բանաստեղծություններով, արվեստի, գրականության, լեզվի մասին հոդվածներով զգալի ազդեցությունն է ունեցել արաբական պոեզիայի վրա: Ջուբբանի շատ ստեղծագործություններում առանցքային տեղ է զբաղեցնում հոգևոր սիրո թեման: Նա ավելի շատ միաստիկ էր, և նրա միաստիցիզմը կրում էր ոչ միայն քրիստոնեության, այլ նաև իսլամի, սուֆիականության ազդեցությունը: Նրա փիլի-

¹ Mahdi, նշվ. աշխ., էջ 145:

սովայությունը հիմնականում կրում էր նեոպլատոնականների ազդեցությունը: Ջուբրանի վաղ շրջանի գործերը հիմնականում ներկայացնում են բողոք կրոնական իշխանության, մարդու կողմից ստեղծված հասարակական նորմերի ու օրենքների դեմ, որոնք, նրա կարծիքով, հաճախ օգտագործվում են որպես զենք մարդկանց ճնշելու համար: Այս թեմաների անդրադարձը կարելի է տեսնել նրա “Arā’is al-murūğ” («Մարգագետինների հարսները») կարճ պատմվածքների ժողովածուում ընդգրկված ստեղծագործություններում: Այդ ստեղծագործություններից առավել հայտնի են “Tuhana Al-Mağnūn” («Խենթ Հովհաննեսը»), “Ḥālī al-kāfir” («Անհավատ Խալիլը»), “Al-arwāḥ al-mutamarida” («Ըմբոստ հոգիներ») պատմվածքները: “Al-ağniḥa al-mutakasira” («Կոտրված թևեր») ստեղծագործության մեջ Ջուբրանն անդրադառնում է արաբական աշխարհում կնոջ անազատությանը: Ջուբրանի վաղ շրջանի հայտնի ժողովածուներից է “Al-dam wa al-ibtisāma” («Արցունք և ժպիտ») պատմվածքների, հոդվածների, արձակ բանաստեղծությունների ժողովածուն: Այստեղ ներառված գործերի հիմնական թեման անհատի քաղաքակիրթ հասարակությունում մեկուսացած և օտարված լինելն է: Քաղաքը, Ջուբրանի կարծիքով, մարդու անձնական վշտերի հիմնական աղբյուրն է: Ջուբրանի բանաստեղծությունները, հոդվածները, փիլիսոփայական մտքերը ներկայացված են “Mawākib” («Շքերթ»), “Al-‘awāṣif” («Փոթորիկներ»), “Al-badā’i wa al-ṭarā’if” («Լավագույն գործեր և գլուխգործոցներ»), “Aṯuhā Laīl” («Ով դու գիշեր») ժողովածուներում: Ջուբրանի «Շքերթ» պոեմը լավագույններից է. այն հարուստ է բանաստեղծական պատկերներով, փոխաբերություններով, սիմվոլներով: Բանաստեղծի ռոմանտիզմի վրա մեծ ազդեցություն ունեն արևմտյան մշակույթը, գրականությունը:

Իր՝ գրեթե մարգարեության հասնող առանձնահատուկ ինտուիցիայով ու աշխարհընկալմամբ Ջուբբանի պոեզիան նույնացվում է 19-րդ դարի անգլիացի ռոմանտիկ բանաստեղծ Վիլիամ Բլեյքի հետ: Ջուբբանի աշխարհայացքի, մասնավորապես կրոնի նկատմամբ ունեցած մոտեցման վրա ազդեցություն է ունեցել Նիցշեն հատկապես իր «Այսպես խոսեց Ջրադաշտը» փիլիսոփայական վեպով¹: Ջուբբանին համաշխարհային համբավ են ապահովել անգլերենով գրված ստեղծագործությունները: Դրանցից ամենահայտնին “Al-Nabi («Մարգարեն»), Īsā‘ Ibn Al-insān («Հիսուսը մարդու որդին»), “Raml wa Zabad” («Ավազ և փրփուր») ստեղծագործություններն են: Որպես ռոմանտիկ բանաստեղծ՝ Ջուբբանը մեծ ազդեցություն է ունեցել արաբական աշխարհում ռոմանտիզմի գրականության զարգացման վրա: Բանաստեղծի գլխավոր նպատակը Ջուբբանը համարում էր ժամանակակից բանաստեղծական լեզվի մշակումը. «Իրական պոետը նա է, ով, մտնելով իր հոգու տաճարը, դուրս է գալիս այնտեղից՝ արտաբերելով նոր բառեր ու արտահայտություններ»:

«Գրչի միության», ինչպես նաև մահջարի գրականության ականավոր ներկայացուցիչներից էր **Միխայիլ Նուայմեն (1889-1988 թթ.)**: Նա լիբանանյան գրականության խոշոր գործիչներից է, տաղանդավոր բանաստեղծ, գրաքննադատ և էսսեիստ: Նրա ներդրումն արաբական ռոմանտիկ պոեզիայի զարգացման գործում հիմնականում քննադատական հոդվածներն ու էսսեներն են, որոնք 1923 թ. Եգիպտոսում լույս են տեսել “Al-Girbāl” («Մաղ») ժողովածուում:

¹ M. M. Badawi, նշվ. աշխ., էջ 98:

Միխայիլ Նուայմեն ծնվել է 1889 թ. Լիբանանի Բասկինթա գյուղում: Նախնական կրթությունը ստացել է ռուսական դպրոցում: Այնուհետև սովորել է Նազարեթի ուսուցիչների վերապատրաստման ռուսական ուսումնարանում: 1906 թ. նա մեկնել է Ռուսաստան՝ կրթությունը շարունակելու նպատակով: Պոլտավայի համալսարանում հինգ տարի ուսումնառությունից հետո Նուայմեն 1911 թ. մեկնել է Միացյալ Նահանգներ: 1916 թ. ավարտելով Սիեթլի համալսարանը՝ “Al-funūn” ամսագրի խմբագիր Նասիֆ Արիդայի հորդորով տեղափոխվել է Նյու Յորք: Նասիֆ Արիդան Միխայիլ Նուայմեի հետ սովորել է Նազարեթի ուսումնարանում: Այդ պահից սկսած՝ Նուայմեն ամբողջությամբ տրվել է “Al-funūn” “Al-sā’ih” պարբերականների և «Գրչի միության» գործունեությանը: Քսանմեկ տարի ապրելով Միացյալ Նահանգներում՝ Նուայմեն 1932 թ. վերադարձել է Բասկինթա հայրենի գյուղը՝ ապրելով այնտեղ մինչև կյանքի վերջը: Նա մահացել է Բեյրութում 1988 թ.: Նուայմեն մահջարի գրականության ազդեցիկ գրողներից էր: Նա ստեղծագործել է գրական բոլոր ժանրերում: Ուսանելու տարիներին նա հրատարակել է գրաքննադատական հոդվածներ “Al-funūn” ամսագրում: Նուայմեի գրաքննադատական քսաներկու լավագույն հոդվածները լույս են տեսել “Al-Ġirbāl” ժողովածուում: Այս ժողովածուով Նուայմեն ներկայացրել է Հյուսիսային Ամերիկայում մահջարի գրական շարժումը¹: Նուայմեն իր բանաստեղծությունները գրել է 1917-1930 թվականներն ընկած ժամանակահատվածում: Նրա բանաստեղծությունները լույս են տեսել “Hams al-ğufūn” («Կոպերի շշունջը») ժողովածուում: Այստեղ ներկայացված բանաստեղծություններն իրենց

¹ M. M. Badawi, նշվ. աշխ., էջ 98:

նորարությամբ մեծ ազդեցություն ունեցան արաբական նոր քանաստեղծության զարգացման վրա: Ժողովածուում ներկայացված բանաստեղծությունները գրված էին և՛ արաբերեն, և՛ անգլերեն: Նուայմեի համոզմամբ բանաստեղծը չպետք է կաշկանդված լինի տաղաչափության կանոններով, ավելին՝ նա ընդունում էր, որ կարելի է թույլ տալ նաև քերականական շեղումներ՝ բանաստեղծական մտահղացումն առավել տպավորիչ արտահայտելու նպատակով: Նրա կարծիքով պոեզիան պետք է լինի իմաստավորված և արձագանքի մարդու հոգևոր ու զգացմունքային աշխարհների պահանջներին, գեղեցիկի ձգտմանը: Նուայմեն այսպես է բնութագրում բանաստեղծին. «Մենք կարող ենք մեզ հարց տալ՝ ո՞վ է բանաստեղծը: Նա մարգարե է, քանի որ իր հոգու աչքերով կարող է տեսնել այն, ինչ հասու չէ սովորական մահկանացուներին: Նա նկարիչ է, քանի որ բռնային պատկերավոր միջոցներով կարողանում է պատկերել այն, ինչ տեսնում է և լսում: Նա երաժիշտ է, որովհետև նա լսում է ներդաշնակություն այնտեղ, որտեղ մարդիկ կարող են լսել միայն աղմուկ... նրա համար կյանքը ուրախ և տխուր երաժշտության համակցություն է: Եվ, վերջապես, բանաստեղծը հոգևորական է, քանի որ ունի իր Աստվածը, որին ծառայում է ճշմարտության ու գեղեցկության Աստվածը: Այդ Աստվածը ներկայանում է նրան տարբեր իրավիճակներում և տարբեր կերպարանքներով»¹:

Միխայիլ Նուայմեի բանաստեղծություններն առանձնանում են իրենց նուրբ մեղեդայնությամբ և թեթևությամբ: Նրա լավագույն բանաստեղծություններից է «Ահի» («Եղբայրս») գոր-

¹ M. M. Badawi, *A Critical Introduction to Modern Arabic Poetry*, Cambridge, 1975, p. 186.

ծը, որը ներառում է պատերազմական ու հայրենասիրական պոեզիայի տարրեր: Եգիպտացի քննադատ Մուհամմադ Մանդուրը Նուայմեի պոեզիան բնութագրել է որպես «հանդարտության, շշուկի գրականություն»՝ ընդունելով այն որպես նոր մեկնարկ արաբական բանաստեղծության, հատկապես ռոմանտիկ բանաստեղծության համար¹: Բանաստեղծական ռիթմն ու շարժումը նրա պոեզիայի բաղկացուցիչ մասն են կազմում, որոնց հիմնական տարրերը, միախառնվելով տարբեր տոնայնություններին, առաջացնում են ինտենսիվության տարբեր մակարդակներ: Այս ձևով են գրված նրա “Awrāq al-ḥarīf” («Աշնան տերևներ»), “Al-nahr al-mutağamida” («Սառած գետը»), “Tarnīma al-ariāh” («Քամիների երգը») բանաստեղծությունները: Նուայմեն իր ստեղծագործական գործունեությամբ նոր ճանապարհ հարթեց արաբական բանաստեղծության հետագա զարգացման համար:

Մահջարի գրականության տաղանդավոր բանաստեղծներից էր նաև **Իյյա Աբու Մադին (1889-1957 թթ.)**: Մահջարի դպրոցի լիբանանցի բանաստեղծ Իյյա Աբու Մադին ծնվել է 1889 թ. Լիբանանի հեռավոր Մահայդասսա գյուղում: Հիմնականում զբաղվել է ինքնակրթությամբ: Տասնմեկ տարեկանում մեկնել է Ալեքսանդրիա և զբաղվել ծխախոտի վաճառքով: 1911 թ. Աբու Մադին մեկնել է Միացյալ Նահանգներ: 1916 թ. հաստատվել է Նյու Յորքում: Այստեղ նա հանդիպել է «Գրչի միության» գրողների հետ, տարվել նրանց գործունեությամբ և դարձել այդ միության ակտիվ գործիչներից՝ գրելով հոդվածներ ու բանաստեղծություններ: Նա նաև համագործակցել է մի շարք ամսագրերի հետ: Շուրջ տասը տարի նա աշխատել է

¹ M. M. Badawi, նշվ. աշխ., էջ 100:

արաբերենով լույս տեսնող “Al-Mir’āt Al-Garb” («Արևմուտքի հայելի») ամսագրում՝ հետագայում դառնալով պարբերականի գլխավոր խմբագիրը: 1929 թ. նա սկսել է հրատարակել իր սեփական “Al-Sāmir” («Ջրուցակից») գրախոսական պարբերականը, որը հետագայում՝ 1936 թ., վերափոխվեց և դարձավ օրաթերթ: Այն լույս տեսավ մինչև նրա մահը՝ 1957 թվականը: Իլյա Աբու Մադիին մահջարի բանաստեղծների շարքում առանձնացավ իր քնարական բանաստեղծություններով: Նրա ստեղծագործություններն ընդգրկված են հեղինակի հինգհատորյա դիվանում, որոնցից երեքը լույս են տեսել Միացյալ Նահանգներում, մնացած վերջին հատորները՝ Լիբանանում նրա մահից հետո: Պաղեստինցի հայտնի բանաստեղծ ու գրող Սալվա Ջայուսին Իլյա Աբու Մադիին համարում է «Արաբական նոր բանաստեղծության ամենահետաքրքիր ներկայացուցիչներից. «Նա հասավ նորարարության ամենաբարձր աստիճանին՝ երբեք չհեռանալով իր արմատներից»¹:

Իլյա Աբու Մադիի բանաստեղծությունների “Tadkar Al-Mādī” («Անցյալի հիշողությունը») առաջին ժողովածուն լույս է տեսել 1911 թ.: Այստեղ ներառված են նրա երիտասարդ տարիքում գրված բանաստեղծությունները: Նրանց հիմնական մասը բարոյական և ուսուցողական բնույթ ունի և ավելի շատ անդրադառնում է հասարակության բարոյական խնդիրներին ու մարդկային թերություններին²:

Իլյա Աբու Մադիի երկրորդ ժողովածուի նախաբանում Ջուբրան Խալիլ Ջուբրանը գրում է, որ բանաստեղծն առանձնանում է իր հարուստ երևակայությամբ, որը հնարավորու-

¹ S. K. Jayyusi, *Trends and Movements in Modern Arabic Poetry*, Vol. 1, 1977, p. 123.

² M. M. Badawi, նշվ. աշխ., էջ 101:

թյուն է տալիս նրան արտահայտելու անձնական մոտեցումները, զգացմունքներն ու գաղափարները պատկերների և կոնկրետ իրավիճակների միջոցով:

Աբու Մադիի՝ որպես ռոմանտիկ բանաստեղծի ստեղծագործական տաղանդը դրսևորվում է նրա երրորդ՝ “Al-ğadāwil” («Վտակներ») ժողովածուում ներառված բանաստեղծություններում: Միխայիլ Նուայմեն ժողովածուի առաջին հրատարակության համար գրել է նախաբան, որտեղ նշում է, որ զգում է որոշակի հոգեկան կապ իր ու բանաստեղծի միջև, որը չէր զգացել Իլյա Աբու Մադիի առաջին երկու ժողովածուների բանաստեղծությունների դեպքում¹: Այս ժողովածուում, դիմելով ընթերցողին, հեղինակը ներկայացնում է իր նոր մոտեցումը պոեզիայի հանդեպ. «Դուք ինձ հետ չեք, եթե դիտարկում եք պոեզիան միայն բառերի և տաղաչափության սահմաններում: Մեր ճանապարհները երբեք չեն հատվի, և մեր միջև որևէ կապ լինել չի կարող»²: Այս ժողովածուում ընդգրկված լավագույն բանաստեղծություններից է “Al-‘Anqā’”-ն («Փյունիկ»): Այն իր ձևով ու բովանդակությամբ համոզիչ ապացույց է Աբու Մադիի ստեղծագործական նոր մեկնարկի: Բանաստեղծությունն ամբողջությամբ մարդու հավերժական փնտրտուքի, նրա կասկածների ու անորոշ ձգտումների, կյանքի առեղծվածային ընկալման դրսևորում է: Լեզենդար թռչունը խորհրդանշում է այն, ինչի մասին մարդիկ լսել են և գիտեն, մշտապես փնտրում են այն, սակայն երբեք չեն կարողանում գտնել³: Նրա համար բանաստեղծությունն առաջին հերթին միտք է, զգացմունքներն առավել երկրորդական դեր ունեն: Մտքի առավել-

¹ M. M. Badawi, նշվ. աշխ., էջ 103:

² R. Allen, *Modern Arabic Literature*, New York, 1987, p. 15.

³ R. Allen, նշվ. աշխ., էջ 16:

լությունը նրա պոեզիայում ավելի ցայտուն դրսևորված է “Al-Ṭalāsīm” («Թալիսմաններ») հայտնի բանաստեղծությունում¹: Նրա բանաստեղծական լեզուն շատ հստակ է, դրանում չկան մակդիրներ, համեմատություններ, այնտեղ բացակայում են երանգավորումներ ու բարդ արտահայտչամիջոցներ: Նրա նպատակն է որքան հնարավոր է հստակ փոխանցել իմաստն առանց ավելորդ բառերի²: Աբու Մադհիի փիլիսոփայության հիմնական սկզբունքն ընկերությունն է, մարդկանց նկատմամբ կարեկցանքն ու սերը: Իլյա Աբու Մադհին իր ստեղծագործություններում հաճախ անդրադառնում է հասարակ ժողովրդին, խոսում նրանց լեզվով և փորձում պաշտպանել նրանց իրավունքները: Աբու Մադհիի պոեզիայի հիմնական թեմաներից է բնությունը, որը նրա բանաստեղծություններում ներկայացվում է այլաբանություններով: Իլյա Աբու Մադհիի պոեզիան առանձնանում է իր լեզվի արտահայտչականությամբ, դասական պոեզիայի ձևերի հմուտ օգտագործմամբ, ընթերցողին հետաքրքրող ժամանակակից թեմաների ներկայացմամբ: Նրա հայտնի ժողովածուներից են նաև “Falsafa ḥaīā” («Կյանքի փիլիսոփայություն»), “Lam aḡid aḥadan” («Ոչ մեկի չգտա»), “Rīḥ al-šimāl” («Հյուսիսի քամին»), “Al-ṭalāsīm” («Թալիսմաններ»), “Al-īatīm” («Որբը»), “Al-masā’”(«Երեկո»), “Ta ‘āli” («Մոտեցիր»), “Al-faqīr” («Աղքատը»):

¹ Նույն տեղում, էջ 13:

² M. M. Badawi, նշվ. աշխ., էջ 104:

«Դիվան» գրական խմբակը

20-րդ դարի առաջին տարիներին արաբական գրականության մեջ ի հայտ է գալիս երիտասարդ բանաստեղծների մի սերունդ, որը քննադատաբար է վերաբերվում նեոդասական բանաստեղծների ստեղծագործություններին: Չնայած նեոդասական բանաստեղծները՝ Ալ-Բարուդին, Հաֆիզ Իբրահիմը և Ալ-Շաուկին, վերականգնեցին դասական պոեզիան՝ նոր շունչ և բովանդակություն հաղորդելով դրան, այսուամենայնիվ երիտասարդ սերնդի բանաստեղծները քննադատում էին նրանց ինչպես ձևի, այնպես էլ բովանդակության տեսանկյունից: Բանաստեղծների այս նոր սերունդը գրական ասպարեզում հայտնվեց այն ժամանակ, երբ Եգիպտոսում տեղի էին ունենում շրջադարձային փոփոխություններ ինչպես քաղաքական, այնպես էլ հասարակական ու մշակութային կյանքում: Այդ բանաստեղծների շարքում իրենց տաղանդով ու նորարարությամբ առանձնանում էին Աբդ ալ-Ռահիման ալ-Շուքրին, Իբրահիմ Աբդ ալ-Կադիր ալ-Մազինին, Աբբաս Մահմուդ ալ-Ակադը: Շուքրին և Մազինին ստացել էին աշխարհիկ կրթություն՝ սովորելով Կահիրեի «Ուսուցիչների վերապատրաստման ուսումնարանում»: Ալ-Ակադը Ասուանից էր, նա նախնական կրթություն չէր ստացել, եկել էր Կահիրե, որտեղ զբաղվել էր լրագրությամբ ու դասավանդմամբ: Առաջին աշխարհամարտից հետո նա Մազինիի հետ միասին սկսեց զբաղվել լրագրությամբ ու ստեղծագործական կյանքով: Նրանք “Hizb al-wafd¹» կուսակցության ակտիվ համախոհներից էին: Շուքրին

¹ Hizb al-wafd ազատական-ազգայնական կուսակցություն, որը ձևավորվել է Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին Եգիպտոսի ազգային

1909-1920 թթ. սովորել է Անգլիայի Շեֆֆիլդ համալսարանում, որից հետո վերադառնալով Կահիրե՝ անցել է աշխատանքի Կրթության նախարարությունում և աշխատել այնտեղ մինչև 1944 թվականը: Ի տարբերություն Ալ-Մազհինիի և Ալ-Ակկադի՝ Շուքրին երբեք ներգրավված չի եղել երկրի հասարակական ու քաղաքական կյանքում: Նրանք երեքն էլ նոր մեկնարկ տվեցին արաբական բանաստեղծությանը: Կրելով անգլիական ռոմանտիզմի ազդեցությունը՝ նրանք կոչ էին անում փոփոխել արաբական բանաստեղծությունը՝ առավել կարևորելով բանաստեղծության մեջ հեղինակի ռոմանտիկ երևակայության դրսևորումը: Նրանք բացահայտորեն արտահայտում էին իրենց քննադատական վերաբերմունքը նեոդասականության ոճով գրված բանաստեղծությունների նկատմամբ, հարձակումների թիրախում հատկապես Ահմադ Շաուկին էր: Իրենց մոտեցումներն ու քննադատական վերլուծությունները նեոդասական պոեզիայի շուրջ ընդգրկված են “Al-dīwān, kitab fi al-naqd wa al-adab” («Դիվան, գիրք գրականության և քննադատության մասին»), որը երկու հատորով լույս է տեսել 1921 թ.: Գրքի վերնագրով է պայմանավորված նրանց ձևավորած դպրոցի «Դիվան» անվանումը:

Բանաստեղծների նոր սերունդը նախորդ սերնդի բանաստեղծներից տարբերվում էր պոեզիայի դերի և նպատակների մասին իրենց ունեցած մոտեցումներով: Նրանք շեշտը դնում էին բանաստեղծի անհատականության և զգացմունքային դրսևորման վրա: Ալ-Ակկադն առաջինն էր, որը սուր քննադատության ենթարկեց նեոդասական պոեզիայի թեմատիկայի

առաջնորդ Սաադ Զադլուլի կողմից: Նրա անդամները պայքարում էին հանուն Եգիպտոսի անկախացման միապետական կարգի տապալման:

մակերեսային ու արհեստական լինելը: Ալ-Մազհինիի բանաստեղծությունների առաջին ժողովածուի նախաբանում Ալ-Ակկադը գրում է. «Շատ բանաստեղծներ անարդարացիորեն ենթադրում են, որ իրենք ժամանակակից են: Եթե հին շրջանի արաբ բանաստեղծներն իրենց ստեղծագործություններում նկարագրում էին ուղտին, վրանները և անապատը, ապա նեոդասական բանաստեղծները նկարագրում են մեծ քաղաքները, էլեկտրական լարերը, նորաստեղծ կառույցները»¹: Շուքրին, նույնպես անդրադառնալով նեոդասական բանաստեղծությանը, այն որակում է որպես ամենօրյա իրադարձությունների նկարագրություն²: Նրանց կարծիքով պոեզիան պետք է լինի ժամանակակից և կապված լինի իրական կյանքի հետ: Արևմտյան, հատկապես անգլիական պոեզիայի ազդեցությունը «Դիվանի» բանաստեղծների ստեղծագործության վրա ամենևին չէր նշանակում, որ նրանք ընդհանրապես մերժում էին միջնադարյան արաբական դասական պոեզիան: Աբբասյան շրջանի բանաստեղծների ստեղծագործությունները մեծ տարածում ունեին նոր սերնդի բանաստեղծների շրջանում:

«Դիվան» գրական դպրոցի ականավոր ներկայացուցիչներից է **Աբդ ալ-Ռահման ալ-Շուքրին (1886-1958 թթ.)**: Նա մեծ ազդեցություն է ունեցել դպրոցի մյուս երկու բանաստեղծների՝ Ալ-Ակկադի և Ալ-Մազհինիի ստեղծագործական գործունեության վրա: Ծնվել է 1886 թ. Պորտ Սաիդում՝ հյուսիսաֆրիկյան արմատներ ունեցող ընտանիքում: 1904 թ.՝ Ալեքսանդրիայում դպրոցն ավարտելուց հետո, Շուքրին մեկնել է Կահիրե և ընդունվել է այնտեղի իրավաբանական դպրոցը: Ուսանելու տա-

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 95:

² Նույն տեղում:

րիներին Ալ-Շուքրին տարվել է Մուստաֆա Քամիլի գաղափարներով և առաջարկել նրան իր ծառայությունները: Սակայն Քամիլը մերժել է նրան՝ խորհուրդ տալով կենտրոնանալ ուսման վրա: 1906 թ.՝ Դենշավայի դեպքերի հետ կապված հանրահավաքի ժամանակ, Ալ-Շուքրին ընթերցել է իր գրած բանաստեղծությունը, որի պատճառով նրան հանել են իրավաբանական դպրոցից: Նույն տարում նա ընդունվում է «Ուսուցիչների վերապատրաստման ուսումնարանը», որտեղ սովորել է մինչև 1909 թվականը: Ալ-Շուքրին սկսել է ստեղծագործել դեռ դպրոցական տարիներից: Նրա առաջին բանաստեղծական գործը 1904 թ. Ալ-Բարուդիի մահվան կապակցությամբ գրված էլեգիան է: 1908 թ. Ահմադ Լուտֆի Ալ-Մայիդի “Al-ğarīda” («Թերթ») պարբերականում լույս է տեսել նրա առաջին հոդվածը: Այստեղ նաև տպագրվում են նրա մի շարք էսսեներ, բանաստեղծություններ և Կասիմ Ամինին նվիրված էլեգիան: «Ուսուցիչների վերապատրաստման ուսումնարանում» նա ընկերացել է Ալ-Մազինիի հետ, և նրանք միասին նախաձեռնել են եգիպտական գրականության հետագա զարգացման գործընթացը: 1909 թ. լուս է տեսել նրա “Dau’ al-fağr” («Արևածաղի լույսը») բանաստեղծությունների ժողովածուն: Այդ կապակցությամբ Ալ-Մազինին “Al-dustūr” («Մահմանդություն») թերթում հրատարակել է ժողովածուի մասին իր վերլուծությունը: 1909 թ. Շուքրին Անգլիայի Շեֆֆիլդի համալսարանում սովորելու համար շահել է կրթաթոշակ: Այնտեղ նա երեք տարի ուսումնասիրել է անգլիական գրականություն: Ինչպես ինքն է նշում, անգլիական բնապատկերները մեծապես ազդել են նրա երևակայության վրա¹: Նա անգլերենով

¹ M. M. Badawi, նշվ. աշխ., էջ 92:

ընթերցում էր եվրոպացի հայտնի հեղինակների գործերը: Գյոթեն ոգեշնչման աղբյուր էր նրա մի քանի բանաստեղծությունների համար:

1912 թ.՝ Եգիպտոս վերադառնալուց հետո, Ալ-Շուքրին ծանոթացել է Ալ-Ակկադի հետ, և երեքով Ալ-Սազինիի մասնակցությամբ ձևավորել են նորարարական շարժումն արաբական գրականության մեջ: Ալ-Շուքրիի ստեղծագործական առումով բեղուն շրջանը 1909-1919 թվականներն ընկած ժամանակահատվածն է: Նրա բանաստեղծությունների երկրորդ ժողովածուն լույս է տեսել Անգլիայից վերադառնալուց հետո՝ 1913 թ.: Հաջորդ՝ չորրորդ, հինգերորդ և վեցերորդ ժողովածուները լույս են տեսել 1915- 1918 թթ. ընթացքում: Այս ժողովածուների համար գրված նախաբաններում Ալ-Շուքրին անդրադառնում է 18-19-րդ դարերի անգլիական գրականությանն ու պոեզիային: Նրա կարծիքով ժամանակակից արաբական պոեզիան անկենդան է և արհեստական: Նա առանձնակի շեշտում է զգացմունքների և երևակայության (“Al-ḥaiāl wa al-‘awāṭif”) կարևորությունը: Շուքրիի առաջին երկու ժողովածուներում ներկայացված բանաստեղծությունները գրված են ավանդական բանաստեղծական ոճով: Դրանց վրա զգացվում է Աբբասյան շրջանի բանաստեղծների լեզվի ու պատկերների համակարգի ազդեցությունը: Նրա բանաստեղծություններում արդեն նկատվում են զարգացումներ. անպատասխան սիրո նկատմամբ նախկինում նրա դրսևորած տոկունությունը փոխարինվում է հուսահատությամբ: Բանաստեղծը վախենում է ճակատագրից փախչելու մարդու անկարողությունից՝ տանջվելով ճակատագրի առջև մարդու հեղինակագրկումից: Ալ-Շուքրին սիրո և գեղեցկության որոնումների մեջ է: Այս թեմայով նրա գրած բանաստեղծություններից են “Al-ša’ir wa

ṣūrat al-kamāl” («Ոռետը և կատարելության պատկերը»), “Al-ğamāl wa al-‘ibāda” («Գեղեցկությունն ու երկրպագությունը»): Մեծապես ազդված լինելով անգլիական ռոմանտիկ պոեզիայից՝ այնուամենայնիվ, բանաստեղծական ոճի առումով նա շարունակում է հետևել ավանդական ձևերին: Բառապաշարը բավական բարդ է, բանաստեղծական խրթին կառույցները դժվարացնում են արտացոլված թեմաների ընկալումը¹:

Արժանի են նաև հիշատակման Ալ-Շուքրիի 1946 թ. գրված կարճ արձակ գործերը՝ “Kitāb al-‘itirāf” («Խոստովանությունների գիրք») և “Kitāb al-ṭamarāt” («Ոտուղների գիրք»): Այստեղ ներկայացված են երիտասարդ եգիպտացու մտորումներն ու զգացումներն անձնական խնդիրներ հաղթահարելու ընթացքում: Երիտասարդն ունի երազանքներ և հույսեր, սակայն անկարողության զգացողությունն ու հուսալքությունը խոչընդոտում են դրանց իրականացմանը: Նա լիահույս է ապագայի նկատմամբ, այնուամենայնիվ, հոռետեսական զգացումները, պայմանավորված երկրում տարիներ շարունակ տիրող բռնապետությամբ, առավել նկատելի են դառնում նրա բանաստեղծական տողերում: Դրա հետ մեկտեղ նա կասկածների ու տարակուսանքների մեջ է հնի ու նորի միջև ընտրության հարցում: Այս երկու ստեղծագործությունները բացահայտում են Ալ-Շուքրիի բանաստեղծական անհատականությունը, ինչպես նաև նրա ժամանակակիցներին հատուկ մտորումները: Ի տարբերություն գործընկերների՝ Ալ-Շուքրին այդպես էլ չկարողացավ դուրս գալ հոգեբանական ճգնաժամից. շա-

¹ R. Allen, նշվ. աշխ., էջ 304:

րունակեց մնալ մեկուսացած հասարակական ու քաղաքական կյանքից¹:

«Դիվան» դպրոցի գործունեության մեջ իր նշանակալի դերն է ունեցել **Ալ-Ակկադը (1889-1964 թթ.)**: Նա ծնվել է Ասուանում: Ծննդավայրում դպրոցներ չլինելու պատճառով Ալ-Ակկադը միջնակարգ կրթություն չի ստացել, որի պատճառով հետագայում հնարավորություն չի ունեցել սովորելու Եվրոպայում: Տարված լինելով եվրոպական փիլիսոփայական մտքով, գրական ժառանգությամբ՝ Ալ-Ակկադը մեծապես հետաքրքրված էր եվրոպացի գրողների աշխատանքներով, մասնավորապես՝ 18-րդ դարի անգլիացի պատմաբան, գրող, փիլիսոփա Թոմաս Կառլայլի «Ֆրանսիական հեղափոխությունը» ստեղծագործությամբ²: Վերջինիս ազդեցությամբ նա գրել է իր իսլամի մեծերին նվիրված շարքը՝ “‘Abqariāt” («Շնորհալիներ»): 1904 թ.՝ 16 տարեկանում, նա հեռացել է Ասուանից: 1907 թ. ծանոթացել է մականաների հեղինակ Մուհամմադ Ֆարիդ Վագֆիի հետ, որն այդ ժամանակ հրատարակում էր “Al-dustūr” («Մահմանադրություն») թերթը, որին և աշխատակցում էր Ալ-Ակկադը: Սույն պարբերականն «Ազգային կուսակցության» լրատվական մարմինն էր, որտեղ մեծ ընդգրկում ունեին ազգայնական գաղափարների կրող Մուստաֆա Քամիլի հոդվածները: Այստեղ նաև տպագրվում էին պանիսլամիզը պաշտպանող նյութեր: Պարբերականում Ալ-Ակկադը գրում էր տարբեր թեմաների առնչվող հոդվածներ՝ մշակութային, գրական, հասարակական: Շուտով Ալ-Ակկադը տարվում է Մաադ Զաղլուլի գաղափարներով, ով Առաջին համաշխարհային

¹ M. M. Badawi, նշվ. աշխ., էջ 94-95:

² J. Brugman, նշվ. աշխ., էջ 122:

պատերազմից հետո դարձավ Եգիպտոսի ազգային առաջնորդը: Այս ժամանակահատվածում Ալ-Ակկադը հրատարակել է մի շարք քաղաքական թեմաներով հոդվածներ: 1909 թ. “Al-dustūr” թերթը դադարեցնում է իր գործունեությունը, որի արդյունքում սահմանափակվում են Ալ-Ակկադի գրական-ստեղծագործական հնարավորությունները: Քաղաքական հայացքները դրսևորելու անկարողությունն Ալ-Ակկադին ստիպում է վերադառնալ Ասուան: Այստեղ նա իր մտքերն ու գաղափարները սկսում է արտահայտել իր օրագրում, որի որոշ հատվածներ հրատարակվում են “Ḥulāsāt al- īaūmīa ” («Օրվա համառոտագրություններ») անվան տակ: 1911 թ. նա վերադարձել է Կահիրե և սկսել զբաղվել լրագրությամբ մի շարք պարբերականներում՝ “Al-baīān”(«Մանիֆեստ»), “‘Ukāz” («Ուքազ»): “Al-baīān”-ի խմբագրությունը դարձել էր հանդիպման վայր ժամանակի գրողների, հրապարակախոսների և մտավորականների համար: Այստեղ է Ալ-Ակկադը ծանոթացել Մուհամմադ Ալ-Մուվեյլիհիի հետ, որը նրան օգնում է աշխատանք գտնել Վակֆի նախարարությունում¹: 1914 թ. Ալ-Ակկադը հրաժարվել է իր պաշտոնից և սկսել է նորից զբաղվել լրագրությամբ: Որոշ ժամանակ նա աշխատել է “Al-Mū’āīad” թերթում: Որոշ ժամանակ ապրելով ծննդավայրում՝ Առաջին համաշխարհային պատերազմը սկսելուն պես նա վերջնականապես հաստատվել է Կահիրեում: Ընկերոջ՝ Ալ-Մազինիի հետ սկսել է զբաղվել դասավանդմամբ: Շուտով աշխատանքի հրավեր է ստացել Ալեքսանդրիայում լույս տեսնող “Al-ahālī”(«Ժողովուրդ») թերթի խմբագրությունից: Այստեղ նա ծանոթացել է ժամանակի ամենահայտնի լրագրողներից մեկի՝ Աբդ Ալ-Կա-

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 124:

դիր Համգայի հետ, որն իր քաղաքական դիրքորոշմամբ դեմ էր Սաադ Ջադլուլին գաղափարական մոտեցումներին: Ալ-Ակկադը, լինելով Ջադլուլի գաղափարակիցներից, որոշ ժամանակ անց հեռացել է “Al-ahālī” թերթից և անցել աշխատանքի “Al-ahram” օրաթերթում¹: 1925 թ. Ալ-Ակկադը դարձել է եգիպտական խորհրդարանի անդամ: 1929 թ. ընտրվել է Ներկայացուցիչների պալատի անդամ, որտեղ նա հանդես է եկել որպես սահմանադրական ազատության կողմնակից:

Երբ Եգիպտոսի վարչապետ Իսմայիլ Սիդիկը հետաձգել է սահմանադրության ընդունումը, Ալ-Ակկադը հանդես է եկել քննադատական ելույթով: 1930 թ. նա ձերբակալվել է “Al-mu’āḥad al-ḡadīd” թերթում հրատարակած միապետությանը դեմ ուղղված հոդվածների համար:

Ալ-Ակկադն իր քաղաքական հայացքներով դեմոկրատ էր: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում նա գրել է “Hitler fi al-mīzān” («Հիտլերը կշռեց») պամֆլետը և հանդես եկել “Nazīā wa adīān” («Նացիզմը և կրոնները») խորագրով մի շարք ելույթներով:

Պատերազմից հետո Ալ-Ակկադը շարունակում է մնալ խորհրդարանի անդամ “Al-sadīa” կուսակցության կողմից և զբաղվել կուսակցության “Al-asās” պարբերականի խմբագրությամբ:

1952 թ. հեղափոխությունից հետո նրա պառլամենտական գործունեությունն ավարտվում է, որից հետո նա նշանակվում է պոեզիայի բաժնի նախագահ արվեստների, գրականության և հասարակական գիտությունների բարձրագույն խորհրդում: 1959 թ. նա արժանանում է գրականության պետական մրցա-

¹ Նույն տեղում, էջ 125:

նակի¹: Նա մահացել է 1964 թ.: Ալ-Ակկադն իր բանաստեղծությունների առաջին ժողովածուն հրատարակել է “Al-liwā” ազգայնական ուղղվածություն ունեցող թերթում: Նրա առաջին առանձին գրքով հրատարակված ժողովածուն՝ “Khulāsāt al-yaumiya”, լույս է տեսել 1911 թ.: Այն ներառում է հատվածներ Ալ-Ակկադի օրագրից: Մի շարք քննադատների կարծիքով նրա այս և բանաստեղծությունների առաջին ժողովածուն արաբական գրականության մեջ հնի ու նորի միջև Ալ-Ակկադի պայքարի սկիզբն են խորհրդանշում²: Ալ-Ակկադի գեղագիտական պատկերացումների ձևավորման վրա իրենց ազդեցությունն են ունեցել անգլիացի այնպիսի բանաստեղծներ, ինչպիսիք են Վիլյամ Վորդսվորդը, Ջորջ Բայրոնը, Վիլյամ Հեզլիթը. վերջինիս նա համարում է երևակայության և զգացմունքների արտահայտման վարպետ ու առաջամարտիկ, ինչպես նաև գրական նոր դպրոցի իմամ³:

Ալ-Ակկադը հրատարակել է բանաստեղծությունների ութ ժողովածու: Ժողովածուների համար գրված նախաբաններից մեկում Ալ-Ակկադն անդրադառնում է ժամանակակից բանաստեղծությանը՝ պնդելով, որ պոեզիայի կարևոր չափանիշներից պետք է լինեն երևակայությունը, բանաստեղծական սյուժեների բազմազանությունը և զգացմունքայնությունը՝ ի հակադրություն մտքի ու բանականության պոեզիային: Նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուն, որն ավելի ուշ անվանվել է “Yazāt al-ṣabāh” («Առավոտն արթնանում է»), լույս է տեսել 1916 թ.:

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 126:

² J. Brugman, նշվ. աշխ., էջ 128:

³ M. M. Badawi, նշվ. աշխ., էջ 90:

Ալ-Ակկադի առաջին շրջանի բանաստեղծությունների վրա ակնհայտորեն զգացվում է անգլիական պոեզիայի ազդեցությունը: Այն առավել արտահայտված է “Al-kharif” («Աշուն»), “Sawānih al-ghurūb” («Մայրամուտի շողքը»), “Qudūm al-šitā” («Ձմեռնամուտ») բանաստեղծություններում: Նրա երկրորդ՝ “Wahj al-zāhira” («Անթաքույց գայրույթ») ժողովածուում ներառված բանաստեղծություններում ռոմանտիկ միտումները նվազում են: Դրանց հաճախ նախորդում են խոհական մեկնաբանություններ, որոնք խախտում են բանաստեղծության ներդաշնակությունը: Այստեղ կարելի է հանդիպել նաև դիդակտիկ բնույթի բանաստեղծությունների: “Šubān Misr” («Եգիպտոսի երիտասարդները») բանաստեղծության մեջ Ալ-Ակկադը քննադատում է երիտասարդ սերնդին կյանքի հանդեպ ունեցած անխոհեմ մոտեցումների, մակերեսային վերաբերմունքի համար¹: Ալ-Ակկադի երրորդ ժողովածուն լույս է տեսնում 1921 թ.՝ “Ašbāh al-ašīl” («Երեկոյան տեսիլքներ») անունով: Ժողովածուն ընդգրկում է հեղինակի լավագույն ստեղծագործությունները: Դրանցից առավել հայտնին իր ձևով ու էպիկական ոճով “Tarjamāt al-šayṭān” («Մատանայի կյանքը») ստեղծագործությունն է: Այն գրված է *nawāḥ* չափով: Բանաստեղծը նշում է, որ այս ստեղծագործությունն արձագանքն է Առաջին համաշխարհային պատերազմից հետո նրա անցած փորձությունների և դժվարությունների: Ալ-Ակկադի բանաստեղծությունների չորրորդ հատորն առանձնանում է նրանով, որ այստեղ շատ են բազմաժանր և տարաբնույթ բանաստեղծությունները, որոնց մեծ մասը գրվել է Մաադ Զադլուլի պատվին: «Դիվան» դպրոցի բանաստեղծների շարքում արաբական նոր բա-

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 129:

նաստեղծության կայացման գործում Ալ-Ակկադն առավել հայտնի է իր քննադատական ու տեսական վերլուծություններով:

«Դիվանի» արաբական բանաստեղծության նորացման գործընթացում իր նշանակալի դերով առանձնանում է Իբրահիմ Աբդ ալ-Կադիր ալ-Մազինին (1890-1949 թթ.): Ալ-Մազինին ծնվել է Կահիրեում՝ ապահովված ընտանիքում, սակայն հոր մահից հետո երիտասարդը ստիպված է լինում բախվել ֆինանսական դժվարությունների և ապրել համեմատաբար ոչ բարեկեցիկ կյանքով: Սկզբում նա սովորում է բժշկություն, բայց շուտով հիասթափվում է և թողնում ուսումն անավարտ: Ալ-Մազինին ցանկանում էր սովորել իրավաբանություն, սակայն բարձր վճարի պատճառով նա չի կարողանում ընդունվել Կահիրեի իրավաբանական դպրոցը՝ «Մադրասաթ ալ-Հուկուկ»: Չունենալով դասավանդման հանդեպ սեր՝ նա, այնուամենայնիվ, ընդունվում է Կահիրեի ուսուցիչների վերապատրաստման ուսումնարանը, քանի որ վերջինս տրամադրում էր կրթաթոշակ բոլոր ուսանողներին: Այստեղ սովորելու տարիներին Ալ-Մազինին կյանքի ամենակարևոր իրադարձությունը համակուրսեցի Ալ-Շուքրիի հետ հանդիպումն էր: Վերջինս մեծ ազդեցություն է ունեցել Ալ-Մազինին գրական ճաշակի ձևավորման վրա: Ալ-Շուքրիի միջոցով նա ծանոթացել է արաբական դասական գրականության ու անգլիացի ռոմանտիկ բանաստեղծների, ինչպես նաև եվրոպացի հայտնի գրողների ու մտածողների ստեղծագործություններին¹: Ուսումնարանն ավարտելուց հետո՝ 1909 թ., Ալ-Մազինին դասավանդել է անգլերեն խեղիվյան դպրոցում, այնուհետև՝ “Dār al-‘ulūm”

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 139-140:

(Գիտությունների տուն) կրթական հաստատությունում: Դասավանդելն այնքան էլ չի հրապուրում նրան, և 1918 թ. փանաստեղծը նվիրվում է լրագրողական գործունեությանը: Ուսանողական տարիներին նա արդեն սկսել էր հետաքրքրվել լրագրությամբ՝ համագործակցելով “Al-bayān”, “Al-dustūr”, “Al-Uqaz” պարբերականների հետ: Սկզբում նա աշխատել է Ալեքսանդրիայում հրատարակվող “Wādī al-Nīl” («Նեղոսի հովիտը») թերթի խմբագրությունում որպես հիմնական լրագրող, այնուհետև՝ 1922 թվականից, հողվածներ է գրել ալ “Al-ahbār”, “Al-itihād”, “Al-sīaāsa”, “Al-asās” պարբերականների համար:

Ալ-Մազինիի փանաստեղծական ժառանգությունը ներկայացված է երկհատորյա ժողովածուներում: Առաջին ժողովածուն լույս է տեսել 1913 թ., իսկ երկրորդը՝ 1917 թ.: Հետագայում նա դադարում է ստեղծագործել փանաստեղծական ժանրում՝ ներդնելով է իր ստեղծագործական տաղանդը վեպի ժանրի զարգացման գործում: Առաջին ժողովածուն մեծ ընդունելություն չի ստացել, ավելին՝ ժամանակի առաջադեմ պարբերականներից մեկը՝ “Al-baīān” ամսագիրը, որտեղ աշխատել է Ալ-Մազինին, քննադատական հողված է հրապարակել առաջին ժողովածուում տեղ գտած փանաստեղծությունների մասին՝ նշելով, որ դրանք դեռ «հասունացած» չեն¹:

Առաջին ժողովածուն կրում էր ինչպես Ալ-Շուքրիի, այնպես էլ անգլիական ռոմանտիկ պոեզիայի, հասկապես Շելլիի ազդեցությունը: Այստեղ կարելի է տեսնել փանաստեղծական տարբեր դպրոցների ոճերի միասնություն: Որոշ փանաստեղծություններ գրված են արաբական դասական պոեզիային հատուկ ոճով: Նրա փանաստեղծություններից շատերը նմանեց-

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 143:

նում էին արքայան շրջանի բանաստեղծ Շարիֆ ալ-Ռադիի բանաստեղծական ոճին: Ալ-Մազհինիին քննադատում էին նաև Ռոբերտ Բրնսին և Հայնրիխ Հայնեին կրկնօրինակելու համար¹: Այստեղ տեղ գտած բանաստեղծություններին հատուկ են թեթև սենտիմենտալությունն ու հոռետեսությունը:

Երկրորդ ժողովածուում ընդգրկված բանաստեղծությունները հիմնականում բնությանն են նվիրված և գրված են ընդունված ավանդական ոճով և չեն առանձնանում իրենց նորարարությամբ: Բանաստեղծն իր բանաստեղծական մոտեցումների մասին արտահայտել է “Al-Šā’ir” («Պոետը») բանաստեղծության մեջ, որտեղ նա մեկնաբանում է. «Բանաստեղծությունը ոչ այլ ինչ է, քան զսպված ճիչ, որի արձագանքը լսելի է մեր սրտի գաղտնիքներում»²: Չնայած նրա ստեղծագործություններն այդքան էլ չեն առանձնանում բանաստեղծական նոր չափանիշներով, այնուամենայնիվ դրանք 20-րդ դարի առաջին տասնամյակների արաբական, հատկապես եգիպտական գրականության նորարարական շարժման անբաժանելի մասն են կազմում:

«Ապոլլոն» գրական միությունը

Արաբական պոեզիայի պատմության մեջ նշանակալի իրադարձություններից էր 1932 թ. «Ապոլլոն» ամսագրի ի հայտ գալը: Այն արաբական աշխարհում առաջին պարբերականն էր, որի գործունեությունն ուղղված էր միայն արվեստին և գրականությանը: Նույն թվին պարբերականն իր շուրջն է հավա-

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 144:

² Նույն տեղում:

քում ժամանակի առաջադեմ մտածող գրողներին, որոնք համատեղ հիմնում են համանուն «Ապոլլոն» գրական միությունը: Այն նպատակ ուներ ընդլայնելու արաբ գրողների հեղինակությունը և բարձրացնելու նրանց դերն ու կարգավիճակն ինչպես Եգիպտոսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս:

Ինչպես «Ապոլլոն» ամսագիրը, այնպես էլ համանուն ընկերությունը, հիմնվել է Ահմադ Ջաֆի Աբու Շադիի (1892-1955 թթ.) նախաձեռնությամբ:

«Ապոլլոն» գրական ընկերությունն առանձնանում էր բանաստեղծական նոր ձևերի ներմուծման նկատմամբ իր ազատ և անկաշկանդ մոտեցմամբ: «Ապոլլոն» ընկերության առաջին նախագահն Ահմադ Շաուկին էր, իսկ նրա մահից հետո՝ Խալիլ Մուտրանը: Աբու Շադին ընկերության քարտուղարն էր և ամսագրի գլխավոր խմբագիրը: Նման ընկերություն ստեղծելու հիմնական նպատակն էր միասնական հարթակ ձևավորել գրականության մեջ առկա խնդիրների քննարկման և դրանց լուծման համար: «Ապոլլոն» ամսագրի առաջին համարը լույս է տեսել 1932 թ. սեպտեմբերին: Այն ներառում էր ընկերության սահմանադրությունը, ինչպես նաև նախաբան՝ գրված Աբու Շադիի կողմից: Այստեղ կոչ էր արվում ձևավորելու համագործակցային հարաբերություններ բանաստեղծների միջև՝ համախմբելով արաբական գրականության ներուժը և խթանելով նորարարական մոտեցումների ձևավորմանը: Սահմանադրության մեջ արտացոլված էին այն հիմնական նպատակները, որոնց շուրջ այդ համագործակցությունը պետք է գործեր: Դրանցից էին՝ զարգացնել պոեզիայի արվեստը, բարձրացնել բանաստեղծների ստեղծագործական, հասարակական, սոցիալական մակարդակը, ինչպես նաև նպաստել բանաստեղծա-

կան հմտությունների նորացման առաջընթացին¹: «Ապոլլոն» ընկերության բանաստեղծները փորձում էին զարգացնել արաբական պոեզիան՝ նախապատվություն տալով ռուսաստիկ բանաստեղծությանը: Այս գործընթացում իրենց նշանակալի դերն են ունեցել Աբու Շադին, Իբրահիմ Նագին, Ալի Մահմուդ Տահան և թունիսցի բանաստեղծ Աբու ալ-Կասիմ ալ-Շաբբին:

Ահմադ Ջաքի Աբու Շադին (1892-1955 թթ.) ծնվել է բարեկեցիկ ընտանիքում: Նրա հայրը իրավաբան էր, քաղաքական գործիչ և լրագրող: Նա տարված էր գրականությամբ և կազմակերպում էր գրական հավաքներ, նաև հրապարակում բանաստեղծություններ²: Երիտասարդ բանաստեղծը մեծացել է գրական մթնոլորտում: Հոր կողմից կազմակերպված գրական երեկոներին ներկա էին լինում նաև Խալիլ Մուտրանը և Հաֆիզ Իբրահիմը: Աբու Շադին շատ էր կարդում եվրոպական գրականություն և հատկապես տարված էր անգլիական գրականությամբ:

Դպրոցն ավարտելուց հետո նա ընդունվել է Կահիրեի բժշկական համալսարանը: 1912 թ. սիրային անհաջող պատմության պատճառով նա ընդհատել է իր ուսումը և մեկնել Ստամբուլ: Սիրուն առնչվող անձնական կյանքի այս դրվագը հետագայում դրսևորվել է նրա պոեզիայում: Սիրելի էակին նվիրված բանաստեղծություններն ընդգրկված են 1924 թ. հրատարակված “Zeinab” ժողովածուում: Ստամբուլից հետո նա մեկնել է Լոնդոն՝ բժշկական կրթությունը շարունակելու: Լոնդոնում նա անցկացրել է տասը տարի և ուսումնառությանը

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 152:

² Նույն տեղում, էջ 158:

գուգահեռ ժամանակ է տրամադրել նաև իր նախասիրություններին՝ գրականությանը, նկարչությանն ու մեղվաբուծությանը:

1915 թ. Աբու Շադին ստացել է մանրէաբանի մասնագիտացմամբ դիպլոմ և աշխատանքի անցել տարբեր լաբորատորիաներում:

Աբու Շադին ամուսնացել է անգլուհու հետ: Ապրելով Լոնդոնում՝ նա անմասն չէր մնում եգիպտական կյանքից՝ շարունակելով համագործակցել տարբեր ամսագրերի հետ: Լոնդոնում նա նաև հիմնել է արաբական գրականության ուսումնասիրության կենտրոն: 1922 թ. հոր հիվանդության պատճառով Աբու Շադին վերադարձել է Եգիպտոս, որտեղ անմիջապես մեծ հոշակ է վայելել գրական, գիտական և ակադեմիական կյանքում: 1927 թ. Ալեքսանդրիայում հիմնել է գրական ընկերություն՝ «Al-rābiṭa al-adab al-ḡadīd» («Արաբական նոր գրականության միություն»), որի մասնաճյուղը հետագայում՝ 1929 թ., բացվել է Կահիրեում:

Աբու Շադին նաև գուգահեռ աշխատել է մանրէաբանի մասնագիտությամբ Սուեզում, Պորտ Սաիդում, Կահիրեում ու Ալեքսանդրիայում: 1942 թ.՝ Ալեքսանդրիայի համալսարանի բացվելուց հետո, նա նշանակվել է մանրէաբանության ամբիոնի վարիչ և բժշկական ֆակուլտետի դեկան: 1946 թ.՝ կնոջ մահից հետո, Աբու Շադին մեկնել է Միացյալ Նահանգներ: Այնտեղ նա հիմնել է «Միներվա» գրական ընկերությունը և «Հուդա» ամսագիրը: Միացյալ Նահանգներում նա զբաղեցրել է մի շարք պաշտոններ՝ ՄԱԿ-ում խորհրդական, դասավանդել է արաբերեն Ասիական համալսարանում, աշխատել է նաև Ամերիկայի ձայնի արաբական բաժնում¹: Աբու Շադին այլևս

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 161-162:

Եզիպտոս չի վերադարձել: Մահացել է 1955 թ.: Նա հեղինակ է տասնինը բանաստեղծական ժողովածուների, վերլուծական հոդվածների, թարգմանությունների և գրական հետազոտությունների:

Աբու Շադիի առաջին բանաստեղծությունների ժողովածուն՝ “Andā’ Al-Fağr” («Արևածագի ցողը»), լույս է տեսել 1910 թ. և որոշ ավելացումներով վերատպվել 1934 թ.¹: Այստեղ հիմնականում ներառված են Աբու Շադիի սիրային բանաստեղծությունները: Նրա ստեղծագործական գործունեության առավել արդյունավետ շրջանը սկսվում է Լոնդոնից վերադառնալուց հետո “Zeinab” ժողովածուով, որում ներկայացված սիրային բանաստեղծությունները նշանակալի դեր ունեցան ռոմանտիկ շարժման զարգացման գործում: Նրա բանաստեղծությունները, ի տարբերություն Խալիլ Մուտրանի և «Դիվան» գրական խմբակի մի շարք բանաստեղծների ստեղծագործությունների, ոճով և ժանրային առանձնահատկություններով առավել նորարար էին լեզվի, ռոմանտիզմի դրսևորման տեսանկյունից:

Անպատասխան սիրո թեման հատուկ էր Աբու Շադիի քնարերգությանը: Նա իր բանաստեղծական պարզ ոճով, ինչպես նաև դրանում իր հոգեկան վիճակի բոլոր երանգների նուրբ վերլուծությամբ նոր սկիզբը դրեց արաբական ռոմանտիկ բանաստեղծության: Եզիպտոսին նվիրված “Al-Misriyāt” բանաստեղծությունների ժողովածուն նույնպես լույս է տեսել 1924 թ.: Այստեղ ընդգրկված բանաստեղծությունները նվիրված են Սաադ Չաղլուլին և մարմնավորում են բանաստեղծի ռոմանտիկ հայրենասիրությունը, ինչպես նաև նրա հասարակական ու քաղաքական խնդիրներով մտահոգությունը: Աբու

¹ M. M. Badawi, նշվ. աշխ., էջ 111:

Շադիի լավագույն ժողովածուների թվին է պատկանում “Šafaq al-bāki”-ին («Մթնշաղի լացը»), որը լույս է տեսել 1927 թ.: Այն ամենամեծն է Շադիի ժողովածուների շարքում: Ժողովածուում ամփոփված են կրոնական, հասարակական, գրական, արվեստի թեմաներով, ինչպես նաև ռոմանտիկ, սիրային բանաստեղծություններ: Բացի բանաստեղծություններից՝ այստեղ ընդգրկված են նաև մի շարք էսսեներ ու թարգմանություններ¹: 1931 թ. լույս տեսած “Ašī’a wa Zilāl” («Ճառագայթներ և ստվերներ») ժողովածուն ներկայացնում է հեղինակի սիրելի մեթոդներից մեկը: Գրքում զետեղված են եվրոպացի, ինչպես նաև եգիպտացի որոշ ժամանակակից նկարիչների վերարտադրություններ, որտեղ բանաստեղծությունները գրված են կտավներում պատկերված թեմաներով: Նրա բանաստեղծական ժողովածուների շարքից են նաև “Al-šū’alā” («Կրակ»), “Aṭīāf al-rabī” («Գարնան տեսիլներ»), “Al-Īanbū” («Շատրվան»): Աբու Շադին իրեն համեմատում է Վիլյամ Բլեյքի հետ: Նրա կարծիքով բանաստեղծությունը պետք է ներառի միաստիցիզմ, զգացմունք, բնության նկատմամբ հավատ, գեղեցկության և ճշմարտության ձգտում²: Իր կյանքի վերջին քսան տարիների ընթացքում նա գրել է բանաստեղծությունների երկու ժողովածու: 1942 թ. լույս են տեսել “Aūdat al-rā’i” («Չովվի վերադարձը»), իսկ 1949 թ. Նյու Յորքում՝ “Min Al-Samā” («Երկնքից») ժողովածուները: Աբու Շադին մեծ ազդեցություն ունեցավ արաբական ռոմանտիկ և հատկապես սիրային քնարերգության զարգացման վրա:

¹ M. M. Badawi, նշվ. աշխ., էջ 113:

² J. Brugman, նշվ. աշխ., էջ 163:

«Ապոլլոն» գրական ընկերության ականավոր ներկայացուցիչներից է նաև ընկերության փոխնախագահ **Իբրահիմ Նազին (Նազի) (1898-1953 թթ.)**: Իբրահիմ Նազին ծնվել և մեծացել է կրթված, գիտության և գրականության հանդեպ մեծ սեր ու հետաքրքրություն ունեցող ընտանիքում: Իբրահիմ Նազին ստացել է բժշկական կրթություն: 1923 թ. ավարտել է Կահիրեի բժշկական համալսարանը և որոշ ժամանակ աշխատել իր մասնագիտությամբ, սկզբում՝ Կահիրեում, այնուհետև՝ 1927 թ., տեղափոխվել է եգիպտական փոքր քաղաք՝ Մանսուրա:

Մանսուրան եգիպտական մյուս փոքր քաղաքներից առանձնանում էր իր մշակութային կյանքով: Այստեղ Իբրահիմ Նազին հանդիպում է երիտասարդ բանաստեղծների, որոնք հետագայում նրա նման դարձան «Ապոլլոն» ընկերության անդամներից: Մանսուրայում անցկացրած ժամանակը նպաստավոր է անդրադառնում ապագա բանաստեղծի ստեղծագործունեության վրա: 1931 թ. Նազին վերադառնում է Կահիրե և ընդգրկվում գրական շրջանակներում: Նրա կյանքում կարևոր իրադարձություններ էին Աբու Շադիի հետ հանդիպումը և նրանց հետագա արդյունավետ համագործակցությունը «Ապոլլոնի» շրջանակներում:

Նազիի ստեղծագործությունները լույս են տեսել երեք ժողովածուներում՝ “Warā Al-ğamām” («Ամպերի ետևում»), “Laiālī al-Qahira” («Կահիրեի զիշերները»), “Al-ṭair al-ğarih” («Վիրավոր թռչունը»): Նրա “Warā Al-Ğanām” առաջին ժողովածուն լույս է տեսել 1934 թ.՝ «Ապոլլոն» ամսագրի հրատարակության վերջին տարում: Ժողովածուն սուր քննադատության է արժանացել Տահա Հուսեյնի կողմից, որի արդյունքում Նազին որոշում է այլևս չստեղծագործել: Մակայն նրա հիասթափությունը

երկար չի տևել, և շուտով «Ապոլլոն» ամսագրում լույս է տեսել նրա “Ilaithā” («Նրան») բանաստեղծությունը:

“Warā Al-Ġanām ” ժողովածուում ընդգրկված բանաստեղծություններում նկատելի է անգլիական ռոմանտիզմի ազդեցությունը՝ չնայած ֆրանսիական ռոմանտիկ պոեզիայով նրա տարվածությանը: Նազիի ստեղծագործությունների գերակշռող մասը կազմում են սիրային բանաստեղծությունները, որոնցում նա հմտորեն, յուրահաստուկ ձևով կարողացել է համադրել արաբական դասական սիրային քնարերգությունը և եվրոպական ռոմանտիկ բանաստեղծության ոգին:

«Ամպերի ետևում» ժողովածուի հայտնի բանաստեղծություններից է “Al-‘Aūda” («Վերադարձ») ստեղծագործությունը, որին հատուկ է Նազիի խոր սենտիմենտալությունը: Այստեղ նկարագրվում է բանաստեղծի վերադարձն իր ընկերների անապատացած, անբնակ տուն, որտեղ և նա արտահայտում է իր զգացական ապրումներն ու թախիծը. գրողի ռոմանտիզմի դրսևորումներն այս բանաստեղծության մեջ առավել, քան ակնհայտ են, չնայած որոշ քննադատներ այս ստեղծագործությանը վերագրում են սիմվոլիզմ¹: Բանաստեղծության մեջ համադրված են արաբական դասական պոեզիայի մոտիվները և ժամանակակից ռոմանտիզմի ոգին:

Նազիի երկրորդ ժողովածուն՝ «Կահիրեի գիշերները», նվիրված է Կահերի բոհեմային կյանքի նկարագրությանը, այն արդեն զերծ է երիտասարդ գրողին հատուկ զգացականությունից, այստեղ դրսևորված է Կահիրեի պարուհիների, դերասանների բոհեմական կյանքը²:

¹ R. Allen, նշվ. աշխ., էջ 235:

² J. Brugman, նշվ. աշխ., էջ 171:

Նագիի մահից չորս տարի հետո լույս է տեսել նրա “Al-Ṭā’ir Al-Ġarīb” («Վիրավոր թռչուն») ժողովածուն, որն ընդգրկում է նաև բանաստեղծի վերջին շրջանի ստեղծագործությունները: Այս շարքն աչքի է ընկնում հոռետեսական տրամադրություններով, այստեղ բանաստեղծը ներկայանում է որպես ճամփորդ, թափառական, օտարական: Երբեմնի բռնեմական ապրումներն ու ապրելակերպը փոխարինվում են միայնակ ու հուսալքված զգացողություններով:

Այսպիսով՝ Նագիի պոեզիան կարելի է բաժանել երկու թեմատիկ ընդգրկումների. առաջինում բանաստեղծը ներկայանում է որպես ուրախ, անհոգ և սիրառատ երիտասարդ՝ լի կյանքով ու սիրային փորձառությամբ՝ զուգորդված մարմնական հաճույքներով: Երկրորդում Նագին արտահայտում է հասուն տարիքի խոհերը՝ տխրություն, կորսված սեր, ժամանակի և ճակատագրի նկատմամբ անկարողություն:

Նագիի առավել ընդարձակ բանաստեղծությունների հատկանշական առանձնահատկությունն այն է, որ նա կիրառում է թեմաներ ու պատկերներ, որոնք հանդիպում են արաբական դասական գրականության մեջ:

Նագին լավատեղյակ էր նաև 19-րդ դարի ֆրանսիական գրականությանը, որն և արտահայտվում է նրա ժողովածուների առանձին հատվածներում. կան թարգմանություններ Լամարտինից ու Դե Մյուսեից: Նագին հրատարակել է Բողլերի մասին գիրք, որտեղ տալիս է նաև «Չարի ծաղիկներ» ստեղծագործությունից որոշ բանաստեղծությունների թարգմանություններ: Այնուամենայնիվ, նրա բանաստեղծական ուղին առավել ազդված էր Լամարտինից և Դե Մյուսեից. բազում տողերում հանդիպում ենք ֆրանսիական սույն գրողներին հատուկ թաքուցված նոստալգիա, որտեղ նա բացահայտում է

մարդու կարևորությունը ժամանակի ու ճակատագրի նկատմամբ (“*Ha Hawātir Al-Gurūb*“ («Մայրամուտի մտորումներ»), “*Šakwa Al-Zaman*“ («Ժամանակի բողոք») և այլն¹):

Նազիհն եզիպտական ռոմանտիկ բանաստեղծության անկյունաքարային դեմքերից է, նա պարզեցրեց և արդիականացրեց արաբական ռոմանտիկ պոեզիայի լեզուն, ուղի հարթեց դրանում զգացական տարբեր և իրական ապրումների դրսևորման համար՝ հարստացնելով ժամանակակից բանաստեղծական պատկերներով²:

Նազիհն փորձել է նաև ստեղծագործել արձակ ժանրում. գրել է պատմվածքներ, էսսեներ, հոդվածներ, կատարել թարգմանություններ, որոնք, սակայն, չունեն գրական մեծ արժեք և հաճախ ենթարկվել են քննադատության: Սույն ժանրի օրինակներից է Նազիհի “*Madīnat Al-āhlām*” («Երազանքների քաղաք») ժողովածուն³:

«Ապոլլոն» գրական միության ներկայացուցիչներից էր նաև **Ալի Մահմուդ Տահան (1902-1949 թթ.)**: Տահան ծնվել է եզիպտական Մանսուրա քաղաքում բավական ապահովված ընտանիքում: Տահան, սակայն, երկար չի մնում միության կազմում և առանձնանում է՝ ընտրելով այլ ուղղություն, որի պատճառով նրան հաճախ համարում են «անցումային» բանաստեղծ: Նա չի ավարտում միջնակարգ դպրոցը, փոխարենը ավարտելով տեխնիկական ուսումնարան՝ 1924 թ. ձեռք է բերում ճարտարապետի որակավորում⁴:

¹ M. Badawi, նշվ. աշխ., էջ 117:

² S. K. Jayyusi, նշվ. աշխ., էջ 395-397:

³ J. Brugman, նշվ. աշխ., էջ 172:

⁴ Նույն տեղում, էջ 173:

Տահան որոշ ժամանակ Մանսուրայում աշխատել է այս մասնագիտությամբ: Երիտասարդ բանաստեղծի կյանքում շրջադարձային էր Նագիի հետ հանդիպումը, որից և նա մեծապես ազդվել է: Տահան սկսել է ստեղծագործել երիտասարդ տարիքից, կատարել ֆրանսիական պոեզիայից թարգմանություններ, որոնք լույս են տեսել “Al-Sufur” ամսագրում: Հայրենի Մանսուրայում ստեղծել է իր առաջին պոեմը՝ “Al-Fann Al-Ġamīl” («Գեղեցիկ արվեստը»): Տահան 1930 թ. տեղափոխվել է Կահիրե, որտեղ նա զբաղեցրել է տարբեր պաշտոններ հանրային աշխատանքի բաժնում, այնուհետև՝ նշանակվել տնօրեն առևտրի նախարարությանը կից թանգարանում, ապա՝ Եգիպտոսի ներկայացուցիչների պալատի քարտուղարությունում: 1949 թ. Տահան Եգիպտոսի ազգային գրադարանում կատարել է տնօրենի օգնականի պարտականությունները:

Տահայի ստեղծագործական ուղու վրա մեծ ազդեցություն են թողել Եվրոպա կատարած նրա ճամփորդությունները. 1938-1946 թթ. նա եղել է Շվեյցարիայում, Իտալիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում: 1939 թ., երբ սկսվեց Երկրորդ աշխարհամարտը, Տահան գտնվում էր Բեռլինում: Այս ճամփորդությունները ոգեշնչման աղբյուր հանդիսացան Տահայի որոշ ստեղծագործությունների համար, դրանցից են՝ “Uġnīat Al-Ġundul” («Գոնդոլի երգը»), “Buḥāīrat Como” («Կոմո լիճը»)¹:

Վերադառնալով Կահիրե՝ Տահան ծավալեց բուռն գրական գործունեություն, կապեր հաստատեց ժամանակի գրական աշխարհի ներկայացուցիչների հետ: Նրա տունը դարձել էր գրական հավաքույթների կենտրոն: Տահայի բանաստեղծություններն ի սկզբանե արտահայտում էին հռոետեսական մո-

¹ Diwan, Beirut, Dar al-‘Awdah, no date (n.d.).

տիվներ, հուսալքության դրսևորումներ, սակայն ավելի հասուն տարիքում բանաստեղծը սկսում է արծարծել հեղոնիստական թեմաներ՝ նկարագրելով Կահիրեի գիշերային կյանքը՝ ոգեշնչվելով տեղի երգիչներից ու պարուհիներից:

Ինչպես նշվեց, Տահան, որոշ ժամանակով լինելով «Ապուլլոնի» անդամ, այնուամենայնիվ, գերադասում էր իր պոեմներն ու բանաստեղծությունները տպագրել տեղական այլ պարբերականներում. նրա ստեղծագործություններն ավելի շատ տպագրվել են “Al-Muqtataf”-ի էջերում, քան «Ապուլլոնի» համարներում:

Բանաստեղծի կյանքը, կենսական պատմություններն իրենց արտացոլումն են գտել նրա բանաստեղծական տողերում, որոնք ընդհանրական բնույթ ստացան և համաբերվեցին 1934 թ. “Al-Mallah Al-Tā’ih” «Մոլորված նավաստին» ժողովածուում:

Տահայի լավատեսական, կյանքի նկատմամբ սիրով լի տրամադրություններն ամփոփված են նրա “Allah wa al-šā’ir” «Ալլահը և բանաստեղծը» ստեղծագործության մեջ, որտեղ նա, կրելով Օմար Խայամի ազդեցությունը, գովաբանում է կյանքը, դրանից քաղած հաճույքները, թեպետ, ի տարբերություն Խայամի, որը բողոք ուներ և վեճ Աստծու հետ, Տահան ներկայանում է Աստծուն ուղղված աղերսով¹:

Տահայի բանաստեղծություններում ոգեշնչման աղբուրը ծովն է: Բանաստեղծն իր մտքերի և հույզերի խառնաշփոթ իրարանցումը նկարագրում է ծովի բուռն ու արագ փոփոխվող տրամադրության միջոցով: “Ila al-bahr” («Դեպի ծովը»), “Al-Mallah Al-Tā’ih” («Մոլորված նավաստին»), “Ala Al-Šahra Al-

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 176:

Baīda” («Սպիտակ ժայռի վրա») բանաստեղծություններում վերարտադրում է իր աղոտ մտապտկերներն ու տրամադրությունները¹:

Տահայի “Layāli Al-Mallah Al-Tā’ih” «Մոլորված նավաստու գիշերները» ժողովածուն (1940 թ.) մեծ հռչակ բերեց նրան: Այստեղ նկատելի է ինքնամփոփ սիրային զգացողությունների անցում դեպի զվարճական, հեղոնիստական տրամադրություններ: Ժողովածուում ընդգրկված բանաստեղծություններում ակնառու է մարմնական հաճույքների գովերգման թեմատիկան, որը կարելի է համարել ժամանակակից արաբական պոեզիայի նորարարություններից: Ժողովածուն ներկայացնում է բանաստեղծի ազատագրումը հին, պահպանողական հասարակության բարքերից ու կապանքներից, ինչն առավել ցայտուն դրսևորվեց Տահայի՝ Եվրոպա կատարած ճամփորդությունների արդյունքում, որտեղ և ոչ միայն ծանոթացավ նոր բնապատկերների գեղեցկությանը, այլ նաև տարվեց այնտեղի գունեղ և ուրախ կենսակերպով:

Տահան առավելապես լիրիկ բանաստեղծ է, չնայած նրա յոթ ժողովածուներից երկուսը նվիրված են այլ թեմաների արծարծմանը: “Arwāh Wa Ašbāh” («Ոգիներ և ստվերներ») ստեղծագործությունը երկար պոեմ է, երկխոսություն հունական դիցաբանությունից ու Աստվածաշնչից տարբեր կերպարների միջև: Պոեմի բովանդակային հենքը մարմնի և հոգու կոնֆլիկտն է՝ ներկայացված տղամարդու ու կնոջ հարաբերության կոնտեքստում՝ կիրառելով լայն մտապատկերային ու հուզական արտահայտչամիջոցներ: Ժանրային և թեմատիկ նույնականություն ենք տեսնում «Ոգիների ստվերներ» և “Ugnā Al-

¹ ‘Ali Mahmud, al-Taha, “Al-Mallah al-ta’ih”, Cairo, 1941, pp. 176-77.

rīāh Al-ārba‘a” («Չորս քամիների երգը») դրամատիկ ստեղծագործությունների միջև: Վերջինս հիմնված է մի հին եգիպտական երգի դրվագի վրա, որտեղ նավաստին անարդյունք փորձեր է ձեռնարկում՝ առևանգելու չորս քամիները ներկայացնող չորս կույսերի՝ հրապուրելով և գայթակղելով նրանց դեպի իր նավը: Այս թեմայի շուրջ Տահան զարգացնում է դրամատիկ պատմություն՝ տխուր ավարտով, որտեղ իրականանում են փյունիկյան ծովահենի անօրինական երկրային մարմնական բավարարումներն ու հաճույքները:

Տահայի “Al-Šarq Wa Al-Ġarb” («Արևելք և Արևմուտք») ստեղծագործությունը, սակայն, ներկայացնում է քաղաքական և ազգայնական թեմատիկա, որտեղ արտահայտված են բանաստեղծի կենսաապրումները՝ հիմնված երկար տարիներ թե՛ հայրենիքում, թե՛ արտերկրում կուտակած կենսափորձի վրա¹: Այստեղ բանաստեղծության թեմատիկ հուզականությունը զուգակցվում է ստեղծագործական ոճի երգեցիկությանն ու հանգային ներդաշնակությանը:

Այսպիսով՝ Տահայի բանաստեղծական ուղու, կյանքի անցումների ու կենսափորձի ուսումնասիրությունը հիմք է տալիս պատկերացում կազմելու բանաստեղծի բավական լայն թեմատիկ ընդգրկումների և ոճային կիրառությունների մասին՝ առանձնացնելով նրան որպես առանցքային կերպար իր ժամանակի սերնդակիցների շրջանում: Նրա ստեղծագործություններում ընդգրկված են սիրային, ռոմանտիկ մտորումներ, այնուհետև արտացոլվում են ազգայնական, քաղաքական տրամադրություններ, մյուս կողմից՝ հոռետեսական ու հիասթափական զգացողություններ: Այս ամենը ստեղծում է պատ-

¹ R. Allen, նշվ. աշխ., էջ 312:

կեր Տահայի ուղու բազմազանության մասին: Թեմատիկ այս հավաքականությունը միավորվում է բանաստեղծական տոհերի և հանգերի հմուտ ներդաշնակության միջոցով:

«Ապոլլոն» գրական միության կարևոր ձեռքբերումներից էր, որ այն չէր սահմանափակվում միայն Եգիպտոսը ներկայացնող բանաստեղծներով. այն համագործակցության մեծ դաշտ ստեղծեց արաբական երկրների միջև: «Ապոլլոնին» այս առումով նշանակալի ներդրում բերեց թունիսցի բանաստեղծ **Աբուլ Կասիմ ալ-Շաբբին (1909-1934 թթ.)**: Պարբերականում նրա առաջին ներկայությունը տեղի ունեցավ 1933 թ., երբ լույս տեսավ Շաբբինի դասախոսությունը՝ “Al- haīāl al-šī’rī ‘inda al-‘arab” («Բանաստեղծական պատկերացումները և արաբները») թեմայով, ինչպես նաև նույն համարում հրատարակվեցին Շաբբինի երկու բանաստեղծությունները՝ “Šalawāt fi haīkal al-hubb” («Աղոթքներ սիրո տաճարում») և “Al-sa’āda” («Երջանկություն»)¹: Շաբբին Աբու Շադիի “Al-īanbū” «Շատրվան» դիվանի նախաբանում իր հիացմունքն է արտահայտում «Ապոլլոնին» հիմնադրի և միության գործունեության վերաբերյալ:

Ալ-Շաբբին ստացել է իսլամական ավանդական կրթություն Թունիսի «Զեյթունա» մզկիթ-համալսարանում, որտեղ լայն գիտելիքներ է ձեռք բերել արաբական գրականության և լեզվի ասպարեզում: Չտիրապետելով օտար լեզուների՝ նա արտասահմանյան գրականությունը քաջատեղյակ էր թարգմանությունների միջոցով: Իր կարճ ստեղծագործական կյանքում Շաբբին հասցրեց պատրաստել միայն մեկ ժողովածու՝ “Al-agānī al-haīā” («Կյանքի երգեր»): Գիրքը պետք է տպագրվեր Եգիպտոսում, սակայն 1934 թ. նրա մահը հետաձգեց գրքի

¹ M. M. Badawi, նշվ. աշխ., էջ 126:

լույսընծայումը, և այն ի վերջո հրատարակվեց Թունիսում 1955 թ.: Չնայած այն բանաստեղծի միակ ժողովածուն է, իր նշանակությամբ կարելի է համարել արաբական ռոմանտիկ գրականության մայրամուտն ու վերջաբանը:

Շաբբիի ժողովածուում հիմնականում ներառված են ռոմանտիկ, քնարական բանաստեղծություններ, որոնցում նա խորությամբ ներկայացնում է իր լինելիությանն առնչվող խնդիրները, հիասթափությունները, կյանքի տառապանքները, սիրային պատմությունները և մահվան շուրջ իր մտորումներն ու հարցադրումները: Նրա բանաստեղծությունների բովանդակային ընդգրկումները կառուցված են գիշերվա և մայրամուտի պատկերավոր նկարագրություններով: Մարդկային զգացողությունների նկարագրությունն ու վերարտադրումը պայմանավորված չեն գունեղ արտահայտչամիջոցների կիրառմամբ, չնայած Շաբբին տիրապետում էր լեզվական ու արտահայտչական նրբություններին, ներդաշնակ խոսքի հմտություններին: Նրա բանաստեղծությունների հիմնական գրավչությունը հուզական անկեղծությունն է, և ընթերցողը մինչ բովանդակային էությանը հասնելը տարվում է բանաստեղծական ոճի ու զգացական խորքայնության ներդաշնակությամբ. «Գիշերամուտ..., Դու սրտահաճ տավիդ, ժամանակի շուրթին բազմած հառաչանք»¹:

Շաբբիի բանաստեղծություններին հատուկ է սքողված տխրությունը, որը դրսևորվում է “Al-masā’ al-hazīn” («Տխուր երեկո»), “Fī al-zalām” («Խավարում») և “Aīuhā al-lail” («Օ՛ գիշեր») բանաստեղծություններում: Այսուամենայնիվ, կան նաև ստեղծագործություններ, որոնցում զվարթ կյանքին կոտրում է գիշերի խավարը՝ որպես կյանքի փորձությունից հետո նոր

¹ Abu'l-Qasim al-Shabbi, Al-agāni al-ḥaiā, Tunis, 1966, p. 75.

սկիզբ: Սույն տրամադրությունները լավագույնս դրսևորված են Շաբբիի “Al-ṣabāḥ al-ḡadīd” («Նոր լուսաբաց») բանաստեղծության մեջ, որտեղ լուսաբացը խորհրդանշում է վերածնունդ, հարություն, ցավն ու տառապանքը՝ ժամանակավոր է, ինչպես գիշերային խավարն է. «Կյանքի լուսաբացը հավերժ է և չի անհետանում. կասկածն ապրում է խավարում և ունի վախճան»:

Ռոմանտիկ բանաստեղծների շարքում Շաբբիի պոեզիան ամենից ոգեղենն ու պլատոնականն է՝ սերը՝ որպես մի զգացմունք, որը հնարավորություն է ընձեռում նրան մերձենալու աստվածային մաքրությանը: Ալ-Շաբբիի կնոջ իդեալի պատկերացումները հակադրվում են Աբու Շաբաբայի մորմոքող զգացականությանը կամ Մահմուդ Տահայի հեղոնիստական զվարճանքին: Կնոջ մասին պատկերացումները Ալ-Շաբբիի մոտ արտացոլում են նրա բողոքն ու ընդվզումը իր մշակույթի և հասարակության դեմ, ինչպես նաև գրականության մեջ ու կյանքում կնոջ նկատմամբ տիրող վերաբերմունքի նկատմամբ:

Ինչպես նշվեց վերևում, 1929 թ. նա հրապարակում է իր քննադատական էսսեն՝ «Բանաստեղծական պատկերացումները և արարները», որը բանաստեղծի քննադատական արձագանքն է՝ ուղղված արաբամուսուլմանական մշակույթին, առավելապես՝ կնոջ դերի և նշանակության խնդիրներին արաբական հասարակության մեջ: Ըստ նրա խոսքերի՝ «արաբական գրականության վերաբերմունքն արաբ կնոջ հանդեպ անարգական է՝ խորտակված նյութապաշտական բարքերում. այն կնոջը դիտարկում է միայն ցանկասիրության ու կյանքի հաճույքների տեսանկյունից: «Երբն է լսե՞լ էք արաբ պոետների շրջանում մեկին, որը բնութագրի կնոջը որպես սիրո տաճար

այնպես, ինչպես հավատացյալն է խոսում Աստծո տան մասին»¹:

Ալ-Շաբբին որպես ոգեշնչման միջոց է ընտրում կնոջ և սիրո իդեալական ոգեղենության մոդելը, որը հատուկ էր եվրոպական ռոմանտիկ պոեզիային: Հիրավի, «Աղոթքներ սիրո տաճարում» ստեղծագործության մեջ Ալ-Շաբբին կնոջն ազնվացնում և հասցնում է կատարելության, պաշտամունքի՝ որպես բողոք՝ ուղղված արաբամուսուլմանական ավանդություն կնոջ նվաստացած կերպարի դեմ:

Ալ-Շաբբիի կյանքի վերջին տարիների բանաստեղծություններում, պայմանավորված բանաստեղծի կյանքով ու անձնական փորձառություններով, հիվանդությամբ, մահվան նկարագրությունը ձեռք է բերում ոգեղենության կոչի, ոգու անմահության իմաստավորում է. մահը նրա համար այլևս վախի հարթության մեջ չէ, փոխարենը ոգին ապրում է անսահմանության և սիրո կատարյալ դրսևորումների մեջ:

Ալ-Շաբբիի բանաստեղծությունների յուրահատկություններից է բանաստեղծի անձնական ապրումներն ընդհանրական, հասարակական խնդիրների և մտահոգությունների հետ համադրումը: Այս առումով բավական հետաքրքրական է Շաբբիի՝ խնդիրների արծարծման սիմվոլիզմը, որտեղ անձնական ցավն ու տառապանքը ներկայացված են որպես նրա ժամանակակիցներին մտահոգող ընդհանրական երևույթներ:

Ալ-Շաբբին 20-րդ դարի առաջին կեսին արաբական պոեզիայի վառ անհատականություններից է, որի գործունեությունը և բանաստեղծական իմաստային ընդգրկունությունը ակնհայտ ազդեցություն են ունեցել արաբական գրականության վրա:

¹ M. M. Badawi, նշվ. աշխ., էջ 128:

Արձակ նոր ժանրերի առաջացումը և ժանրային նոր համակարգի ձևավորումն արաբական գեղարվեստական գրա- կանության մեջ

19-րդ դարում ձևավորված նահդան՝ մշակութային զարթոնքը, հանգեցրեց հսկայական փոփոխությունների ինչպես արաբների հասարակական, քաղաքական, այնպես էլ մշակութային կյանքում: Այդ փոփոխությունները, բնականաբար, չէին կարող չանդրադառնալ գրականության վրա: Առավել քան ակտուալ է դառնում գրականությունը ժամանակի պահանջներին հարմարեցնելու խնդիրը: Հրապարակախոսությունը՝ որպես առաջին արձակ ժանր արաբական նոր գրականության մեջ, իր ձևով ու բովանդակությամբ մեծապես նպաստեց արաբական նոր գեղարվեստական գրականության ձևավորմանը և գրական նոր ժանրերի առաջացմանը: Այն կարևոր դեր ունեցավ գրական նոր ոճի և գրականության լեզվի ձևավորման համար: Արաբական նոր գրականության գեղարվեստական առաջին ժանրերից էին մականա-վեպը, վեպն ու պատմավեպը, կարճ պատմվածքն ու դրաման:

Արաբական գրականության մեջ վեպի ձևավորումը պայմանավորված է երկու՝ սիրիական ու եգիպտական դպրոցների ձևավորմամբ: Եգիպտական դպրոցի գրողներն օգտագործում էին դասական գրականության ավանդական մականայի ժանրը՝ ներդնելով նոր բովանդակություն և համապատասխանեցնելով այն նոր ժամանակների գրականության խնդիրներին և պահանջներին: Սիրիական դպրոցի գրողները դիմում էին եվրոպական վեպի ավանդույթին՝ այդպիսով ներմուծելով այն արաբական գրականություն:

Պատմավեպի առաջացումը և առաջին հեղինակները

Արաբական նոր գրականության մեջ պատմավեպի հիմնադիրներից է լիբանանցի գրող **Սելիմ ալ-Քուսթանին (1848-1884 թթ.)**: Սելիմ ալ-Քուսթանին Սիրիայի լուսավորչական շարժման ակնավոր ներկայացուցիչ Բուտրոս ալ-Քուսթանիի որդին է: Սելիմ ալ-Քուսթանին մանկությունից ուսումնասիրում էր օտար լեզուներ. նա տիրապետում էր թուրքերենին, անգլերենին և ֆրանսերենին: Նրա արաբերենի ու արաբական գրականության ուսուցիչն է եղել Սիրիայի լուսավորչական շարժման ներկայացուցիչ, բանասեր Նասիֆ ալ-Յազիջին: Սելիմ ալ-Քուսթանին ակտիվ մասնակցություն է ունեցել իր հոր բոլոր լուսավորչական նախաձեռնություններին: Նա գրում էր հողվածներ հոր կողմից հրատարակվող հանրագիտարանի համար և ակտիվ գործունեություն ծավալում «Սիրիական գիտական ընկերության» շրջանակներում՝ դառնալով նախագահության անդամ:

Սելիմ ալ-Քուսթանիի գրական գործունեությունն անմիջականորեն կապված էր լուսավորչական մամուլի հետ: Նրա մասնակցությամբ Բուտրոս ալ-Քուսթանին հրատարակում է իր “Al-Ğanna”, “Al-Ğinān” և “Al-Ğunaīna” ամսագրերը: Հոր մահից հետո Սելիմ ալ-Քուսթանին ստանձնել է “Al-Ğinān”-ի գլխավոր խմբագրի պարտականությունները: Ամսագրի թեմատիկ ընդգրկումները հիմնական ուղղված էին գրականության և դրան առնչվող խնդիրների լուսաբանմանը: Այստեղ տպագրվում էին բազմաթիվ բարոյախրատական թեմաներով պատմվածքներ՝ թարգմանված անգլերենից, ֆրանսերենից, իտալերենից: Թարգմանությունների մեծ մասի հեղինակը Սելիմ ալ-Քուսթանին էր:

“Al-Ġinān”-ում են տպագրվել Ալ-Բուսթանիի պատմավեպերը: Բացի մեծ թվով հանրագիտարանային և գիտահանրամատչելի հոդվածներից՝ Ալ-Բուսթանին գրել է նաև լուսավորչական ուղղվածություն ունեցող բանաստեղծություններ, պատմվածքներ, վեպեր, պատմավեպեր, պիեսներ: Սելիմ ալ-Բուսթանիի գործունեությունը ծառայում էր լուսավորչական նպատակներին՝ հասարակությանը կրթելուն և հասարակական բարքերի բարելավմանը: Նրա պատմվածքների սյուժեն կառուցվում էր որոշակի բարոյական թեզ լուսաբանելու նպատակով: Սելիմ ալ-Բուսթանիի պատմավեպերի հիմքում ընկած են Սիրիայի պատմության կարևորագույն և հերոսական դեպքերը: Պալմիրայի թագուհու պայքարը Հռոմի դեմ նկարագրված են հեղինակի “Zinūbiā” («Զենուբիա») պատմավեպում: “Al-Haiām fi Ġunān Al-Šām” («Սերը Սիրիայի պաշտպանության ժամանակ») պատմավեպն անդրադառնում է արաբների կողմից Սիրիայի գրավմանը: Նրա համոզմամբ պատմական թեմաներով գրված ստեղծագործությունները պետք է հաղորդեն ընթերցողին հավաստի տեղեկություններ արաբների հերոսական անցյալից՝ դրանով բարձրացնելով հայրենասիրական ոգին, ինչպես նաև ընդգրկեն բարոյական խրատներ¹: Այդ ամենի հետ մեկտեղ վեպը պարտադիր պետք է ունենա հետաքրքրաշարժ սյուժե, բովանդակային կապակցված հենք, որի միջոցով ընթերցողը հաղորդակից է դառնում պատմական իրադարձություններին: Պատմավեպերում որպես հետաքրքրաշարժ սյուժե հանդես է գալիս սիրային պատմությունը, որտեղ գրողը, ի սկզբանե շեշտելով հերոսների դրական

¹ А. А. Долинина, Очерки истории арабской литературы, Египет и Сирия, Просветительский роман 1870-1914, М., 1973, с. 40.

կամ բացասական կերպարի առանձնահատկությունները, այսպիսով սխեմատիկ բնույթ էր տալիս վեպի ընդհանուր բովանդակությանը: Այս հանգամանքը որոշակի արհեստականություն էր հաղորդում և պայմանական դարձնում վեպի սյուժեն և դրանում տեղ գտած դեպքերը: Նման սխեմատիկությունը վկայում է Ալ-Բուսթանիի վեպերի լուսավորչական ուղղվածության մասին, որի հիմնական նպատակն էր ոչ թե վեպի գեղարվեստական, այլ ուսուցողական արժեքը: Նման ուսուցողական և դաստիարակչական ուղղվածություն ունեն նաև Ալ-Բուսթանիի ժամանակակից թեմաներով գրված վեպերը:

Պատմավեպի ժանրը հետագա զարգացում գտավ **Զամիլ Ալ-Մդաուվարի (1862-1907 թթ.)** ստեղծագործություններում: Նա ծնվել է Բեյրութում, այնուհետև տեղափոխվել Կահիրե: Զամիլ Ալ-Մդաուվարը ստացել է որակյալ կրթություն, սովորել է ֆրանսերեն և ուսումնասիրել ֆրանսիական գրականություն: Իր ստեղծագործությունները տպագրել է “Al-Ğinān”-ամսագրում: Հետագայում տեղափոխվելով Եգիպտոս՝ նա շարունակել է տպագրվել Յակուբ Սառուֆի “Al-muqtataf” և մոդեռնիստների “Al-mūayyad” թերթերում: Նրա հայտնի ստեղծագործություններից է “Ḥaḍāra Al-Islām fi Dār Al-Salām” («Մուսուլմանական քաղաքակրթությունը Բաղդադում») վեպը: Վեպն անդրադառնում է Հարուն ալ-Ռաշիդի կառավարման դարաշրջանին՝ վերագրելով նրան իդեալական դեկավարի բոլոր հատկանիշները: Վեպում ընտրված պատմական ժամանակաշրջանը պատահական չէ: Անդրադառնալով Աբբասյանների կառավարման դարաշրջանին՝ հեղինակը փորձում է հիշեցնել գիտության, գրականության և մշակույթի ասպարեզում արաբների ունեցած կարևոր դերի մասին: Այն լույս է տե-

սել առաջին անգամ 1888 թ., այնուհետև՝ վերահրատարակվել 1905 թ. որոշ փոփոխություններով: Վեպը գրված է նամակագրության ձևով: Ստեղծագործությունը բաղկացած է տասը նամակներից, որոնք գլխավոր հերոսը Բաղդադից գրում է իր ընկերոջը: Իրանցի երիտասարդը Խորասանից է, որը մեկնել էր Բաղդադ՝ իրավագիտություն՝ *fiqh* սովորելու: Բաղդադում նա այցելում է մզկիթներ, գիտական և մշակութային կենտրոններ և այնտեղ կատարվածը ներկայացնում նամակներում: Այստեղ նաև ներկայացվում են խալիֆայության պալատական ներքին կյանքին առնչվող իրադարձություններ: Խորասանցի երիտասարդը Բաղդադից մեկնում է Դամասկոս, այնուհետև՝ Թունիս, լինում է Կայրուանում ու Ալեքսանդրիայում: Հաջի Ժամանակ մեկնում է Հիջազ և վերադառնում նորից Բաղդադ: Ստեղծագործությունում նկարագրված յուրաքանչյուր իրադարձություն հեղինակի կողմից ներկայացվում է կոնկրետ աղբյուրին արված հղումներով: Վերջում հեղինակը ներկայացնում է միջնադարյան հայտնի արաբ պատմաբանների, բանասերների, աստվածաբանների, փիլիսոփաների շուրջ ութսուն անուն ստեղծագործություն: Նրանց թվում էին Իբն Խալ-դունը, Ալ-Մասուդին, Իբն Ալ-Ասիրը, Յակուտը: Վեպում իրադարձությունները չեն ներկայացվում մանրամասն համակարգված հերթականությամբ: Կառուցվածքային տեսանկյունից դժվար է դասել այս ստեղծագործությունը պատմավեպի ժանրին, քանի որ այն չունի իրական սյուժե և անհատական բնավորություններով օժտված կերպարներ: Ստեղծագործությունն ավելի շատ ներկայացնում է գիտական և դիդակտիկ շերտերի համադրում, որն էլ թույլ է տալիս այն դասել *ադաբի* գրականությանը:

Պատմավեպի զարգացման գործընթացում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում **Զիրզի Ջեյդանը (1861-1914 թթ.)**: Նա ծնվել է Բեյրութում՝ ուղղափառ քրիստոնյայի ընտանիքում: Կրթության համար բավարար ֆինանսներ չունենալու պատճառով Ջեյդանը պատանեկության տարիներին հիմնականում զբաղվել է ինքնակրթությամբ և օգնել հորը՝ ընտանեկան փոքրիկ ռեստորանն աշխատացնելու գործում: 19 տարեկանում բարեհաջող հանձնելով ընդունելության քննությունները՝ նա ընդունվել է Բեյրութի ամերիկյան համալսարան: Սակայն ուսումնառության երկրորդ տարում Ջեյդանը հեռացվել է համալսարանից ուսանողական ցույցին մասնակցելու պատճառով, որը կազմակերպվել էր ի պաշտպանություն դասախոսի վերջինս հանդես էր գալիս Դարվինի էվոլյուցիոն տեսության մասին դասախոսություններով¹: Որոշ ժամանակ անց՝ 1883 թ.՝ Բեյրութում դեղագործի մասնագիտության համար քննություններ հանձնելուց հետո, Ջեյդանը տեղափոխվել է Եգիպտոս՝ Կահիրեի բժշկական համալսարանում կրթությունը շարունակելու: Սակայն անհրաժեշտ միջոցներ չունենալու պատճառով չի կարողացել շարունակել կրթությունը և զբաղվել լրագրությամբ: Նա շուրջ մեկ տարի աշխատել է “Zamān” ամսագրում, այնուհետև, վերադառնալով Բեյրութ, շարունակել է կրթությունը՝ սկսելով ուսումնասիրել եբրայերեն և արամերեն: Նա անցկացրել է Բեյրութում տասը ամիս: Այս ընթացքում Ջեյդանը հրատարակել է իր արաբերենի բառապաշարի և լեզվաբանական փիլիսոփայության մասին ուսումնասիրությունը: 1886 թ. նա մեկնել է Անգլիա՝ արաբական պատմության մասին Բրիտանական թանգարանից անհրաժեշտ նյու-

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 219:

թեր ձեռք բերելու համար: Նույն թվականի դեկտեմբերին վերադարձել է Կահիրե: Վերադարձից հետո նա սկսել է նորից զբաղվել լրագրությամբ: Աշխատել է իր հայրենակից Յակուբ Սառուֆի կողմից հրատարակվող “Al-muqtataf” ամսագրում: 1888 թ. Ջեյդանը նորից թողել է լրագրությունը և զբաղվել դասավանդմամբ հունական ուղղափառ դպրոցում: 1892 թ. Ջեյդանը հրատարակել է իր “Al-hilāl” («Կիսալուսին») ամսագիրը, որը շուտով դարձել է Կահիրեի ամենահայտնի ամսագրերից մեկը և մեծ ճանաչում բերել նրան: 1910 թ. Ջեյդանն անցել է դասախոսական աշխատանքի նորաբաց Կահիրեի համալսարանում, որտեղ նա դասավանդում էր իսլամի պատմություն: Սակայն շուտով նա հեռացվում է աշխատանքից, որի պատճառն էր մուսուլմանների բարձրացրած բողոքը. վերջիններս դեմ էին քրիստոնյայի կողմից իսլամ դասավանդելուն¹:

Նա մահացել է 1914 թ. Կահիրեում: Ջեյդանն արաբ մտավորականներից առաջինն էր, որն իր ստեղծագործական ժառանգությանն ավելացրել է նաև իր անավարտ թողնված ինքնակենսագրությունը: Վերջինիս կարևորությունն այն է, որ այնտեղ ներկայացված են արժեքավոր տեղեկություններ Բեյրութի սոցիալական կառուցվածքի, հասարակության մեջ քարացած ավանդույթների, եվրոպական ազդեցության մասին²: Ջեյդանը, բացի պատմավեպերից, գրել է նաև գիտական հետազոտություններ արաբական մշակույթի, լեզվի, պատմության և կրոնի վերաբերյալ: 1902-1907 թթ. լույս է տեսել նրա չորսհատորանի “Tārīḥ al tammadun al-islāmī” («Իսլամական քաղաքակրթության պատմություն») աշխատությունը: Ջեյդա-

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 219:

² T. Philipp, *His life and thought, The Autobiography of Jurji Zejdan*, 1979, pp. 128-129.

նը, թերևս, առաջին քրիստոնյա արաբ գրողներից է, որը դիտարկում էր մուսուլմանների պատմությունը որպես բոլոր արաբների փառահեղ անցյալ և Մուհամմադ մարգարեին համարում տաղանդավոր արաբ ղեկավար¹: Իր ամսագրի “Al-hilāl” («Կիսալուսին») անունը նույնպես վկայում է այն մասին, որ Ջեյդանը մուսուլմանների պատմությունն ընկալում էր արաբական ազգայնականության համատեքստում²: 1911-1914 թթ. լույս է տեսել Ջեյդանի մյուս գիտական աշխատությունը՝ “Tārīḥ al-adab al-luġa al-arabiya” («Արաբալեզու գրականության պատմություն»): 1890 թվականից լույս են տեսել Ջեյդանի առաջին շրջանի պատմավեպերը: 1891 թ. հրատարակվել է նրա առաջին “Al-mamluk al-šārid” («Փախստական մամլուքը») պատմավեպը, որը Խեղիվյան դինաստիայի և Եգիպտոսում Մուհամմադ Ալիի կառավարման տարիների մասին է: 1892 թ. լույս է ընծայվել նրա հաջորդ պատմավեպը՝ “Asīr al-mutāmahdi” («Գերեվարված Մահդին»), որը 19-րդ դարի երկրորդ կեսին Սուդանում տեղի ունեցած Մահդիի ապստամբության մասին է:

19-րդ դարի պատմական անցքերին է առնչվում նաև Ջեյդանի “Istibdād al-mamālīk” («Մամլուքների դաժանությունը») վեպը: Այն անդրադառնում է Եգիպտոսում իշխող վերջին մամլուքներին և նրանց ժամանակ երկրում տիրող իրավիճակին: Ջիրջի Ջեյդանի երկրորդ խմբի պատմավեպերը ներկայացնում են ժամանակագրական առումով իրար հաջորդող պատմավեպերի շարք: Դրանք ընդգրկում են իսլամի առաջացումից մինչև մամլուքներ ընկած ժամանակաշրջանը: Այս

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 220:

² Նույն տեղում:

շարքից առաջինը “Armanūsā al-misrīya” («Եգիպտուհի Արմանոսան») պատմավեպն է, որն անդրադառնում է արաբների կողմից 7-րդ դարի առաջին կեսին Եգիպտոսի գրավման հետ կապված իրադարձություններին:

Օսման խալիֆի մահվան կապակցությամբ Ջեյդանը գրել է “‘Adra qureiṣ” («Կուռեյշների կույսը») պատմավեպը: Աբբասյան խալիֆայության հաստատումը և Հարուն ալ-Ռաշիդի կառավարման շրջանը նկարագրվում է “Abbāsa ukht Rašīd” («Ռաշիդի քույր Աբբասան») պատմավեպում: Իսպանիա կատարած արաբական արշավանքների մասին շարադրված է “Fath Al-Andalus” («Անդալուսի գրավումը») պատմավեպում: Ջեյդանի վերջին վեպը՝ “Šağara al-durr” («Մարգարտի ծառը»), լույս է տեսել 1914 թ. և անդրադառնում է Այյուբյանների տապալմանը և մամլուքների իշխանության հաստատմանը Եգիպտոսում: Ժամանակագրական շրջան ընդհատվում է 1911 թ. “Al-inqilāb al-‘usmānī” («Օսմանյան հեղաշրջում») վեպով, որն անդրադառնում է երիտթուրքական հեղափոխությանը և Աբդուլ Համիդ II-ի իշխանության տապալմանը:

Ջեյդանի ստեղծագործության վրա մեծապես ազդել են Ա. Դյումայի և Վ. Սքոթթի վեպերը, ինչն արտահայտված է հիմնականում սիրային պատմության՝ պատմական նյութի հետ համադրման մեթոդի մեջ: Գեղարվեստական պատկերման տեսանկյունից Ջեյդանի վեպերը զիջում են վերը նշված եվրոպացի հեղինակների ստեղծագործություններին: Դա պայմանավորված էր նրանով, որ Ջեյդանի վեպերն ունեին ավելի շատ կրթելու և դաստիարակելու ուղղվածություն, և հեղինակն ավելի քիչ ուշադրություն էր դարձնում գեղարվեստական պատկերման մեթոդներին: Հարկ է նշել, որ սա վերաբերում էր այս շրջանի վեպի գրեթե բոլոր հեղինակներին: Ջեյդա-

նը գրում էր պարզ և հասկանալի՝ զերծ ավելորդ պաճուճավոր և բարդ ձևակերպումներից:

Վեպի ժանրն արաբական նոր գրականության մեջ ներկայացված չէր միայն պատմավեպով: Իհարկե, զարգացման առաջին փուլում գերակայում էր պատմական թեման, սակայն 20-րդ դարի սկզբին առաջ են գալիս հասարակական խնդիրներին անդրադարձող վեպեր: Թեմատիկ նման փոփոխության միտում նկատվում է **Ֆարահ Անտունի (1874-1922 թթ.)** ստեղծագործություններում: Ֆարահ Անտունը եգիպտական մշակույթի արևմտականացման կողմնակիցն է: Նա ծնվել է Լիբանանի Տրիպոլի քաղաքում՝ ուղղափառ քրիստոնյայի ընտանիքում: Որոշ ժամանակ աշխատել է հունական ուղղափառ դպրոցի տնօրեն: 1897 թ. նա մեկնել է Եգիպտոս և 1899 թ. հրատարակել է “Al- ġāmia” ամսագիրը: Ֆարահ Անտունը շատ հաճախ էր բանավիճում կրոնական, փիլիսոփայական թեմաներով: Դրանցից ամենահայտնին Մուհամմադ Աբդոյի հետ ունեցած բանավեճն էր իսլամի և քրիստոնեության տարբերությունների մասին: Իբն Ռուշդին նվիրված աշխատության մեջ Անտունը պնդում է, որ քրիստոնեությունն ավելի հանդուրժողական դիրքորոշում ունի փիլիսոփայության նկատմամբ, քան իսլամը: Շուտով “Al- ġāmia” ամսագրի ընթերցողների շրջանակը նվազում է, որի արդյունքում Ֆարահ Անտունը դադարեցնում է ամսագրի հրատարակումը և 1909 թ. մեկնում է Նյու Յորք: Այնտեղ նա շարունակում է մեկ տարի հրատարակել ամսագիրը, սակայն արաբական համայնքից որևէ օգնություն չստանալով՝ նա վերադառնում է Կահիրե: Վերադառնալուց հետո Անտունը չի վերականգնում ամսագրի հրատարակումը և սկսում է համագործակցել “Al-ahāli” («Տեղացիներ»), և “Al-mahārūsa” («Պաշտպանվածը») պարբերականների հետ: Նա

Ջորջ Աբայդի թատերախմբի համար թարգմանում և ադապտացնում է մի շարք պիեսներ: Անտունը գրում է նաև “Al-Sultān Ṣalāh Al -Dīn wa Mamlaka Iirūšalīm” («Սալահ Ալ-դին սուլթանը և Երուսաղեմի թագավորությունը») և “Miṣr al-ğadīma wa Miṣr al-qadīma” («Նոր Կահիրե և Հին Կահիրե») պիեսները:

Իր թարգմանություններով և աշխատություններով Ֆարահ Անտունը մեծ ազդեցություն է ունեցել Եգիպտոսի մշակութային կյանքի վրա: Նա թարգմանել է Նիցշեի «Այսպես խոսեց Ջրադաշտը» և Է. Ռեյնանի «Հիսուսի կյանքը» ստեղծագործությունները: Հասարակությունը կրթելու նրա ցանկությունը դրսևորվում էր ինչպես հողվածներում, այնպես էլ վեպերում: Ժամանակի վիպագիրների նման Ֆարահ Անտուն առաջնային էր համարում վեպերի միջոցով հասարակությանը կրթելը: Այդ պատճառով նրանց ստեղծագործությունները դիդակտիկ բնույթ էին կրում և չէին համապատասխանում գեղարվեստական տեքստին բնորոշ մեթոդներին: Նրա առաջին ստեղծագործությունը “Al-ḥubb ḥata al-maū” («Սեր մինչև մահը») վեպն է, որը լույս է տեսել միայն ամսագրում, անդրադառնում է Ամերիկայից վերադարձած գաղթականներին և սուր քննադատության է ենթարկում Լիբանանի եկեղեցական համակարգը: Երկրորդ վեպը՝ “Al-‘ilm wa al-dīn wa al-māl” («Գիտություն, կրոն և կապիտալ»), գրվել է 1903 թ., փիլիսոփայական վեպ է, որի հերոսը ճամփորդում է բարերարի կողմից կառուցված քաղաքներով: Քաղաքներում տեղի են ունենում քաղաքացիական ընդվզումներ. նման զարգացումը հնարավորություն է տալիս հեղինակին քննարկում ծավալելու հասարակությունների մասին¹: Նույն թվականին լույս է տեսել Ֆարահ Անտունի

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 226:

երրորդ՝ “Wahš, al-wahš, al-wahš” («Գազան, գազան, գազան») վեպը:

Ֆարահ Անտունի ամենահայտնի ստեղծագործությունը, որը գրվել է 1904 թ., “ Aūršalīm al-ğadīda wa fath al-‘arab baīt al-maqdis” («Նոր Երուսաղեմ կամ արաբների կողմից Երուսաղեմի գրավումը») վեպն է: Այն նվիրված է 7-րդ դարում արաբների կողմից Երուսաղեմի գրավմանը: Վեպի բովանդակային հիմքում ընկած է քրիստոնյա երիտասարդի և հրեա աղջկա սիրո պատմությունը: Նրանց սերը ենթարկվում է բազմաթիվ փորձությունների, որոնց հիմնական պատճառը կրոնական տարբերությունն է, ինչը հանգեցնում է հերոսուհու վախճանին: Վեպում արծարծված կրոնական հակասությունների թեման հնարավորություն է տալիս հեղինակին բարձրացնելու կրոնական, հասարակական և էթնիկ խնդիրներ, որոնց կիզակետում մարդն է՝ հասարակության հետ ունեցած իր հարաբերություններով:

Վեպի և մամուլի զարգացման գործում իր կարևոր դերն ունի սիրիացի-լիբանանցի էմիգրանտ **Յակուբ Սառուֆը (1852-1927 թթ.)**: Նա Բեյրութի ամերիկյան համալսարանի առաջին շրջանավարտներից էր: 1870 թ. ստանալով բնագիտության բակալավրի դիպլոմ՝ զբաղվում է դասավանդմամբ: 1876 թ. Բեյրութում իր համակուրսեցի Ֆարիս Նիմրի հետ հիմնում է “Al-Mukatafa” ամսագիրը: Այստեղ տպագրվում էին թարգմանություններ գիտական հոդվածներից, որոնք վերցված էին օտարերկրյա ամսագրերից:

1885 թ. Սառուֆն ընկերոջ հետ տեղափոխվում է Կահիրե, որտեղ նրանք շարունակում են հրատարակել վերոնշյալ ամսագիրը՝ ընդլայնելով դրա թեմատիկ շրջանակը: Պարբերականում սկսեցին տպագրվել պատմվածքներ, վեպեր, թարգ-

մանություններ, որոնք նպաստեցին եգիպտական գրական կյանքի աշխուժացմանը:

1889 թ. Սառուֆը և Նիմրը Շահին Մակրիուսի հետ հրատարակում են անգլիամետ քաղաքական “Al-Muqatam” օրաթերթը: “Fatāt Miṣr” («Երիտասարդ Եգիպտոս») առաջին վեպը Սառուֆը գրել է 1905 թ., և այն լույս է տեսել ամսագրում: Վեպը երիտասարդ անգլիացու մասին է, որն իր երագում տեսնում է դպտի աղջկա, որի հետ անցնելով արկածների միջով՝ ամուսնանում է: Պատմությունը հանկարծ միջարկվում է Եգիպտոսի խնդիրների շուրջ քննարկումներով: Վեպի արժեքը պարզ և անմիջական ոճն է:

1907 թ. լույս է տեսնում Յակուբ Սառուֆի երկրորդ՝ “Amīr Lubnān” («Լիբանանի էմիրը») վեպը: Վեպում դեպքերը տեղի են ունենում Լիբանանում 1860 թ. տեղի ունեցած մուսուլմանների ու քրիստոնյաների միջև տեղի ունեցած միջադեպի ընթացքում: Սյուժեի հիմքում ընկած է անգլիացի ազնվականի և լիբանանցի արքայադստեր սիրո պատմությունը: Այստեղ էլ, ինչպես Սառուֆի նախորդ վեպում, պատմությունն ընդհատվում է հասարակական, քաղաքական և պատմական խնդիրների շուրջ քննարկումներով:

Յակուբ Սառուֆի վերջին ստեղծագործությունը “Fatāt al-Faīum” («Ֆայումի երիտասարդ աղջիկները») վեպն է, որը անդրադառնում է Անգլիայում սովորող եգիպտացի դպտի աղջկա կյանքի պատմությանը: Չնայած ընթերցողների մեծ լսարանին՝ Սառուֆի վեպերը, այնուամենայնիվ, գեղարվեստական տեքստի կառուցման տեսանկյունից նույնպես հազեցած չեին և ուղղված էին հասարակությանը կրթելու նպատակին: Սառուֆի գլխավոր նպատակը վեպերի միջոցով ընթերցողին հասարակական, քաղաքական, տնտեսական և պատմական խնդիրներին ծանոթացնելն էր:

Մականա-վեպ. մականայի փոխակերպումը

Ինչպես արդեն նշվեց, վեպի ժանրի ձևավորումն ընթանում էր երկու հիմնական ուղղություններով: Մի դեպքում ներկայացուցիչներն իրենց ստեղծագործությունների համար հիմք էին ընդունում եվրոպական վեպը և ադապտացնում այն արաբական իրականությանը: Մյուսում հեղինակները ստեղծագործում էին՝ վերափոխելով դասական գրականության ժանրային համակարգում առկա մականայի ժանրը, հարմարեցնելով այն ժամանակակից իրականությանը և գրական նոր միտումներին:

Մականայի ժանրի ադապտացման և փոխակերպման գործում նշանակալի դեր ունի Մուհամմադ Ալ-Մուվեյլիհին (1858-1930 թթ.): Նրա “Ḥadīṭ ‘Isa Ibn Hišām aw fatra min al-zamān” («Իսա Իբն Հիշամի պատմությունը կամ ժամանակից մի հատված») մականային ստեղծագործությունը կարելի է համարել առաջին սոցիալական վեպ-մականան: Այն մեծ ազդեցություն է ունեցել արձակի հետագա զարգացման վրա: Մուվեյլիհինների տոհմը սերում էր Արաբական թերակղզու Հիջազի հյուսիսային հատվածից՝ Մուվեյլիի բնակավայրից: Ընտանիքը հիմնականում զբաղվում էր բամբակի առևտրով: 19-րդ դարի սկզբին Մուվեյլիհիների ընտանիքը հիմնում է բամբակի առևտրի Կահիրեի մասնաճյուղը¹: Մուվեյլիհիների ընտանիքը մեծ հարգանք և ընդունելություն էր վայելում Մուհամմադ Ալիի և նրա հետևորդների շրջանում: Մուվեյլիհիի հայրը՝ Իբրահիմ ալ-Մուվեյլիհին, մտերիմ հարաբերություններ ուներ Խեդիվ Իսմայիլի հետ: 1869 թ., երբ Խեդիվ Իսմայի-

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 69:

լին արքայություն են, Իբրահիմ ալ-Մուվեյլիհին մեկնում է նրա հետ Իտալիա: Մուհամմադ ալ-Մուվեյլիհին Օրաբի փաշայի ապստամբության կողմնակիցներից էր: 1882 թ.՝ ապստամբության պարտությունից հետո, Մուհամմադ Ալ-Մուվեյլի-հիին թռուցիկներ բաժանելու համար ձերբակալվում է և նույնիսկ դատապարտվում մահվան: Սակայն շուտով Բուտրոս Ղալի փաշայի միջամտությամբ նրա մահապատիժը հետաձգվում է, և նա մեկնում է Իտալիա՝ միանալով հորը: 1887 թ. Մուվեյլիհիին թույլ է տրվում վերադառնալ Կահիրե: Վերադարձից հետո նա սկսում է զբաղվել լրագրությամբ: Ալ-Մուվեյլիհին տարբեր թերթերում և ամսագրերում տպագրվում էր՝ հանդես գալով կեղծանունով: Խեղիվի հետ մտերիմ հարաբերությունների շնորհիվ Ալ-Մուվեյլիհիին զբաղեցրել է մի շարք պաշտոններ: Սակայն նրա հիմնական զբաղվածությունը և հետաքրքրությունը կապված է եղել լրագրության հետ: Ալ-Մուվեյլիհին աշխատում էր իր հոր կողմից հրատարակվող “Misbāh al-šarq” («Արևելքի լուսամփոփ») ամսագրում: 1900 թ. որպես թղթակից Ալ-Մուվեյլիհին ընդգրկվում է Խեղիվի Փարիզ ուղեկցող խմբի կազմում և նրա հետ միասին մասնակցում Փարիզում տեղի ունեցող համաշխարհային ցուցահանդեսին: Ալ-Մուվեյլիհիի միակ գեղարվեստական գործը “Ḥadīṯ ‘Īsa Ibn Hišām” («Իսա Իբն Հիշամի պատմությունը») մանրապատումների շարք ներկայացնող մակամայի ժանրով գրված ստեղծագործությունն է, որն առանձին գրքով լույս է տեսել 1907 թ.: Սակայն մինչ այդ՝ 1898-1902 թվականներն ընկած ժամանակահատվածում, առանձին հատվածներով տպագրվում է հոր կողմից հրատարակվող «Արևելքի լուսամփոփ» ամսագրում՝ “Fatra min al-zamān” («Ժամանակից մի հատված») վերնագրով:

Փարիզի համաշխարհային ցուցահանդեսին մասնակցելուց հետո Ալ-Մուվելլիհիի ամբողջ ստեղծագործությունը, այդ թվում՝ նաև «Al-rihla al-tāniā» («Երկրորդ ճամփորդություն») վերնագիրը կրող վերջին հատվածը վերանվանվում է «Փարիզ»: Այս ստեղծագործությունը լույս է տեսնում չորս հրատարակությամբ: Առաջին երեք հրատարակություններում Փարիզի ցուցահանդեսին մասնակցելու հատվածն ընդգրկված չէ, և դրվագներից շատերը տարբերվում են պարբերականում տպագրված հատվածներից: Դրանցից մի քանիսը քննադատական բովանդակության պատճառով հեղինակն ընդհանրապես հանել էր: 1927 թ. տպագրվում է գրքի չորրորդ հրատարակությունը, որտեղ հեղինակն ընդգրկում է «Երկրորդ ճամփորդություն» հատվածը և որոշակի փոփոխություններ է անում՝ ելնելով քաղաքական դրդապատճառներից: Գրված լինելով մականային ստեղծագործության չափանիշներով, այնուամենայնիվ, արծարծված արդիական թեմաների և քննադատական մոտեցման շնորհիվ Ալ-Մուվելլիհիի մականավեպն ուներ ընթերցողների բավական ընդգրկուն շրջանակ: Ստեղծագործության առանձին, բայց միևնույն ժամանակ իրար հետ գործողությունների ժամանակային տրամաբանությամբ կապված դրվագների միջոցով հեղինակը ներկայացնում է գլխավոր հերոսի արկածները Կահիրեի փողոցներով շրջելիս: Գլխավոր հերոսը Մուհամմադ Ալիի ժամանակաշրջանում մահացած և նոր ժամանակներում հարություն առած փաշան է: Պատմողը՝ Իսա Իբն Հիշամը (նույն անունն ուներ նաև Ալ-Համադանիի մականաների պատմողը), Կահիրեի հին գերեզմաններից մեկում հանդիպելով հարություն առած փաշային, նրան ուղեկցում է քաղաք: Ճանապարհին նրանք բախվում են տարբեր խնդրահարույց իրավիճակների և

քննարկում իրավիճակներից բխող ժամանակակից խնդիրներ: Դեպքերը, որոնցում հայտնվում են պատմողը և փաշան, ներկայացվում են առանձին մականամներով, որոնք տրամաբանորեն կապված են. իրար հաջորդող մականամները մեկը մյուսի շարունակությունն են: Պատմության սկզբում Իսա Իբն Հիշամը և փաշան իրենց ճանապարհին հանդիպում են իշապանին, որը ստիպում է փաշային նստել իր էշի վրա, քանի որ նրա պնդմամբ փաշան ինքն է կանչել իշապանին: Նրանց միջև վեճ է ծավալվում, և օգտվելով իրավիճակից՝ իշապանը ուստիկանությունն է դիմում: Պատմողն ու փաշան նախ հայտնվում են ուստիկանությունում, ապա՝ դատարանում: Այս դրվագի միջոցով հեղինակը փորձում է բացահայտել դատական համակարգի թերությունները¹: Հեղինակն ընթերցողին ծանոթացնում է հասարակական տարբեր կառույցների, շերտերի, նրանց կենցաղին, բարոյական արժեքներին: Մի շարք մականամներում գլխավոր հերոսի կերպարում հանդես է գալիս գյուղի ավագը ('umda)՝ որպես եգիպտացու ազգային ինքնության մարմնավորում: Ստեղծագործության հիմնական թեմաներից են սեփական մշակույթի, ավանդույթի անտեսումը և եվրոպական արժեքների կույր ընդօրինակումը, համընդհանուր անգրագիտությունը, պետական ու հասարակական կառույցներում տիրող անօրինականությունները: Այստեղ ներկայացված է հիսունից ավելի կերպար՝ պետական կառույցի ներկայացուցիչներ, վաճառականներ, գիտնականներ, բժիշկներ, մատուցողներ, արհեստավորներ: Քաղաքային կյանքը նկարագրող տեսարաններն առանձնահատուկ կոյուրիտ և դինամիկա են հաղորդում

¹ Muḥammad Al-Mūwa'iliḥī, Ḥadīṭ 'Isa Ibn Hišām aw Fatra min al-Zamān, <https://www.hindawi.org/books/63950852/>:

ստեղծագործությանը: Ստեղծագործության մեջ ներկայացված եգիպտական կյանքի համայնապատկերին ու հերոսներին, ինչպես նշում է Կ. Խուդավերդյանը, կարելի է հանդիպել հետագայում կարճ պատմվածքի հեղինակների ստեղծագործություններում¹: Ողջ գործը բաղկացած է ընդհանուր հերոսներով կապված առանձին մականամներից: Սյուժետային գիծը Իսա Իբն Հիշամի և փաշայի՝ Կահիրեի փողոցներով շրջագայությունն է: Ստեղծագործությունն հիմնականում գրված է ազատ արձակով, սակայն յուրաքանչյուր մականամայի սկզբում ու վերջում օգտագործվում է հանգավորված արձակը՝ սաջը: Հեղինակը խուսափում է հին ու հազվադեպ կիրառական բառեր ու արտահայտություններ գործածելուց: “*Ḥadīṭ ‘Isa Ibn Hišām aw fatra min al-zamān*”-ում Ալ-Մուվեյլիհին հաղթահարում է մականամային հատուկ ժանրային սահմանափակումները, հրաժարվում կառուցվածքային ու ոճական առանձնահատկություններից: Ստեղծագործությունն հրապարախոսության և կենցաղային պատումների ներդաշնակ համադրման փորձ է²: Ալ-Մուվեյլիհիի այս ստեղծագործությունն իր նշանակալի ազդեցությունն ունեցավ արաբական արձակի, հատկապես վեպի հետագա զարգացման վրա:

Վեպի հետագա զարգացումը

Թեմատիկ ու կառուցվածքային առումով վեպը զարգացման նոր փուլ է մտնում 20-րդ դարի առաջին կեսին: Առաջին

¹ К. К. Худавердян, Рассказ Исы Ибн Хишама, Мухаммада Ал-Мувейлихи и Египетская литература хх века, Вопросы Востоковедения, вып. 3-4, Ереван 1987, с. 344

² К. К. Худавердян, նշվ. աշխ., էջ 342:

համաշխարհային պատերազմից հետո ստեղծված իրավիճակը՝ ազգային պետությունների ձևավորումը, ազգային ազատագրական պայքարը, հասարակական նոր հարաբերությունները, պայմանավորում են արաբական գրականության մեջ նոր գրական ուղղությունների ու միտումների աստիճանաբար ձևավորումը: Պատմական թեմաներով լուսավորչական դիդակտիկ ուղղվածություն ունեցող վեպերին փոխարինելու է գալիս ժամանակակից հասարակության սոցիալական տարբեր շերտերի կյանքը, հարաբերություններն ու խնդիրներն արտացոլող, ռեալիստական և ռոմանտիկ գեղարվեստական մեթոդներին հատուկ պատկերման միջոցներով հարուստ վեպը: Հատկանշական է, որ վեպի ժանրի հետագա զարգացման գործընթացում, ինչպես մյուս գրական ժանրերում նույնպես, առաջնային դերում շարունակում էր մնալ եգիպտական գրականությունը: Եթե գրական այնպիսի ժանրեր, ինչպիսիք էին կարճ պատմվածքը, ռոմանտիկ բանաստեղծությունը դրանց հեղինակների համակարգված գործունեության ու համապատասխան դպրոցների ստեղծման շնորհիվ կարելի է ասել՝ հասան գարգացման որոշակի մակարդակի, ապա վեպի պարագայում կարող ենք առանձնացնել մի քանի հաջողված անհատական քայլեր՝ պայմանավորված դրանց հեղինակների վառ անհատականությամբ, գրական պրոցեսներում նրանց ակտիվ ներգրավվածությամբ: Մեծ ծավալի պատմողական ժանրի ներկայացուցիչներից և, ընդհանրապես, արաբական գրականության զարգացման գործում հսկայական ու կարևոր դեր ունեցած գրողներից այստեղ ներկայացված են Մուհամմադ Հուսեյն Հայքալը, Թաուֆիկ ալ-Հաքիմը, Տահա Հուսեյնը և Յուսուֆ Ավադը:

Մուհամմադ Հուսեյն Հայքալի գրական գործունեությունը. «Ձեյնաբ» վեպը

Արաբական վեպի ձևավորման և հետագա զարգացման գործընթացում կարևոր ու շրջադարձային տեղ ունի Հայքալի «Ձեյնաբ» վեպը: Մուհամմադ Հուսեյն Հայքալը (1888-1956 թթ.) ծնվել է Քաֆր ալ-Ղանամ գյուղում՝ հարուստ կալվածատիրոջ ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է գյուղի կրոնական դպրոցում՝ քութոբարում, այնուհետև կրթությունը շարունակել է Կահիրեում: 1905 թ. նա ընդունվել է Կահիրեի իրավաբանական դպրոցը: Այդ ժամանակ “Hizb al-waṭan” («Ազգային կուսակցություն») արդեն ձևավորվել էր, սակայն նրա ծայրահեղ ազգայնական գաղափարները և թուրք սուլթանի հանդեպ որդեգրած լոյալ քաղաքական դիրքորոշումը չէին համընկնում Հայքալի ազատական հայացքներին, որի պատճառով նա չի միանում այդ կուսակցությանը, փոխարենն անդամակցում է Ահմադ Լուտֆի ալ-Մայիդի կողմից 1907 թ. հիմնված “Umma” («Ազգ») ազգային-ազատական կուսակցությանը: Այս կուսակցությունը ներկայացնում էր եգիպտական ազգայնականության առաջադեմ լիբերալ թևը:

Ահմադ Լուտֆի ալ-Մայիդը մեծ ազդեցություն է ունեցել Հայքալի քաղաքական հայացքների ձևավորման վրա: Հայքալը շատ հաճախ էր այցելում Ալ-Մայիդի կողմից հրատարակվող “Al-Ḡarīda” թերթի խմբագրություն, որի արդյունքում էլ սկսվում է Հայքալի մասնակցությունն այդ պարբերականի հրատարակմանը¹: Ահմադ Լուտֆի ալ-Մայիդի խորհրդով Հայքալը ուսումնասիրում է արաբական և եվրոպական գրա-

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 235:

կանությունը: Կահիրեի իրավաբանական դպրոցն ավարտելուց հետո 1909 թ. ուսումը շարունակելու նպատակով նա մեկնում է Փարիզ: Այստեղ ծանոթանում ու տարվում է ֆրանսիացի փիլիսոփաների, հատկապես Ռուսոյի գաղափարներով, որոնք զգալի ազդեցություն են ունենում երիտասարդ գրողի հասարակական-քաղաքական հայացքների ձևավորման վրա: 1912 թ. Հայքալը վերադառնում է Եգիպտոս և որոշ ժամանակ Ալ-Մանսուրա քաղաքում զբաղվում իրավաբանական գործունեությամբ¹: Նա հաճախ էր մեկնում Կահիրե և հանդիպում ժամանակի գրական գործիչների հետ՝ շարունակելով հոդվածներ գրել “Al-ğarīda” թերթի համար: Եգիպտոսում անգլիական գերիշխանությունը վերջնական հաստատումից հետո գրաքննությունը երկրում էլ ավելի է ուժգնանում, և թերթը փակվում է: Հայքալն իր համախոհների հետ հրատարակում է “Al-Sufūr” ամսագիրը: Շուտով Հայքալը հրավեր է ստանում՝ քաղաքական տնտեսագիտություն դասավանդելու Կահիրեի համալսարանում: Համալսարանի հիմնադիրներից էր նրա ուսուցիչ Ահմադ Լուտֆի ալ-Սայիդը: 1922 թ. Հայքալը թողնում է իրավաբանական գործունեությունը Մանսուրայում և սկսում է զբաղվել լրագրությամբ: Նա դառնում է “Al-sīāsa” («Քաղաքականություն») թերթի գլխավոր խմբագիրը, որը նոր ձևավորված «Սոմա» լիբերալ կուսակցության պարբերականն էր: Որքան էլ Հայքալը սիրում էր իրավաբանի մասնագիտությունը, հրապուրված էր դասախոսի աշխատանքով, այնուամենայնիվ նրա հետաքրքրությունների հիմնական շրջանակն ընդգրկում էր քաղաքականության ու գրականության հետ

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 235:

կապված խնդիրները: Ունենալով լիբերալ քաղաքական հայացքներ՝ Հայքալը 1922 թ. նշանակալի դեր ունեցավ լիբերալ սահմանադրական կուսակցության գործունեության մեջ, որի հիմնական նպատակը սահմանադրական բարեփոխումների անցկացումն էր՝ հակառակ «Վաֆդ» ազգայնական կուսակցության, որի գործունեությունն ուղղված էր ազգային-ազատագրական շարժման ուժեղացմանը:

1926 թ. Հայքալը հիմնեց “ Al-sīāsa al-usbū‘īa” շաբաթաթերթը, որը նշանակալի դեր ունեցավ եգիպտոսի մշակութային կյանքում: Իր քաղաքական մոտեցումներում Հայքալն աստիճանաբար դարձավ ռադիկալ ազգայնական՝ հրաժարվելով արևմտյան քաղաքական մտքի ազդեցությամբ ձևավորված լիբերալ հայացքներից ու առաջնային կարևորություն տալով ազգային-մշակութային ժառանգությանը: Նրա կարծիքով միայն իսլամական մշակութային ժառանգության արժևորումը կարող էր նոր ու ազատ կյանքի ճանապարհ հարթել եգիպտացի ժողովրդի համար: 1938 թ. հունվարին վաֆդականների կաբինետը լուծարվեց, Մուհամմադ Մահմուդ փաշայի կողմից ձևավորվեց նոր նախարարական կաբինետ, և Հայքալը նշանակվեց կրթության նախարար:

Հայքալի գրական գործունեության գլուխգործոցը “Zaīnab” («Զեյնաբ») վեպն է: Վեպը գրվել է Փարիզում սովորելու տարիներին և հրատարակվել Եգիպտոս վերադառնալուց հետո՝ 1913 թ.: Հայրենիքից հեռու գտնվելու փաստն ազդեցություն է ունեցել վեպի գեղարվեստական ոճի վրա: Վեպում հայրենիքի նկատմամբ կարոտն ավելի պատկերավոր է ներկայացված, քան այն հասարակական խնդիրները և սոցիալական հարաբերությունների քննադատությունը, որը փորձել է հեղինակը գեղարվեստորեն շարադրել վեպում: Վեպի առաջին հրատա-

րակությունը լույս է տեսել “Misrī fallāh” («Եգիպտացի գյուղացի») կեղծանունով: Սա պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Ընտրելով նման կեղծանուն՝ Հայքալը փորձել է կարևորել հասարակ ժողովրդի դերը Եգիպտոսի կյանքում և ձևավորել հարգանք նրանց նկատմամբ: Մեկ այլ հիմնավորմամբ Հայքալը վախենում էր, որ իր գրական գործունեությունը կարող է ստվեր նետել իր իրավաբանական գործունեության վրա: Մի շարք գրականագետների կարծիքով Հայքալը չէր ցանկանում, որ իրեն նույնացնեն գլխավոր հերոս Համիդի սենտիմենտալ կերպարի հետ, քանզի վեպն իրականում ներառում էր ինքնակենսագրական տարրեր:

Վեպի գործողությունները ծավալվում են երկու գլխավոր հերոսների՝ Ջեյնաբի ու Համիդի շուրջ: Ջեյնաբն աղքատ գյուղացու աղջիկ է, որը սիրում է գյուղացի աղքատ երիտասարդի, սակայն հայրը ստիպում է նրան ամուսնանալ հարուստ կալվածատիրոջ որդու հետ: Աղջիկը հնազանդվում է հոր կամքին, իսկ հետո մահանում է թոքախտից: Զուգահեռ նաև ներկայացվում է Համիդի պատմությունը. նա հարուստ կալվածատիրոջ տղա է, որն ապրում է Կահիրեում և մերթընդմերթ այցելում է գյուղ: Համիդը սիրում է իր մորաքրոջ աղջկան՝ Ազիզային, որը նույնպես ստիպված պետք է ամուսնանա ուրիշի հետ: Վեպի զարգացման ընթացքում, սակայն, հերոսների՝ Ջեյնաբի ու Համիդի պատահական հանդիպումը ձևավորում է սյուժետային մեկ այլ գիծ՝ ներկայացված հերոսների սիրային պատմությամբ: Այսուամենայնիվ, Համիդը գիտակցում է, որ չի կարող ամուսնանալ իրենից սոցիալապես ցածր խավի պատկանող աղջկա հետ և վերադառնում է Կահիրե: Չնայած Հայքալի՝ վեպը գրելու նախնական ու հիմնական նպատակը եղել է եգիպտական գյուղի և գյուղացու կյանքն ու խնդիրները ներ-

կայացնելը, այնուամենայնիվ վեպն ավելի շատ անդրադառնում է կնոջ ու տղամարդու փոխհարաբերությունների խնդրին՝ շեշտելով կնոջ՝ տղամարդու կամքից կախյալ կարգավիճակը:

Գեղարվեստական մեթոդի ու կառուցվածքի առումով Հայքալի վեպը մեծ առաջխաղացում էր արաբական վեպի ձևավորման ճանապարհին: Հեղինակի կողմից արված նորարարություններից է խոսակցական բառաշերտի գործածումը, որը հիմնականում հանդիպում ենք գյուղացիների հաղորդակցման միջավայրում: Վեպի արժանիքներից է նաև շարադրանքի պարզությունը՝ ի հակադրություն այդ ժամանակ արաբական արձակին հատուկ բարդ ոճի: Այստեղ առաջին անգամ արաբական գրականության մեջ ներկայացվում է եգիպտական գյուղի կյանքը: Վեպն առաջին ստեղծագործություններից է, որտեղ հերոսների մեծ մասը գյուղացիներ են: Գլխավոր հերոսների սիրո պատմությունների միջոցով հեղինակը փորձել է վեր հանել ավանդական հասարակության կարծրատիպերը, ինչպես նաև դասակարգային խնդիրները, որոնք շարունակում էին խոչընդոտ հանդիսանալ անհատների ինքնադրսևորման ու հասարակության զարգացման ճանապարհին¹: Մահմուդ Թեյմուրի կարծիքով «Զեյնար» վեպը հանդես եկավ որպես *qibla*² արձակ ժանրում ստեղծագործող գրողների համար³: Այն նաև շրջադարձային նշանակություն ունեցավ արաբական գրականության համար: Հայքալի ստեղծագործությունը պայմանավորեց ռեալիզմի սկիզբն արաբական գրականու-

¹ Muḥammad Ḥusāin Haīkal, Zaīnab, <https://foulabook.com/ar/book/pdf>.

² Մեքքա քաղաքում գտնվող Քաաբայի ուղղությունը, դեպի ուր դեմքով շրջվում են մուսուլմանները ամենօրյա ծիսական աղոթք կատարելիս:

³ J. Brugman, նշվ. աշխ., էջ 240:

թյան մեջ: «Զեյնար» վեպից հետո Հայքալը գրել է մի քանի կարճ պատմվածքներ, իսլամական ժառանգությանն անդրադարձող ստեղծագործություններ, որոնցից ամենահայտնին 1935 թ. գրված «Մուհամմադի կյանքը» ստեղծագործությունն է: Հայքալն իր գրական գործունեությունը շարունակել է գրաքննադատության ոլորտում՝ հանդիսանալով իր ժամանակի ամենահայտնի գրաքննադատներից:

Թաուֆիկ ալ-Հաքիմի գրական գործունեությունը

Վեպի զարգացման, հատկապես արաբական գրականության ժանրային հարստացման գործում իր անփոխարինելի դերն է ունեցել Թաուֆիկ ալ-Հաքիմը: Թաուֆիկ ալ-Հաքիմը եգիպտական գրականության մեծագույն արաբ գրողներից է, գրականագետ, արձակագիր, դրամատուրգ, հրապարակախոս և հասարակական-քաղաքական գործիչ:

Թաուֆիկ ալ-Հաքիմը ծնվել է 1898 թ. Ալեքսանդրիայում: Նրա հայրը՝ Իսմայիլ ալ-Հաքիմը, գյուղական քննիչ էր: Նա ծնվել էր Ալեքսանդրիայից ոչ հեռու գտնվող Բուհեյրա նահանգի Դալինգոտ գյուղում: Մայրը՝ Ասմա Ալ-Բուսթանին, զինվորականի ընտանիքից էր: Թաուֆիկ ալ-Հաքիմի մանկությունն անցել է հոր հայրենիքում՝ Դալինգոտ գյուղում: Թաուֆիկի ծնողները ընկերական հարաբերություններ ունեին թափառական երաժիշտների հետ, որոնք նվագում էին հարսանիքների և այլ գյուղական հանդիսությունների ժամանակ: Ամռանը երաժիշտները հաճախ հանգրվանում էին նրանց տանը: Թաուֆիկը կապվում է դերասանների հետ, տարվում նրանց երգերով:

Տարրական դպրոցն ավարտելուց հետո Թաուֆիկ ալ-Հաքիմն ուղևորվում է Ալեքսանդրիա՝ ծնողների մոտ: Ի հակադրություն հոր ցանկությանը, որը որդու ապագան տեսնում էր իրավաբանի իր մասնագիտության շարունակության մեջ, Թաուֆիկն Ալեքսանդրիայում, ազատվելով հոր խիստ հսկողությունից, ամբողջ ժամանակը նվիրում էր գեղարվեստական գրականություն կարդալուն: 1915 թվականին ծնողները նրան ուղարկում են Կահիրե՝ Մուհամմեդ Ալիի անվան միջնակարգ դպրոցում սովորելու: Կահիրեում Թաուֆիկն ապրում է իր հորեղբոր մոտ, որը միջնակարգ դպրոցի ուսուցիչ էր: Այս շրջանի իր կյանքը՝ ֆարեկամների հասարակ ընտանիքում ապրելը, առաջին ընկերությունը, առաջին սերը, մասնակցությունը 1919 թ. հակաանգլիական ապստամբությանը, հետագայում գրողը մեծ ջերմությամբ արտացոլել է իր ինքնակենսագրական “ ‘Aūdaġ al-rūh ” («Հոգու վերադարձը») վեպում:

1919 թ. ապստամբության ժամանակ, երբ ժողովրդական լայն զանգվածները ոտքի կանգնեցին իրենց հայրենիքն անգլիական ազդեցությունից պաշտպանելու համար, Թաուֆիկ ալ-Հաքիմը համախոհների հետ միասին մասնակցում էր ցույցերին, գրում հայրենասիրական հիմներ, տարածում թռուցիկներ:

Արվեստի նկատմամբ սերը ուժեղանում է դպրոցական տարիներին: Համադասարանցիների հետ միասին նա ներկա է լինում ժողովրդական թատրոնի ներկայացումներին և ծանոթանում թափառական դերասանների հետ: Բոհեմական կյանքը, լամպերի լույսը, հագուստը և դեկորացիաների աշխարհը գրավում են երիտասարդ գրողի երևակայությունը:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո հոր հորդորով Թաուֆիկ ալ-Հաքիմն ընդունվում է Կահիրեի համալսարանի

իրավաբանական ֆակուլտետը: 1924 թ. ավարտում է համալսարանը՝ ստանալով իրավաբանի դիպլոմ: Սակայն Թաուֆիկ ալ-Հաքիմը խանդավառված չէր իրավաբանությամբ և իր ամբողջ ազատ ժամանակը նվիրում էր գրականության և թատրոնի ուսումնասիրությանը: Մերը թատրոնի նկատմամբ, ընկերությունը դերասանների հետ ընդմիջտ որոշում են գրողի ճակատագիրը:

Գրականագետի կյանքը նրան նյութական ապահովվածություն չէր խոստանում, սակայն Թաուֆիկն ընտրում է հենց այդ ուղին: Գրողը նշում է. «Ընկերներս աղքատ էին. այդ ժամանակ ես ուշադրություն չէի դարձնում, թե ինչպիսի մարդիկ էին նրանք իրականում: Ինձ չէին հուզում նաև իմ հարազատների դիտողություններն իմ նոր ընկերների մասին: Ես մի բան գիտեի. նրանք արվեստի մարդիկ էին: Իսկ իմ վրա այդ ժամանակ ոչինչ ավելի մեծ տպավորություն չէր թողնում, քան արվեստը և այն մարդիկ, որոնք ծառայում էին դրան: Այդ ժամանակ արվեստ բառը ինձ համար նույնն էր, ինչպես թագավորական թագի ոսկու գրնգոցը»¹:

Թաուֆիկ ալ-Հաքիմը սկսել է ստեղծագործել 1918 թվականից: Նրա առաջին պիեսը՝ “Al-daif al-taqil” («Անկոչ հյուրը»), գրված էր անգլիական գաղութարար քաղաքակնության դեմ, որի պատճառով գրաքննադատությունն արգելեց դրա բեմադրությունը: 1924 թ. Թաուֆիկ ալ-Հաքիմը ներկայացրել է “Alī Bābā” («Ալի Բաբա»), “Al-mar’a al-ğadīda” («Նոր կինը») պիեսները, որոնք առաջին անգամ բեմադրվել են Կահիրեի այգիներից մեկում²:

¹ Н. К. Усманов, *Жизнь и творчество Тауфик аль-Хакима*, М., 1963, с. 7.

² Նույն տեղում, էջ 10:

Իրավաբանական դպրոցն ավարտելուց հետո հայրը, դեմ լինելով որդու գրական գործունեությանը, ուղարկեց նրան Փարիզ՝ իրավաբանական կրթությունը շարունակելու: Թաուֆիկ ալ-Հաքիմը Փարիզում այցելում էր թատրոններ, թանգարաններ, ջանասիրաբար աշխատում իր կրթության վրա, ապա՝ շարունակում փորձել իր ուժերը գրականության մեջ: Յուրացնելով ֆրանսերենը՝ իր առաջին վեպը՝ «Հոգու վերադարձը», սկսում է գրել ֆրանսերեն:

Ֆրանսիայում Թաուֆիկ ալ-Հաքիմը, խորացնելով գիտելիքներն արվեստի ոլորտում, համոզվում է իր ընտրության մեջ՝ գրականությունը տեսնելով որպես կենսագործունեության առանցք և վերջնականապես հրաժարվելով իրավաբանության ասպարեզում բազում փորձերից: Թաուֆիկ ալ-Հաքիմին հատկապես զարմացնում էր թատրոնը, արվեստի այն բարձր աշխարհը, որը տիրում էր թատրոնում: Նա ուսումնասիրում է հունական դրամատուրգիան, անտիկ արվեստի մյուս ճյուղերը և հին հունական փիլիսոփայությունը, անդրադառնում Հին Հռոմի և Վերածննդի շրջանի արվեստին: Երիտասարդ գրողը համոզվում է, որ ազգային մշակույթը զարգացնելու համար անհրաժեշտ է ճանաչել և հասկանալ նաև համաշխարհային մշակույթը:

Թաուֆիկ ալ-Հաքիմը սկսել է գրել Եվրոպա մեկնելուց հետո: Ինչպես ինքն է գրում. «Ես սկսել եմ գրել Եվրոպա մեկնելուց հետո, երբ հնարավորություն ունեցա խմելու իրական մշակույթի աղբյուրներից»¹: Իր կյանքի այս շրջանը նկարագրված է “Zahra al-‘umr” («Կյանքի ծաղկունք») և “‘Uşfur min al-šarq” («Թռչունն արևելքից») ստեղծագործություններում:

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 279:

1927 թ. Թաուֆիկ ալ-Հաքիմը վերադարձել Կահիրե առանց մասնագիտական կոչման: Նա աշխատանքի է անցել Ալեքսանդրիայի դատարանում և տեղափոխվել այնտեղ: Այստեղ նա մնացել է մինչև 1929 թվականը՝ շարունակելով զբաղվել գրական գործունեությամբ, և նա գրել է իր հայտնի “Ahl al-kahf” («Քարանձավի մարդիկ») պիեսը, որը լույս է տեսել 1933 թ. և մեծ ճանաչում բերել հեղինակին: 1934 թ. նա նշանակվել է կրթության նախարարության հետաքննչական բաժնի տնօրեն: 1939 թ. աշխատել է սոցիալական ապահովության նախարարությունում որպես տեղեկատվական ծառայության բաժնի տնօրեն: 1945 թ. դարձել է Արաբերենի ակադեմիայի անդամ, 1951 թ.՝ Ազգային գրադարանի տնօրեն: Որոշ ժամանակ նա նաև եղել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներկայացուցիչը Փարիզում: Թաուֆիկ ալ-Հաքիմը երբեք որևէ քաղաքական կուսակցության անդամ չի եղել, սակայն չի կարելի ասել, որ քաղաքական և հասարակական խնդիրները նրան չեն հետաքրքրել: Նա գրել է մի շարք ստեղծագործություններ, որոնցում տեղ են գտել հեղինակի մտորումներն ու մոտեցումները երկրի քաղաքականության շուրջ: Դրանցից առավել հայտնի են “Sağara al-hukm” («Կառավարման ծառը»), որտեղ հեղինակը քննադատում է Եգիպտոսի քաղաքական համակարգը, ինչպես նաև “‘Aūdāt al-wa‘ī” («Գիտակցության վերադարձը») գործերը¹:

Թաուֆիկ ալ-Հաքիմն իր կյանքն ամբողջովին նվիրեց գրական-գեղարվեստական գործունեությանը: 1920-1970 թվականներն ընկած ժամանակահատվածում նա գրել է ութսունից ավել ստեղծագործություն, այդ թվում՝ վեպեր, կարճ պատմվածքներ, էսսեներ: Չնայած Ալ-Հաքիմի ներդրումն արաբա-

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 280:

կան գրականության մեջ նշանավորվում է դրամատուրգիայում իր ունեցած ազդեցիկ դերով, այնուամենայնիվ նա արաբ առաջին հեղինակներից է, որը զարգացրեց վեպի ժանրը՝ հասցնելով այն համաշխարհային մակարդակի: Թաուֆիկ ալ-Հաքիմը ինտելեկտուլ թատրոնի (*al-masrah al-dihni*) հիմնադիրն է Եգիպտոսում և, ընդհանրապես, արաբական դրամատուրգիայում: Այդ ժանրում գրված նրա հայտնի ստեղծագործություններից են “Ahl al-kahf” («Քարանձավի մարդիկ»), “Sahrizād” («Շահրիզադե»), “Bġmālīūn” («Պիզմալիոն») պիեսները:

Թաուֆիկ ալ-Հաքիմի առաջին վեպը «Հոգու վերադարձը» ստեղծագործությունն է: Հեղինակն այն սկսել է գրել Փարիզում և ավարտել է 1927 թ.: Սակայն այն լույս է տեսել միայն 1933 թ.: Վեպի ձեռագիր տարբերակը, որը երկար ժամանակ դրված էր հեղինակի գրասեղանին, նկատել է նրա գործընկերներից մեկը և հորդորել նրան տպագրել այն: Նա որոշել է հրատարակել այն՝ համարելով, որ «երկիրն ուներ գրական նոր ձևի կարիք, որը կկարողանար ներկայացնել նոր թեմաներ, որոնք անհրաժեշտ էին զարգացման այդ փուլում»¹: Վեպն ինչ-որ չափով ինքնակենսագրական է: Ներկայացված ժամանակաշրջանը համընկնում է Թաուֆիկ ալ-Հաքիմի երիտասարդ տարիներին, երբ նա ապրում էր Կահիրեում իր հորեղբոր ընտանիքի հետ: Իրադարձությունները ծավալվում են 1919 թ., որը Եգիպտոսի կյանքում նշանավորվում է եգիպտացի ժողովրդի անգլիացիների դեմ պայքարի պատմական իրողությամբ:

«Հոգու վերադարձը» ստեղծագործությունը եգիպտական ազգային միասնության և վերածննդի գաղափարի ռոմանտիկ

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 281:

դրսևորումն է, որտեղ նաև իր մարմնավորումն է ստացել հեղինակի կողմից որդեգրված թամսիբի՝ եգիպտական ազգայնականության գաղափարախոսությունը: Անգլիացիների դեմ պայքարը հեղինակը համարում էր հին եգիպտացիների «հոգու վերադարձը», որը պետք է համախմբեր եգիպտացի ժողովրդին անկախության համար պայքարում: Եգիպտացի ժողովրդի միասնական և հավաքական կերպարը հեղինակը փորձել է մարմնավորել գլխավոր հերոսի՝ երիտասարդ Մուհսինի, նրա հորեղբայրների և նրանց ընտանիքի անաղամների հետ մեկ տանը համատեղ կյանքի, նրանց հետ միասին հեղափոխությանը մասնակցելու, հիվանդանոցում նույն սենյակում կողք կողքի հայտնվելու տեսարաններում: Սյուժեի կառուցման, դեպքերի զարգացման, կերպարների ներկայացման, ինչպես նաև գեղարվեստական պատկերման մեթոդի տեսանկյունից վեպը մեկ քայլ առաջ էր Հայքալի «Զեյնաբ»-ից հետո: Վեպն իր թեմատիկ ընդգրկվածությամբ ընթերցողին հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու Եգիպտոսի ժամանակակից կյանքի համայնապատկերի, գյուղի և քաղաքի միջև եղած հակասությունների մասին¹:

Թաուֆիկ ալ-Հաքիմի լավագույն վեպերի շարքին է դասվում օրագրի ձևով գրված “*Īaūmīāt nā‘ib fi arīāf*” («Գուղական քննիչի օրագիրը») ստեղծագործությունը: Այս վեպում նա նկարագրում է գյուղում դատավորի տեղակալի պաշտոնում աշխատելու ընթացքում իր կյանքի պատմությունը: Գլխավոր հերոսը եգիպտական գյուղերից մեկում դատավորի տեղակալ է, որին հանձնարարված է բացահայտել գյուղերից մեկում տեղի ունեցած մի խորհրդավոր սպանություն: Սպանության բացա-

¹ Taūfiq Al-Ḥakīm, ‘Aūdāt al-rūh, [https://foulabook.com/ar/book -pdf](https://foulabook.com/ar/book-pdf).

հայտման թեմայի առկայությունը հնարավորություն է տալիս վեպը դիտարկելու դետեկտիվ ժանրի տեսանկյունից: Այստեղ նույնպես հեղինակն անդրադառնում է գյուղական կյանքի, մտածելակերպի և քաղաքի միջև առկա ծայրահեղ տարբերություններին: Ինչպես «Հոգու վերադարձը» ստեղծագործության մեջ, այնպես էլ այստեղ երկխոսությունները ներկայացված են խոսակցական արաբերենով:

Թաուֆիկ ալ-Հաքիմի ինքնակենսագրական վեպերի շարքին է պատկանում «Թռչունն արևելքից» ստեղծագործությունը, որը գրվել է 1938 թ.: Վեպում իրադարձությունները զարգանում են միմյանց հետ միահյուսվող սյուժետային երկու գծով: Առաջինը գլխավոր հերոսի՝ երիտասարդ ուսանող Մուհսինի սիրո պատմությունն է, մյուսը՝ գլխավոր հերոսի կողմից Արևելքի ու Արևմուտքի աշխարհընկալման միջև եղած տարբերությունների աստիճանաբար գիտակցումը: Այստեղ ներկայացվում են այն մարտահրավերները, որոնց բախվում է արևելյան արժեքներով դաստիարակված երիտասարդը եվրոպական հասարակության ներսում առակա փոխհարաբերությունների համատեքստում¹:

Բացի վերը նշված վեպերից՝ Թաուֆիկ ալ-Հաքիմը գրել է երկու վիպակ՝ “Rāqīṣa al-m‘abad” («Տաճարի պարուհին») և “Al-ribāṭ al-muqaddas” («Մուրբ կապ»): Թաուֆիկ ալ-Հաքիմին իրավամբ կարելի է համարել եգիպտական ռեալիզմի ականավոր ներկայացուցիչներից: Նրա գրական տաղանդը շատ բարձր է գնահատվել գրականագետների, գրողների հետագա սերնդի կողմից:

¹ Taūfiq Al-Ḥakīm, ‘Uṣṣūr min al- ṣarq, <https://foulabook.com/ar/book/pdf>.

Տահա Հուսեյն՝ արաբական նոր գրականության հիմնասյուն

Արաբական նոր գրականության մեջ գրաքննադատության, ինչպես նաև պատմողական ժանրի զարգացման գործում իր նշանակալի և ազդեցիկ ներդրումն ունի Տահա Հուսեյնը (1889-1973 թթ.): Նրան շնորհել են «Արաբական գրականության հիմնասյուն» (“Amīd al-ādb al-‘arabī”) տիտղոսը: Նա ծնվել է Վերին Եգիպտոսում: Երեք տարեկանում կորցրել է տեսողությունը, որը, սակայն, արգելք չի եղել նրա համար հետագա իր մասնագիտական դրսևորումներում: Տարրական կրթությունը ստացել է գյուղի դպրոցում՝ *քուլթաքում*: Այնուհետև՝ տասներեք տարեկանում, ծնողներն ուղարկել են նրան Կահիրե՝ Ալ-Ազհարի համալսարանում սովորելու: 1908 թ., երբ հիմնադրվել է Եգիպտական համալսարանը, Տահա Հուսեյնը դարձել է այնտեղի առաջին շրջանավարտներից: Ուսանելու տարիներին նրա վրա մեծ ազդեցություն են թողել եվրոպացի հայտնի արաբագետներ Նալինոյի և Լիթթմանի արաբական գրականության մասին դասախոսությունները:

1914 թ. Տահա Հուսեյնը պաշտպանել է Աբու Ալա ալ-Մաարիի ստեղծագործությանը նվիրված դոկտորական ատենախոսությունը: Հետագայում նա իր ուսումը շարունակել է Մոնպելեի, ապա՝ Սորբոնի համալսարաններում: 1918 թ. նա գրել է իր երկրորդ դոկտորական աշխատանքը՝ «Իբն Խալդունի հասարակական փիլիսոփայությունը» թեմայով: Տահա Հուսեյնը նաև մասնագիտանում է հնագույն պատմության, լատիներենի և հունարենի մեջ:

1919 թ., վերադառնալով Կահիրե՝ Տահա Հուսեյնն ակտիվորեն ներգրավվում է Եգիպտոսի գրական ու ակադեմիական կյանքում: Նա դասավանդում է Կահիրեի համալսարանում

սկզբում պատմություն, այնուհետև՝ գրականություն: Տահա Հուսեյնի առաջին գրաքննադատական ստեղծագործությունը՝ “Fī al-šī‘r al- ġāhli ” («Նախախալական պոեզիայի մասին»), գրվել է 1926 թ.: Այստեղ կիրառելով ժամանակակից քննադատական մեթոդը՝ հեղինակը կասկածի տակ է դնում նախախալական պոեզիայի արժանահավատ լինելը: Նման վիճահարույց թեզը մեծ հակազդեցություն է առաջացնում ինչպես գրական, այնպես էլ կրոնական պահպանողականների շրջանում: Նրանք պահանջում են Տահա Հուսեյնի ազատույնը համալսարանի դասախոսի պաշտոնից: Հաջորդ տարի որոշ փոփոխություններով ստեղծագործությունը վերատպվում է “Fī al-adab al-‘arabi” («Արաբական գրականության մասին») վերնագրով¹:

1930 թ. Տահա Հուսեյնը նշանակվեց Կահիրեի համալսարանի գրականության ֆակուլտետի դեկան, սակայն շուտով իր վաֆդական հայացքների համար ազատվեց Սիդիկի փաշայի կառավարության կողմից: 1936 թ. նա վերականգնվեց այդ պաշտոնում՝ արդեն վաֆդական կառավարության աջակցությամբ: 1938 թ. լույս է տեսել Տահա Հուսեյնի մյուս վիճահարույց ստեղծագործությունը Եգիպտոսի մշակութային ապագայի մասին՝ “Mustaqbal al-ṭaqāfa fi Miṣr” («Մշակույթի ապագան Եգիպտոսում»): Այն հեղինակի հասարակագիտական լավագույն ստեղծագործություններից է: Այստեղ հեղինակն անդրադարձել է այն սկզբունքներին, որոնք պետք է որդեգրեր Եգիպտոսն իր ապագա հասարակական, մշակութային և քաղաքական կյանքում: Այդ սկզբունքները հենվում էին Իբն Խալդունի հասարակական ու պատմական փիլիսոփայության, ինչպես նաև ֆրանսիական հասարակագիտական և փի-

¹ A. Hourani, նշվ. աշխ., էջ 326-327:

լիստփայական հայացքների վրա: Այդ սկզբունքների կիրառումը միայն հնարավորություն կտար Եգիպտոսին ժամանակակից աշխարհի մաս կազմելու: Ժամանակակից աշխարհը Տահա Հուսեյնի համար Եվրոպան էր իր մշակույթով և սոցիալ-քաղաքական համակարգով¹: Տահա Հուսեյնը գրել է բազմաթիվ էսսեներ և գրականագիտական վերլուծություններ, որոնք տպագրվել են եգիպտական տարբեր թերթերում ու ամսագրերում, մասնավորապես՝ “Al-ğarīda”, “Al-baīān”, “Al-sīāsa”, “Al-ğihād” պարբերականներում:

Տահա Հուսեյնի գեղարվեստական առաջին ստեղծագործություններից է “Al-āīām ” («Օրեր») ինքնակենսագրական վեպը: Այն բաղկացած է երեք մասից: Առաջին մասում նկարագրվում են հեղինակի մանկությունը, դժվարությունները, եգիպտական գյուղում տիրող խավարամտությունը, քութաբի կրթության մանրամասները, ուսուցիչների անկիրթ պահվածքը: Երկրորդ մասում հեղինակը ներկայացնում է Ալ-Ազհարում ուսանելու տարիները, կրթական համակարգի նկատմամբ իր քննադատական վերաբերմունքը, երրորդ մասում՝ Ֆրանսիա մեկնելը, դոկտորական թեզի պաշտպանությունը և վերադարձը Կահիրե: Վեպում մեծ տեղ են զբաղեցնում կենցաղային նկարագրությունները, որոնց միջոցով հեղինակը փորձում է ցույց տալ սոցիալական կյանքում առկա հակասությունները: Կրոնական դպրոցի, ինչպես նաև Ալ-Ազհարի իր ուսուցիչներին հեղինակը ներկայացնում է քննադատական լույսի ներքո՝ նշելով նրանց սոցիալությունն ու կոպտությունը: Չնայած դանդաղ պատմողական ոճին, կրկնություններին և

¹ A. Hourani, նշվ. աշխ., էջ 329:

հոմանիշներով հազեցվածությանը՝ վեպը, այնուամենայնիվ, եգիպտական նոր գրականության լավագույն նմուշներից է¹:

Տահա Հուսեյնի լավագույն գործերից է նաև “Al-adīb” («Գրականագետը») վեպը, որը գրված է նամակների ձևով, գլխավոր հերոսը երիտասարդ ուսանող է Փարիզում: Նա կրթաթոշակ ստանալու համար ստիպված է լինում բաժանվել իր կնոջից: Մակայն հերոսը կրթության մեջ հաջողություններ չի ունենում, փոխարենը տրվում է կյանքի հաճույքներին՝ ներգրավվելով տարբեր սիրային հարաբերություններում: Վեպի հիմնական թեման, ինչպես Թաուֆիկ ալ-Հաքիմի «Թռչունն արևելքից» վեպում, արևելյան և արևմտյան հասարակությունների տարբերությունն է, որը դրսևորվում է հերոսների տարբեր իրավիճակներում ու հարաբերություններում հեղինակի կողմից ներկայացնելու միջոցով:

“Du’ā’ Al-karwān” («Կաթավի կանչը») վեպում հեղինակն անդրադառնում է ավանդական հասարակությունում կնոջ անպաշտպան լինելու խնդրին: “Šağara al-bū’s” («Դժբախտության ծառը») վեպը գեղարվեստական առումով Տահա Հուսեյնի լավագույն ստեղծագործություններից է: Այն եգիպտական գյուղերից մեկում ապրող երեք սերունդների մասին պատմություն է, որտեղ հիմնականում քննադատության են ենթարկվում հասարակության մեջ առկա նախապաշարմունքները, ավանդական կարծրատիպերը և դրանց փոխակերպումը սերունդների կյանքի պատմությունների համատեքստում²:

Չնայած 20-րդ դարի առաջին տասնամյակներում եգիպտական գրականությունը շարունակում էր առաջատար դիրք

¹ Ṭaha Ḥusaīn, Al-Āīām, <https://foulabook.com/ar/book/pdf>.

² Ṭaha Ḥusaīn, Šajara al-bū’s, <https://foulabook.com/ar/book/pdf>.

գրավել արաբական գեղարվեստական նոր ժանրերի ձևավորման գործընթացում, այնուամենայնիվ, սկսած երեսունականների վերջից, արաբական աշխարհի մնացած հատվածներում, հատկապես Լիբանանում, Սիրիայում և Իրաքում, նույնպես նկատվում է հետաքրքրության զգալի աճ վեպի ժանրի նկատմամբ: Մեծ թվով մտավորականների և գրողների արտագաղթը դեպի Եգիպտոս և Ամերիկա լայն ազդեցություն ունեցան նշված երկրներում գրական և մշակութային կյանքի անկման վրա: Սակայն 30-ական թթ. վերջում Բեյրութում “Al-‘usba al-‘asara” («Տասերի խումբ») գրական միության ստեղծումը նոր ազդակ հանդիսացավ այնտեղի մշակութային կյանքի վերածննդի համար: Այս միության նպատակներից էր ազատել ժամանակակից գրականությունն ավանդականության կապանքներից և ձևավորել նոր ժամանակակից կյանքն արտացոլող գրականություն: «Տասերի խումբ» գրական միության ներկայացուցիչներից էր լիբանանցի գրող և դիվանագետ **Թաուֆիկ Յուսուֆ Ավադը (1911-1989 թթ.):** 1939 թ., արաբական ազգայնական գաղափարներով ոգեշնչված՝ Ավադը գրել է իր “Al-Raghīf” («Մի կտոր հաց») վեպը, որը մեծ հռչակ է բերել գրողին¹: Վեպում նկարագրվում է Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում 1916 թ. անկախության համար արաբների պայքարը Օսմանյան կայսրության դեմ: Դեպքերը տեղի են ունենում Լիբանանի լեռնային շրջանում, որտեղ Օսմանյան իշխանությունների կողմից նախաձեռնած շրջափակման արդյունքում ժողովուրդը տառապում էր սովից: Մի կտոր հաց հայթայթելու համար վեպի հերոսները հայտնվում են տարբեր ծայրահեղ իրավիճակներում: Վեպը մարմնավորում է

¹ P. Staekey., նշվ. աշխ., էջ 120:

հեղինակի ազգայնական տրամադրությունները և հանուն անկախության և ազատության շարունակական պայքարի գաղափարը¹: Ավադի մյուս՝ “Ṭawāḥīn Baīrūt” («Բեյրութի ջրադացները») վեպը նկարագրում է 1967 թ. արաբաիսրայելական պատերազմի և 1975 թ. Լիբանանի քաղաքացիական պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում Բեյրութի հասարակության մասնատվածությունը²: Այստեղ հեղինակն նկարագրում է վեցօրյա պատերազմի հետևանքների անդրադարձը երիտասարդների կյանքի վրա: Լիբանանի կրոնական համայնքների անհուսալի վիճակը, համալսարանական մթնոլորտը, պահպանողական խմբավորումների երիտասարդ ներկայացուցիչների կյանքը միահյուսվում են վեպի գլխավոր հերոսուհու ողբերգական պատմության մեջ³:

Կարճ պատմվածքի ձևավորումն ու զարգացումը

19-20-րդ դարերում արաբական գրականության գեղարվեստական արձակի նոր ժանրերից է կարճ պատմվածքը: Ինչպես վեպը, այնպես էլ կարճ պատմվածքը՝ *qīṣa qaṣīra*, ձևավորվել և զարգացել է 19-րդ դարում և 20 դարասկզբին արաբական աշխարհում հատկապես Եգիպտոսում ու Սիրիայում տեղի ունեցող մշակութային և սոցիալ-քաղաքական ակտիվ գործընթացների արդյունքում՝ մեծապես կրելով եվրոպական գրականության ազդեցությունը: Գրական նոր ժանրի ձևավորումը եր-

¹ Taūfiq Īwusuf ‘Awād, Al-Raġīf, <https://foulabook.com/ar/book-pdf>.

² R. Allen, նշվ. աշխ., էջ 65:

³ Taūfiq Īwusuf ‘Awād, Ṭawāḥīn Baīrūt, <https://foulabook.com/ar/book-pdf>.

կարատն և բարդ գործընթաց է, որը տեղի է ունենում հասարակության մասին մարդկանց պատկերացումների փոփոխման և հասարակական նոր դիսկուրսների ձևավորման ազդեցությամբ: Առաջին համաշխարհային պատերազմից հետո արաբական երկրներին խոստացված անկախությունը չտրվեց: Փոխարենը Օսմանյան կայսրության փլուզումից հետո արաբական երկրներում հաստատվեց եվրոպական պետությունների, մասնավորապես Անգլիայի և Ֆրանսիայի գերիշխանությունը: Այն հանգեցրեց ազգային պայքարի ակտիվացմանը, սոցիալ-քաղաքական մտքի բազմազանությանը և քաղաքական մի շարք կուսակցությունների ձևավորմանը: Անգլիական և ֆրանսիական պրոտեկտորատի ներքո ձևավորված արաբական պետությունների համար առաջնային դարձավ ազգային գրականության ձևավորումը, որը հնարավորինս իրատեսորեն կանդրադառնար հասարակական նոր հարաբերություններին և դրանցով պայմանավորված՝ հասարակական տարբեր շերտերի խնդիրներին: Այս համատեքստում կարճ պատմվածքը դարձավ 20-րդ դարի գեղարվեստական գրականության ամենատարածված և ամենամեծ լսարանը ունեցող գրական ժանրերից:

Արաբական գրականության մեջ կարճ պատմվածքի ձևավորման գործում իր մեծ ներդրումն ունի եգիպտացի գրող **Մուհամմադ Թեյմուրը** (1892-1921 թթ.): Նրա կարծիքով գրական անկախությունը պայմանավորված էր քաղաքական անկախությամբ, և այդ իսկ պատճառով ազգային գրականության ստեղծումը նա դիտարկում էր հայրենասիրության կարևոր դրսևորումներից, որն իր ազդեցությունն ուներ ազգային ինքնատիպության, ձգտումների և նպատակների ձևավորման վրա: Նրա կարճ պատմվածքներն անդրադառնում էին

երևութների հակասական էության բացահայտմանը և նոր ձևավորվող ժանրի համար հստակ նպատակների ձևակերպմանը՝ պայմանավորված ազգային ու հոգևոր գործառույթով:

Մուհամմադ Թեյմուրը (1892-1921 թթ.) ծնվել է Կահիրեում՝ ուսյալ ընտանիքում: Հայրը՝ Ահմադ Թեյմուրը, բանասեր էր և արաբական դասական գրականության մասնագետ: Նրանց տանը հաճախ էին հավաքվում ժամանակի գրական գործիչներն ու մտավորականները, ինչն էլ իր մեծ ազդեցությունն է ունեցել Մուհամմադ Թեյմուրի գրական ճաշակի ձևավորման վրա: Գրական գործիչների շրջանում գնալով աճում էր հետաքրքրությունը համաշխարհային այնպիսի գրողների ստեղծագործությունների հանդեպ, ինչպիսիք էին Մոպսսանը, Չեխովը, Գորկին: Ինչպես հետագայում խոստովանում է Թեյմուրը, նրանք մեծապես ազդել են երիտասարդ արձակագրի ստեղծագործական կայացման ու հասունացման վրա:

Ըստ Մուհամմադ Թեյմուրի՝ «եվրոպական պատմվածքը, ներթափանցելով Արևելք, հագնում է հիջաբ՝ դառնալով արևելյան»: Սակայն իրականում տարիներ էին հարկավոր, որ այն վերածվեր եգիպտականի:

1910 թ. Մուհամմադ Թեյմուրը մեկնել է Բեռլին՝ բժշկություն ուսանելու, սակայն շուտով թողել է այն և ուղևորվել Ֆրանսիա՝ իրավագիտություն սովորելու նպատակով¹: Իրավագիտությունը նույնպես չբավարարեց երիտասարդ մտավորականի անհատական հետաքրքրությունները, և Թեյմուրը նվիրվեց գրականությանն ու թատրոնին: Նա ծանոթացավ Մոպսսանի և Էմիլ Զոլայի ստեղծագործություններին, որոնք մեծ

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 244:

հետք են թողել գրողի ստեղծագործական մեթոդի վրա: Վերադառնալով Կահիրե՝ Թեյմուրը ներգրավվել է մայրաքաղաքի ակտիվ գրական և թատերական կյանքում: Նա իր կարճ պատմվածքները տպագրել է “Al-Sufūr” պարբերականում, որոնք հետագայում՝ նրա մահից հետո, լույս են տեսել “Mā tarāhu ‘uīn” («Այն, ինչ տեսնում են այքերը») ժողովածուում: Նա նաև գրել է պիեսներ, որոնք հետագայում մեծ ազդեցություն են ունեցել եգիպտական դրամատուրգիայի ձևավորման վրա:

Թեյմուրը որոշ ժամանակ զբաղեցրել է արքունի կառավարչի պաշտոնը Եգիպտոսի նորանշանակ սուլթան Հուսեյնի օրոք: Սակայն 1917 թ.՝ սուլթան Հուսեյնի պաշտոնանկ լինելուց հետո, նա նորից վերադարձել է գրական ու թատերական կյանք:

Մուհամմադ Թեյմուրի գրական ժառանգությունը մեծ չէ, սակայն նրան, իրավամբ, կարելի է համարել եգիպտական գրականության մեջ ռեալիզմի և ազգային գրականության՝ “al-adab al-qawmī” հիմնադիրը: Նրա ստեղծագործություններում կարելի է հանդիպել եգիպտացի ժողովրդի կյանքի պատկերավոր ռեալիստական նկարագրությունների: Ի տարբերություն կարճ պատմվածքի հաջորդ սերնդի ներկայացուցիչների՝ Թեյմուրը չի գործածել բարբառ, նրա ստեղծագործությունները գրված են պարզեցված գրական արաբերենով: Չնայած այն բանի, որ Թեյմուրի ստեղծագործություններում կարելի է նկատել ներքին հիշողության զարգացման, կառուցվածքային ներդաշնակության, դրդապատճառներին առնչվող որոշ թերացումներ, այնուամենայնիվ նրան հաջողվել է, կոտրելով արձակի մասին ավանդական համոզմունքները, գտնել համապատասխան և ժամանակակից միջոցներ նոր գաղափարների

և պատկերացումների, փորձի արտահայտման համար՝ բավարարելով ժամանակակից ընթերցողի պահանջները: Նա կարողացավ հիմնադրել օգտագործել նմանություններն ու հակասությունները՝ որպես կառուցվածքային հիմնական միջոց: Ստեղծագործություններին ռեալիզմ հաղորդելու համար Թեյմուրը դիմել է իրականում գոյություն ունեցող և ընթերցողին ծանոթ վայրերի, փողոցների, սրճարանների, հրապարակների նկարագրմանը:

Մուհամմադ Թեյմուրի պատմվածքները, ըստ իրենց գաղափարական և թեմատիկ ուղղվածության, կարելի է բաժանել երկու հիմնական խմբի.

1. փոքր ծավալի պատմվածքներ, որոնցում գրողը ձգտել է ներկայացնել քաղաքական ու սոցիալական խնդիրներ՝ «Գնացքում» (“Fī al-Qitār”), «Ազնվաբարո տուն» (“Baīt al-Karam”), «Գողը և գողը» (“Sāriq wa Sāriq”), «Կաթով սուրճ և հողով սուրճ» (“Laban bi āl-Qahwa wa Laban bi āl-Turāb”), «Աղքատներին անվճար» (“Lilfuqarā’ maḡanān”), «Հարսանիք և հուղարկավորություն» (“Ūrs wā Ma’atim”), «Ռամադանը Մաթաթիա սրճարանում» (“Ramadān fi Qahwa Mātātīā”) և այլն,

2. բարոյաէթիկական թեմաներով պատմվածքներ, որոնք հիմնականում վերաբերում էին ամուսնության և ընտանիքի հարցերին, հասարակության մեջ կնոջ դիրքին: Այդ շարքին են պատկանում «Աստված իմ, ո՞ւմ համար ես ստեղծել այդ երջանկությունը» (“Rabī liman ḡalaqta hadā al-na’im”), «Երեխա էր, դարձավ պատանի» (“Kāna Ṭiflan wa Šāra Šāban”), «Սակայն կինը Եգիպտոսում այդ երջանկության համար չէ» (“Wa lakin al-mar’a Lam Tuḡlaq Lihadā al-Hanā’ fi Miṣr”) պատմվածքները:

Թեյնուրի ստեղծագործությունները, որոնց հերոսները հիմնականում աղքատ և հասարակ խավի ներկայացուցիչներ են, եզիպտական պատմվածքի ժանրում մեծ ճանաչում ունեցան և իրենց ազդեցությունը թողեցին եզիպտական հաջորդ սերնդի արձակագիրների ստեղծագործությունների վրա:

Կարճ պատմվածքի հետագա զարգացման վրա իրենց ստեղծագործություններով նպաստել են **Իսա և Շիհաթա Ուբեյդ էրբայրները**: Նրանք ծնվել են Սիրիայում և բազմաթիվ սիրիացի մտավորականների նման արտագաղթել են Եզիպտոս և շարունակել իրենց գրական գործունեությունն այնտեղ: Նրանք համագործակցել են “Al-Sufūr” գրական ուղղվածությունն ունեցող և այդ ժամանակ ակտիվ գործունեություն ծավալող “Al-Sufūr” ամսագրի հետ: Այս հայտնի պարբերականի էջերում են տպագրվել նրանց առաջին ժողովածուները: Բավական կարճ ստեղծագործական կյանքի ընթացքում Իսան գրել է պատմվածքներ, պիեսներ, ինչպես նաև գրաքննադատական հոդվածներ: Իսայի մահից հետո Շիհաթան հեռացել է գրական կյանքից: Իսան հրատարակել է պատմվածքների երկու ժողովածու, իսկ Շիհաթան՝ միայն մեկը:

Իսա Ուբեյդի առաջին ժողովածուն՝ “Ihşān Hanım”(«Իհսան Հանում») վերնագրով, լույս է տեսել 1921 թ.: Ժողովածուի նախաբանում հեղինակը ներկայացրել է գրականության նկատմամբ իր որդեգրած սկզբունքները: Նա անդրադարձել է գրական նոր ձևերի անհրաժեշտությանը՝ շեշտելով երկրի անկախության, ազգային յուրօրինակ ինքնության և տեղական գրականության ձևավորման միջև եղած կապն ու փոխազդեցությունը: Նա պնդում էր, որ ապագայի գրականությունը պետք է հիմնված լինի հստակ ուսումնասիրության, ստեղծագործական երևակայության և հոգեբանական վերլուծության ամուր

հիմքի վրա և նկարագրի կյանքն այնպես, ինչպես կա, այսինքն՝ առանց չափազանցության և կարևոր տարրերի անտեսման:

Իսա և Շիհաթա Ուբեյդ էդբայրների ինչպես ռեալիզմի, այնպես էլ պատմողական արվեստի մասին պատկերացումները նկարագրությունների, կերպարների, լեզվի, գործողությունների կենսունակության տեսանկյունից գերազանցում էին նախորդ հեղինակների ընկալումները: Նրանց պատմվածքներում նկատվում է հեղինակների ձգտումը՝ ներկայացնելու երկու սեռերի միջև իրական հարաբերություններն ու բացահայտելու ընտանեկան կյանքի առանձնահատկությունները, հատկապես քրիստոնեկան միջավայրում: Նրանք առաջիններից էին, որ իրենց ստեղծագործություններում բացահայտեցին միջին խավի կանանց կյանքի տարբերկողմերը և անդրադարձան կանանց ազատագրման խնդիրներին:

Հեղինակների ստեղծագործությունների հիմնական թեմաներից են ամուսնական զույգերի անհամատեղելիությունը և դրա արդյունքում առաջացած լուրջ խնդիրների լուսաբանումը: Եդբայրները նաև անդրադարձել են այնպիսի թեմաների, ինչպիսիք էին ազգային նպատակները և անհատների կողմից դրանց գիտակցելու կարողությունը, բազմակնության արդյունքում ձևավորված խնդիրները, քաղաքի ու գյուղի միջև եղած հակասությունները:

Իսա Ուբեյդայի երկրորդ՝ “Turāā” («Սուրայա») ժողովածուն, լույս է տեսել 1922 թ.: Այստեղ ներկայացված պատմվածքները ավելի երկար են և սյուժետային բարդ կառուցվածքով առավելապես մոտենում են վեպին: Ժողովածուում տեղ գտած համանուն ստեղծագործությունը իր բարդ

կառուցվածքով և հերոսների քանակով նման օրինակներից է: Մյուսների հիմքում Վադի Նաումի՝ մանկությունից բարեկեցիկ կյանքի համար պայքարող երիտասարդի սերն է գեղեցիկ ու կրթված, քրիստոնյա կնոջ՝ Սուրայայի հանդեպ: Սուրայան, մերժելով Վադիի սերը, ամուսնանում է հարուստ մուսուլմանի հետ: Վադին, այնուամենայնիվ, շարունակում է սիրել նրան ու սպասել հույսով, որ Սուրայան կբաժանվի իր ամուսնուց և կգա իր մոտ: Մյուսն զարգանում է հեղինակի կողմից գլխավոր հերոսի՝ Վադիի հոգեբանական նկարագրի բացահայտման և վերլուծության համատեքստում: Հեղինակը այդպես էլ հստակորեն չի ներկայացնում ընթերցողին՝ արդյոք գլխավոր հերոսը հասնում է իր երազանքին, թե ոչ: Սակայն բավական հմտորեն փոխանցում է երիտասարդի անձնային վայրիվերումները երազանքի ճանապարհին: Հերոսի հոգեբանական կետվածքը բացահայտելու համար հեղինակը ներկայացնում է նրա մանկության տարիները, ընտանեկան խնդիրները, որոնց միջոցով փորձում է հիմնավորել Վադիի հոգեբանական տարբեր դրսևորումները:

Նույն թվականին հրատարակվել է Շիհաթահ Ուբեյդի “Al-dars al-mu’lim” («Տխուր դասը») պատմվածքների ժողովածուն: Շիհաթահ Ուբեյդայի պատմվածքների հերոսները հիմնականում միջին խավի պետական պաշտոնյաներ էին, մանր բուրժուազիայի ներկայացուցիչներ: Պատմվածքներում նկարագրելով այս կամ այն հերոսին՝ հեղինակը պատկերացում է տալիս նրա արտաքին տեսքի, զգացմունքների և ապրումների, հույսերի ու ձգտումների մասին՝ առանց կենտրոնանալու գործողությունների վրա: Որպես կանոն, ընթերցողը տեսնում է միայն վերջնական արդյունքը: Հեղինակն ավելի շատ ձգտում է կենտրոնանալ հոգեբանական ապրումների վրա:

Շիհաթա Ուբեյդի ռեալիստական ստեղծագործության մեջ նկատվում են տարբեր գրական ուղղությունների ազդեցություններ: Իսա և Շիհատա եղբայրների ստեղծագործական կարճատև ուղին ճանապարհ հարթեց կարճ պատմվածքի հետագա զարգացման համար՝ վերացնելով կարճ պատմվածքի ծագման ժամանակային ու աշխարհագրական սահմանները:

«Նոր դպրոցի» դերը կարճ պատմվածքի զարգացման գործում

Կարճ պատմվածքի հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ գրական «Նոր դպրոցի» («Al-madrasa al-hadīta») ձևավորումը: 1918 թ. նոյեմբերին Կահիրեի Լիփթոն թեյարանում մի խումբ երիտասարդ և առաջադեմ գրողներ, տարված լինելով եգիպտական ազգային գրականության ստեղծման գաղափարով, հիմնեցին «Նոր դպրոցը»: Դպրոցի գործունեությունն առավել լայն տարածում է ունեցել 1925 թ.՝ «Al-fağr» («Լուսաբաց») շաբաթերթի հրատարակումից հետո: Պարբերականի միջոցով դպրոցի անդամները ներկայացնում էին իրենց նոր գաղափարները, ինչպես նաև հիմքեր ստեղծում առավել հայտնի պարբերականներում երիտասարդ գրողների պատմվածքների տպագրման համար:

«Նոր դպրոցի» անդամները ձևակերպեցին գրականությունը սահմանող նոր չափանիշներ: Գրականությունն այլևս չէր դիտարկվում միայն քաղաքական և հասարակական խնդիրների ներկայացման միջոց, այլ որպես կարևոր անկախ ստեղծագործական գործընթաց, որտեղ էական էր դառնում գրական ստեղծագործության ու գեղարվեստական արտահայտման այլ միջոցների միջև փոխկապվածությունը: Գրական ստեղծագործության արժեքն այլևս պայմանավորված չէր լինելու սոսկ

քաղաքական խնդիրների ներկայացման կարևորությամբ, այլ նաև առանձնահատուկ նշանակություն էր տրվելու գեղարվեստական ձևին՝ այդպիսով պահպանելով դրա հասարակական և դաստիարակչական դերը: Նրանց նպատակն էր ստեղծել ազգային գրականություն, որը կկարողանար արտացոլել մարդկային կյանքի բոլոր կողմերը: Սկզբնական շրջանում տարված լինելով ֆրանսիական գրականությամբ՝ «Նոր դպրոցի» գրողներից շատերի հետաքրքրության վեկտորը ուղղվեց դեպի ռուսական գրականության ականավոր գրողների՝ Չեխովի, Տուրգենևի, Գոգոլի, Դոստոևսկու, Տոլստոյի ստեղծագործությունները: Կարճ պատմվածքի զարգացման և կայացման գործում նշանակալի դեր են ունեցել «Նոր դպրոցի» այնպիսի ականավոր գրողներ, ինչպիսիք էին Մահմուդ Թեյմուրը, Տահիր Լաշինը, Յահյա Հակկին:

«Նոր դպրոցի» ականավոր ներկայացուցիչներից էր Մուհամմադ Թեյմուրի կրտսեր եղբայր **Մահմուդ Թեյմուրը** (1894-1973 թթ.): Մեծապես ազդված ավագ եղբոր գրական նոր ժանր ստեղծելու նկրտումներից՝ նա բեկումնային դեր ունեցավ կարճ պատմվածքի զարգացման գործում: Մահմուդ Թեյմուրի գեղագիտական պատկերացումների ձևավորման վրա մեծ ներգործություն է ունեցել նաև հայրը՝ Ահմադ Թեյմուրը, որը ավանդական գրական դպրոցի անկյունաքարային ներկայացուցիչներից էր: Դեռևս վաղ տարիքից Մահմուդ Թեյմուրը տիրապետում էր եվրոպական լեզուներին և թարգմանում եվրոպացի ոչ այնքան հայտնի հեղինակների գործեր¹: Նա կարողում էր նաև սիրիաամերիկյան դպրոցի՝ Մահջարի հեղինակների ստեղծագործությունները: Նրա գեղարվեստական ճաշակը

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 255:

հատկապես զարգացել է Ջուբբան Խալիլ Ջուբբանի “Al-Ağniha Al-Mutakassira” («Կոտրված թևեր») պատմվածքների ժողովածուի հիման վրա: Միրիաամերիկյան դպրոցի կողմից հրատարակվող “Al-funūn” («Արվեստներ») ամսագրի միջոցով է նաև ծանոթացել արևմտյան գրականությանը: Հոր մահից հետո Մահմուդ Թեյմուրի ընտանիքը տեղափոխվել և բնակություն է հաստատել Կահիրեից ոչ հեռու գտնվող Այն Շամս գյուղում: Այստեղ էլ նա ծանոթացել է իր “Al-šaiḥ Ğum‘a” («Շեյխ Ջումա») պատմվածքի հերոսին:

Ավագ եղբոր՝ Մուհամմադ Թեյմուրի միջոցով երիտասարդ արձակագիրը ծանոթացել է Մուպասանի ստեղծագործություններին, որոնցով մեծապես ներշնչվել է: Առաջին ստեղծագործությունները Մահմուդ Թեյմուրը հրատարակում էր «Եգիպտոսի Մուպասան» (“Mubasan al-Misrī”) գրական կեղծանունով: Նա գրել է կարճ պատմվածքների շուրջ երեսուն ժողովածու: Կահիրե վերադառնալուց հետո Մահմուդ Թեյմուրը սովորել է Կահիրեի գյուղատնտեսական համալսարանում, սակայն շուտով հիվանդության պատճառով թողել է ուսումը: Նա որոշ ժամանակ աշխատել է արդարադատության և արտաքին գործերի նախարարություններում: 1925 թ. Մահմուդ Թեյմուրը մեկնել է Եվրոպա և երկու տարի ապրել Շվեյցարիայում: Այս ընթացքում նա կատարելագործել է լեզուների իմացությունը՝ ընթերցելով եվրոպացի հեղինակների ստեղծագործություններ:

Եվրոպայում անցկացրած տարիները Թեյմուրը համարում էր կարևորագույն փուլ իր՝ որպես գրողի կայացման գործընթացում: 1947 թ. Մահմուդ Թեյմուրը Լեզվի ակադեմիայի կողմից պարգևատրվել է «Լավագույն նովելագիր» մրցանակով: 1950 թ. նրան շնորհվել է Ֆուադ Առաջինի գրական մրցա-

նակը, իսկ 1962 թ. արժանացել է գրականության պետական մրցանակի: Մահմուդ Թեյմուրը մահացել է 1973 թ.¹:

Մահմուդ Թեյմուրի ստեղծագործական ուղին բավական բեղուն է: Նա գրել է պատմվածքներ, պիեսներ, էսսեներ: Առաջին պատմվածքների ժողովածուն՝ “Al-Šaiḥ Ğum‘a”, լույս է տեսել 1925 թ.: Նա շարունակել է ավագ եղբոր՝ Մուհամմադ Թեյմուրի «Ազգային գրականություն» (“Al-ādab al-qaūmī”) ստեղծելու առաքելությունը: Նրա՝ վերը նշված ժողովածուի պատմվածքներն առանձնանում են եգիպտական ազգային կոլորիտի ու կենցաղի նկարագրություններով: Դրանցում երկխոսությունները ներկայացվում էին բարբառով:

Գրական ստեղծագործությունների լեզվի խնդիրը 20-րդ դարի 20-ականների գրականագետների և գրողների կողմից ամենաշատ քննարկվող ու վիճելի թեմաներից էր: Նրանցից շատերը խնդիրը դիտարկում էին լեզվի նկատմամբ ձևավորված քարացած ավանդական պատկերացումների դիրքերից՝ անտեսելով գեղարվեստական գրականության լեզվի դինամիկ ու ֆունկցիոնալ առանձնահատկությունները: Իր հետագա տարիներին հրատարակված ժողովածուներում Թեյմուրը բարբառից անցնում է գրական արաբերենի՝ համարելով, որ միննույն ստեղծագործության մեջ երկու լեզուների կիրառումն առաջացնում է հակասություններ ու նսեմացնում ստեղծագործության արժեքը: Նա նույնիսկ 1927 թ. վերափոխել է “Al-Šaiḥ Ğum‘a”-ում ներկայացված պատմվածքների տեքստը գրական արաբերենի: Հավատարիմ մնալով «Նոր դպրոցի» որդեգրած “al-adab al-qaūmī” (“ազգային գրականություն») ստեղծելու առաքելությանը՝ Թեյմուրն իր ստեղծագործություններում

¹ J. Brugman, նշվ. աշխ., էջ 256:

շարունակել է կիրառել գեղարվեստական պատկերման ռեալիստական մեթոդը: Ռեալիզմով գրված ստեղծագործությունների շարքին են պատկանում “Al-Šaiḥ Ğum ‘a” (1925 թ.), “Amm Mitwali” («Ամմ Միթվալի») (1926 թ.), “Rağab afandī” («Ռագաբ Էֆենդի») (1928 թ.), “Al-Ḥāğ Šalabī” («Ալ-Հաջ Շալաբի») (1930 թ.), “Abū ‘Alī ‘amil artist” («Աբու Ալի արտիստը») (1934 թ.) ժողովածուներում ներկայացված կարճ պատմվածքները:

Մահմուդ Թեյմուրն իր ստեղծագործություններում խստորեն քննադատում էր նաև կրոնական առաջնորդներին՝ շեյխերին, նրանց աշխարհայացքը, հասարակությունում նրանց ունեցած դերը, որի միջոցով ժողովրդի մեջ իրենց իշխանությունը պահպանելու համար նրանք ամեն կերպ խոչընդոտում էին հասարակական ու մշակութային առաջընթացին: Թեյմուրն ու «Նոր դպրոցի» երիտասարդ գրողներն իրենց ստեղծագործություններով փորձում էին արմատախիլ անել ժողովրդի՝ նրանց մասին ձևավորած իդեալական պատկերացումները, վեր հանել բարեպաշտության դիմակի տակ թաքնված նրանց դաժանությունը, սոցիալությունն ու անբարոյական վարքը:

Այսպիսով՝ կարճ պատմվածքը դարձավ հանրային ազդեցության համար ժամանակակից մոտեցումների ու ավանդական պատկերացումների միջև մղվող պայքարի լավագույն գործիքը:

20-րդ դարի երեսունականների կեսերին Մահմուդ Թեյմուրն իր ստեղծագործություններում սկսեց ավելի շատ անդրադառնալ իր հերոսների հոգեբանական նկարագրին՝ փորձելով վերլուծել այս կամ այն արարքի հոգեբանական դրդապատճառները: Նա ստեղծեց այնպիսի իրավիճակներ, որոնցում իր հերոսները դրսևորվում են իրենց հոգեբանական ամբողջական նկարագրով: Իր ստեղծագործություններով ընդ-

լայնեց և ամրագրեց արաբական կարճ պատմվածքի գեղարվեստական ու գաղափարական չափանիշները՝ այդպիսով ճանապարհ հարթելով ժանրի հետագա զարգացման համար: Մահմուդ Թեյմուրի համոզմամբ կարճ պատմվածքին տրված էր առաջնային և կարևոր տեղ զբաղեցնել պատմողական ժանրերի շարքում:

Արաբական գրականության մեջ կարճ պատմվածքի զարգացման համար շրջադարձային դեր ունեցավ «Նոր դպրոցի» ականավոր ներկայացուցիչ **Մահմուդ Տահիր Լաշինը (1894-1954 թթ.)**: Նրա ստեղծագործություններն իրենց ձևով ու բովանդակությամբ նշանավորեցին կարճ պատմվածքի կայացումն արաբական գրականության ժանրային նոր համակարգում:

Լաշինը ծնվել է կրթված և գրականության հանդեպ մեծ հետաքրքրություն ու սեր ունեցող ընտանիքում: 1917 թ. ավարտել է Կահիրեի ճարտարագիտական ինստիտուտը (muhandis hānah): 1918 թ. Լաշինն անցել է աշխատանքի Կահիրեի հասարակական աշխատանքի կազմակերպման բաժնում, որտեղ էլ նա ծանոթացել է Կահիրեի կյանքի տարբեր կողմերին և հասարակական շերտերին, ակտիվորեն մասնակցել հասարակական, քաղաքական կյանքին, ինչն էլ իր ազդեցությունն է ունեցել Լաշինի ստեղծագործական ուղու վրա:

Լաշինի առաջին ժողովածուն՝ “Suḥrīa al-nāī” («Սրինգի ծաղրը»), լույս է տեսել 1926 թ. “Al-Fağr” «Նոր դպրոցի» կողմից հրատարակվող ամսագրում: 1929 թ. հրատարակվել է նրա երկրորդ՝ “Tūḥka anna” («Պատմում են, որ») պատմվածքների ժողովածուն: Այս երկու ժողովածուներում Լաշինը կարողացավ կյանքի կոչել «Նոր դպրոցի» կողմից որդերգրված նոր մո-

տեցումները: Իր ստեղծագործություններում նա հիմնականում անդրադառնում էր միջին խավը ներկայացնող հերոսների ապրելակերպին ու նրանց արժեհամակարգին:

Լաշինի ստեղծագործություններում գործողությունների հիմնական վայրը քաղաքն է, որտեղ նա ընթերցողին ծանոթացնում է քաղաքային միջին խավի ներկայացուցիչների անձնական և հասարակական կյանքին՝ իրադարձությունների ծավալման վայր ընտրելով նրանց տները, սրճարանները, կառավարական հաստատությունները, Կահիրեի աղմկոտ փողոցները: Լաշինի կողմից քաղաքի ու բնակչության հասարակական կյանքի կարճ պատմվածքի միջոցով համակողմանի լուսաբանումը պայմանավորված էր ընթերցողների նոր շրջանակի մեծամասնություն կազմող միջին խավի մոտ նոր ժանրի կենսունակությունն ապահովելու ցանկությամբ: Իր ստեղծագործություններում ժամանակի հասարակական կյանքի տարբեր կողմերը մեկնաբանելով՝ կարճ պատմվածքի միջոցով նա հնարավորություն տվեց զարգացնելու բազմաթիվ հասարակական խնդիրներ, որոնք նախկինում չէին լուսաբանվում համապատասխան գեղարվեստական արձակ ժանրի բացակայության պատճառով:

Լաշինն իր ստեղծագործություններում կարողացավ զարգացնել նաև ժամանակի կարևորագույն՝ գյուղի ու քաղաքի միջև առկա աշխարհայացքային կոնֆլիկտի թեման: Վերջինս լավագույն ձևով ներկայացված է նրա “Ḥadīṭ al-qarīa” («Գյուղական զրույց») ստեղծագործությունում:

1934 թ. Լաշինը գրել է “Ḥawā’ bilā Ādam” («Եվան առանց Ադամի») վեպը, որտեղ ներկայացված են եգիպտացի մտավորական կնոջ ապրումներն ու ճակատագիրը: Վերջինս, հայտնվելով ավանդականի և նորի միջև պայքարի կիզակետում, ի

վերջո ինքնասպան է լինում: Լաշինի ստեղծագործությունների շնորհիվ, ինչպես կառուցվածքային, այնպես էլ թեմատիկ տեսանկյունից ձևավորվող նոր ժանրը հասավ զարգացման նոր աստիճանի:

«Նոր դպրոցի» երիտասարդ սերնդի շնորհալի գրողներից է **Յահյա Հակկին (1905-1992 թթ.)**: Նա ծնվել է թուրքա-եգիպտական արմատներ ունեցող միջին խավին պատկանող ընտանիքում: Ստացել է իրավաբանական կրթություն Կահիրեի իրավաբանական դպրոցում (Madrasat al-հսգւգ): 1925 թ. ավարտելով իրավաբանական դպրոցը՝ Հակկին աշխատանքի է անցել դատախազությունում որպես քարտուղար: Իրավաբան դառնալու մի քանի անհաջող փորձերից հետո նա մեկնել է Մանֆալուտ և աշխատել այնտեղ որպես հսկիչ:

Մանֆալուտում անցկացրած երկու տարիները հնարավորություն են տալիս Յահյա Հակկին ծանոթանալու գյուղական կյանքի ու խնդիրների մանրամասներին, որոնք էլ հետագայում մարմնավորում են ստանում գրողի կարճ պատմվածքներում: Հետագայում Հակկին զբաղեցնում է տարբեր պաշտոններ Եգիպտոսի դիվանագիտական առաքելություններում և 1939 թ. աշխատանքի անցնում Եգիպտոսի արտաքին գործերի նախարարությունում:

1954 թ. ֆրանսուհու հետ ամուսնության պատճառով Յահյա Հակկին ստիպված է եղել թողնել Արտաքին գործերի նախարարությունում իր պաշտոնը, քանի որ դիվանագետներին արգելված էր ամուսնանալ օտար երկրների քաղաքացիների հետ: Դիվանագիտական աշխատանքը թողնելուց հետո՝ 1962 թ., Յահյա Հակկին որոշ ժամանակ աշխատել է որպես խմբագիր “Al-Magalla” հայտնի գրական ամսագրում, իսկ 1969 թ. արժանացել է գրական պետական մրցանակի:

Հակիի առաջին պատմվածքները լույս են տեսել 1926 թ. “al-Fağr” ամսագրի էջերում: Նրան՝ որպես գրողի, մեծ հռչակ ապահովեց “Qindil Umm Hāišm” («Ումմ Հաշիմի լամպը») պատմվածքների ժողովածուն, որը հրատարակվեց 1944 թ.: Ժողովածուի համանուն պատմվածքում հեղինակն անդրադառնում է արաբական նոր գրականության մեջ հաճախ հանդիպող Արևելքի և Արևմուտքի միջև առկա մշակութային և քաղաքակրթական հակասությունների թեմային: Եվրոպայում ապրած, եվրոպական կրթություն ստացած, արևմտյան արժեքներից ու մշակույթից ազդված երիտասարդ հերոսը մշտապես հայտնվում է սահմանային կամ օտարված կարգավիճակում սեփական մշակութային առանձնահատկություններին առնչվելիս:

Պատմվածքի գլխավոր հերոսը երիտասարդ բժիշկ է, որը Եվրոպայում ուսանելուց հետո վերադառնում է Եգիպտոս և փորձում կիրառել ձեռք բերված գիտելիքները: Դեմ դուրս գալով ժողովրդական բժշկության հետադիմական մեթոդներին՝ նա, այնուամենայնիվ, աստիճանաբար ստիպված է լինում ընդունել ժողովրդի մեջ տարածում ունեցող ավանդական բժշկության մեթոդները և ավելին՝ ամուսնանում է մի աղջկա հետ, որին իր ծնողներն ընտրել էին դեռևս Եվրոպա մեկնելուց առաջ: Պատմվածքը հարուստ է բանվորական աղքատ թաղամասի տպավորիչ նկարագրություններով, որոնք ներկայացնում են *laūhāt qalamīa* (գրչի կտավներ), ինչպես բնութագրում է Հակին¹:

Հակիի պատմվածքները ներկայացնում են գյուղական կյանքի, աղքատ խավի ապրելակերպն ու խնդիրները պատկե-

¹ Ṭahīa Ḥaqī, Qindil Umm Hāšim, <https://foulabook.com/ar/book, pdf>.

րող գունեղ կտավներ: Բացի կարճ պատմվածքներից՝ Յահյա Հակիին գրել է նաև գրաքննադատական հոդվածներ ու էսսեներ, որոնք լույս են տեսել 1962 թ. «Խփսփա՛տ քաղաք» («Գրաքննադատական քայլեր») վերնագրով ժողովածուում: Դրանց շարքում կարելի է առանձնացնել Մահմուդ Տահիր Լաշինի «Suhrīa al-nāī» և «Խիկա առա» ժողովածուների վերաբերյալ գրախոսությունները: Յահյա Հակիի պատմվածքներում ռեալիզմը դրսևորվում է կատարյալ շարադրանքի և ռճի հմտորեն համադրմամբ:

Չնայած որ գեղարվեստական արձակի կարճ ձևերի ստեղծման անհատական փորձեր արվում էին գրեթե արաբական բոլոր երկրներում, այնուամենայնիվ Եգիպտոսի գրողների շնորհիվ էր, որ 20-րդ դարի առաջին կեսին հնարավոր եղավ ձևավորել այն գրական ավանդույթը, որը մեկնարկ հանդիսացավ նոր ձևավորված ժանրի հետագա զարգացման համար:

Արաբական դրամատուրգիայի առաջացումն ու զարգացումը

Արաբական դրամատուրգիան՝ որպես առանձին գրական ուղղություն, ձևավորվեց և տարածում գտավ 19-րդ դարի երկրորդ կեսին արևմտյան դրամատուրգիական ձևերի ներմուծման և ադապտացման արդյունքում: Լիբանանցի, սիրիացի և եգիպտացի ականավոր հեղինակների շնորհիվ 20-րդ դարի առաջին տասնամյակներում արաբական դրամատուրգիան անցավ զարգացման նոր փուլ՝ ընդլայնելով համակիրների շրջանակը, և իր ուրույն տեղը գրավեց նոր արաբական գրականության ժանրային համակարգում: Հարկ է նշել, որ այն միայն արևմտյան դրամատուրգիայի ավանդույթի արդյունք

չէ. դրամատիկ տարրերի առանձին դրսևորումներ կարելի է նկատել արաբամուսուլմանական ավանդույթում և միջնադարյան գրական ստեղծագործություններում:

Դրամատիկ տեղական տարրերի առկայությունը հետագայում իր դրսևորումը գտավ դրամատուրգների նոր սերնդի ստեղծագործություններում, որոնք հիմք դրեցին ազգային դրամատուրգիայի կայացմանը:

Արաբամուսուլմանական թատերական վաղ դրսևորումների շարքում առանձնանում են սիրային պատումների, սիրաների՝ հերոսական պատումների, ինչպես նաև *մականաների*՝ մարդաշատ վայրերում ընթերցումը բանասացների՝ *հաքավաթիների* (*al-hakawātī*) կողմից, կրոնական միստերիաները՝ *թազիաները* (*tāziā*), հատկապես շիայական առաջնորդների մահը սգալն ու դրան նվիրված, հասարակական լայն հնչեղություն ունեցող արարողակարգերը, ստվերային ներկայացումները (*haiāl al-zīl*): Դրանք մեծ ժողովրդականություն էին վայելում միջնադարում, հատկապես լայն տարածում ունեին Կահիրեում: Ստվերային ներկայացումները կատարվում էին սավանի վրա ստվերների միջոցով: Այն տիկնիկային թատրոնի մի տարատեսակ էր, որը Մերձավոր Արևելք էր ներմուծվել Չինաստանից ու Հնդկաստանից 11-12-րդ դարերում մուսուլման առևտրականների միջոցով¹:

Ստվերային ներկայացումների ամենավաղ դրսևորումները պատկանում են 13-րդ դարին: Նման ստեղծագործությունների՝ մեզ հասած ամենավաղ նմուշներից են Իբն Դանիալի երեք պիեսները, որոնք արժանացել են գիտական մեծ հետաքրքրության: Գրված լինելով դասական ու խոսակցական

¹ P. Starkey, նշվ. աշխ., էջ 163:

արաբերենի համակցությամբ, ինչպես նաև բանաստեղծական տողերով և հանգավորված արձակով՝ դրանք ներկայացնում են Կահիրեի հասարակ բնակչության ընդհանուր գունապնակը և իրապես լեզվական, սոցիալական ու պատմական կարևոր աղբյուրներ են:

Փաստացիորեն Իբն Դանիալի այս պիեսներն արաբական միջնադարյան գրականության այն բացառիկ նմուշներից են, որոնք իրենց կառուցվածքային ու թեմատիկ առանձնահատկություններով մոտ են արևմտյան միջնադարյան դրամաներին, միստերաներին, ֆրանսիական ստոհներին¹:

Առաջին պիեսը կոչվում է “Taif al-haial” («Երևակայության ուրվականը»), որտեղ, իսլամական գրական մշակույթի պրակտիկային համաձայն, նախաբանում գովեստի ու շնորհակալության խոսք է ուղղվում Աստծուն, ժամանակի կառավարչին: Բովանդակային հենքը գլխավոր հերոսի՝ մեղսագործ Վիսալի ձախողված ամուսնության ու ուխտագնացության պատմությունն է՝ ուղեկցված դրամատիկ ու սարկաստիկ դրվագներով²:

Երկրորդը “Ağib wa Ğarib” («Աջիբն ու Ղարիբը») պիեսն է, որտեղ ներկայացված են ժամանակի երկու խավերը մարմնավորող հերոսների՝ ճանապարհորդ-թափառական Ղարիբի ու քարոզիչ Աջիբի պատմությունները: Երկու հերոսներն էլ ընդհանրանում են իրենց խաբեության և արկածախնդրության բնորոշիչներով: Թեման հայտնի է նաև իրանական գրականությանը, ավելին՝ Ղարիբը ներկայանում է որպես Սասանի որդիներից, որն ապրում է աղքատ ու թափառական կյանքով և

¹ M. Badawi, նշվ. աշխ., էջ 329:

² J. Landau, նշվ. աշխ., էջ 18:

զբաղվում է մարդկանց մոլորեցնելով: Միննույն ժամանակ նույն որակներով նկարագրվող արաբ Աջիբը, տարված կյանքի հաճույքներով, գովաբանում է Ալլահին՝ գինին ստեղծելու համար¹: Իրականում այս պիեսը բավական խորքային իմաստավորում ունի. մի կողմից ներկայացված են հասարակության երկու շերտերում առկա թերությունները, մյուս կողմից՝ ժամանակի արաբական մշակութային մթնոլորտը:

Երրորդ պիեսը՝ “Al-Mutaïam wa al-dâ’i‘ al-ïatïm” («Մուլրված սիրահարը»), մրցակցության պայմաններում սիրուն հասնելու պատմություն է ներկայացնում: Հերոս ալ-Մութայյամն իր սիրեցյալին հանդիպելուց առաջ մրցության մեջ է մտնում իր հակառակորդի հետ. մրցության ձևը պայքարի դուրս բերված կենդանիներն են՝ ցուլեր, խոյեր, աքաղաղներ: Պիեսի սյուժետային զարգացումն ընթանում է տարբեր կերպարների մասնակցությամբ, որոնք ներկա են գտնվում կենդանիների մրցության տեսարանին՝ իրենց արատավոր բարքերով ու մեղսավոր արարքներով: Դրամատիկ տեսարանն ուղեկցվում է մասնակիցների խոսքերով, երգերով, որոնցում դրսևորվում են նրանց տարերքները, հանցավոր մղումները:

Այս ստեղծագործություններն առանձնանում են հումորով ու երգիծանքով, ներկայացնում են ժամանակի բարքերի իրողությունը, հասարակության տարբեր շերտերի նկարագրությունը: Պիեսներից յուրաքանչյուրը զարգացնում է առանձին թեմատիկա, սակայն դրանք կապված են բարոյական նորմերի հասկացութային ընդհանրությամբ²:

¹ J. Landau, նշվ. աշխ., էջ 20:

² Նույն տեղում, էջ 164:

Արդեն 19-րդ դարում դրամատուրգիայի՝ որպես գրականության մեջ նոր ուղղության զարգացման համար կային ինչպես գրական, այնպես էլ սոցիալ-քաղաքական պայմաններ ու նախադրյալներ: Գրական գործիչների և ժամանակի մտածողների առջև խնդիր էր դրված նաև հասարակությանը ներկայացնելու տվյալ ժամանակաշրջանի իրողությունները, արաբական աշխարհում ծավալվող գործընթացները, որոնք արտացոլելու ամենահրապարակային և ժողովրդի համար ամենահասանելի ձևը կարող էին ներկայացնել դրամատուրգիան, թատրոնը, բեմական ներկայացումները՝ ապահովելով ունկնդիրների մեծ լսարան: Հրամայական էր դարձել հրապարակախոսության պես ազդեցության մեծ գործակից ունեցող գրական մի ժանրի ձևավորումը: Եվ պատահական չէր, որ այս գործը հիմնականում իրենց վրա վերցրին ազդեցիկ հրապարակախոսները:

Ժամանակակից արաբական դրամայի հիմնադիրն է լիբանանցի **Մարուն ալ-Նակաշը** (1817-1855 թթ.): Ծնվել է Սիդոնում, հետագայում՝ 1925 թ., ընտանիքի հետ տեղափոխվել է Բեյրութ:

Նակաշը մեծ հետաքրքրություն է դրսևորել արվեստի նկատմամբ, ինչպես նաև արաբերենին ու օսմանյան թուրքերենին զուգահեռ յուրացրել ֆրանսերեն և իտալերեն: Դրամատուրգիական գործունեության վրա հիմնական ազդեցությունը պայմանավորված է Նակաշի՝ Եգիպտոս և եվրոպական երկրներ ճանապարհորդություններով: 1846 թ. նա մեկնել է Իտալիա, որտեղ ծանոթացել է իտալական թատրոնին ու օպերային: Վերադառնալով Լիբանան՝ գրել է իր առաջին երեք պիեսները, որոնք կարելի է համարել արաբական դրամայի անդրանիկ փորձերը: Հենց սրանք հիմք դարձան ժամանակա-

կից արաբական թատրոնի զարգացման համար՝ թե՛ իրենց երաժշտական և դրամատիկ տարրերի, թե՛ տեղական ու ներմուծված նյութի և տեխնիկայի համադրմամբ¹:

Լիբանանում Մարունը հիմնեց իր թատերական սիրողական խմբակը, որտեղ ներգրավվեցին այդ ժամանակ հասարակական ու մշակութային կյանքում ակտիվ մասնակցություն ունեցող հայտնի գործիչները և նրա համախոհները:

Մարուն ալ-Նակաշի գրական գործունեության, դրամատիկական և գեղագիտական պատկերացումների վրա մեծ ազդեցություն է ունեցել Մոլիերի ու Կարլո Գոլդոնիի դրամատուրգիան:

Մարուն ալ-Նակաշի առաջին պիեսը՝ “Al-bahil” («Ժլատը»), որը Մոլիերի համանուն պիեսի արաբական փոխադրությունն է, բեմադրվել է Մարունի տանը 1848 թ.: Բեմադրությանը ներկա էին օտարերկրյա դիվանագետներ, ինչպես նաև լիբանանյան բարձրաստիճան անձինք: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ Մարունը պիեսի գործող անձանց, թեմատիկ դրվագները, իրավիճակային զարգացումները ձևավորել է արաբական իրականությանը համահունչ, այնքան ուրույն ու հմուտ, որ ֆրանսերենին տիրապետող արաբ մասնագետները պիեսը նկարագրել են հետևյալ բնորոշումներով. «Սա Նակաշի ամենահետաքրքիր կատակերգությունն է, որը կարելի է համարել գրեթե օրիգինալ ստեղծագործություն»²: Արաբական մթնոլորտն ու իրողությունն այստեղ ներկայացվում են կենդանի, նոր և ժամանակակից թեմաներով: Պիեսում մեծ դեր է

¹ P. Starkey, նշվ. աշխ., էջ 164-165:

² А. Крымский, նշվ. աշխ., էջ 473:

հատկացված երաժշտությանը, ըստ որի՝ այն կարելի է համարել հինգ արարից բաղկացած արաբական օպերետ:

Մարուն ալ-Նակաշի երկրորդ պիեսը՝ “Abū al-Ḥasan al-Muğāfal awu Hārūn al-Rašīd” («Անկիրթ Աբու Հասանը կամ Հարուն ալ-Ռաշիդը»)՝ ստեղծված 1850 թ., իր թեմատիկ ընդգրկմամբ ազդված է «Հազար ու մի գիշեր» ժողովածուի՝ «Աբու Հասան» հեքիաթից: Այն գրված է արաբական դասական բանաստեղծության և հանգավորված արձակի համադրությամբ: Պիեսը բեմադրվեց նույն՝ 1850 թ. Նակաշի տանը, որին ներկա էին բարձրաստիճան անձինք, ինչպես նաև Սիրիայի օսմանյան կառավարիչը: Բեմադրությունը մեծ հաջողություն ունեցավ: Այն երեք գործողությամբ երգիծական բեմադրություն էր, որտեղ ներկայացված էին մարդկային բարդ և խորը զգացմունքները՝ սեր, հիասթափություն, ուրախություն, խանդ, ասելություն և այլն:

Պիեսի հաջողությունը և ձեռք բերված հասարակական արձագանքը Նակաշին մղում է ստեղծագործականության նոր արարման դաշտ. լինելով հարուստ առևտրական՝ նա որոշում է Բեյրութում կառուցել արաբական թատրոնի շենք, որը մեծ ներդրում եղավ Սիրիայում արաբական բեմադրությունների և թատերական ներկայացումների հետագա զարգացման համար: Ընդ որում՝ Նակաշի հաջորդ՝ վերջին պիեսը բեմադրվել է հենց այս շենքում: Նակաշի սույն արվեստանվիրական գործունեությունը՝ որպես արվեստը քաջալերող երևույթ, գովերգվում է ժամանակի բանաստեղծ Խալիլ Խուրիի բանաստեղծություններում: Պոետը Մարուն ալ-Նակաշին փառաբանում է,

սգում նրա վաղաժամ մահը՝ շնորհելով նրան «Արևելքի աստղ» տիտղոսը¹:

Նակաշի երրորդ պիեսը՝ վերնագրված “ Al-ḥasūd al-Salīṭ” («Անմիտ նախանձը»), կրկին ֆրանսիական գրականության ազդեցությունն է կրում. այն Մոլիերի «Քաղքենին ազնվական» ստեղծագործության արաբական փոխադրումն էր՝ թեմատիկ նմանակմամբ, որտեղ հեղինակը ծաղրական տեսարաններով ներկայացնում է քաղքենի հերոսի ազնվականության հետ հարաբերվելու ձգտումները և նրանց ընդօրինակելու անհաջող փորձերը: Պիեսում յուրահաստուկ տեղ է զբաղեցնում լեզուն՝ երկու իմաստներով՝ թե՛ պիեսի բուն լեզուն՝ չափածո ու հանգավորված արձակ, թե՛ դրանում առկա հերոսների՝ արաբերենին տիրապետելու, դասական արաբերենին հղում կատարելու և դրանից մեջբերումներ անելու տեսանկյունից: Այս դրամայի բեմադրությունը ևս հարուստ էր երաժշտական միջարկումներով:

Մարունի վաղաժամ մահը մեծ կորուստ էր Սիրիայում թատրոնի զարգացման համար, սակայն արվեստի նկատմամբ նրա նվիրվածությունն ու սերը փոխանցվեցին նրա ընտանիքի անդամներին, մասնավորապես եղբորը՝ Նիկուլա ալ-Նակաշին և զարմիկին՝ Մալիմ Խալիլ ալ-Նակաշին:

Նիկուլա ալ-Նակաշը հրատարակեց Մարունի երեք պիեսները նրա մահից հետո, իսկ զարմիկը հիմնեց թատերախումբ, որը հյուրախաղերով հանդես եկավ նաև Եգիպտոսում²: Թատերախումբը բեմադրում էր թե՛ Մարունի, թե՛ Մալիմի հեղինակած դրամաները:

¹ А. Крымский, նշվ. աշխ., էջ 476-477:

² P. Starkey, նշվ. աշխ., էջ 166:

Նոր արաբական գրականության զարգացման, ժանրային և թեմատիկ ընդլայնման գործում Մարուն ալ-Նակաշի ներդրումը չափազանց կարևոր է: Նա, մի կողմից, հիմնեց դրամատուրգիան՝ որպես կայացած գրական ուղղություն՝ ստեղծելով երեք ծավալուն պիեսներ, մյուս կողմից՝ դարձավ 19-րդ դարի այն ազդեցիկ մտավորականը, որն իր ստեղծագործունեությամբ նպաստեց արաբական նոր գրականության ձևավորմանն ու մշակութային առաջընթացին: Լինելով ազդեցիկ առևտրական և ունենալով լայն կապեր՝ Նակաշը նաև տարածման, ընդունման ու գնահատման նոր մակարդակի բարձրացրեց արաբական գրականությունը:

Արաբական դրամատուրգիայի հետագա զարգացումը կապվում է եգիպտացի հրեա **Յակուբ Սաննուի (1839-1912 թթ.)** անվան հետ: Բարձրագույն կրթություն ստանալով Եգիպտոսում՝ այնուհետև երեք տարի նա իր ուսումնառությունը շարունակել է Իտալիայում՝ արվեստի դպրոցում: Իտալիայում նա գրել է մի շարք իտալերեն պիեսներ, որոնք բեմադրվել են Ջենովայում: 1870 թ. Սաննուն հիմնել է իր թատերախումբը, որը հովանավորում էր Խեղիվ Իսմայիլը: Սաննուն առաջինն էր, որը բեմադրեց իր պիեսները Խեղիվ Իսմայիլի պալատում՝ դիվանագետների և բարձրաստիճան պաշտոնյաների ներկայությամբ և մեծ հռչակ ապահովելով հեղինակի համար: Վերնախավի հետաքրքրվածությունն ու քաջալերանքը ոգևորում էին Սաննուին նոր պիեսներ ստեղծելու գործում: Խեղիվ Իսմայիլի կողմից նա արժանացել է «Արևելքի Մոլիեր» տիտղոսին:

Յակուբ Սաննուն, շարունակելով Մարուն ալ-Նակաշի դրամատուրգիական ավանդույթները, ստեղծել է պիեսների շարք, որոնցում նկատվում է ֆրանսիական ու իտալական հե-

դինականների ազդեցությունը: Գրելով ընդհանուր առմամբ երեսուներկու պիես՝ Սաննուն ձևով և բովանդակությամբ ապահովում էր Նակաշի ստեղծած ուղու շարունակականությունը՝ առաջ քաշելով սոցիալական սուր թեմաներ, որոնք միտված էին կատարելու սոցիալական փոփոխություններ՝ հասարակությանն իրազեկելու ճանապարհով: Սա այն հիմնական դրդապատճառներից էր, որ Սաննուն ստեղծագործում էր խոսակցականին մոտ ավելի պարզ արաբերենով: Դրամատուրգի՝ լեզվական դյուրացմանն ուղղված ստեղծագործական ներդրման համար Սաննուն արաբական դրամատուրգիայում թատրոնի լեզվի նորարարն է: Հեղինակի վերջին պիեսը կոչվում է “ Mūlīr Miṣr wa mā Īuqāsīhi” «Եգիպտական Մուլիերը և նրա տառապանքները», որտեղ նկարագրվում են Կահիերի դերասանների կյանքն ու կենցաղը, նրանց բռնեմայիս ապրելակերպից պատասիկներ¹:

Պիեսի լեզուն բարդ չէ. արաբական մտավորականության խոսակցական լեզուն է, որը նպատակ է հետապնդում առավել կենդանի և գործուն դարձնելու պիեսն ու հերոսներին:

Մինչ արաբական թատրոնի համբավը ստանում էր առավել լայն հասարակական հնչեղություն հիմնականում երաժշտական ու մելոդրամիկ տարրերի միջոցով, եգիպտական իրական թատրոնի զարգացումը կապվում էր **Մուհամմադ Օսման Ջալալի** (1829-1898 թթ.)՝ Տահտավիի աշակերտի անվան հետ: Ի տարբերություն Նակաշի, Սաննուի և դրամատուրգիայի մյուս առաջամարտիկների՝ Ջալալը դերասան ու թատերական գործի կազմակերպիչ չէր, այլ գիտնական և բանաստեղծ, թարգմանության արվեստի վարժ գիտակ, որն

¹ А. Крымский, նշվ. աշխ., էջ 194:

արաբական հանդիսատեսին ներկայացրեց եվրոպական առավել հայտնի ստեղծագործությունները՝ արաբերեն թարգմանված հինգ գործ Մովիերից, երեքը Ռասինիից, երկուսը՝ Կոռնելիոսից¹: Եվրոպական դրամաները Ջալալը թարգմանում էր դասական արաբերեն՝ իհարկե, պարզեցնելով լեզվական ոճն ու ձևակերպումները:

Թարգմանչական նրա ձիրքն ու հմտությունները մեծ ընդունելության արժանացան եվրոպացի արաբագետների կողմից, որոնք բարձր գնահատեցին Ջալալի ներդրումն արաբ հանդիսատեսին եվրոպական գրական ստեղծագործությունները հասանելի և ընկալելի դարձնելու գործում: Այսուամենայնիվ, Ջալալը դժվար խնդիր էր փորձում լուծել, քանի որ ժամանակի եվրոպական թեմաներն ու խնդիրները բավական խորթին կարող էին թվալ արաբ ընթերցողի համար: Ուստի Ջալալը թարգմանություններում ի սպաս դրեց իր արհեստավարժ լեզվական ունակությունները՝ ներկայացնելով դասական արաբերենից մինչև խոսակցականն ընկած ողջ տիրույթը: Սրանց զուգահեռ նա գրել է նաև հեղինակային ստեղծագործություններ, ինչպես՝ “Al-hādīmīn wa muḥadīmīn” «Ծառայողներն ու ծառայեցնողները»: Այնուամենայնիվ, Ջալալի առավել հայտնի ժառանգությունը Մովիերի «Տարտուֆի» արաբերեն փոխադրումն է, որտեղ հեղինակը ֆրանսիական ստեղծագործության իմաստային ողջ գունապնակը ներկայացրել է արաբականացված՝ եգիպտական կենցաղային իրողությունների և արաբական մթնոլորտի տրամաբանությամբ:

Այսպիսով՝ արաբական դրամատուրգիան զարգանում էր իր բոլոր դրսևորումներով՝ բուն արաբական գործերի, ինչպես

¹ P. Starkey, նշվ. աշխ., էջ 168:

նան թարգմանությունների ներկայացմամբ: Այս համատեքստում միմյանց զուգորդում էին թե՛ արաբական կյանքին հարիր թեմաները, թե՛ եվրոպական կենցաղին և արժեհամակարգին հատուկ մոտիվները: Մյուս կողմից դրսևորվում էր նմանակումների մի ուրույն ասպարեզ, երբ արաբ հեղինակները բուն եվրոպական գործերը ներկայացնում էին արաբականացված՝ համադրելով երկու տարբեր աշխարհները: Այստեղ կարևոր խնդիր էին լուծում արաբ հեղինակները. մի կողմից, նրանք արաբ հանդիսատեսին և ընթերցողին էին ներկայացնում արաբական իրական կյանքը, դրա դրամատիկ և երգիծական դրսևորումները, մյուս կողմից՝ եվրոպական արժեքները՝ այսպիսով ստեղծելով գրական ակտիվ ասպարեզ, որտեղ հակադրությունների պատկերում, փաստորեն, առաջնային պլան է մղվում մշակույթների սինթեզը:

Եվրոպական դրամատիկ ստեղծագործությունների՝ արաբական իրականությանն ադապտացնելու առաջին փորձերը ճանապարհ հարթեցին բուն արաբական գործերի մշակման համար: Անհրաժեշտության առաջնային պլան մղվեցին արաբական ինքնությունը և արաբական արդի հասարակական խնդիրները դրամատուրգիայում ներկայացնելու ժամանակի պահանջը:

Արաբական թատրոնի կայացման գործընթացը պայմանավորված է Եգիպտոսում ապրող ու ստեղծագործող դրամատուրգների գործունեությամբ, որոնք ոչ միայն ստեղծագործում էին՝ դրսևորելով ժանրի գեղարվեստական հասունության առավել բարձր մակարդակ, այլ նաև մտահոգված էին եգիպտական կամ արաբական դրամա ստեղծելու խնդիրներով: Այդ սերնդի դրամատուրգների շարքից առանձնահատուկ ուշադրության է արժանի Ֆարահ Անտունի, Իբրահիմ Ռամզի,

Մուհամմադ Թեյմուրի ստեղծագործական ներդրումը ժանրի զարգացման գործում:

Արաբական գրականության պատմության մեջ **Ֆարահ Անտունի** դրամատուրգիական գործունեությունն առավել քիչ ուսումնասիրված ոլորտներից է. իր ստեղծագործական գործունեությամբ նա հայտնի է որպես հրապարակախոս և վիպագիր: Ֆարահ Անտունը տարբեր պարբերականներում, այդ թվում՝ նաև իր կողմից հրապարակվող “Al-ğāmi‘a”(«Միություն») ամսագրում, հանդես էր գալիս հողվածներով, որոնցում կարևորում էր եգիպտական ազգային դրամայի ստեղծման անհրաժեշտությունը: Նա կոչ էր անում ստեղծել այնպիսի դրամա, որը ուղղված կլիներ հանդիսատեսին լուսավորչական և բարոյական բարձր արժեքներով կրթելուն, քանի որ անվերապահորեն հավատում էր թատրոնի քաղաքակրթական ու դաստիարակչական նշանակությանը և նրա անմիջական ազդեցությանը հասարակության գիտակցության վրա: Չնայած Անտունը, ֆինանսական կարիքներից դրդված, գրել է նաև երաժշտական կատակերգություններ, այնուամենայնիվ իր “Al-ğāmi‘a” ամսագրում բազմիցս փորձում էր բացատրել, որ դրամատիկ ստեղծագործությունն իր պատկերացմամբ ժամանակակից խնդիրներ բացահայտող և արծարծող սոցիալական դրաման է: Նրա համոզմամբ նույնիսկ պատմական դրամաներն ինչ-որ չափով շքեղություն էին արաբների համար, քանի որ նրանց կարևորությունը չէր կարող համեմատվել այն ստեղծագործությունների հետ, որոնցում քննարկվում էին ժամանակակից հասարակությանն առնչվող հարցեր: Եվ էթե նույնիսկ գրվում էր պատմական դրամա, ապա պատմական իրողությունները միայն պետք է դիտարկվեին որպես օժանդակ նյութ ժամանակակից գաղափարներն ու սկզբունքները

ներկայացնելու համար¹: Ֆարահ Անտունի դրամատիկական ստեղծագործություններից առավել հայտնի են “Al-sultān Ṣalāh Al-dīn wa Mamlaka Aūruṣalīm” («Սուլթան Սալահ ալ-Դինը և Երուսաղեմի թագավորությունը») “Miṣr al-ğadīda wa Miṣr al-qadīma” («Հին Եգիպտոս և Նոր Եգիպտոս») պիեսները:

«Սուլթան Սալահ ալ-Դինը և Երուսաղեմի թագավորությունը» պիեսը պատմական դրամա է, որի միջոցով հեղինակը կոչ է անում եգիպտացիներին համախմբվել անգլիական գաղութացումից ազատագրվելու համար: Անդրադառնալով արաբների արիությանն ու առաքինությանը՝ հեղինակը փորձում է բարոյապես սատարել և ոգևորել իր ժամանակակիցներին: Այս առումով Անտունը հետևում էր արաբական գրականության մեջ արդեն ձևավորված արաբների փառահեղ անցյալին դիմելու ավանդույթին: Պիեսում հեղինակը նաև քննադատում է ժամանակակից քաղաքական իրողությունները, որի պատճառով պիեսի բեմադրությունն արգելվում է: Պիեսը բեմադրվում է 1914 թ. Ջորջ Աբայդի թատերախմբի կողմից: Ֆարահ Անտունի «Նոր Եգիպտոս և Հին Եգիպտոս» պիեսը անդրադառնում է մի քանի ժամանակակից թեմաների միաժամանակ: Հեղինակի խոսքերով այն կազմված է չորս միմյանց հետ կապված պիեսներից՝ իրար լրացնող չորս սյուժետային գծերից: Առաջինը Ֆուադ Բեյի պատմությունն է, որը մարմնավորում է նոր Եգիպտոսի հերոսին՝ օժտված մարդկային այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են կամքի ուժը, աշխատասիրությունը, ընտանեկան ավանդույթներն ու արժեքները: Մյուս պատմության հերոսը կրթված, ազատատենչ

¹ M. M. Badawi, *Early Arabic Drama*, Cambridge University Press, 1992, p. 72.

կնոջ՝ Ալմագի կյանքի նկարագրությունն է, որը մարտահրավեր է նետում հասարակության կողմից կնոջը պարտադրված սահմանափակումներին և աշխատանքի է անցնում խաղատանը որպես երգչուհի: Հերոսուհու միջոցով հեղինակը քննարկման է դնում կնոջ ազատագրման, ազատ դրսևորման իրավունքի խնդիրը եգիպտական հասարակությունում: Երրորդ պատմության հերոսը ազգությամբ հույն Եգիպտոսի ամենամեծ խաղատունը ունեցող Խրիստոն է: Չորրորդ պատմության մեջ հեղինակը նկարագրում է Մուհաֆհաֆ փաշայի և մի խումբ հարուստների վարած կյանքը, որոնց միակ նպատակը ֆիզիկական հաճույքի անվերջ փնտրտուքն ու բավարարումն է: Վերը նշված պատմությունների միջոցով հեղինակը փորձում է ցույց տալ արժեքային ու գաղափարական կոնֆլիկտը, որն առկա էր եգիպտական հասարակությունում: Խրիստոն և կյանքի հաճույքներին տրված մյուս հերոսները մարմնավորում են հին ժամանակների Եգիպտոսն այն դեպքում, երբ Ֆուադը, իր մարդկային բարձր հատկանիշներով դիմակայելով բոլոր գայթակղություններին, նախընտրում է կյանքի առաքինի ճանապարհը, մարմնավորում է նոր Եգիպտոսը, որտեղ սերը, կրթվածությունը, աշխատասիրությունը, ընտանեկան արժեքները հաջողության հասնելու առանցքային ուղենիշներ պետք է լինեին:

Արաբական դրամատուրգիայի զարգացման գործում իր նշանակալի դերն ունի **Իբրահիմ Ռամզին (1884-1949 թթ.)**: Ռամզիի՝ դրամատուրգիայի ու թատրոնի նկատմամբ հետաքրքրությունը ձևավորվել է Եվրոպայում սովորելու տարիներին: Բացի պիեսներից՝ Ռամզին գրել է նաև վեպեր և զբաղվել է թարգմանչական գործունեությամբ: Ռամզին թարգմանել է Շեքսպիրի, Բեռնարդ Շոուի, Շերիդանի, Իբսենի ստեղծա-

գործությունները, ինչպես նաև թարգմանել ու հեղինակել է սոցիոլոգիական, պատմական, բարոյագիտական մի շարք աշխատություններ:

Ռամզիի դրամատիկ ստեղծագործությունների շարքում կարելի է թվել վեց պատմական դրամա, չորս սոցիալական կատակերգություն և երեք դրամա: Պատմական դրամաներից հինգում հեղինակն անդրադառնում է Եգիպտոսի պատմության ֆաթիմյան և մամլուքյան շրջաններին, և միայն մեկում՝ ներկայացվում են 19-րդ դարում Խեղիվ Իսմայիլի կողմից Սուդանի գրավման շուրջ ծավալվող իրադարձությունները:

Ռամզիի սոցիալական կատակերգությունների շարքից առանձնահատուկ ուշադրության է արժանի “Duhūl al-ḥamām miš zaī ḥurūḡ” («Բաղնիք մտնելը նույնքան դժվար է, որքան բաղնիքից դուրս գալը») կատակերգությունը: Գործողությունը հիմնականում կատարվում է Կահիրեի Բուլակ աղքատ թաղամասում գտնվող հանրային բաղնիքում: Սյուժեն ծավալվում է տնտեսական խնդիրների պատճառով բաղնիքի հուսահատված կառավարչի՝ Աբու Հասանի ու նրա խորամանկ կնոջ՝ Ջեյնաբի շուրջ, որը, օգտագործելով իր կանացի հմայքը, բաղնիքի սպասավորի օգնությամբ կարողանում է բաղնիք այցելած գյուղապետից շորթել իր մոտ եղած ողջ գումարը: Պիեսում հեղինակը փորձում է ցույց տալ եգիպտական հասարակության բարոյալքվածությունը, որը հիմնականում պայմանավորված էր Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքում առաջացած տնտեսական ճգնաժամով, ինչն էլ իր հերթին հանգեցրել էր հանցագործությունների ու կոռուպցիայի տարածման: Պիեսը գրված է եգիպտական բարբառով: Այն բաժանված չէ գործողությունների ու տեսարանների: Դեպքերը կատարվում են դինամիկ ու տրամաբանված են: Պիեսում

հանդիպում է ընդամենը երեք երաժշտական կատարում, որոնք անմիջականորեն առնչվում են իրադարձությունների զարգացմանը:

Իբրահիմ Ռամզիի պատմական դրամաներից իր գեղարվեստական արժեքով առանձնանում է “Abṭāl al-Mansūra” («Մանսուրայի հերոսները») պիեսը: Այն բաղկացած է չորս գործողություններից, որոնք, սակայն, բաժանված չեն տեսարանների: Պիեսը գրվել է գրական արաբերենով: Այստեղ հեղինակը դիմում է նոր արաբական գրականության մեջ հաճախ կիրառվող գեղարվեստական հնարքին՝ անցյալի միջոցով ներկայում առկա խնդիրները լուսաբանելուն: Պիեսում ներկայացվում են 1248 թ. Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IX-ի կազմակերպած վեցերորդ խաչակրաց արշավանքի շուրջ ծավալվող պատմական իրադարձությունները, որտեղ եգիպտացիներին հաջողվում է դուրս մղել խաչակիրներին Եգիպտոսից: Վերջին գործողությունում ներկայացվում է, թե ինչպես գորավարները, հայտարարելով, որ բացարձակ միապետության ժամանակներն արդեն անցել են, ստիպում են նորանշանակ սուլթանին հանձնել իր իշխանությունը: Պիեսի միջոցով հեղինակը փորձում է ներարկել եգիպտացիներին միապետության ու անգլիական գաղութացման դեմ պայքարի գաղափարները: Անգլիական իշխանությունները, տեսնելով պիեսում արտահայտված քաղաքական ենթատեքստը, արգելում են դրա բեմականացումը:

Իբրահիմ Ռամզիի վերոնշյալ պիեսները մեծ ներդրում էին արաբական դրամատուրգիայի հասունացման գործընթացում:

Արաբական և հատկապես եգիպտական դրամատուրգիայի զարգացման ճանապարհին նշանակալի դեր ունեցավ **Մուհամմադ Թեյմուրը (1892-1921 թթ.)**: Լինելով արաբական

գրականության մեջ կարճ պատվածքի հիմնադիրներից՝ Մուհամմադ Թեյմուրն իր ստեղծագործական կարճ կյանքի ընթացքում մեծ ներդրում ունեցավ նաև եգիպտական ազգային թատրոնի ու դրամատուրգիայի կայացման գործում: Թատրոնի հանդեպ հետաքրքրությունը Թեյմուրի մոտ դրսևորվում է դեռևս դպրոցական տարիներին և ավելի խորանում արդեն Ֆրանսիայում իրավաբանություն ուսանելիս: Նա մեծ ոգևորությամբ ծանոթանում էր եվրոպական թատրոնի պատմությանը, հաճախում ժամանակակից թատրոնի ներկայացումներին: Թեյմուրը դարձել էր Փարիզի Օդեոն թատրոնի մշտական հանդիսատեսներից: Արդյունքում վերջնականապես հրաժարվում է իրավաբանությունից և իր միակ ներդրումը տեսնում եգիպտական թատրոնի ու դրամատուրգիայի զարգացման բավական հավակնոտ առաքելության մեջ: Վերադառնալով Եգիպտոս՝ նա ձեռնամուխ է լինում կյանքի կոչելու թատրոնի զարգացման հետ կապված իր ծրագրերը: 1918-1921 թթ. ընթացքում Թեյմուրը գրում է չորս կատակերգություն: Թատրոնի որակի բարձրացման համար նա կարևորում էր եգիպտականացման (*tamsīr*) գաղափարը: Դա նշանակում էր, որ պիեսներում ներկայացվող նյութը պետք է մոտ լինի եգիպտացի հանդիսատեսին, ներկայացնի եգիպտացի ժողովրդի խնդիրները, սովորույթներն ու բարքերը: Իր առաջին՝ «Uṣṣūr fi al-qafṣ» («Թռչունը վանդակում») չորս գործողությամբ կատակերգությունը Թեյմուրը գրել է 1918 թ.: Պիեսի սկզբնական տարբերակը հեղինակը գրել է դասական արաբերենով, սակայն հետագայում փոխադրել է խոսակցական արաբերենի: Պիեսը սերունդների միջև կոնֆլիկտի համամարդկային թեմայի մարմնավորումն է, որտեղ հարուստ ընտանիքի երիտա-

սարդը նախընտրում է անապահով կյանքը՝ հոր վերահսկողությունից ազատագրվելու համար¹:

Մուհամմադ Թեյմուրի երկրորդ “Abd al-Satār Afandī” («Աբդ ալ-Սաթթար Էֆենդին») պիեսը թեթև, երջանիկ ավարտով կատակերգություն է, որի գլխավոր հերոսը՝ Աբդ Ալ-Սաթթար Էֆենդին, միջին խավի ներկայացուցիչ է, որն անընդհատ բարոյական ճնշումների է ենթարկվում իր բարձր ձայն ունեցող կնոջ՝ Նասիֆայի ու հղիացած որդու՝ Աֆիֆի կողմից: Պիեսը հարուստ է հետաքրքիր անհատականություններ մարմնավորող կերպարներով: Իր ակնհայտ արժանիքներով հանդերձ պիեսը կրկին մեծ արձագանք չի գտել հանդիսատեսի կողմից:

1921 թ. Թեյմուրը գրում է “Al-hāwīa ” («Անդունդը») պիեսը: Պիեսի հերոսը հարուստ եգիպտական ազնվականության ներկայացուցիչ, ավանդական բարքերին դեմ գնացող Ամինն է, որը թմրանյութերի չարաշահման պատճառով կորցնում է իր կնոջը՝ Ռաբիտային: Վերջինս, լինելով արևմտյան բարքերի կրող անձնավորություն, ամուսնու անտարբերությունից դժգոհված, սիրային հարաբերության մեջ է մտնում նրա ընկերոջ՝ Շաֆիկի հետ: Պիեսում կարելի է առանձնացել երկու թեմա՝ եգիպտական հասարակության վերնախավի շրջանում թմրանյութերի համատարած օգտագործումն ու դրա կործանարար ազդեցությունը մարդկային ճակատագրերի վրա և կանանց ազատության, սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքը²: Ամփոփելով կարելի է ասել, որ Մուհամմադ Թեյմուրի պիեսները գաղափարական ու կառուցվածքային, թե-

¹ Muḥammad Taīmūr, ‘Uṣfūr fi al-qafṣ, <https://ketabpedia.com/>.

² Muḥammad Taīmūr, Al -Hāwīa, <https://www.noor-book.com/en/ebooks, pdf>.

մաների ընտրության, լեզվի, կենդանի կերպարների ստեղծման առումով հստակ չափանիշներ սահմանեցին արաբական և հատկապես եգիպտական դրամատուրգիայի հետագա զարգացման համար:

Արաբական թատրոնի և դրամատուրգիայի կայացման գործում իր մեծ ներդրումն ունի 20-րդ դարի արաբական գրականության խոշորագույն ներկայացուցիչ **Թաուֆիկ ալ-Հաքիմը (1898-1987 թթ.)**: Թաուֆիկ ալ-Հաքիմի՝ վեպի ժանրում իր ունեցած նշանակալի դերի ու ստեղծագործական ուղու մասին արդեն խոսվել է, ուստի այստեղ կանդրադառնանք նրա դրամատուրգիայի առանձնահատկություններին: Թաուֆիկ ալ-Հաքիմի “masrah dihoi” (ինտելեկտուլ թատրոնի) հիմնադիրն է: Նա այն բացառիկ դրամատուրգներից էր, որի դրամատիկ ստեղծագործությունները նախատեսված էին ոչ միայն բեմականացման, այլ նաև ընթերցանության ու վերլուծության համար: Նրա շնորհիվ դրամատիկ ստեղծագործությունը ձևավորվեց որպես գրական լուրջ ժանր վեպի, պատմվածքի, էսսեի կողքին: Թաուֆիկ ալ-Հաքիմի թատերական նախնական պատկերացումներն ու ճաշակը ձևավորվել են Ջորջ Աբայդի ղեկավարած թատերախմբի բեմադրությունների ազդեցությամբ: Դրանցով ոգեշնչված՝ սկսել է գրել իր առաջին դրամատիկ ստեղծագործությունները: Այդ պիեսներից երկուսը, որտեղ հմտորեն համադրվում են կատակերգական ու մելոդրամատիկ տարրերը, արժանի են առանձնակի ուշադրության: Առաջին՝ “Al-Daif Al-Taqil” («Անկոչ հյուրը») պիեսը Թաուֆիկ ալ-Հաքիմը գրել է՝ 1919 թ. հեղափոխությամբ ոգեշնչված: Այս ստեղծագործության մեջ մարմնավորվում են եգիպտացի ժողովրդի հեղափոխական ու ազգայնական տրամադրությունները: Պիեսում «անկոչ հյուրի» դերում Անգլիան է, որի վարած

քաղաքականությունը դրսևորվում է «անկոչ հյուրի» պահվածքում՝ ներկայանալով խնջույքի, առանց տանտիրոջ կողմից հրավեր ստանալու: Տունը և տանտերը մարմնավորում են Եգիպտոսն ու եգիպտացի ժողովրդին: Հեղինակը կոչ է անում դուրս հանել «անկոչ հյուրին» այնպես, որ հաջորդ անգամ չհամարձակվի ներկայանալ առանց տանտիրոջ կողմից հրավեր ստանալու: Պիեսը ենթարկվում է խիստ գրաքննության և չի բեմադրվում:

“Al-Mar’a Al-Ġadīda” («Նոր կինը») պիեսը կրում է 19-րդ դարի հայտնի հրապարակախոս, կանանց իրավունքների պաշտպան Կասիմ Ամինի համանուն ստեղծագործության վերնագիրը: Այստեղ հեղինակը հանդես է գալիս Կասիմ Ամինին հակառակ դիրքորոշումից՝ սուր քննադատական վերաբերմունք դրսևորելով կանանց նկատմամբ: Այստեղ և Ալ-Հաքիմի մի քանի այլ ստեղծագործություններում բացահայտ արտահայտված քննադատությունը թերևս հեղինակի իրական պատկերացումների մարմնավորումը չէ, այլ հավանաբար հեղինակի կողմից դրամատիկ ժանրում ներմուծված գեղարվեստական հնարքներից մեկը:

1925-1928 թթ. Թաուֆիկ ալ-Հաքիմն իրավաբանական կրթությունը շարունակելու նպատակով անցկացնում է Փարիզում: Այս տարիները վճռական դեր են ունենում Ալ-Հաքիմի՝ եգիպտական դրամայի հետագա զարգացման հետ կապված պատկերացումների վերանայման համար: Ոգեշնչվելով ինտելեկտուալ ու ավանգարդ ուղղությունների գրողների և դրամատուրգների՝ Մետերլինկի, Իբսենի, Բեռնարդ Շոուի, Պիրանդելլոյի ստեղծագործություններից՝ Ալ-Հաքիմը տարվում է փիլիսոփայական դրամաներ գրելու գաղափարով: 1930-ական թթ. նա հրատարակում է իր առաջին երկու՝ “Ahl al-Kahf”

(«Քարանձավի մարդիկ») և “Šahrizad”(«Շահրիզադ») ինտելեկտուալ դրամաները, որոնք հեղինակի խոշոր ներդրումն են եզրիպտական դրամայում: Նշանավոր գրող ու քննադատ Տահա Հուսեյնը “Ahl al-Kahf”-ի լույսընծայումը համարում է արաբական գրականության բեկումնային փուլերից մեկը: Այն լույս է տեսել 1933 թ. և մեծ ճանաչում բերել հեղինակին: Սյուժեի հիմքում ընկած է Եփեսոսի քրիստոնեությունն ընդունած յոթ բնակիչների մասին լեգենդը, որոնք, փախչելով Հռոմի կայսեր հետապնդումից, երեք հարյուր տարի քնած անցկացնում են քարանձավում: Այս լեգենդը հիշատակվում է նաև Ղուրանի 18-րդ սուրայում: Պիեսում մարմնավորված է Ալ-Հաքիմի եզրիպտական ողբերգությունն գրելու գաղափարը, որտեղ հունական ողբերգությունների՝ մարդու ճակատագրի դեմ պայքարի թեման փոխարինվում է մարդու ժամանակի ու տարածության հետ ունեցած կոնֆլիկտով, որի հերոսներն այդ պայքարում պարտվում են: Պիեսի հերոսները երեքն են՝ թագավորի օգնականներ Միշիլիյան, Մարնուշը և հովիվ Յամա: Երեքհարյուրամյա քնից արթնանալով՝ հերոսները հայտնվում են իրենց համար բոլորովին անծանոթ ժամանակաշրջանում ու միջավայրում և չկարողանալով համակերպվել նոր իրավիճակին՝ վերադառնում են քարանձավ: Դիմելով դիցաբանական թեմայի սիմվոլիկ պատկերմանը՝ հեղինակը ներկայացնում է նաև Ֆրանսիայից վերադառնալուց հետո իր երկակի զգացմունքները՝ կապված Արևմուտքի ու Արևելքի միջև առկա քաղաքակրթական և մշակութային հսկա տարբերությունների հետ: 1934 թ. լույս է տեսնում Թաուֆիկ ալ-Հաքիմի երկրորդ՝ “Šahrizād”(«Շահրիզադ») ինտելեկտուալ դրաման, որի հիմքում

¹ Taūfiq Al-Ĥakīm, Ahl al-Kahf, <https://foulabook.com/ar/book>, pdf.

ընկած է «Հազար ու մի գիշեր» հեքիաթների շրջանակային պատմությունը: Պիեսի հիմքում մարդու միայն բանականությանը տրվելու և հոգու ու մարմնական ցանկություններից հրաժարվելու խնդիրն է: Այն սկսվում է, երբ հազար ու մեկ հեքիաթներն արդեն պատմված են: Շահրիզադը, որը Շահրիարի համար խելքի, բանականության ու գիտելիքի մարմնավորումն էր, իր պատմություններով կարողանում է ստիպել Շահրիարին հրաժարվել իր ցանկասիրական ձգտումներից և գնալ իմացությանն ու ճանաչողությանը հասնելու ճանապարհով: Շահրիզադի կերպարը Ալ-Հաքիմը ներկայացնում է որպես անհասանելի, խորհրդավոր կնոջ մարմնավորում, որի բնավորության առանձին գծեր դրսևորվում են պիեսում գործող հերոսների ցանկությունների բացահայտման միջոցով: Սակայն Շահրիզադը մինչև վերջ էլ շարունակում է մնալ անհասանելի: Շահրարի սերը Շահրիզադի հանդեպ թույլ չի տալիս նրան մինչև վերջ գնալ բանականության ճանապարհով¹:

1935 թ. Եգիպտոսի նորաստեղծ ազգային թատրոնի թատերախմբի կողմից բեմադրվում է Թաուֆիկ ալ-Հաքիմի «Քարանձավի մարդիկ» պիեսը: Ներկայացումը չի ընդունվում հանդիսատեսի կողմից, ինչը հավանաբար պայմանավորված էր նրանով, որ հանդիսատեսը, որն ավելի շատ սովոր էր դերասանական խաղով հագեցած, ժամանց ապահովող կատակերգությունների, դեռևս պատրաստ չէր ըմբռնելու դրամայի փիլիսոփայական կողմը: Հանդիսատեսի նման արձագանքից ազդված Ալ-Հաքիմն իր հաջորդ “Biḡmālīn” («Պիզմալիոն») ինտելեկտուալ դրամայի նախաբանում սահմանում է «մտքի» կամ «ինտելեկտուալ թատրոն» հասկացությունը, հա-

¹ Taūfiq Al-Ḥakīm, Ṣāhrizād, <https://www.noor-book.com/en/ebook, pdf>.

մաձայն որի՝ իր պիեսները նախատեսված են ավելի շատ ընթերցանության, քան բեմականացման համար. «Իմ պիեսները ես բեմադրում եմ մտքում, իսկ գործող անձանց վերածում եմ կենդանի սիմվոլներին»¹:

«Պիզմալիոն» ինտելեկտուալ դրաման գրվել է 1942 թ.: Պիեսի նախաբանում հեղինակը նաև խոստովանում է, որ որոշ չափով ոգեշնչվել է Բեռնարդ Շոուի համանուն ստեղծագործությունից: Սակայն իրականում այն Շոուի ստեղծագործության հետ շատ քիչ աղերսներ ունի, քանի որ այստեղ հեղինակը հիմնականում անդրադառնում է երևակայության ու իրականության, արվեստի ու կյանքի, սիրո ու քանականության հակադրության թեմաներին: Ստեղծագործության հիմքում ընկած է քանդակագործ Պիզմալիոնի հունական լեգենդը: Վերջինս սիրահարվում է իր կողմից քանդակված Գալատեայի փղոսկրե արձանին: Քանդակագործը խնդրում է սիրո աստվածուհուն Ափրոդիտեին կենդանացնել արձանը: Աստվածուհին կատարում է նրա խնդրանքը, և վերջինս ամուսնանում է Գալատեայի հետ: Պիեսում Պիզմալիոնը խնդրում է Վեներային՝ հռոմեական դիցաբանության սիրո և գեղեցկության աստվածուհուն, կենդանացնել Գալատեայի արձանը, սակայն այն պահից, երբ իր ցանկությունն իրականանում է, և քանդակագործը տեսնում է իր սիրեցյալին տնային տնտեսուհու դերում, ռոմանտիկ պատկերացումները փլուզվում են, և հիասթափության մեջ նա խնդրում է աստվածներին Գալատեային նորից արձանի վերածել: Նրա երկրնտրանքն իրականի ու երևակայության, կյանքի ու արվեստի միջև անլուծելի է, և որ-

¹ Taūfiq Al-Ḥakīm, Biḡmālīūn, <https://foulabook.com/ar/book-pdf>, pp. 12-13.

պէս վերջնական գործողություն նրան մնում է միայն ջարդել արձանը՝ ասելով. «Ես չեմ հեռանա կյանքից, քանի դեռ չեմ կերտել իրական արվեստի գլուխգործոց: Ես դեռ չեմ բացահայտել գաղտնիքը..., ստեղծագործական կատարելության գաղտնիքը: Ես ապրեցի կյանքը՝ պայքարելով արվեստի, իմ տաղանդների և ճակատագրի հետ»¹: Իր այս ստեղծագործությամբ Թաուֆիկ ալ-Հաքիմը փորձել է մարմնավորում տալ կյանքի նկատմամբ արվեստի հաղթանակի գաղափարին:

«Շահրիզադե» պիեսում ներկայացված ճշմարտության ապարդյուն փնտրտուքի թեման քննարկվում է նաև “Al-Malik Aūdīb” («Էդիպոս արքան») պիեսում, որը լույս է տեսնում 1945 թ.: Պիեսի համար հիմք է հանդիսացել Էդիպոս արքայի հունական լեգենդը, որը հեղինակը փորձել է հարմարեցնել իսլամի արժեհամակարգին՝ հանելով այնտեղից ճակատագրի թեման: Թաուֆիկ ալ-Հաքիմը, բացի ինտելեկտուալ, փիլիսոփայական դրամաներից, գրել է նաև սոցիալական դրամաներ, որտեղ անդրադարձել է Եգիպտոսի հասարակական կյանքին առնչվող խնդիրներին: 1945-1950 թթ. եգիպտական “Aḥbār al-īāūm” («Օրվա լուրեր») պարբերականում Ալ-Հաքիմը հրատարակում է հասարակական թեմաներով զբաղված դրամաների շարք, որոնցից քսանը հետագայում լույս են տեսնում “Masrah al-muḡtama” («Հասարակական թատրոն») ժողովածուում: Այդ ստեղծագործությունների շարքից ամենահաջողվածը “Uḡniā al-maū” («Մահվան երգը») պիեսն է: Այստեղ հեղինակն անդրադառնում է այդ ժամանակ եգիպտական հասարակության համար բավական արդիական ավանդականի և նորի հակադրությանը, որը հատկապես ցայտուն դրսևորվում էր

¹ Taūfiq al-Hakim, նշվ. աշխ., էջ 155:

գյուղական միջավայրում: Պիեսում ներկայացված է Կահիրեում սովորող երիտասարդի՝ Ուլվանի ու գյուղում բնակվող իր ընտանիքի միջև ընկած արժեքային ու բարոյական անդունդը, որը հանգեցնում է ողբերգական ավարտի: Ուլվանը վերադառնում է հայրենի գյուղ սոցիալական ռեֆորմներ իրականացնելու նպատակով, մինչդեռ նրա ընտանիքն ակնկալում է, որ նա եկել էր արյան վրեժի պարտականությունն իրականացնելու համար: Երբ Ուլվանը հրաժարվում է կատարել ընտանիքի կողմից իր վրա դրված այդ «սուրբ» պարտականությունը, ընտանիքը սպանում է Ուլվանին՝ որակելով այն որպես անարգանք ընտանեկան պարտականությունների նկատմամբ¹: Ալ-Հաքիմի այս ստեղծագործությունը մեկ գործողությամբ պիես է, որտեղ դրսևորված է հեղինակի դրամատիկական ստեղծագործություն կառուցելու ողջ վարպետությունը: Ազատ սպաների 1952 թ. իրականացրած հեղափոխությունը՝ միապետության տապալումը, և նրա սոցիալ-քաղաքական հետևանքներն ինչպես ժամանակի շատ գրողների, այնպես էլ Թաուֆիկ ալ-Հաքիմի համար նոր մեկնարկ հանդիսացան թեմատիկ ու գեղարվեստական նոր մոտեցումների տեսանկյունից: Քաղաքական նոր ռեժիմի նկատմամբ Ալ-Հաքիմի վերաբերմունքն իր դրսևորումը ստացավ “Al-āidī al-nā‘ima” («Քնքուշ ձեռքեր») պիեսում: Պիեսը թեթև ու զվարճալի և ինչոր չափով դիդակտիկ նշանակություն ունեցող ստեղծագործություն է: Այստեղ ներկայացվում են երկու հերոսների՝ նախկին թագավորական ընտանիքի ժառանգի և երիտասարդ գիտնականի հասարակական նոր իրավիճակին հարմարվե-

¹ Taūfiq al-Hakim, *Ugnīa al-maūt*, Masrah al-muğtama‘, <https://www.pdf-books.org/book>, p. 765.

լու, իրենց համար սոցիալական նոր դերեր փնտրելու փորձերը: Եթե այստեղ ցուցադրվում է Թաուֆիկ ալ-Հաքիմի նոր վարչակարգի նկատմամբ ունեցած դրական վերաբերմունքը, ապա 1960 թ. գրված “Al-Sultān al-Ḥa’ir” («Շփոթված սուլթանը») պիեսում հեղինակը դրսևորում է իր հիասթափությունը նախագահ Նասերի ժողովրդի նկատմամբ վարած քաղաքականությունից: Գլխավոր թեման ինդիքների լուծման համար իշխանության կողմից գործադրվող մեթոդների՝ օրենքի ու ուժի միջև ընտրությունն է: Եզիպտոսում ստեղծված քաղաքական իրադրության հետ կապված իր անհանգստություններն ու հիասթափությունն արտահայտել է 1966 թ. գրված “Maṣīr Ṣarṣār” («Ուտիճի ճակատագիրը») և “Bank al-Qalaq” («Անհանգստությունների բանկը») պիեսներում: «Ուտիճի ճակատագիրը» պիեսում հեղինակը ուտիճների երգիծական կերպարների միջոցով համեմատություններ է անցկացնում նրանց ու մարդկանց միջև՝ սիմվոլիկ կերպով արտահայտելով իր հիասթափությունը Նասերի վարչակարգից: «Անհանգստությունների բանկը» Ալ-Հաքիմի վեպի և պիեսի համադրումն է, որը հեղինակն անվանել է *masrāwīa*՝ թատերավեպ: Այստեղ նա իր քննադատությունն է արտահայտում հեղափոխության արդյունքում առաջացած սոցիալ-քաղաքական հետևանքների ու իշխանությունների հետզհետե աճող ուժի նկատմամբ: Թաուֆիկ ալ-Հաքիմն իր այս ստեղծագործություններով փորձում էր տեղյակ պահել և զգուշացնել Նասերին երկրում տիրող տրամադրությունների մասին, ինչը միգուցե կստիպեր նրան վերանայել իր վարած բռնապետական քաղաքականությունը: 1960-ական թթ. ընթացքում Թաուֆիկ ալ-Հաքիմը մեծ ոգևորությամբ շարունակում է հարստացնել եզիպտական թատերագրությունը՝ ներմուծելով նոր արտա-

հայտչամիջոցներ ու ուղղություններ ժամանակակից արևմտյան դրամատուրգիայից: Փարիզ իր երկրորդ այցելության ընթացքում նա ծանոթանում է արքուրդի թատրոնին, հատկապես տարվում Սամուել Բեքբեթի և Էժեն Իոնեսկուի դրամատուրգիայով: Թաուֆիկ ալ-Հաքիմին գրավում էին արքուրդի ժանրին հատուկ կյանքը քառտիկ, անիմաստ ու անհեթեթ ներկայացնելու միտումները: Նրա համար առավել գրավիչ էր հերոսների ու իրավիճակների ոչ իրական լինելը: Թաուֆիկ ալ-Հաքիմի կարծիքով արքուրդի թատրոնի էությունն իռացիոնալիզմի մեջ է, որը նա բնորոշում է որպես անիրական ու անհասկանալի աշխարհների միջև սահմանների վերացում և դրանց ներդաշնակ համատեղ գոյության հնարավորություն: Արքուրդի թատրոնի ազդեցությամբ գրված նրա լավագույն ստեղծագործությունը “*Īā Ṭāli‘ Al-Šağara*” («Ծառ մազլցողը») պիեսն է: Այն ներկայացնում է արքուրդի թատրոնի և ժողովրդական ավանդույթի տարրերի համադրություն: Թաուֆիկ ալ-Հաքիմի թատերագրության վրա ազդեցություն է ունեցել նաև գերմանացի դրամատուրգ Բարթոլդ Բրեխտը:

1968 թ. Թաուֆիկ ալ-Հաքիմը հրատարակեց “*Qālibunā Al-Masrahī*” («Թատերագրության մեր ձևը») աշխատությունը, որտեղ խոսում էր ազգային թատերագրություն ստեղծելու անհրաժեշտության մասին: Թաուֆիկ ալ-Հաքիմը դա տեսնում էր արաբական թատերական ավանդույթների ժամանակակից թատրոն ներմուծման ճանապարհով: *Հարավայրիների՝* բանասացների, *մուկալիդների՝* նմանակողների ավանդույթի ու ժամանակակից թատերական տարրերի համադրման միջոցով հանդիսատեսը կարող էր ծանոթանալ հայտնի դրամատուրգների՝ Մոլիերի, Շեքսպիրի, Չեխովի, Իբսենի միաժամանակ մի քանի ստեղծագործությունների՝ այդպիսով վերացնելով

բարձր արվեստի ու հասարակ ժողովրդի մեջ գոյություն ունեցող անջրպետը ¹:

Այսպիսով՝ տարիներ շարունակ գլխավորելով եգիպտական թատերագրությունը՝ Թաուֆիկ ալ-Հաքիմը հսկայական ներդրում ունեցավ դրաման որպես կայացած և հասարակության բոլոր շերտերի կողմից սիրված ժանր դարձնելու գործում, հանդիսատեսին ծանոթացրեց արևմտյան թատրոնից ներմուծված գաղափարների ու ուղղությունների հետ՝ մինևնույն ժամանակ վերածնելով եգիպտական թատերական ավանդույթը: Նրա անվան հետ է կապվում արաբական, հատկապես եգիպտական թատերագրության հետագա զարգացումը:

¹ Taūfiq al-Hakim, Qālibunā al-masrahī, Noor-book.com, pp. 16-18.

Գրականության ցանկ

- Allen R., *Modern Arabic Literature*, New York, 1987.
- Badawi M., *A Critical Introduction to Modern Arabic Poetry*, Cambridge, 1975.
- Badawi M., *Modern Arabic drama in Egypt*, Cambridge University Press, 1987.
- Badawi M., *A Passion for Experimentation: The Novels and Plays of Tawfiq al-Hakim*, 1988.
- Badawi M., *Modern Arabic Literature*, Cambridge University Press, 1992.
- Badawi M., *Early Arabic Drama*. Cambridge University Press, 1992.
- Booth Wayne, *The Rhetoric of Fiction*, Chicago, 1961.
- Brugman J., *An Introduction to the History of Modern Arabic Literature in Egypt*, Leiden, Brill, 1984.
- Hourani A., *Arabic Thought in the Liberal Age 1798-1939*, Cambridge University Press, 1983.
- Jayyusi S. K., *Trends and Movements in Modern Arabic Poetry*, vol. 1, 1977.
- Landau J., *Studies in the Arab Theatre and Cinema*, Philadelphia, 1958.
- Mahdi I., *Modern Arabic Literature*. Hyderabad: Rabi Publishers, 1983.
- Matti M., *The Origins of Modern Arabic Fiction*, Washington: Three Continents Press, 1983.
- Philipp T., *His life and thought, The Autobiography of Jurji Zejdan*, 1979.
- Starkey P., *Modern Arabic Literature*, Edinburg University Press, 2006.

- Tresilian D., A Brief Introduction of Modern Arabic Literature, 2012.
- Waissman I., Abd al-Rahman al-Kawakibi: Islamic reform and Arab revival (Makers of the Muslim world) Great Britain, One World Publication, 2016.
- Wen-Chin Ouyang, "Fictive Mode, 'Journey to the West', and Transformation of Space: Ali Mubarak's Discourses of Modernization", in: Comparative Critical Studies, Vol. 3, issues 4, BCLA, 2007.
- Долинина А. А., Очерки Истории Арабской Литературы Нового Времени, М., 1968.
- Долинина А. А., Очерки истории арабской литературы, Египет и Сирия, Просветительский роман 1870-1914, М., 1973.
- Кирпиченко В., Новая Современная Литература Египта (19-20 вв.), М., 2003.
- Крымский А., История Новой Арабской Литературы, М., 1971.
- Левин З. И., Абд ар-Рахман аль-Кавакибби. Природа деспотизма и гибельность порабощения, М., 1964.
- Левин З. И., Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте, М., 1972.
- Усманов Н. К., Жизнь и творчество Тауфик аль-Хакима, М., 1963.
- Худавердян К.К., *Макама: Этапы развития жанра*, Вопросы Востоковедения, вып.1-2, Ереван, 1983.
- Худавердян К. К., *Рассказ Исы Ибн Хишама, Мухаммада Ал-Мувейлихи и Египетская литература XX века*, Вопросы Востоковедения, вып. 3-4, Ереван, 1987.

Աղբյուրներ

- Āḥmd Fāris Šdīāq, Al-sāq ‘Ala al-Sāq Fī mā Huwa Al-Fārīāq, <https://www.noor-book.com-pdf>
- ‘Abd al-Raḥman al-Kawākibī, Tabā’ī ‘Isitbdād wa Mašārī’ Isti‘bād, Baīrūt 2011,
- ‘Abd al-Raḥman al-Kawākibī, “Umm Al-Qurā”<https://www.kutub-pdf-ar.com/-pdf/>
- Adīb Iṣḥāq, Al-Durar <https://ketabpedia.com/>
- ‘Alī Al-Ḥadīdī, ‘Abd Alalh Al-Nadīm Ḥaṭīb Al-Waṭanīā, Al-Qahira.
- Muṣṭafai Kamil, Al-Mas’ala Al-Šarqīa, <https://www.noor-pdf>
- Amīn Qāsim, Al -Mar’a Al-Ġadīda,<https://foulabook.com/ar/book-pdf>
- ‘Ali Mahmud, al-Taha, “Al-Mallah al-ta’ih”, Cairo, 1941,
- Abu’l-Qasim al-Shabbi, Al-aġānī al-ḥaīā, Tunis, 1966
- Ġirġī Zaīdān, Tārīḥ Adāb Al-luġa Āl-‘Arabīa, foulabook.com/book-pdf
- Īaḥīa Ḥaqī, Qindīl Umm Hāšim, <https://foulabook.com/ar/book-pdf>
- Muḥammad Ḥusaīn Haīkal, Zaīnab, <https://foulabook.com/ar/book/pdf>
- Muḥammad Taīmūr, Al -Hāwīa, Mišr 2012
- Muḥammad Taīmūr, ‘Uṣfūr fī al-qafš, <https://www.noor-book.com/en/ebook-pdf>
- Muḥammad Al-Mūwa’līhī, Ḥadīṭ ‘Isa Ibn Hišām aw Fatra min al-Zamān, <https://www.hindawi.org/books/63950852/> Rifā‘a Rāfi‘
- Al-Ṭaḥṭāwī, Taḥlīš Al-Ibrīz fī Talḥīš Bārīz,[noor-book.com/en/ebook-pdf](https://www.noor-book.com/en/ebook-pdf)
- Taūfiq Al-Ḥakīm, Ahl al-Kahf, <https://foulabook.com/ar/book-pdf>

Taūfiq Al-Ḥakīm, Biġmālīūn, <https://foulabook.com/ar/book-pdf>

Taūfiq Al-Ḥakīm, Šāhrizād, <https://www.noor-book.com/en/ebook, pdf>

Taūfiq Al-Hakim, Qālibunā al-masraḥī, Noor-book.com, pdf

Tawiq al-Hakim, Uġnīa al-maūt, Masraḥ al-muġtama‘, <https://www.pdf-books.org/book>

Taūfiq Al-Ḥakīm, ‘Aūdā‘ al-rūḥ, <https://foulabook.com/ar/book - pdf>

Taūfiq Al-Ḥakīm, ‘Uşfür min al-şarq, <https://foulabook.com/ar/book/pdf>

Taūfiq Īuwsuf ‘Awād, Al-Raġif, <https://foulabook.com/ar/book-pdf>

Taūfiq Īuwusuf ‘Awād, Ṭawaḥīn Baīrūt, <https://foulabook.com/ar/book-pdf>

Ṭaha Ḥusaīn, Al-Āīām, <https://foulabook.com/ar/book, pdf>

Ṭaha Ḥusaīn, Šajara al-bū’s, <https://foulabook.com/ar/book/pdf>

Wali Al-Din Īakun, Al-Şaḥā’if Al-Sūd <https://www.noor-book.com -pdf>

Wali Al-Din Īakun, Al-Taġārīb, <https://www.noor-book.com, pdf>

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԻԱՄ ԱՐՄԵՆԻ ԷԼՄԱՍՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(19-20-րդ դարի առաջին կես)

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալարյանի
Կազմի ձևավորումը՝ Լուսինե Թալալյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Ստորագրված է տպագրության՝ 19.08.2022:

Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 14.5:

Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.yasu.am